Ի՞նչպիսին է Շարիաթի որոշումը կապված դուայի հետ, որը ուղղված է մեռած և բացակա մարդուն: Խնդրանքը, դիմումը մեռածին և բացակային, համարվում է շիրկ, որովհետև դուան հանդիսանում է երկրպագում և նրան արժանի է միայն Ամենաբարձրյալ Ալլահը: Նա ասում է. «...**իսկ նրանց, ում դուք կանչում եք բացի Նրանից, չունեն նույնիսկ չնչինը, (որը բաժանում է արմավի կորիզը փափուկ մասից): Երբ դուք կոչում եք նրանց, նրանք չեն լսում ձեր խնդրանքները, և եթե նույնիսկ լսեյին ապա չէին պատասխանի ձեզ: Հարության Օրը նրան կմերժեն ձեր երկրպագումը:** »

(սուրա 35 «Արարիչ», այաթ 13-14):

Ալլահի Մարգարեն ^(Մալլապահու ալեհի ուս սալա) ասաց. «**Ով մահացել է կոչելով ինչ որ մեկին բացի Ալլահից, նա կմտնի Կրակ:**» (Ալ-Բուխարի)

Եվ ինչպե՞ս կարելի է պահանջել ինչ որ բան մահացածից, եթե նա ինքն կարիք ունի, որ դուք, կենդանիները, նրա համար դուա անեք: Նրա բոլոր արարքները ավարտվել են մահվանից հետո, բացի պարզևներից, որոնք հասնում են նրան դուայի և այլնի շնորհիվ: Եվ մահացածը ուրախանում է, երբ նրա համար դուա են կարդում, այսպես որ, ինչպե՞ս կարելի է կոչել նրան, եթե նա կարիք ունի: Ինչ վերաբերվում է բացակային, ապա նա չի լսում այն, ինչ հեռու է նրանից, այսպիսով ինչպե՞ս նա կարող է պատասխանել:

20. Քանի՞ տեսակի մոտեցում (տավասուլ) Ալլահին կա: Երկու տեսակի.

1- Թույլատրելի, այն բաժանվում է երեք տեսակի

- Ամենաբարձրյալ Ալլահին մոտենալ Իր Անուններով և Վերագիրներով:
- Ալլահին մոտենալը որոշ բարի գործերի շնորհիվ, ինչպես քարանձավի երեք մարդիկ¹:

¹ Ահա այն պատմությունը, ինչպես այն հիշատակվում է «Ուղղափառների Այգիներ» գրքում: Աբու Աբդու-Ռահմեն Աբդուլլահ իբն ռՈւմար իբն ալ-Խատաբը, թող Ալլահը օրհնի նրանց ասաց, որ լսել է, թե ինչպես Ալլահի Մարգարեն ^(Մալլապահու ալեհի ուս սալա) ասաց, որ մի անգամ երեք մարդ նրանցից, ովքեր ապրում էին ձեզանից առաջ և ճանապարհորդում էին: Մի անգամ նրանք գնացին ճամփորդելու և մինչ կանգ առան գիշերելու ինչ որ քարանձավում: Երբ նրանք մտան այնտեղ, ժայռից պոկվեց մի մեծ քար և ամբողջովին փակեց նրանց մուտքը այնտեղից: Այդ ժամանակ նրանք ասեցին, «Ճշմարիտ, այս քարից մեզ կարող է փրկել միայն խնդրանքով դիմումը Ամենաբարձրյալ Ալլահին, որ Նա ազատի մեզ դրանից մեր բարի գործերի համար »: ԴՐանից հետո նրանցից մեկը ասաց, «Օ, Ալլահ, ես ունեյի ձեր ծնողներ և երեկոները ես երբեմն չէի կերակրում կաթով ոչ տնեցիներին, ոչ ստրուկներին մինչ չէի բերում կաթ նրանց: Մի անգամ փայտի փնտրտուքը ինձ հեռացրեց տանից, և երբ ես վերադարձա, նրանք արդեն քնել էին : Ես կթեցի կովին, և իմանալով որ նրանք քնել են չցանկացա ոչ արթնացնել նրանց, ոչ խմեցնել տնեցիներին և ստրուկներին նրանցից առաջ : Մինչ առավոտ ես սպասում էի թասը ձեռքիս, և այդ ամբողջ ժամանակ երեխաները սովից բղավում էին ոտքերիս տակ : Հետո իմ ծնողները արթնացան և ըմպեցին իրենց երեկոյան ըմպելիքը : Օ, Ալլահը, եթե ես այդ արել եմ Հանուն Քեզ, ապա փրկիր մեզ այս իրավիճակից, որում մենք հայտնվել ենք այս քարի պատճառով:» Եվ դրանից հետո քարը շարժվեց բացելով տեղ, բայց ոչ այնքան, որ հնարավոր լիներ դուրս գալ այնտեղից : Մյուսը ասաց. «Օ, Ալլահ, ճշմարիտ, ես ունեյի զարմուհի, որին ես սիրում էի բոլոր մարդկանցից շատ ...»: Մեկ այլ տարբերակում այս հադիթի ասվում է, որ նա ասաց. «... և ես սիրեցի նարն այնքան ուժգին, որքան կարող է տղամարդը սիրել կնոջը, և ցանկանում էի նրան, բայց նա մերժում էր ինձ : Այսպես շարունակվեց այնքան ժամանակ, երբ հասավ երաշտ : Եվ այդ ժամանակ նա եկավ ինձ մոտ, ես տվեցի նարան հարյուր քսան դինար, որ նա թույլ տար

• Ալլահին մոտեցումը դուայի միջոցով, որը կատարվում է բարեպաշտ մուսուլմանի կողմից, որին կարելի է հավատալ և վստահել որ նրա դուան Ամենաբարձրյալ Ալլահը կպատասխանի:

2- Արգելված. Այն բաժանվում է երկու խմբի. **(1)** Երբ մարդ խնդրում է Ամենաբարձրյալ Ալլահին Մարգարեյի ^{(Մալլալանու} **(այնի նա սայան)** կամ սուրբի (վալի) տեսանկյունից: Օրինակ, նա ասում է. «**Օ, Ալլահ, Ճշմարիտ ես խնդրում եմ Քեզ Քո Մարգարեյի (կամ ալ- Հուսեյնի) դիրքից: Ճիշտ է, որ Ալլահի մոտ Մարգարեյի դիրքը բարձր է, ինչպես նաև սրբերի դիրքերը:**» Բայց, հետևողները, ովքեր մարդկանցից ամենից շատ ձգտում էին բարիքի, երբ սկսեց երաշտը, չէին փորձում խնդրել Ալլահին Մարգարեյի ^{(Մալլալանու} **(այնի նա սայան)** դիրքից, նույնիսկ այն պարագայում, որ Նրա գերեզմանը նրանց կողքին էր, այլ օգտագործում էին Ալլահին մոտենալու համար նրա հորեղբոր ալ- Աբբասի դուան, որը այդ ժամանակ դեռ կենդանի էր:

(2) Երբ ստրուկը խնդրում է Ալլահից այն, ինչի կարիքը ունի, օգտագործելով երդումը Նրա Մարգարեյի կամ որևէ մերձավորի (վալի) անունից: Օրինակ, նա ասում է. «**Օ, Ալլահ, աղաչում ենք Քեզ Քո վալի այսինչով, տուր մեզ այս կամ այն « կամ » Աղաչում եմ Քեզ Քո Մարգարե այսինչի իրավունքով,**» քանի որ արարվածին աղաչելը արարվածից արգելված է, աղաչել այս ձևով Ալլահին, ավելի խիստ է արգելված: Բացի այդ, ստրուկը ոչ մի իրավունք չունի պահանջել Ալլահից ինչ որ բան, համարելով, որ Նա պարտավոր է լսել նրա խնդրանքը, միայն Նրան հնազանդվելու համար:

21. Ի՞նչ է նշանակում հավատք Դաստատանի օրվան: Այդ, հաստատուն համոզմունք է այն բանում, որ այն կլինի: Այստեղ ներառվում է հավատք մահվան և հաջորդող փորձության գերեզմանում, պատիժը և հաճույքը այնտեղ, շեփորի փչելը (սուր), մարդկանց կանգնելը իրենց Տիրոջ առջև և գրքերի բաժանումը, արարքների գրառումները, ինչպես նաև Կշեռքի հաստատումը, Դրախտի և Դժոխքի միջև կամուրջը (սիրատ), լճակը, բարեխոսությունը և այն բանին, որ այս ամենից հետո մարդ ընկնում է կամ Դրախտ, կամ Դժոխք:

ինձ տնօրինել նրան : Եվ նա գնաց դրան, և երբ ես ստացա հնարավորություն տիրել նրան ...» Այս հաղիթի մեկ այլ տարբերակում ասվում է, «երբ ես հասա նրա ոտքեր միջև, նա ասաց, « Վախեցիր Ալլահից և մի կոտրիր այս դրոշմը եթե մաիյն օրինական : « Եվ ես թողեցի նրան, չնայած սիրում էի նրան բոլորից շատ, և թողեցի նրան տված ոսկին : Օ, Ալլահ, եթե ես արեցի այդ հանուն քեզ, ապա փրկիր մեզ այս իրավիճակից, որում ենք մենք : » Եվ դրանից հետո քարը նորից շարժվեց տեղից, բայց բացվածքը բավական չէր, որ նրանք կարողանան դուրս գալ այնտեղից: Երրորդն ասաց. «Օ, Ալլահ, իրոք, ես մի ամգամ վարձեցի աշխատողներ և վճարեցի նրանց բոլորին բացի մեկից, որը թողել էր այն ինչ ինչ նրան հասնում էր և գնացել էր, ես օգտագործեցի նրա գումարը և բազմապատկեցի այն: Որոշ ժամանակ անց նա հայտնվեց և ասաց. «Օ, Ալլահի ստրուկ, տուր ինձ իմ վարձը:» Ես ասացի նրան, «Քո վարձն է այս բոլոր ուղտերը, կովերը, ոչխարները և ստրուկները, որոնք դու տեսնում ես :» Նա ասաց, « Օ, Ալլահի ստրուկ, մի ծաղրիր ինձ :» Ես ասացի . « Ես չեմ ծաղրում քեզ,» և նա վերցրեց այդ ամենը և տարավ, ոչինչ չթողնելով : Օ, Ալլահ, եթե ես արել եմ այդ հանուն քեզ, ապա փրկիր մեզ այս իրավիճակից, որտեղ որ մենք հայտնվել ենք ;»Եվ դրանից հետո քարը շարժվեց այնքան, որ նրանք կարողացան դուրս գալ և հեռանալ:» (Ալ Բուխարի)

22. Որո՞նք են Դատաստանի Օրվա մեծ նշանները: Ալլահի Մարգարեն *(Մայլապահու
այլեկի ուա սայամ)* ասաց. « Ժամը չի գա, մինչ չտեսնեք դուք դրանից առաջ տաս նշան:» Նա հիշատակեց ծուխ, Դաջալին, կենդանու (դաբա), արևի ելքը արևմուտքից, Հիսուսի *(Մայլապահու
այլեկի ուա սայամ)*, Մարիամի որդու գալը, Ջուջն ու Մաջուջը, երկրի երեք անհաջողությունները, արևելքում, արևմուտքում և Արաբական թերակղզում... Այդ նշաններից վերջինը հանդիսանում է կրակը, որը դուրս կգա Եմենից և կըջի մարդկանց հավաքի վայր:» (Մուսլիմ)

23. Ո՞րն է ամենամեծ գայթակղությունը, որը կհասնի մարդկանց: Ալլահի Մարգարեն *(Մայլապահու
այլեկի ուա սայամ)* ասաց. « Չկա Ադամի արարումի և Վերջին Ժամվա գալստյան միջև ավելի սարսափելի իրադարձություն քան Դաջալի հայտնվելը:» (Մուսլիմ)

Դա Ադամի ժառանգներից մի մարդ է, որը կհայտվի ժամանակների վերջում: Նրա աչքերի միջև գրված կլինի ի «կ-ֆ-ր», (կաֆիր),(անհավատ), և այս բառը կկարդա ամեն հավատացյալ: Նրա աջ աչքը շեղ կլինի, որը կհիշեցնի լցված խաղողի հատիկ: Նոր հայտնված, նա կսկսի ցուցադրել արդարություն և աստվածայնություն, իսկ ավելի ուշ կպնդի, որ նա մարգարե է, իսկ հետո կհայտարարի իր աստվածայնության մասին: Կգա նա մի մարդկանց մոտ և կկոչի նրանց, բայց նրանք չեն հավատա նրան և կմերժեն նրա խոսքը: Եվ նա կհեռանա նրանցից, և նրանց ունեցվածքը կգնա նրա ետևից, այնպես որ նրանց մոտ ոչինչ չի մնա: Հետո նա կգնա ուրիշ մարդկանց մոտ և կկանչի նրանց և նրանք կլսեն և կհավատան նրան: Եվ կհրամայի նա երկինքներին անձրև հեղել և նրանք կհեղեն և նա կհրամայի երկրի վրա բույսեր ա-են, և նա կաճեցնի: Եվ կգա նա մարդկանց մոտ ջրով և կրակով: Կրակը նրա իրականում սառեցրած ջուր է, իսկ ջուրը նրա, կրակ...: Հավատացյալին պետք է խնդրել Ալլահից պաշտպանություն նրանից, «Քարանձավ» սուրայի սկզբնական այբոներով, եթե նա տեսնի նրա հայտնվելը և փորձել ամեն կերպ խուսափել հանդիպելու նրան, վախից չենթարկվելու նրա գայթակղությանը: Ալլահի Մարգարեն *(Մայլապահու
այլեկի ուա սայամ)* ասաց. «Ով լսել է Դաջալի մտտենալու լուրը, թող փախչի նրանից, համարելով իրեն հավատացյալ և հետո կհետևեի նրան կասկածի զգացումից ելնելով:» (Աբու Դաուդ) Կմնա նա երկրի վրա քառասուն օր, օր ինչպես տարի, օր ինչպես ամիս, օր ինչպես շաբաթ և մյուս օրերը ինչպես մեր օրերը: Եվ չի մնա ոչ մի տեղանք կամ քաղաք, որտեղ որ նա չի մտնի, բացի Մեքքայից և Մեդինայից, իսկ հետո կիջնի Հիսուսը *(Մայլապահու
այլեկի ուա սայամ)* և կսպանի նրան:

24. Գոյություն ունի՞ հիմա Դրախտ և Դժոխք: Այո, Ալլահը ստեղծել է դրանք մինչ մարդկանց ստեղծելը և դրանք երբեք չեն անհետանա: Ալլահից ստեղծված բնակիչների Դրախտի համար, կհամաձայնվեն Նրա զթությանը իսկ Նրանով ստեղծված Դժոխքի բնակիչները կհամաձայնվեն Նրա արդարությանը: Եվ յուրաքանչյուրին կհեշտացվի այն, ինչի համար նրանք ստեղծվել են:

25. Ի՞նչ է նշանակում հավատք ճակատագրին: Այդ հաստատուն համոզմունք է այն բանին, որ ամեն լավը և վատը կատարվում է Ալլահի գրվածով և տրված ճակատագրով: Եվ Նա անում է այն, ինչ ցանկանում է: Ալլահի Մարգարեն ^(Մայրաբնու պեյգի ուս սայամ) ասաց. «Եթե Ալլահը պատժեր Իր երկնքի բնակիչներին և Իր երկրի բնակիչներին, նա չէր վերաբերվի նրանց անարդար, պատժելով նրանց: Եվ եթե Նա ներեր նրանց, Նրա գույթը կլիներ ավելի լավ նրանց համար, քան նրանց գործերը: Եվ եթե դու վատնես քանակությամբ ոսկի, նման Ուհուդ սարի, Ալլահի ճանապարհին, Նա չէր ընդունի այն քեզանից այնքան ժամանակ, մինչ դու չես հավատա ճակատագրին և չես համոզվի, որ այն ինչ եկել է քեզ, չէր կարող շրջանցել քեզ իսկ այն, ինչ շրջանցել է քեզ, չէր կարող հասնել քեզ: Եվ եթե դու մահանայիր, ուրիշ այլ բանի կողմնակից, դու անպատճառ կմտնեիր Կրակ:» (Ահմեդ)

Ճակատագրին հավատքը ներառում է իր մեջ հետևյալը.

- Հավատք նրան, որ Ալլահը գիտեր և գիտի բացարձակապես ամեն ինչ ընդհանուր և մանրամասն:
- Հավատք նրան, որ Նա գրառել է այդ ամենը Պահապան Հաբում: Ալլահի Մարգարեն ^(Մայրաբնու պեյգի ուս սայամ) ասաց. «Ալլահը գրառել է արարածների ճակատագիրը հիսուն հազար տարի առաջ, երկրի և երկնքի արարումից:» (Մուսլիմ)
- Հավատք Ալլահի Կամքին, որը միշտ կատարվում է և որը ոչինչ ի վիճակի չէ փոխել, և Նրա հզորությանը, որի համար անհնար ոչինչ չկա: Այն, ինչ Նա ցանկանում է կատարվում է, իսկ ինչ Նա չի ցանկանում, այդ երբեք տեղի չի ունենում:
- Հավատք նրան, որ Ալլահը հանդիսանում է Արարիչ ամենայնի և ամեն ինչ բացի նրանից, համարվում են Նրա արարածներ:

26. Արդյո՞ք մարդն ունի իրական ուժ և կամք: Այո, Մարդն ունի կամք և ընտրություն, բայց նա չի կարող դեմ գնալ Ամենաբարձրյալ Ալլահի կամքին: Ամենաբարձրյալ Ալլահը ասաց, «Բայց դուք չեք ցանկանա այդ, եթե այդ չցանկանա Ալլահը:» (սուրա 81, «Շրջում» այաթ 29):

Ալլահի Մարգարեն ^(Մայրաբնու պեյգի ուս սայամ) ասաց. «Չանացեք, քանզի յուրաքանչյուրին կհեշտացվի այն, ինչի համար նա ստեղծվել է:» (Ալ-Բուխարի, Մուսլիմ)

Ալլահը տվել է մեզ բանականություն, լսողություն և տեսողություն, որ մենք տարբերենք լավը վատից: Կա՞ արդյոք աշխարհում բանական մարդ, ով գողանում է և հետո ասում է « Դա Ալլա հն է կանխորոշել ինձ համար:» Նույնիսկ եթե նա ասեր այդպիսի բան, մարդիկ չէին ընդունի նրա արդարացումը, այլ կպատժեին և կասեին նրան. « Ալլահը կանխորոշել է քեզ այս պատիժը նույնպես:» Այդ պատճառով, բերել Կանխորոշումը որպես պատճառ և արդարացում չի կարելի, քանի որ այն սուտ է: Ամենաբարձրյալ Ալլահը ասաց. «Բազմաստվածները կասեն. «Եթե Ալլահը ցանկանար, ապա ոչ մենք, ոչ մեր հայրերը չէինք տա Նրան գուգրնկեր և չէինք արգելի ոչինչ թույլատրելիից:» Այդ ձևով կհամարելինք մարգարեներին խաբեբաներ, ովքեր նրանցից առաջ էին:» (սուրա 6 «Կենդանիներ», այաթ 148)

27. Ի՞նչ է Բհասնը: Ասաց Ալլահի Մարգարեն (*Մայլալահու
այլեհի ուա սայամ*), իհսանի մասին հարցնողին. «**Այդ, երբ դու երկրպագում ես Ալլահին այնպես, կարծես դու տեսնում ես Նրան: Իսկ եթե դու Նրան չես էլ տեսնում, ապա հիշիր, որ Նա տեսնում է քեզ:**» (Մադխ) Եվ սա ամենաբարձրն է երեք աստիճաններից կրոնի:

28. Քանի՞ ենթաբաժին է ներառում Միաստվածությունը (տահուդ): Երեք ենթաբաժին:

- Տիրակալման Միաստվածություն (տահուդ առ-ռուբուբիյա) - հավատք նրան, որ արարելը, բարիքի (եղբար) և վիրելը, մեռածների կենդանացնելը և ուրիշ այսպիսի գործողություններ, կարող է անել միայն Ալլահը: Տահուդի այս մասը ընդունում էին անհավատները մինչև մարգարեյի (*Մայլալահու
այլեհի ուա սայամ*) առաքելությանը գալը:

- Միաստվածություն երկրպագման մեջ (տահուդ ալ-ուլուհիյա),- սա երկրպագման դիմում է (աղոթք, ուխտ, բարեգործություն և այլն), միայն Ալլահին (և հավատք այնին, որ ոչ ոք արժանի չէ երկրպագման բացի Ամենաբարձրյալ Ալլահից): Եվ որպեսզի մարդիկ երկրպագեն միայն Ալլահին, ուղարկվել են առաքյալները և Գրերը:

- Միաստվածություն Անուններում և Վերագիրներում տահուդ ալ-ասմա վա աս- սիֆետ, ընդունում Ամենաբարձրյալ Ալլահի այն հիանալի Անունները և հոյակապ Վերոգիրները, որոնք հաստատել է իր համար Ալլահը և որոնց մասին հաղորդել է մեզ Նրա Մարգարեն (*Մայլալահու
այլեհի ուա սայամ*) առանց շեղելու¹, մերժելու², փորձերի ներթափանցելու Ալլահի վերագիրների էությանը³ և նմանեցնելու Նրա վերագիրները արարածների հատկություններին:

29. Ո՞վ է Ալլահի մերձավորը, (վալի)⁴: Դա ուղղափառ և աստվածավախ հավատացյալ է: Ամենաբարձրյալ Ալլահը ասաց. «**Ճշմարիտ, Ալլահի մերձավորները (վալի), չունեն վախ և չեն լինի տխուր: Նրանք հավատացել են և եղել են աստվախավախ:**» (Մուրա «Յունուս», այթք 62-63):

Իսկ Ալլահի Մարգարեն (*Մայլալահու
այլեհի ուա սայամ*) ասաց. «**Ճշմարիտ, իմ հովանավորը (վալին) Ալլահն ու ուղղափառ հավատացյալներն են:**» (Ալ-Բուխարի, Մուսլիմ)

**30. Ի՞նչպես մենք պիտի վերաբերվենք Մարգարեյի (*Մայլալահու
այլեհի ուա սայամ*) հետևորդներին:** Մենք պետք է սիրենք նրանց և ասենք. « Թող Ալլահը

¹ Շեղման տակ նկատի է առնվում սկզբնական իմաստի փոփոխումը, որը դրված է Ամենաբարձրյալի Անվան կամ Որակի մեջ: Օրինակ, սխալ է շեղել այնպիսի որակ, ինչպիսին է «Ալլահի ձեռքը » և փոխարինել այն « ուժ, հզորություն» բառերով :

² Մերժման տակ նկատի է առնվում Ալլահի Անունների և Որակների բացարձակ չընդունելը, ինչպես այդ անում են որոշ աղանդներ :

³ Նկատի է առնվում, որ մենք պետք է հավատանք Ալլահի Անունների և Նրա հատկություններին, հասկանալով նրանց ակնհայտ իմաստը և մեկնաբանել համապատասխան նրա, ինչպես արել են Մարգարեն (*Մայլալահու
այլեհի ուա սայամ*) և հետևորդները և չհարցնել «ի՞նչու», որը մնում է այդ մակարդակից հետո : Այսպես, հավաստի հաղիթից հայտնի է Ալլահի ծագման մասին մոտակա երկինք : Մենք ընդունում ենք այդ, քանի որ այդ մասին ասվել է հավաստի հաղիթում, բայց չենք փորձում «ի՞նչու» հարցով իմանալ, ինչպես է լինում այդ ծագումը, քանի որ դրա բացատրությունը չկա հաղիթում և հետևորդների արտահայտություններում :

⁴ Վալի նշանակում է մերձավոր, հովանավոր, շատ մոտիկ մեկը :

գոհանա նրանցով», երբ հիշում ենք նրանց, ինչպես նաև անկեղծ և մաքուր սրտով վերաբերվենք նրանց, պետք է խուսափենք վատ խոսքեր ասելուց նրանց հասցեյին, չքննարկենք այն, ինչ տեղի է ունեցել նրանց միջև, և պետք է բացատրենք մարդկանց իրենց արժանիքները: Միևնույն ժամանակ, նրանք պաշտպանված չեն սխալներից, բայց նրանք մուկաջիրին են, և ճիշտ որոշում գտնողին կա երկու պարզև, իսկ նրան, ով կսխալվի, մեկը: Այդ այն պատճառով, որ նա անկեղծ փորձել է գտնել ճիշտ որոշում, իսկ սխալը նրա ներվում է: Իսկ արժանապատվությունը, որը նրանք ունեն, հնարավորություն է տալիս ծածկել այն բոլոր սխալները, որոնք նրանք կարող էին կատարել: Արժանապատվությամբ նրանք անցնում էին մեկը մյուսից: Հետևողները, նրանց թվում կյանքի ընթացքում Դրախտի մասին ավետիսի տաս կրողները, Ալլահի դիմաց նույն հարթության վրա չեն գտնվում: Նրանցից լավագույնը Աբու Բեքրն է, հետո Օմարը, հետո Օսմանը, հետո Ալին, հետո Տալիան, ազ-Չուբեյրը, Աբդուռուհման իբն Աուֆը, Մաադ իբն աբու Վակասը, Մաիդ իբն Ջեյդը և աբու Ուբայդա իբն ալ-Չարախը: Նրանց հետևում են մնացած մուկաջիրները: Հետո գալիս են Բադր ճակատամարտի մասնակիցները մուկաջիրիններից և անսարներից, հետո մնացած անսարները և հետո մնացած հետևողները: Ալլահի Մարգարեն ^(Մալլաահու ալեհի ուա սալամ) ասաց. «Մի չարաշահեք իմ հետևողներին: Երդվում եմ Նրանով, Ում ձեռքերում է իմ հոգին, նույնիսկ եթե ձեզանից մեկը ծախսի Ուհուդ սարի չափ ոսկի, այն չի հավասարվի նրանցից մեկի ծախսված տրամադրությանը, նույնիսկ ինչ ավելի քիչ է դրանից:» (Ալ-Բուխարի, Մուսլիմ); Ալլահի Մարգարեն ^(Մալլաահու ալեհի ուա սալամ) ասաց. «Ով չարաշահում է իմ հետևողներին, նրա վրա կընկնի Ալլահի, հրեշտակների և բոլոր մարդկանց անեծքը:» (Ալ Տաբարանի)

31. Կարո՞ղ ենք մենք չափազանցնել գովերգումը մարգարեյի ^(Մալլաահու ալեհի ուա սալամ), բարձրացնելով նրան ավելի բարձր դիրքի, նվիրված նրան Ալլահից: Կասկած չկա, որ մեր տեր Մուհամեդը ^(Մալլաահու ալեհի ուա սալամ) մարդկանցից ամենաառաքինին է և Ալլահի արարածներից լավագույնը: Մակայն, մենք չենք կարող նրան չափից դուրս մեծարել, ինչպես դա եղավ Հիսուսի, Մարիամի որդու հետ, որովհետև Ալլահի Մարգարեն ^(Մալլաահու ալեհի ուա սալամ) արգելեց մեզ անել դա ասելով. «Մի անցեք թույլատրելի սահմանները և մի մեծարեք ինձ այնպես, ինչպես մեծարում են քրիստոնյաները Մարիամի որդուն: Ճշմարիտ, ես ստրուկ եմ, ապա ասեք. Ալլահի ստրուկը և Նրա Առաքյալը:» (Ալ- Բուխարի)

32. Հանդիսանու՞մ են արդյոք Գրերի Մարդիկ հավատացյալներ: Հրեաները, քրիստոնյաները և մյուս կրոնների հետևողները ըստ իսլամի անհավատ են, նույնիսկ եթե նրանք հետևում են կրոնի, որի հիմքը ճիշտ է: Որովհետև նա, ով չի թողել իր կրոնը Մարգարե Մուհամեդի ^(Մալլաահու ալեհի ուա սալամ) առաքելությունից հետո և չի ընդունել իսլամ, « այդ երբեք չի ընդունվի և Վերջին Կյանքում չի հայտնվի վնաս կրողների մեջ:» (Մուրա «Բմրան

Ընտանիք», այսօր 95): Եվ եթե մուսուլմանը չի համարում նրանց անհավատ, կամ կասկածում է նրանց կրոնի սուտ լինելուն, ապա նա ինքն է դառնում անհավատ, որովհետև նա հակասում է Ալլահի և Նրա Մարգարեյի (Մայլալահու ալեհի ուա սայալ) հաստատմանը նրանց անհավատության վերաբերյալ: Ամենաբարձրյալ Ալլահը ասում է. «Իսկ համայնքներին, որոնք չեն հավատացել նրան, ընդհանուր Կրակ:» (Մուրա «Հուդ», այսօր 17), (այսինքն, զանազան հավատքների հետևորդներին): Ալլահի Մարգարեն (Մայլալահու ալեհի ուա սայալ) ասաց. « Երդվում են Նրանով, Ում Ձեռքերում է Մուհամեդին հոգին, եթե լսի իմ մասին այդ համայնքից որևէ մեկը, հրեա կամ քրիստոնյա, և դրանից հետո չի հավատա ինձ, նա անպատճառ կմտնի Կրակ:» (Մուսլիմ)

33. Կարելի է վերաբերվել անարդար անհավատի հետ: Ցանկացած տեսակի անարդարության արտահայտում արգելված է, քանի որ Մարգարեյից փոխանցված է, որ Ամենաբարձրյալը ասաց. «Օ, Իմ ստորուկներ: Ճշմարիտ, Ես արգելել եմ անարդարություն Ինձ և արել եմ այդ արգելված ձեզ, մի վարվեք անարդար իրար մեջ:» (Մուսլիմ)

Ալլահի Մարգարեն (Մայլալահու ալեհի ուա սայալ) հարցրեց մարդկանց, «Գիտե՞ք դուք, ով է հանդիսանում սննկացած:» Նրանք պատասխանեցին. «Մեր մեջ սնանկ համարվում է նա, ով չունի ոչ գումար, ոչ ունեցվածք:» Այդ ժամանակ Մարգարեն (Մայլալահու ալեհի ուա սայալ) ասաց. «Ճշմարիտ, իմ համայնքի անդամներից սնանկ կհամարվի նա, ով Հարության Օրը կբերի իր հետ աղոթքներ, պահքեր և բարեգործություններ, բայց կբացահայտվի, որ նա վիրավորել է սրան, չարախոսել է նրան, գողացել է այս մեկի ունեցվածքը, մեկի ուրիշի արյունն է թափել և հարվածել է այս մեկին: Եվ այդ ժամանակ որևէ բան նրա բարի արարքներից կտրվի մեկին, իսկ ինչ որ բան մյուսին: Եվ եթե նրա բարի արարքների պաշարը ավարտվի ավելի շուտ, քան նա կկարողանա վճարել բոլորին, նրա կողմից վիրավորվածների մեղքերից կվերցվի այս կամ այն և կդրվի նրա վրա, իսկ հետո նրան կզցեն Դժոխք:» (Մուսլիմ)

Հարցերի այսպիսի լուծում կլինի նույնիսկ կենդանիների միջև:

34. Ինչ է նորարարությունը (բիդաա): Իբն Ռաջաբը, թող Ալլահը օրհնի նրան ասաց. «Նորարարությունը նոր ստեղծված բան է, որը հիմք չունի Շարիաթում, որը ցույց տրվեր այնտեղ: Ինչ վերաբերվում է նրան, թե ինչի համար Շարիաթում կա հիմք, մատնացուցելով այդ, ապա այդ չի հանդիսանում նորարարություն հատուկ, շարիաթական նշանակությամբ այդ բառի, չնայած հանդիսանում է այդպիսին իր բառագիտական իմաստով:»¹

35. Արդյոք ք կրոնում գոյություն ունի լավ և վատ նորարարություն: Գոյություն ունեն այսօրեր և հաղիթներ, դատապարտելով նորարարությունները իր շարիաթի հասկացությամբ, ավելի ստույգ, ամեն նոր ստեղծվածը, որը հիմք չունի Շարիաթում: Ալլահի Մարգարեն

¹ Այլ խոսքերով, այդ նորարարությունը, ինչ որ նոր բան է, բայց ոչ թե նորարարություն ըստ Շարիաթի տեսանկյունի, այսինքն այն չի հանդիսանում դատապարտելի :

(Մայլապանու
այեցիի ուս սայլամ) ասաց. « Ով արել է որևէ բան, որը չի համապատասխանում մեր
գործին, գործը նրա կմերժվի:» (Ալ-Բուխարի, Մուսլիմ:) Ալլահի Մարգարեն (Մայլապանու
այեցիի ուս սայլամ) նույնպես ասաց. «Ճշմարիտ, ամեն նորարարություն, հանդիսանում է նորամուծություն, իսկ ամեն նորամուծություն, մոլորություն է:» (Աբու Դաուդ): Իմամ Մելիքը, (թող Ալլահը թողություն տա նրան), ասաց, բացատրելով շարիաթի հասկացությունը նորամուծության վերաբերյալ. « Ով բերել է իսլամ նորամուծություն, համարելով այն լավ, նա պնդում է, որ Մուհամեդը (Մայլապանու
այեցիի ուս սայլամ) վարվել է ուխտադրուժ Առաքելության նկատմամբ, այսինքն չի մատուցել այն ճիշտ ձևով, որովհետև Ամենաբարձրյալ Ալլահն ասում է.» Այսօր, Ես ավարտեցի ձեզ համար ձեր կրոնը և ավարտին հասցրեցի Իմ գթասրտությունը ձեր նկատմամբ:»

Գոյություն ունեն նաև հաղիթներ, դրական նկարագրելով նորամուծությունները իր բառագիտական իմաստով, այսինքն, այն, ինչ բերվել է Շարիաթի միջոցով, բայց հետագայում մոռացվել է և Մարգարեն (Մայլապանու
այեցիի ուս սայլամ) դրդել է հիշեցնել մարդկանց այդ մասին: Ալլահի Մարգարեն (Մայլապանու
այեցիի ուս սայլամ) ասաց. « Այն բանից, ով հիմք կդնի լավ սովորույթի իսլամում, որին նրանից հետո կհետևեն ուրիշները, կգրվի պարգև, նման պարգև բոլորին, ովքեր կհետևեն այդ սովորույթին, որը բոլորովին չի նվազեցնի նրանց իսկ պարգևը:» (Մուսլիմ)

Հենց այսպիսի իմաստ ունի «Ումրա» բառը: «Այդ հիանալի նորամուծություն է: «Նա ի նկատի ուներ տառավիհ աղոթքը: Այն օրինականացվել է Շարիաթի կողմից և Ալլահի Մարգարեն (Մայլապանու
այեցիի ուս սայլամ) դրդում էր նրա կատարմանը և ինքն էր կատարում այն երեք գիշերվա ընթացքում, որից հետո թողեց այդ, վախենալով, որ մարդիկ կգնահատեն իր արարքը որպես պարտադիր աղոթք: Եվ այդ ժամանակ «Ումրան» Մարգարեյի (Մայլապանու
այեցիի ուս սայլամ) մահից հետո, վերսկսեցին կատարել բոլոր մարդկանց հետ:

36. Քանի տեսակի փարիսեթյուն(նիֆակ) կա: Երկու տեսակի:

- Փարիսեթյուն համոզմունքում (մեծ փարիսեթյուն), այդ այն է, երբ մարդ ցուցադրում է հավատք, իսկ հոգում հանդիսանում է անհավատ: Այսպիսի մարդը համարվում է կրոնից դուրս եկած և եթե նա մահանա հակված լինելով իր փարիսեթյանը, նա կմահանա անհավատ: Ամենաբարձրյալ Ալլահը ասաց. «Ճշմարիտ, փարիսեցիները կհայտնվեն Կրակի ամենաստորին աստիճանում:» (Մուրա 4 «Կանայք» այաթ 145)

Որակ բնորոշ փարիսիցիներին. նրանք ջանում են խաբել Ալլահին և նրանց, ովքեր հավատացել են, ծաղրում են հավատացյալներին, օգնում են անհավատներին հաղթել մուսուլմաններին և նրանց բոլոր լավ արարքների տակ թաքնված է միայն աշխարհիկ, շահեկան ձգտումներ:

- Փարիսեթյուն արարքներում (փոքր փարիսեթյուն), նա ում այդ բնորոշ է, չի դուրս գալիս իսլամից, բայց գոյություն ունի վտանգ, որ այդ փարիսեթյունը կբերի նրան մեծ փարիսության, եթե նա ժամանակին չի մեղանչի, (և չի թողի փոքր փարիսեթյունը):

Ահա, որակներ նրանց, ում մոտ կա փարիսուսյան այս տեսակը, խոսելով, նա ստում է, խաստանալով, խախտում է խոստումը, մրցակցության մեջ, վարվում է խորամանկ և անարժան, պայմանագիր կնքելուց, խախտում է այն, իսկ երբ նրան վստահում են, նա դավաճանում է: Զգուշացիր, սիրելի եղբայր, գտնել քո մեջ այս որակներից որևէ մեկը և ուշադիր հետևիր քեզ: Մուսուլմանը պիտի վախենա փարիսուսյունից: Հետևողները վախենում էին փարիսուսյունից արարքներում: Իբն Աբու Մուլեյքան, (թող Ալլահը ների նրան), ասաց. «Ես գտա երեսուն հետևող Մարգարեյին ^(Մալայանու այեհի ուա սայամ) և նրանցից յուրաքանչյուրը վախենում էր ընկնել փարիսուսյան մեջ:»

Իբրահիմ, առ-Տեյմին, (թող Ալլահը գոհանա նրանով), ասաց. «Համեմատելով ձեր խոսքերը ձեր գործերով, ես միշտ վախենում եմ բռնել ինձ ստի մեջ:»

Ալ-Հասան ալ Բասրին, (թող Ալլահը գթա նրան) ասաց. «Վախենում է նրանից միայն հավատացյալը, և զգում է իրեն ապահովության մեջ նրանից, միայն փարիսեցին:»

Ումարն ասաց Հուզեյֆին, (թող Ալլահը գոհանա նրանով), «Աղաչում եմ քեզ Ալլահի անունով, ասել է իմ մասին Ալլահի Մարգարեն նրանց մեջ (փարիսեցիների):» Նա պատասխանեց. «Ոչ, և այլևս ես չեմ պատասխանի այսպիսի հարցերի:»

37. Որ մեղքն է Ալլահի առջև համարվում ամենամեծը: Դա Ալլահին զուգրնկեր տալն է (շրթկ): Ամենաբարձրյալ Ալլահն ասում է. «... **քանզի բազմաստվածությունը հանդիսանում է մեծ անարդարություն** » (Սուրա 31 «Լուկման», այաթ 13): Եվ երբ հարցրեցին Մարգարեյին ^(Մալայանու այեհի ուա սայամ) այն մասին, թե որ մեղքն է ամենամեծը, նա պատասխանեց. «**Երբ դրվում է Ալլահին հավասար, իսկ Նա է արարել քեզ:**» (Ալ-Բուխարի, Մուսլիմ)

38. Քանի՞ տեսակի շրթկ գոյություն ունի: Երկու տեսակի: Մեծ շրթկ ¹, այն դուրս է տանում մարդուն իսլամից, և Ալլահը չի ներում այդ անողին, եթե մարդ մահանա չզղջալով: Ամենաբարձրյալ Ալլահը ասաց. «Ճշմարիտ, Ալլահը չի ներում, երբ Նրան զուգրնկեր են դնում, բայց ներում է մնացյալը (ավելի փոքր մեղքեր), ում ցանկանում է:» (Սուրա 4 «Կանայք», այաթ 48):

Այն բաժանվում է չորս տեսակի. 1. Շրթկ դուայում և խնդրանքում:

2. Շրթկ մտադրության և ձգտման մեջ: **3.** Շրթկ հնազանդության մեջ, այդ

¹ Այն դնում է մարդուն դուրս մուսուլմանական համայնքից և ամեն ոք, ով չի մեղանչի մինչ մահ, հավերժ կմնա Դժոխքում: Այսպիսի բազմաստվածություն նկատի ունի երկրպագում ինչ որ մեկին բացի Ալլահից, օրինակ, խնդրանքի դիմումով ինչ որ մեկին Նրան հավասար, կամ գոհաբերություն և ուխտի խոստում սրբերի գերեզմաններին, ջիններին, շեյթաններին, կամ վախ մեռածների, ջինների և շեյթանների նկատմամբ, որոնք, իբր կարող են վնասել մարդուն, կամ ուղարկել նրան հիվանդություն: Կամ դիմում, որևէ մեկին, բացի Ամենաբարձրյալից, կարիքների բավարարում, ցավի մեղմացում և այլն, որին ընդունակ է միայն Ալլահը: Այսպիսի չարիք այժմ կատարվում է սրբերի դամբարանների ու գերեզմանների մոտ: Ամենաբարձրյալը ասաց. «**Եվ երկրպագում են նրանք բացի Ալլահից նրան, ինչ չի բերում նրանց ոչ վնաս և ոչ օգուտ և ասում են.**» Սրանք մեր բարեխոսներն են Ալլահի մոտ:» (Մալիի իբն Ֆաուզան ալ-Ֆաուզանի; «Միաստվածության Գիրք» գրքից):

հնագանդություն է գիտնականին այն բանի արգելման, որը թույլատրել է Ալլահը և թույլտվություն այնին, ինչ նա արգելել է: **4.** Շրթկ սիրո մեջ, երբ մարդ սիրում է ինչ որ մեկին այնպես, ինչպես Ալլահին:

Փոքր շրթկ:¹ Այն չի դուրս բերում կատարողին իսլամից: Այն բաժանվում է երկու տեսակի. **1.** Բացահայտ, որը երևում է բառերում, ինչպիսիք են երդումները Ալլահով, կամ այնպիսի արտահայտություններում, ինչպիսիք են ինչպես հարմար է քեզ և Ալլահին, կամ եթե ոչ Ալլահը և ոչ որևէ մեկը: Նույնպես այն կարող է արտահայտվել գործողություններում, ինչպիսիք են թելերի կամ մատանիների կրելը, ետ պահելու դժբախտությունը: Ինչպես նաև չար աչքից ամուլետների կրելը, կամ վատ նշան տեսնելը ինչ որ բանում, օրինակ անուններում, խոսքերում, վայրերում, թոչնի թոչիչքում:

2. Թաքնված. Այս շրթկ է մտադրություններում և ձգտումներում, (գործողություններ, որոնք ցուցադրաբար են կատարվում):

39. Ինչ տարբերություն մեծ և փոքր շրթկերի միջև: Տարբերությունները հետևյալն են. մեծ շրթկը դուրս է հանում մարդուն իսլամից այս աշխարհում և դատապարտում է նրան Կրակում հավերժ բնակության, հավերժ կյանքում: Ինչ վերաբերվում է փոքր շրթկին, ապա այն չի դարձնում մարդուն անհավատ այս աշխարհում և չի դատապարտում հավերժ կյանքում Կրակի մեջ բնակվելուն: Նույնպես, մեծ շրթկը մարդու արարքները անվավեր է համարում, մինչ դեռ փոքր շրթկը անվավեր է համարում միայն այն գործերը, որի հետ այն կապված է: Մնում է մի վիճելի հարց. ներվու մ է արդյոք փոքր շրթկը միայն զոջամբ, ինչպես մեծ շրթկը, թե այն, ինչպես մեծ մեղք, էթե չզոջաս, կմնա Դատաստանի Օրը Ալլահի հայեցողությանը:

40. Ինչպես կարելի է պաշտպանվել փոքր շրթկից և ո՞րն է զոջումը, եթե այն այնուամենայնիվ կատարվել է: Կարելի է պաշտպանվել ցուցամոլությունից, փորձելով ձգտել անել ամեն ինչ հանուն Ալլահի, և

¹ Փոքր շրթկը երևում է ձգտումներում և ցանկություններում: Այս տեսակի են ցուցամոլությունը և փառասիրությունը: Օրինակ, երբ մարդ անում է մի բան, որը մոտեցնում է նրան Ալլահին, բայց ցանկանում է միջնույն ժամանակ, լսել զովասանքի խոսքեր մարդկանցից, օրինակ աղոթում կամ բարեգործություն է անում հանուն զովասանքի, կամ հիշատակում է Ալլահին և կարդում է Դուրան գեղեցիկ ձայնով, որ մարդիկ լսեն և զովեն նրան : Եթե այսպիսի ցուցամոլությունը միախառնվում է որևէ արարքի հետ, ապա այն դառնում է հաշվելի, քանզի Ամենաբարձրյալ Ալլահն ասում է . « Իսկ ով հուսով է հանդիպել իր Տիրոջը, թող անի բարիք և Տիրոջ հետ չանի ոչ ոքի հավասար:» Դիմելով իր հետևորդներին, մի անգամ Մարգարեն ^(Սալլալանու-սալեհի ուս սալամ) ասաց. «Ամենաարասպիեյին, որից են վախենում են ձեր համար, դա փոքր բազմաստվածությունն է:» Նրանք հարցրեցին նրան, «Իսկ Ինչ է փոքր բազմաստվածությունը:» Նա պատասխանեց .«93ուցամոլությունը:» Մրան են վերաբերվում երկրպագության ծեսերը, որոնք կատարվում են հանուն աշխարհիկ բարիքների: Օրինակ, եթե մարդ հանուն առևտրի կատարում է Հաջ, զուամարի համար մզկիթում աշխատում է իմամ կամ աղոթքի կանչող, (մուազան), ուսումնասիրում է շարիաթի գիտություններ կամ մեկնում է պատերազմի : Մարգարեն ^(Սալլալանու-սալեհի ուս սալամ) ասաց. «Դժբախտ է դինարի ստրուկը, դժբախտ է դիրհեմի ստրուկը և դժբախտ է հազուստի ստրուկը : Նա գոհ է, երբ նրան բարիք է տրվում և եթե ոչինչ չի ստանում, ապա տխրում է :» (Մալիի իբն Ֆաուզանա ալ-Ֆաուզանա «Միաստվածության Գիրք » գրքից):

փոքր ցուցամոլությունից դուայի օգնությամբ: Ալլահի Մարգարեն
(Մայլապահու
այլեհի ուս սալամ) ասաց. «Օ, Մարդիկ, Ջգուշացեք այդ շրրկից, ճշմարիտ, այն
ավելի քիչ տեսանելի է, քան սողացող մրջյունը:» Մարդիկ հարցրեցին
նրան. « Ի նչպես խուսափել նրանից, եթե այն քիչ տեսանելի է, քան
սողացող մրջյունը, Օ, Ալլահի Մարգարե:» Նա ասաց. «Ասացեք. «Օ, Ալլահ,
Մենք թաքնվում ենք քեզ մոտ այն բանից, տանք Քեզ ինչ որ մեկին
գուզրնկեր, իմանալով այդ մասին, և խնդրում ենք Քեզանից ներողություն,
որ մենք անում ենք չիմանալով:»»¹ (Ահմեդ)

Ինչ վերաբերվում է ոչ Ալլահով երդվելու քավությանը, ապա Մարգարեն
(Մայլապահու
այլեհի ուս սալամ) ասաց. «Ով երդվել է ալ-Լյաթ և Ուզգա, թող ասի. « Լե Իլեհե իլա
Ալլահ:»» (Ալ-Բուխարի, Մուսլիմ)

Ինչ վերաբերվում է սնոտիապաշտությանը, ապա Ալլահի Մարգարեն
(Մայլապահու
այլեհի ուս սալամ) ասաց. « Ում, սխալ նախանշանը ետ է պահում անելու, ինչ
մտածել է անել, ապա նա ընկել է շրրկի մեջ:» Մարդիկ հարցրեցին. « Իսկ
ո՞րն է քավությունը դրա:» Նա պատասխանեց. «Պետք է ասվի. «Օ, Ալլահ,
չկա բարիք, բացի Քո բարիքից և չկա թոշուն, բացի Քո թոշուններից ², և չկա
աստվածություն, բացի Քեզանից³:»» (Ահմեդ)

41. Քանի՞ տեսակի անհավատություն (քուֆր) գոյություն ունի: Երկու տեսակի:

• Մեծ քուֆր, այն հանում է մարդուն իսլամից, և այն էլ լինում է հինգ
տեսակ. **1.** Մերժման քուֆր:⁴ **2.** Մեծամտության քուֆր, խոնարհված ճշտի
ճանաչմամբ:⁵ **3.** Կասկածի քուֆր:⁶ **4.** Շեղման քուֆր:⁷ **5.** Փարիսուխության քուֆր:⁸

¹ « Ալլահումա իննա նաուզու բիկա մին ան նուշրիկա բիկա շեյտան նայլամուհու, ուս
նաստախֆիրուկի: »

² Այսինքն թոշունները, ինչպես մյուս արարածները, ենթարկվում են Քեզ և չեն անում
ոչինչ ընդդեմ Քո կամքի և չեն կարող ծառայել վատ, կամ լավ նախանշանների :

³ Ալլահումա լե հայրա իլլա հայրուկ, ուս լե տայրա իլլա թայրուկ, ուս լեիլեհա հայրուկ :

⁴ Նրա մասին Ամենաբարձրյալը ասում է. «Ով է ավելի անարդար, քան նա, ով
մտադրվել է Ալլահի դեմ սուտ, կամ մերժել է ճիշտը, երբ այն եկել է նրա մոտ : Մի թե
գեհեհնում չի անհավատը :»

⁵ Այն մեծամտության անհավատություն է, որը մարդ արտահայտում է կապված կրոնի
հետ, լինելով համոզված նրա ճշմարտությամբ: Այդ մասին Ամենաբարձրյալը ասում է.
«Այդ ժամանակ մենք հրամայեցինք հրեշտակներին,» Խոնարհվեք Ադամին: «Եվ
խոնարհվեցին նրանք, բացի Իբլիսից, ով մերժեց, մեծամտեց և հայտնվեց
անհավատների մեջ :»

⁶ Այդ մասին Ամենաբարձրյալը ասաց. «Եվ մտավ նա իր այգին, պատճառելով
անարդարություն ինքն իրեն և ասաց. «Ես չեմ կարծում, որ այս երբևէ կանհայտանա:
Եվ չեմ կարծում, որ կհասնի Ժամը: Եվ եթե նույնիսկ ես վերադառնամ իմ Տիրոջը ապա
կունենամ ավելի լավ բան, քան այս:» Ի պատասխան դրա, նրա ընկերը ասաց. «Մի թե
դու չես հավատացել նրան, ով ստեղծել է քեզ փոշուց, հետո կաթիլից, հետո դարձրել է
քեզ մարդ : Ինչ վերաբերվում է ինձ, ապա ես ասում եմ, որ իմ Աստվածը Ալլահն է, եվ
ես ոչ որի չեմ տալիս Տիրոջը գուզրնկեր :»»

⁷ Այդ մասին Ամենաբարձրյալը ասաց. « Իսկ նրանք, ովքեր չեն հավատում, շեղվում են
այն բանից, ինչ նրանց տեղեկացնում են :»

⁸ Այդ մասին Ամենաբարձրյալը ասաց. « Այդ այն բանի համար է, որ նրանք հավատացել
են, իսկ հետո դարձել են անհավատ և դրված է դրոշմ նրանց սրտերում և նրանք չեն
խելոթանում :»

• Փոքր քուֆր:¹ սա Ալլահին չլսելն է: Այն չի հեռացնում մարդուն իսլամից, օրինակ մուսուլմանի սպանությունը:

42. Ի՞նչ է իսլամի որոշումը կապված խոստման հետ: Մարգարեն ^(Մալլալահու ալեհի ուս սալամ) համարում էր խոստումը անցանկալի,(մաքրուհ), քանզի Ալլահի Մարգարեն ^(Մալլալահու ալեհի ուս սալամ) ասաց. «Ճշմարիտ, այն չի բերում ոչ մի բարիքի:» (Ալ-Բուխարի) Խաստումը կլինի անցանկալի, եթե այն տրվում է բացառապես Ալլահին: Եթե այդ խոստումը տրված չէ Ալլահին, ինչպես այն դեպքում, երբ այն տրվում է գերեզմանին, կամ «սրբին», ապա այսպիսի երդումը ընդհանրապես արգելված է և այն ոչ մի դեպքում չպիտի իրականացվի:

43. Ի՞նչպիսին է իսլամի որոշումը կապված պայծառատեսներին և բախտագուշակներին այցելելուն: Այդ արգելված է (հարամ), եվ եթե մարդ գնացել է նրանց մոտ, ցանկանալով իր համար օգուտ բերել, ապա եթե նույնիսկ չի հավատացել նրանց համոզմունքներին անհայտի գիտությանը, նրա աղոթքը չի ընդունվում քառասուն օր: Մարգարեն ^(Մալլալահու ալեհի ուս սալամ) ասաց. «Ով գնացել է բախտագուշակի մոտ և հարցրել է նրան որևէ բան, նրա աղոթքը չի ընդունվի քառասուն օր:» (Մուսլիմ) Իսկ ով գնացել է նրանց մոտ և հավատացել է նրանց համոզմունքներն, որ նրանք գիտեն Գադտնին, ապա նա մերժում է Մուհամեդի ^(Մալլալահու ալեհի ուս սալամ) կրոնը: Ալլահի Մարգարեն ^(Մալլալահու ալեհի ուս սալամ) ասաց. «Ով եկել է պայծառատեսի կամ բախտագուշակի մոտ և հավատացել է նրան, ինչ նա ասում է, մերժել է այն, ինչ ուղարկվել է Մուհամեդին:» (Աբու Դաուդ)

44. Ո՞ր դեպքերում է անձրևի խնդրանքը աստղերին համարվում մեծ շրթկ և որ դեպքերում փոքր: Ով հավատում է, որ աստղերը և մոլորակները

¹ Այն չի հանում մարդուն մուսուլմանական համայնքից և արտահայտվում է արարքներում: Խոսքը գնում է մեղքերի մասին, որոնց կատարումը Ղուրանում և Մուննայում համարվում են անհավատություն, բայց որոնք չեն հասնում Նրա դժգոհությանը, որը արաբերեն նույնպես հնչում է, ինչպես «քուֆր»: Այդ մասին հիշեցվում է Ամենաբարձրյալի հետևյալ խոսքերում. «Ալլահը, բերում է որպես օրինակ ավանի բնակիչներին., որոնք ապրում էին հանգստության և խաղաղության մեջ: Նրանք ձեռք էին բերում բարիք բավարար քանակով ամեն տեղից, բայց չէին գոհանում Ալլահից այդ բարիքների համար ...:» Դրանց վերաբերվում են մուսուլմանի հետ մարտը, որի մասին Մարգարեն ^(Մալլալահու ալեհի ուս սալամ) ասաց. « Մուսուլմանին վիրավորելը, վատ արարք է, իսկ նրա հետ մարտնչելը անհավատություն:» Նա նույնպես ասաց. «Մի դարձեք իմ մահից հետո կրկին անհավատներ, ովքեր կտրում են միմյանց գլուխները:» Նրանց նույնպես վերաբերվում են երդումները, երբ մարդ չի երդվում Ալլահով, քանզի Մարգարեն ^(Մալլալահու ալեհի ուս սալամ) ասաց. Ալլահով չերդվողը ընկավ անհավատություն կամ բազմաստվածություն:» Սակայն հավատացյալը, նույնիսկ եթե մեծ մեղք է գործել, չի դառնում անհավատ, քանզի Ամենաբարձրյալը ասաց. «Օ, Նրանք, ովքեր հավատացել են, կանխագրված է ձեզ վրեժ սպանվածների համար...:» Նկատեք, տվյալ պարագայում, նա չի բացառում մարդասպանին հավատացյալների միջից, կոչելով նրան եղբայր այն մեկին, ով իրավունք ունի վրեժի: Ամենաբարձրյալը ասաց. « Իսկ եթե նրա եղբայր կների, ապա վերցրեք զումար նրանից արդար ձևով, և նա պիտի վճարի բարի կամքով:» Տվյալ դեպքում, անկասկած, նկատի է առնվում եղբայրությունը կրոնում: Ամենաբարձրյալը նույնպես ասաց. «Եթե երկու ջոկատ, բաղկացած հավատացյալներից մարտնչեն միմյանց դեմ, ապա հաշտեցրեք նրանց:» Եվ հետո .« Չէ որ հավատացյալները եղբայրներ են : Հաշտեցրեք ապա ձեր երկու եղբայրներին ...» (Մալեհ իբն Ֆաուզի ալ-Ֆաուզի «Միաստվածության Գիրք» գրքից) :

կարող են ազդեցություն տալ իրենք իրենց, առանց Ալլահի Կամքի և համոզված է, որ նրանք ինքնուրույն նվիրում և կոչում են անձրև, ապա նա կատարում է մեծ շրթկ: Ով վստահ է, որ աստղերը ունեն ցանկացած ազդեցություն Ալլահի Կամքով և որ Ալլահը նրանց պատճառ է դարձրել անձրևի և հաստատել է այնպիսի սովորույթ, որ անձրևը գալիս է հենց հետևյալ աստղի հայտնվելուց հետո, ապա այդ արգելված է և ներկայացնում է փոքր շրթկ, որովհետև նա պատճառ է դարձրել աստղին անձրևի գալու, առանց ապացույցների: Ինչ վերաբերվում է աստղերը օգտագործելուն սեզոնի կողմնորոշման և անձրի գալու մոտավոր ժամանակի համար, ապա այս թույլատրելի է:

45. Ո՞րոնք են մուսուլմանի պարտավորությունները իշխանություն ունեցողի հետ վերաբերմունքում: Պարտադիր է լսել նրանց այն բանում ինչ մենք ցանկանում ենք և այն բանում, ինչ մենք չենք ուզում և չի կարելի ընդվզել նրանց դեմ, նույնիսկ, եթե նրանք անարդար են: Մենք չպետք է Ալլահին կոչենք ընդդեմ նրանց, (այսինքն կոչենք Ալլահի բարկությունը, դժբախտություն, հիվանդություն նրանց համար), և դադարենք ենթարկվել նրանց: Դրա փոխարեն, մենք պիտի խնդրենք նրանց համար արդարություն, բարեկեցություն և ողջախոհություն խոսքերում և արարքներում: Եվ մենք կարծում ենք, որ նրանց հնազանդվելը համարվում է Ամենաբարձրյալ Ալլահին հնազանդվելու մի մաս, եթե միայն նրանք չեն հրամայում անել այն, որը նշանակում է անհնազանդություն Ալլահին: Այսինքն, եթե մուսուլմանին հրամայում են անել այն, ինչ անհնազանդություն է Ալլահին, ապա նա չպիտի ենթարկվի, բայց միևնույն ժամանակ, նա պիտի կատարի մնացած բոլոր հրամանները, որոնք չեն պարունակում իրենց մեջ ոչինչ արգելված: Ալլահի Մարգարեն (*Մայլալահու ալեհի ուա սալա*). «**Դու պիտի լսես և ենթարկվես առաջնորդին, նույնիսկ եթե ձեռնով կլինի քո մեջքը և վերցված կլինի քո ունեցվածքը: Լսիր և ենթարկվիր:**» (Մուալիմ)

46. Կարելի է հարցնել Ալլահի կողմից դրված հրամանների և արգելքների իմաստը կամ իմաստությունը: Այո, պայմանով, որ հավատքը կամ արարքը կախում չի ունենա իմաստի հասկացության հետ, կամ նրա գոհությամբ: Իմաստի գիտելիքը պիտի ավելացնի մուսուլմանի դիմացկունությունը և հաստատակամությունը ճշմարիտի ուղղում: Մակայն, բացարձակ հնազանդությունը և հարցերից խուսափելը հանդիսանում է կատարելության նշան Ալլահին ենթարկվելու մեջ, ինչպես նաև հավատք Նրան և Նրա բացարձակ իմաստության: Հենց այսպիսին են եղել հետևորդները:

47. Ի՞նչ են նշանակում Ամենաբարձրյալի «Ամեն լավը, ինչ հասնում է քեզ, գալիս է Ալլահից: Իսկ ամեն վատը, ինչ հասնում է քեզ, գալիս է հենց քեզանից» խոսքերը: Տվյալ իրավիճակում լավը նշանակում է Ալլահի գրաստությունը, իսկ վատը, փորձությունը նրա կողմից: Իսկ այս բոլորը կանխորոշված է Ամենաբարձրյալ Ալլահի կողմից: Լավը վերաբերվում է

Ալլահին, որովհետև այդ Նա է ստեղծել այդ: Ինչ վերաբերվում է վատին, ապա, Նա ստեղծել է այդ որոշակի մտադրությամբ: Եվ եթե հաշվի առնենք այդ մտադրությունը, ապա այն վերաբերվում է Նրա բարիքներին և, ճշմարիտ Նա երեբեք վատ բան չի անում: Նրա ցանկացած արարք բարիք է: Ալլահի Մարգարեն <sup>(Մայլապահու
այլեհի ուս սալամ)</sup> ասաց. «Ամեն բարիք Քո ձեռքերում է, իսկ չարիքը Քեզ չի վերաբերվում:» (Մուսլիմ)

Ալլահի ստրուկների գարծողությունները հանդիսանում են Ալլահի արարքները, և միննույն ժամանակ, նրանք Ալլահի ստրուկների ձեռքբերումներն են: Ամենաբարձրյալ Ալլահը ասաց. «Նրան, ով գոհաբերություններ էր արել և եղել էր աստվածավախ, ով ընդունում էր ամենալավագույնը, Մենք կհեշտացնենք ճանապարհը ամենահեշտին: Իսկ նրան, ով գծուծ էր և ենթադրում էր, որ ոչ մի բանի կարիք չունի, ով համարում էր լավագույնը սուտ, Մենք կհեշտացնենք ճանապարհը դեպի ամենադժվարը:» (Մուրա 92 «Գիշեր» այաթներ 5-10)

48. Կարելի է ասել, «Այս շահիդը»: Ինչ որ մեկի մասին կոնկրետ ասել, որ նա շահիդ է, այդ նույնն է, որ ասեն, թե նա անպատճառ կյանքի Դրախտ: Իսկ սուննայի հետևորդների համոզմունքները հետևյալն են, մենք չենք ասում որևէ կոնկրետ մուսուլմանի մասին, որ նա պատկանում է Դրախտի բնակիչների թվին, կամ Դժոխքի (բացառությամբ նրանց, ում բնակության մասին հաղորդել է Մարգարեն <sup>(Մայլապահու
այլեհի ուս սալամ)</sup>), որովհետև այն հասանելի չէ մեր գիտելիքներին, և նաև մեզանից թաքնված է մահվան ժամանակ մարդու ներքին վիճակը: Արարքները գնահատվում են իրենց ավարտով, իսկ մտադրությունները, որոնցով կատարվել են այս գործերը, հայտնի են միայն Ալլահին: Այնուամենայնիվ, մենք հույս ունենք պարզևի բարիք անողների համար և վախենում ենք պատիժներից, վատ արարք անողների համար:

49. Կարելի է ասել որևէ կոնկրետ մուսուլմանի մասին, որ նա անհավատ է: Չի կարելի մեղադրել կոնկրետ մուսուլմանի անհավատության, շրկի կամ փարիսության մեջ, եթե ոչինչ նրա խոսքերում կամ արարքներում չի ցույց տալիս այդ: Իսկ ինչ նրա սրտում է, մենք չգիտենք և այդ իսկ պատճառով թույլ ենք տալիս գաղտնի միայն Ամենաբարձրյալ Ալլահին:

50. Կարելի է կատարել շրջանց (տաուաֆ) ինչ որ բանի շուրջ բացի Քաաբայից: Չկա այնպիսի վայր աշխարհում, որի շուրջ կարելի է շրջանցել բացի օրհնված Քաաբայից և չի կարելի նրան նմանեցնել որևէ վայր, որքան էլ որ հարգալի այն լինի: Եվ նա, ով կատարում է շրջանց մեկ ուրիշ վայրի շուրջ, փառաբանելով այդ, ապա դառնում է անհնազանդ Ալլահին:

ՄՐՏԻ ԱՐԱՐՔՆԵՐԸ

Ամենաբարձրյալ Ալլահը ստեղծել է սիրտը և արել է այն միապետ, իսկ մարմնի մյուս օրգանները նրա ենթականերն են: Իսկ ինչպես հայտնի է, ինչպիսին է միապետը, այնպիսին են ենթակաները: Ալլահի Մարգարեն ^(Մալլալահու ալեյհի ուա սալամ) ասաց. «Եվ, ճշմարիտ, մարմնում կա մի փոքր մաս, որը լավ լինելով, լավն է դարձնում ամբողջ մարմինը, իսկ լինելով վատ, դարձնում է վատ և ամբողջ մարմինը: Դա սիրտն է:» (ԱԼ-Բուխարի, Մուալիմ)

➤ Այն հավատքի կամ անհավատության, փարիսության և շրրկի տարբար է: Ալլահի Մարգարեն ^(Մալլալահու ալեյհի ուա սալամ) ասաց. «Աստվածավախությունը **ահա այստեղ է:**» Այս խոսքերով նա երեք անգամ ցույց տվեց իր կուրծքը: Այս հաղիթը փոխանցված է (Մուալիմ)-ից:

➤ **Հավատք.** Այն համոզմունք է, խոսք և արարք, իսկ կոնկրետ, համոզմունք սրտում, լեզվով արված վկայություն և սրտի ու մյուս օրգանների արարքներ: Սիրտը հավատում և հաստատում է, որի արդյունք է դառնում լեզվով արված վկայությունը: Հետո սիրտը սկսում է գործել, սիրել, վախենալ, հուսալ և լեզուն սկսում է հիշատակել Ալլահին, կարդալ Դուրան, իսկ մարմնի մյուս մասերը, կատարել երկրային խոնարհումներ, ինչպես նաև բարի գործեր, որոնք մոտեցնում են մարդուն Ալլահին: Մարմինը հնազանդորեն հետևում է սրտին: Այն, ինչ հաստատվել է սրտում, անպատճառ արտահայտվում է մարմնի վրա, չնայած դրա արտահայտությունները կարող են տարբեր լինել:

➤ Սրտի արարքների տակ հասկացվում են գործեր, որոնք բխում են սրտից և կապված են նրա հետ: Այդ արարքներից ամենահզորը Ամենաբարձրյալ Ալլահին հավատալն է, որը սրտում է: Սրտի արարքներին են վերաբերվում ինչ որ բանի իսկության գիտակցությունը, որը ծնում է հնազանդություն և հաստատում: Սրան են վերաբերվում ստրուկի սրտում ծնվածը Տիրոջ նկատմամբ, այսինքն, սեր, վախ, հույս, հնազանդություն, վստահություն, համբերություն և այլն:

➤ **Սրտի ամեն արարք ունի իր հակասությունը, սրտի համապատասխան արատը:** Անկեղծությանը հակասում է ցուցադրաբար արված արարքները, հաստատուն համոզվածությամբ այսինքն կասկած, սիրուն ատելություն և այլն: Եվ եթե մենք բավարար ուշադրություն չդարձնենք մեր սրտերին և նրանց ուղղմանը, այդ հակասությունները կհաղթահարեն նրանց և կկործանեն: Ալլահի Մարգարեն ^(Մալլալահու ալեյհի ուա սալամ) ասաց. «« **Ճշմարիտ, երբ մարդ մեղք է գործում, նրա սրտում հայտնվում է սև կետ: Եթե նա դադարի և խնդրի Ալլահից թողություն և մեղանջի, այն ջնջվում է: Եթե նա վերադառնում է մեղքին, ապա կետը մեծանում է և այդպես շարունակվում է այնքան ժամանակ, մինչ սևությունը չի պատում նրա ամբողջ սիրտը:** Այս է պարուրումը, որը հիշատակվում է Ամենաբարձրյալի Խոսքերում: «**Բայց ոչ, նրանց սրտերը պարուրված են նրանցով, ինչ նրանք ձեռք են բերել:**» (Ատ-Տիրմիզի): Ալլահի Մարգարեն ^(Մալլալահու ալեյհի ուա սալամ) նույնպես ասաց. «Գայթակղությունները հանդիսանում են սրտերին ինչպես խսիր, թել առ թել և և սրտում, որը

ներծծում է դրանք, հայտնվում է սև կետ: Իսկ սրտում, որը մերծծում է դրանք, հայտնվում է սպիտակ կետ: Վերջովերջո, մարդու սիրտը դառնում է կամ սպիտակ, ինչպես մաքուր երկինք, և նրան չեն վնասի գայթակությունները, քանի դեռ գոյություն ունեն երկինքները և երկիրը, կամ սև և փոփոխված և չի դրդի հաստատման և խուսափման կշտամբանքից, այլ կհետևի միայն իր կրքերին:» (Մուսլիմ)

➤ Ավելի կարևոր է և պարտադիր իմանալ սրտի երկրպագման տեսակները, քան իմանալ գործեր, որոնք պիտի կատարվեն մարմնի մյուս մասերով, որովհետև նրանք հիմք են, իսկ մարմնի մասերի գործերը ճյուղավորումներ, լրացումներ և սրտի գործերի պտուղներ: Ալլահի Մարգարեն ^(Մայլապանու ալեհի ուա սալամ) ասաց. «Ճշմարիտ, Ալլահը չի նայում ոչ ձեր տեսքին, ոչ ձեր հարստությանը, այլ նայում է Նա ձեր սրտերին և ձեր արարքներին:» (Մուսլիմ)

Սիրտը, գիտելիքների, մտածմունքների և մտորումների տարրա է, այդ իսկ պատճառով մարդկանց դիրքերը Ալլահի առջև սահմանվում են հավատքով, հաստատակամությամբ, անկեղծությամբ, որոնք սրտում են: Ալ-Հասան ալ-Բասրին ասում էր. «Ճշմարիտ, Աբու Բաքրը առաջ անցավ մյուս հետևորդներից ոչ թե ի շնորհիվ իր աղոթքների և պահքի, այլ շնորհիվ հավատքի, որը հաստատվել էր նրա սրտում: »

➤ **Սրտի արարքները գերազանցում են մարմնի մյուս օրգանների արարքներից:**

1. Սրտով երկրպագման խախտումը, կարող է խախտել երկրպագմանը, որը կատարվում է մարմնի մյուս մասերով: Օրինակ, բարի գործը չեղյալ է համարվում, եթե կատարվում է ի ցույց մարդկանց: **2.** Սրտով արված արարքները հիմք են, իսկ առանց մտադրության արված խոսքը կամ արարքը չի դատապարտվում: **3.** Սրտով արված գործերը պատճառ են հանդիսանում գտնվել Դրախտի բարձր աստիճանում, օրինակ աշխարհիկ բարիքներից օգտվելու զսպվածություն (գուհդ): **4.** Սրտով արված արարքները ավելի դժվար են, քան մարմնի մյուս մասերով արված արարքները: Իբն ալ-Մունկադիիրը նույնիսկ ասաց. «Ես պայքարեցի ինձ հետ քառասուն տարի, և միայն հետո նրանք սկսեցին ստացվել համապատասխան ձևով:» **5.** Սրտով արված արարքների արդյունքները ավելի գեղեցիկ են, քան մյուս օրգաններով արված արարքները: Որպես օրինակ, կարելի է բերել Ալլահի նկատմամբ սերը: **6.** Սրտով արված արարքների պարզևը ավելին է, քան մարմնի մասերի արարքների համար: Աբու – ադ-Դարդան ասում է. «Մեկ ժամ մտորումը ավելի լավ է, քան ամբողջ գիշեր աղոթելը:» **7.** Սրտով արված արարքները հանդիսանում են շարժիչ մարմնի մյուս մասերի համար, և ստիպում են նույնպես կատարել որոշակի արարքներ: **8.** Սրտով արված արարքները կարող են մեծացնել պարզևը մարմնի մյուս մասերով արված արարքների համար, կարող են պակասեցնել, ավելացնել և ոչնչացնել այն ընդհանրապես: Որպես օրինակ կարելի է բերել աղոթքի հնազանդությունը: **9.** Որոշ դեպքերում, սրտով արված արարքները կարող են լրացնել մյուս մասերի արարքների

բացակայությունը: Որպես օրինակ կարելի է բերել ողորմություն տալու մտադրությունը գումարի բացակայության պարագայում: **10.** Սրտով արված արարքների պարզևր սահման չունի: Որպես օրինակ կարելի է բերել համբերությունը: **11.** Սրտով արված արարքների պարզևր շարունակվում է գրվել մարդուն նույնիսկ երբ մյուս մասերը մարմնի դադարել են համապատասխան արարքը, կամ կորցրել են ունակությունը կատարելու այն: **12.** Սրտով արված արարքները կարող են նախորդել մարմնի մյուս մասերով արված արարքներին, կարող են կատարվել միննույն ժամանակ:

➤ **Մինչ մարմնի մասերը կկատարեն ինչ որ արարք, սիրտը անցնում է մի քանի փուլեր:**

- 1. ՊՍՏՄԱՆՄԱՆ ՄԻՏՔ,** դա առաջին միտքն է արարքի, որը առաջացել է սրտում:
- 2. ԱՐՄԱՏԱՑԱԾ ՄԻՏՔ,** այսինքն հաստատված սրտում:
- 3. ՀՈԳՈՒ ՍՈՏԻՎԱՑԻԱ,** մարդը կասկածում է, անել հետևյալ արարքը, թե ոչ:
- 4. ՄՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ,** մարդը հակվում է նրան, որ ավելի լավ է կատարել այդ արարքը:
- 5. ՀԱՍՏԱՏԱԿԱՍՈՒԹՅՈՒՆ,** մարդը հաստատակամորեն մտադրվել է կատարել այդ արարքը: այլ կերպ ասած. Նա որոշում է ինքն իր համար, որ կկատարի հետևյալ արարքը:

Ինչ վերաբերվում է առաջին երեք փուլերին, ապա նրանց համար մարդ չի ստանում պարզև,(եթե խոսքը գնում է բարի գործերի մասին), և նրան չի վերագրվում մեղք, (եթե խոսքը վերաբերվում է վատ արարքի մասին): Եթե կա մտադրություն, մարդուն վերագրվում է պարզև բարի արարքի կատարման մտադրության համար, բայց չի վերագրվում մեղք, վատ արարքի կատարման համար: Եթե արդեն կա հաստատակամություն, մարդուն վերագրվում է պարզև բարիք գործելու համար և վերագրվում է մեղք, վատ արարք գործելու հաստատակամության համար: Որովհետև, հաստատակամությունը ենթադրում է, որ եթե մարդուն ոչինչ չխանգարի, նա անպատճառ կկատարի մտադրվածը: Ամենաբարձրյալ Ալլահը ասում է. **« Ճշմարիտ, նրանց, ովքեր ցանկանում են, որ հավատացյալների մեջ տարածվի վատը, պատրաստված է տանջալի պատիժ:»** Իսկ Ալլահի Մարգարեն ^(Մայլապետ) _(պեյգեմբերն ուս սալամ) ասում է. **«Եթե երկու մուսուլման խաչել են սրերը, ապա և մարդասպանը և սպանվողը կրնկնեն կրակ:»** Մարդիկ հարցրեցին. **«Օ, Ալլահի Մարգարե, մարդասպանի հետ ամեն ինչ պարզ է, իսկ ինչու՞ նաև սպանվածը:»** Նա պատասխանեց.**« Նա էլ էր ցանկանում սպանել իր ընկերոջը:»** (Ալ- Բուխարի)

➤ **ԵԹԵ ՄԱՐԴԸ ՄԵՂՔ ԳՈՐԾԵԼՈՒ ՀԱՍՏԱՏԱԿԱՍՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԶԳՈՐԾԻ ԱՅՆ, ԱՊԱ ԱՅՄՊԻՄԻ ԴԵՊՔԵՐԸ ԿԱՐԵԼԻ Է ԲԱԺԱՆԵԼ ՉՈՐՍ ՏԵՍԱԿՆԵՐԻ.**

- 1)** Մարդը մերժում է գործել այդ մեղքը վախենալով Ալլահից, այսպիսի մարդը ստանում է պարզև: **2)** Մարդը մերժում է գործել այդ մեղքը վախենալով մարդկանցից, ապա այդ մարդուն վերագրվում է մեղք, քանի որ մեղքերի մերժումը երկրպագություն է, իսկ երկրպագությունը կարող է

լինել միայն առ Ալլահ: **3)** Մարդը չի կարողացել կատարել տվյալ արարքը և միևնույն ժամանակ նա չի արել այն, ինչ անհրաժեշտ է նպատակին հասնելու համար, այդպիսի մարդուն նույնպես վերագրվում է մեղք, այն կատարելու հաստատակամության համար: **4)** Մարդ չի կարողացել կատարել տվյալ արարքը և միևնույն ժամանակ, նա արել է այն, ինչ անհրաժեշտ է նպատակի իրականացման համար, բայց նրան չի հաջողվել կատարել տվյալ արարքը, որովհետև խանգարել են նրանից չկախված հանգամանքներ, այդպիսի մարդուն վերագրվում է մեղքը, որովհետև եթե չլինեյին հանգամանքները, նա կիրականցներ մտադրվածը: Եթե մեղք գործելուն ուղեկցում է մտադրությունը, ապա նրան սպասվում է պատիժ, անկախ նրանից անմիջապես է նա կատարել արարքը, թե ավելի ուշ: Ով կատարել է որևէ արգելված բան մեկ անգամ և միևնույն ժամանակ ունի մտադրություն կատարել այն կրկին առաջին իսկ հնարավորության դեպքում, նա պնդում է մեղքում և արժանի է պատժի մտադրության համար, նույնիսկ եթե այն չի իրագործվել:

ՄՐՏԻ ՈՐՈՇ ԱՐԱՐՔՆԵՐ

➤ **ՄՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ.** ԱՅՍ որոշակի արարքի կատարման տրամադրվածություն է և ցանկություն է կատարել այն: Առանց մտադրության արարքը չի ընդունվում Ամենաբարձրյալից և համարվում է անվավեր: Ալլահի Մարգարեն ^(Մայլանու) _(պեյգեմբար) ասաց. «**Ճշմարիտ արարքները գնահատվում են մտադրությամբ և իրոք, յուրաքանչյուրին կհասնի միայն այն, ինչ նա մտադրված էր ձեռք բերել:**» (Ալ-Բուխարի, Մուսլիմ)

Իբն Ալ-Մուբարակն ասաց. «Բարիքները, որոնք դու կատարում ես, կարող է քիչ է, բայց պարզև նրանց համար բազմապատկում է մտադրությունը: Եվ երբեմն արարքները շատ են, բայց մտադրությունը քչացնում է դրանք:»

Ալ-Ֆուլեյլն ասաց. «Ամենաբարձրյալ Ալլահը նայում է քո մտադրությանը և եթե, քո արարքները հանուն Ալլահի են, այն կոչվում է անկեղծություն: Այդ, երբ արարքը կատարվում է միայն հանուն Ալլահի և չկա այնտես տեղ ուրիշ որևէ մեկի համար: Եթե արարքը կատարվում է ոչ հանուն Ալլահի, այդ ցուցամոլություն, փարիսեություն և նման բան է:»

➤ **ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ,** բոլոր մարդիկ կորուսյալներ են, բացի նրանցից, ովքեր ձեռք են բերել գիտելիք: Եվ բոլորը, ովքեր գիտեն, կորուսյալ են, բացի նրանցից, ովքեր աշխատում են: Եվ բոլոր նրանք, ովքեր աշխատում են կորուսյալ են, բացի անկեղծներից: Ով ցանկանում է հնազանդ լինել Ալլահին, ապա նրա առաջնահերթ խնդիրն է ուշադրություն դարձնել իր մտադրության վրա: Հասկանալով անկեղծության իրական էությունը, նա պիտի ապացուցի այդ գործնականորեն: Առանց մտադրության արարքը անօգուտ աշխատանք է: Իսկ մտադրությունը առանց անկեղծության ցուցամոլություն է, իսկ անկեղծությունը առանց կյանքի հավատքի, ոչինչ է:

Արարքները բաժանվում են երեք խմբի.

1. ԱԼԼԱՀԻՆ ՉԼՍԵԼԸ. Գործում բարի մտադրությունը, որը հանդիսանում

է Ալլահին չլսելը, չի ընդունվում: Իսկ եթե այն ընթանում է վատ մտադրությամբ, մեղքը նրա կատարման համար մեծանում է:

2. ԹՈՒՅԼԱՏՐԿԱԾԸ. Այս տեսակի արարքները նույնպես համընթանում են որոշակի մտադրություններով: Եվ, եթե մարդ ունի ճիշտ մտադրություն, այսպիսի արարքը կարող է լինել Ալլահին մոտեցման առիթ:

3. ԲԱՐԻ ԳՈՐԾԵՐԸ, (Ալլահին հնազանդելը): Նրանց ճշտությունը կախված է մտադրությունից¹, որը կարող է բազմապատկել պարզև կատարվածի համար: Եթե մարդ մտադրվել էր կատարել տվյալ արարքը ի ցույց մարդկանց, ապա այն դառնում է Ալլահին չլսել և փոքր շքրկ, որը կարող է վերածվել մեծի: Այս տեսակը կարելի է բաժանել երեք տեսակի.

1. Մարդը երկրպագում է ի ցույց մարդկանց և միայն սա է դրդում նրան երկրպագել: Սա շքրկ է, իսկ այսպիսի երկրպագությունը համարվում է սուտ:

2. Սկզբում արարքը արվել է հանուն Ալլահի, բայց հետո, նրան խառնվել է մտադրությունը անել այդ ի ցույց մարդկանց: Եթե գործը վերաբերվում է օրինակ ողորմությանը, այսինքն նրա սկիզբն ու վերջը կախված չեն միմյանցից, ապա սկիզբը կլինի վավեր, իսկ վերջը անվավեր: Եթե սկիզբն

¹ Ալլահի Մարգարեն (*Մայլապահու պեղեհի ուս սայա*) ասաց. «Ով մտադրվել է բարի գործ և չի արել այն, Ալլահը կգրի այդ Իր մտո նրա համար, որպես ամբողջական բարիք: Իսկ եթե նա մտադրվել է բ կատարել է այդ, ապա Ալլահը կգրի այդ Իր մտո ինչպես տաս բարիք, մինչ յոթհարյուր անգամ և այսպես մինչ շատ անգամներ : Իսկ ով մտադրվել է վատ արարք և չի իրականացրել այն, Ալլահը կգրի Իր մտո, ինչպես ամբողջական բարիք: Իսկ եթե նա մտադրվել է և արել է այդ, Ալլահը կգրի այդ, ինչպես մեկ վատ արարք:» (Ալ-Բուխարի, Մուսլիմ)

Ալլահի Մարգարեն (*Մայլապահու պեղեհի ուս սայա*) ասաց. «Ճշմարիտ, այս աշխարհում կա ձորս տեսակի մարդ: Առաջինին պատկանում է այնպիսի ստրուկը, ում Ալլահը նվիրել է հարստություն և գիտելիք և ունենալով այդ, նա վախենում է Իր Տիրոջից, պահպանում է բարեկամական կապերը և գիտի այն մասին, թե ինչ պիտի անի պատկանելիքով հանուն Ալլահի, ապա այսպիսի մարդը կհայտնվի լավագույն դրության մեջ : Երկրորդին պատկանում է այն ստրուկը, ում Ալլահը տվել է գիտելիտ և չի տվել ունեցվածք, և ով ասում է, «Եթե ես ունենայի հարստություն, ապա կանեյի նույնը, ինչ այս մեկը», լինելով անկեղծ իր մտադրություններում և հետևելով նույն մտադրություններին ինչպես առաջինը, ապա կստանա նույն պարզևր, ինչպես նա : Երրորդին պատկանում է այն ստրուկը, որին Ալլահը տվել է հարստություն, բայց չի տվել գիտելիք և նա օգտագործում է այդ առանց մտածելու, չի վախենում Ալլահից ունենալով այդ, չի պահպանում բարեկամական կապերը և չգիտի այն մասին, ինչ նա պարտավոր է անել իր ունեցվածքից հանուն Ալլահի, այսպիսինը Հավերժ Աշխարհում կհայտնվի ամենավատ իրավիճակում: Չորրորդ խմբին է պատկանում այն ստրուկը, որին Ալլահը չի տվել ոչ հարստություն, ոչ գիտելիք և ով ասում է. «Եթե ես ունենայի հարստություն, ապա կանեյի նույնը ինչ այսինչը.» ունենալով հետևյալ մտադրությունները, ինչպես երրորդը, որի համար էլ կունենա նույնը, ինչ երրորդը:» (Աթ-Թիրմիզի)

Երրորդի և չորրորդի խոսքերը տվյալ հաղիթում, կատարվում է ըստ հնարավորության, և նկատի է առնվում մտադրություն ցանկության հետ և սա արտահայտվում է նրանց խոսքերում, «Եթե ես ունենայի այս, ես կանեյի այնքան, որքան նա կաներ, ուրեմն նրանցից յուրաքանչյուրը վերագրվում է երկրորդին պարզևով: Իբն Ռաջաբը ասաց, բացատրելով հետևյալ հաղիթը.» Նրանք հավասար են պարզևով, «այդ ցույց է տալիս այն, որ նրանք հավասար են պարզևի հիմքում, որը տրվում է առանց բազմապատկման, իսկ բազմապատկված պարզևր տրվում է նրանց, ով կատարել է արարքը, այլ, ոչ նրանց ով սահմանափակվել է միայն մտադրությամբ առանց արարքի: Եթե նրանք հավասար լինեյին բոլոր պարագաներում, ապա կստացվեր, որ նրանցից յուրաքանչյուրը ստանում է պարզև տասնապատիկ, իսկ այսպիսի պատկերացումը հակասում է բոլոր տեքստերին :

ու ավարտը արարքի կախված են միմյանցից, օրինակ աղոթքի դեպքում, ապա հնարավոր է երեք տարբերակ:

Առաջին տարբերակ. մարդը ճնշում է ցանկությունը կատարել արարքը ի ցույց մարդկանց: Այդ դեպքում նրա մտադրությունը չի ազդի արարքի վրա:

Երկրորդ տարբերակ. մարդը գայթակղվում է կատարել արարքը ի ցույց մարդկանց և այդպես էլ անում է: Այս դեպքում արարքը դառնում է անվավեր:

Երրորդ տարբերակ. մտադրությունը կատարել արարքը ի ցույց մարդկանց գալիս է այն բանից հետո, երբ այն արվել է: Սա Սատանայի ներշնչանքն է, որը չի ազդում ոչ արարքի, ոչ մարդու վրա:

3. Գոյություն ունեն գաղտնի մուտքեր, որոնց միջոցով ցանկությունը կատարել որևէ բան ի ցույց, մտնում է մարդու գիտակցության մեջ: Դրանք պիտի իմանալ և խուսափել:

Եթե մարդ կատարում է բարի արարք հասնելու աշխարհիկ նպատակների, ապա պարզևր կամ մեղքը կախված է մտադրությունից: Հնարավոր են երեք տարբերակներ:

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԲԵՐԱԿ. մարդը կատարում է բարի արարք, միայն աշխարհիկ նպատակին հասնելու համար: Օրինակ, մարդ դեկավարում է աղոթքը, որպեսզի ստանա գումար: Այսպիսի մարդուն գրվում է մեղք: Ալլահի Մարգարեն ^(Սալլալահու ալեյհի ուա սալամ) ասաց. «Նա, ով ձեռք է բերում գիտելիք, որոնք սովորաբար ձեռք են բերում հանուն Ալլահի, բացառապես աշխարհիկ նպատակներին հասնելու համար, չեն զգա Դրախտի անուշաբույրը Դատաստանի Օրը:» (Աբու Դաուդ)

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԲԵՐԱԿ. Մարդ կատարում է որևէ արարք և հանուն Ալլահի և հանուն այս աշխարհի: Այսպիսի մարդու մոտ հավատքը լիակատար չէ, ուստի պարզևր կլինի այդպիսի: Որպես օրինակ կարելի է բերել մարդու, որը կատարում է հաջ և հանուն հաջի և հանուն առևտրի: Այսպիսի մարդու պարզևր կախված է անկեղծության աստիճանից:

ԵՐՐՈՐԴ ՏԱՐԲԵՐԱԿ. Արարքը կատարվում է հանուն Ալլահի, սակայն մարդը վերցնում է գումար կամ նվեր, որոնք օգնում են նրան շարունակել ջանալ և ավելի լավ կատարել գործը: Նրա պարզևր մնում է լիակատար: Ալլահի Մարգարեն ^(Սալլալահու ալեյհի ուա սալամ) ասաց. «Ճշմարիտ, Ալլահի Գիրքը ամենից շատ արժանի է նրան, որ ծախսվի նրա վրա արժեք:» (Ալ- Բուխարի)

ՊԵՏՔ Է ՆԱԼ ՆՇԵԼ, ՈՐ ԱՆԿԵՂՇՆԵՐԻ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԸ ՄԻՆՆՈՒՑՆԸ ՉԵՆ.

1. ԱՄԵՆԱՑԱԾԻ ԱՍՏԻՃԱՆԸ այն է, որ մարդը հնազանդ է Ալլահին և անում է բարի արարքներ հուսով, որ կպարզևատրվի, և վախենում է պատժից:

2. ՄԻՋԻՆ ԱՍՏԻՃԱՆԸ այն է, որ մարդ հնազանդ է Ալլահին և անում է բարի արարքներ որպես շնորհակալություն Ալլահին և որպես Նրա հրամանների իրականացում:

3. ԳԵՐԱԳՈՒՅՆ ԱՍՏԻՃԱՆԸ այն է, որ մարդ հնազանդ է Ալլահին և անում է բարի արարքներ սիրելով Ալլահին և մեծարելով նրան և տածում է ակնածալի վախ Նրա նկատմամբ: Այս աստիճանը անկեղծ հավատացյալներին է,

կամ արդարների (սիդդիկուն):¹

➤ **ԶՂԶՈՒՄ**. Այն հանդիսանում անպատճառ հանգամանք միշտ, քանի որ մարդուն բնորոշ է մեղք գործել: Ալլահի Մարգարեն (*Մալլալահու այնեհի ուա սալամ*) ասաց. «Ադամի յուրաքանչյուր որդին սխալվում է, և սխալվողներից լավագույնները անընդհատ մեղանշողներն են:» (Ատ-Տիրմիզի)

Ալլահի Մարգարեն (*Մալլալահու այնեհի ուա սալամ*) նույնպես ասաց. «**Եթե դուք մեղք չգործեք, Ալլահը ձեր փոխարեն կբերեր մարդկանց, ովքեր մեղք են գործում և Ալլահից թողություն են խնդրում և Ալլահը ներում է նրանց:**» (Մուայլիմ)

Զղջման հետաձգումը և մեղքի պնդումը Ալլահին չհնազանդվել է և անբանական որոշում է: Սատանան օգտագործում է յոթ մոտեցում, որպեսզի մոտենա մարդուն: Եթե նրան չի հաջողվում մեկը, ապա նա անցնում է մյուսին.

1. Շրրկ և անհավատություն (քուֆր):
2. Նորամուծություններ ակիդայի, կամ Ալլահի Մարգարեյի (*Մալլալահու այնեհի ուա սալամ*) և նրա հետևորդների օրինակներում:
3. Մեծ մեղքեր (քաբաեր):
4. Փոքր մեղքեր (սադաեր):
5. Թույլատրելի չարաշահում և թույլատրելի բարիքների օգտագործման չափազանցություն:
6. Բարի գործեր, որոնք ավելի քիչ նշանակալից են և բերում են ավելի քիչ պարգև, քան մյուսները:
7. Սատանաների օգտագործում մարդկանց և ջինների միջից, որոնք սկսում են հաղթահարել մարդուն:

ԱԼԼԱՀԻՆ ՉՆԱԶԱՆԴՎԵԼԸ ՆՈՒՑՆՊԵՍ ԿԱՐԵԼԻ Է ԲԱԺԱՆԵԼ ՄԻ ՔԱՆԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ.

1. **ՇԱՆՐ ՄԵՂՔԵՐ** (քաբաեր), սրանք մեղքեր են, որոնց համար մարդը ենթարկվում է Շարիաթով սահմանված պատժի այս աշխարհում, կամ որի համար պատիժ և Ալլահի զայրույթն, կամ անեծքն է խոստացված հավերժ կյանքում, ինչպես նաև այն մեղքերը, որոնց իրականացումը, համաձայն կրոնական տեքստերի, վկայում են հավատքի բացակայությունը:

2. **ՓՈՔՐ ՄԵՂՔԵՐ (ՄԱՂԱՐ)**, սրանք մնացած մեղքերն են: Մակայն փոքր շատ մեղքեր կարող են վերածվել մեծ մեղքերի, օրինակ, եթե մարդ հաստատակամ է նրանց կատարմանը, կրկնում է դրանք անգամներ,

¹ Ամենաբարձրյալ Ալլահն ասաց. **Ես շտապեցի դեպի քեզ իմ տեր, որպեսզի դու գոհանաս ինձանով:** Այսպիսով, Մովսեսը համոզված էր, որ Ալլահին հանդիպելու նախաձեռնության մեջ մտնում է, ոչ միայն պատվիրանը կատարելը, այլ բարի արարքը: Դրա օրինակն է, ծնողների և մարդու փոխհարաբերությունները, նրանց պատվելը, որը ունի երեք աստիճան: **Ստորին աստիճանը** այն է, որ պատվել նրանց լավ, միայն այն պատճառով, որ դու վախենում ես ալ-ակուլ պատժից, (ծնողների նկատմամբ վատ վերաբերմունքի պատժից): **Միջին աստիճանն** է, պատվել ծնողներին, որովհետև դու հետևում ես Ալլահի պատվիրաններին և այն պատասխանն է այն բանի, որ նրանք քեզ փոքր ժամանակ լավ են վերաբերվել և նրանց շնորհիվ դուք եկել եք այս աշխարհ: **Ամենաբարձր աստիճանն** է, պատվել ծնողներին, փառաբանելով Ալլահի պատվիրանը, սիրելով, փառաբանելով և պատվելով Ալլահին :

չարաշահելով դրանք, (այսինքն համարում է, որ դրանք աննշան են), հպարտանում է դրանցով և բացահայտ է կատարում դրանք:

Ինչպիսին էլ, որ լինեն մեղքերը պիտի մեղանչել: Մեղանչելը ընդունվում է մինչ այն ժամը, երբ արևը դուրս չի գա արևմուտքից կամ երբ մարդը չի սկսի հնչեցնել մահվանից առաջ եկող խոխոցը: Եթե մարդ մեղանչի անկեղծ, նրա վատ արարքները կփոխարինվեն նրա համար լավ արարքների, նույնիսկ եթե դրանք շատ են:

ՄԵՂԱՆՉԱՆՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԸ.

1. Մեղքի կատարման դադարումը: **2.** Արդեն արվածի գոշում: **3.** Որոշված մտադրություն չվերադառնալ այդ մեղքին ապագայում, մեղքի առաջացրած հետևանքների վերացումը (վիրավորանքի հարթեցում, ոտնահարված իրավունքների վերականգնում, վնասների փոխհատուցում): ¹

ՄԵՂԱՆՉԵԼՈՒ ՏԵՄԱՆԿՑՈՒՆԻՑ, ՄԱՐԴԿԱՆՑ ԿԱՐԵԼԻ Է ԲԱԺԱՆԵԼ ԶՈՐՍ ՏԵՄԱԿԻ.

1. Մարդ, ով հավատարիմ է իր մեղանչանքին և չի վերադառնում մեղքին, եթե հաշվի չառնենք մարդկային փոքր թուլությունները, որոնք բնորոշ են բոլոր մարդկանց: Այսպիսի մարդու մեղանչանքը անկեղծ է, իսկ նա առաջխաղացում է ապրում դեպի բարիք: **ԱՅՍ ՀԱՆԳՍՏԱՑԱԾ ՀՈԳԻ Է:**

2. Մարդ, ով ընդհանուր առմամբ հավատարիմ է իր մեղանչանքին և հնազանդ է Ալլահին: Սակայն երբեմն նա մեղքեր է գործում, չձգտելով դրան, և ամեն անգամ խղճի խայթ է զգում, ավստոսում է արարքի համար և հաստատակամորեն մտադրվում է չվերադառնալ նրան, ինչը նրան դրդել է մեղքի: **ՍԱ ՆԱԽԱՏԻՆՔՈՎ ՀՈԳԻՆ Է:**

3. Մարդը մեղանչում է և որոշ ժամանակ իրոք ձեռնպահ է մնում մեղքից, իսկ հետո կրքերը հաղթանակում են և նա գործում է որոշակի մեղքեր: Սակայն, մինևույն ժամանակ, նա անընդհատ կատարում է իր կրոնական պարտավորվածությունները և բարի գործեր է անում: Նա հրաժարվում է մեղքերից ընդհանուր առմամբ, ունենալով հնարավորություն և ձգտում գործելու դրանք: Երբեմն կրքերից մեկը հաղթահարում է նրան և նա մեղք է գործում, բայց երբ ալիքը անցնում է, նա ավստոսում է կատարվածի համար և ինքն իրեն խոստանում է մեղանչել: Այս հոգի է, որից կհարցնեն և նրա դրությունը վտանգավոր է նրանով, որ այն հետաձգում է մեղանչելը: Չէ, որ

¹ Պատմում են, որ Մարգարեն (*Մայրապետի այնքի ուս սայա*) ասաց, որ «Ամենաբարձրյալ Ալլահը ունի երեք աղյուսակ գրանցման համար. մեկը, որտեղ ոչինչ չի գրում, մյուսը, որը չի թողնում առանց գրառման և երրորդը, որում գրառում է այն, որը աններելի է : Այդտեղ նկատի է առնվում Ամենաբարձրյալին գուգրնկեր տալը: Ալլահն ասում է. «Ճշմարիտ, ով Ալլահին գուգրնկեր է տալիս, նրան Նա արգելել է Դրախտը: Նրա բնակավայրը կլինի Գեհենը և անօրեններին չի լինի օգնականներ:» Երկրորդ աղյուսակում Ամենաբարձրյալը չի գրառում անարդարությունը, որը ստրուկը անում է ինքն իրեն: Ամենաբարձրյալը թողնում է այդ Իր և Իր ստրուկի միջև և ներում է այդ մեղքը Իր ցանկությամբ: Իսկ այն աղյուսակը, որը չի մնում առանց գրառման, այն, որում Ալլահը գրառում է անարդարությունը, որոնք ստրուկները պատճառում են միմյանց, և որի համար անպատճառ կպատժվեն:

մարդ կարող է մահանալ, մինչ մեղանչելը, իսկ արարքները, ինչպես հայտնի է, գնահատվում են ավարտով:

4. Մարդը զոջում է և որոշ ժամանակ ձեռնպահ է մնում մեղքերից, հետո կրկին ընկղմվում է նրանց մեջ, չմտածելով մեղանչելու մասին և չզոջալով արարքների համար: Այս հոգի է, որը դրդում է վատ արարքի և այսպիսի մարդը պիտի վախենա վատ ավարտից:

➤ **ՃՇՄԱՐՏԱԳԻՈՒԹՅՈՒՆ.**

Սա սրտով արված արարքների հիմքն է: «Ճշմարտացիություն բառը օգտագործվում է վեց իմաստներով.

1. Ճշմարտացիություն խոսքերում:
2. Ճշմարտացիություն մտադրություններում, անկեղծություն:
3. Ճշմարտացիություն հաստատակամության մեջ:
4. Ճշմարտացիություն հաստատակամությունը կյանքի կոչելու մեջ:
5. Ճշմարտացիություն արարքներում, այսինքն, արարքների էությունը համապատասխանում է նրանց ակնհայտ ձևին:
6. Ճշմարտացիություն կրոնի մեջ ընդհանրապես: Սա ճշմարտացիության գերագույն աստիճանն է:

Սա ճշմարտացիություն է վախի, հույսի, մեծարման մեջ, ինչպես նաև աշխարհիկ բաների չափավորում, վստահություն Ալլահին, և սեր Նրա նկատմամբ, և սեր սրտով արված արարքների ճամանակ: Ում այս բնորոշ է, նա հանդիսանում է անկեղծ հավատացյալ կամ սուրբ (սադիկ): Ալլահի Մարգարեն (*Մալլալահու ալեհի ուա սալամ*) ասաց. «Պահպանեք ճշմարտացիություն, քանզի ճշմարտացիությունը բերում է բարեպաշտություն, իսկ բարեպաշտությունը տանում է Դրախտ: Մարդը չի դադարի ասել ճշմարտություն և ջանալ լինել ճշմարիտ այնքան ժամանակ, մինչ չի գրանցվի Ալլահի մոտ, որպես ամենաճշմարտացի:» (Ալ-Բուխարի, Մուալիմ)

Նրան, ով ձգտում է գտնել ճշմարտությունը և անկեղծորեն հավատում է, որ Ալլահը կօգնի նրան այդ հարցում և չի հետևի իր կրքերին, Ամենաբարձրյալը կօգնի: Իսկ եթե նա այնուամենայնիվ չգտնի այն, ապա նա կունենա արդարացում Ալլահի մոտ:

Ճշմարտացիության հակադիրը հանդիսանում է սուտը: Ամենից առաջ սուտը հասնում է լեզվին և փչացնում է այն: Հետո, այն հասնում է մարմնի մյուս մասերին և փչացնում է նրանց արարքները այնպես, ինչպես փչացնում է խասքը, արված լեզվով: Դրանից հետո սուտը պարուրում է խոսքը, արարքը, մարդու վարքը և փչացնում է դրանք:

➤ **ՄԵՐ.** Ալլահի, Մարգարեյի և հավատացյալների նկատմամբ սերը թույլ է տալիս մարդուն զգալ հավատքի քաղցրությունը: Ալլահի Մարգարեն (*Մալլալահու ալեհի ուա սալամ*) ասաց. «Հավատքի քաղցրությունը կզգա նա, ում մեջ կհյուսվեն երեք հատկանիշ: Նա պիտի սիրի Ալլահին և Նրա Մարգարեյին ամեն ինչից շատ, սիրի այս կամ այն մարդուն միայն հանուն Ալլահի և չջանկանա

վերադառնալ անհավատության այն բանից հետո, երբ Ալլահը փրկել է նրան դրանից, այնպես, ինչպես չի ցանկանում ընկնել Կրակ:» (Ալ-Բուխարի, Մուսլիմ)

Եթե արտում տնկվում է սիրո ծառը, որը ջրվում է անկեղծությամբ և Մուննային հետևելով, այն տալիս է շատ պտուղներ, որոնք հավատացյալները կարող են վայելել անընդհատ:

ԴՐԱՆՔ ԼԻՆՈՒՄ ԵՆ ՉՈՐՄ ՏԵՄԱԿ.

1. Սեր առ Ալլահը: Սա հավատքի հիմքն է:
2. Սեր հանուն Ալլահի և ատելություն հանուն Ալլահի: Նրանք պարտադիր են:¹
3. Սեր ինչ որ մեկին, հավասար Ալլահի: Սա Ալլահին զուգընկեր տալն է պարտադիր սիրով: Որպես օրինակ կարելի է բերել բազմաստվածների սերը իրենց աստվածների նկատմամբ: Սա շրթկի հիմքն է:
4. Բնական սեր. Դա, օրինակ սեր է ծնողների, երեխաների, հարազատների նկատմամբ, ինչպես նաև սեր ուտելիքի և այլնի նկատմամբ: Այս սերը թույլատրելի է: Իսկ որպեսզի Ալլահը սիրի մեզ, մենք պիտի չափավոր լինենք աշխարհիկ բարիքների օգտագործման մեջ: Ալլահի Մարգարեն <sup>(Մայլաձուլ
այեհի ուս սայամ)</sup> ասաց. «**Եղիր չափավոր աշխարհիկ բարիքների օգտագործման մեջ և Ալլահը կսիրի քեզ:**» (Իբն Մաջա)

➤ **ԱՊԱՎԻՆՈՒԹՅՈՒՆ.** Սա, երբ մարդ ապավինում է Ամենաբարձրյալին և հույսը դնում է Նրա վրա, ցանկալիին հասնելու, անհաջողությունից խուսափելու համար և միևնույն ժամանակ ջանք է գործադրում ցանկալիին հասնելու համար: Ալլահին ապավինելու մերժումը, հանդիսանում է միաստվածության (տաուհիդ) խախտում, իսկ մերժում թափված ջանքերի համար, հանդիսանում է խելքի պակաս: Ապավինելը առաջին հերթին

¹ Մարդիկ սիրո կամ արհամարհանքի տեսանկյունից (Ընկերություն և անմեղություն, հավատարմություն և մերժում) բաժանվում են երեք տեսակի. **Ա. Նա, ով սիրում է մաքուր սիրով**, առանց ատելության, այսպիսիք են իրական հավատացյալները, ինչպիսիք են մարգարեները և սրբերը, որոնց գլխավորում է Մարգարե Մուհամեդը և նրա կանայք, նրա դուստրերը և հետևորդները: **Բ. Նա, ում ատելությունը կատարյալ է**, այսպիսիք են անհավատները, բազմաստվածները և փարիսեցիները: **Գ. Նրանք, ովքեր և սիրում և ատում են միևնույն ժամանակ**, այսպիսիք են հավատացյալ մեղսագործները, նրանց սերը արտահայտվում է հավատքի շնորհիվ, ատելությունը մեղքերի:

Սերը անհավատների նկատմամբ և ընկերությունը բաժանվում է երկու տեսակի. 1. Այն, ինչ բերում է ուխտադրության, օրինակ ընդունել ուրիշի կրոնը. **2.** Այն, ինչ արգելվում է, բայց չի տանում մարդուն իսլամի սահմաններից դուրս, այսպիսի տեսակին են վերաբերվում անհավատների աջակցությունը իրենց աշխարհիկ հետաքրքրություններում: Երբեմն սխալմամբ շփոթում են այս տեսակը բարիի հետ անհավատների նկատմամբ և նրանցից հրաժարմամբ: Բայց պետք է տարբերել, արդարության դրսևորումը և լավ վերաբերմունքը և բարության դրսևորումը թույլին, առանց հոգևոր կապվածության, թույլատրելի է: Ալլահն ասում է «**Ալլահը չի արգելել ձեզ լինել բարի և արդար նրանց հետ, ովքեր չեն մարտնչել ձեզ հետ կրոնի պատճառով և չեն վտարել ձեզ, ձեր բնակավայրերից: Ըջմարիտ, Ալլահը սիրում է անշահախնդիրներին:**» Ատելության և թշնամության դրսևորումը անհավատների նկատմամբ արտահայտվում է այն կոնտեկստում, որը ասել է Ամենաբարձրյալ Ալլահը. «**Օ, նրանք, ովքեր հավատացել են: Մի վերցրեք Իմ թշնամուն և ձեր թշնամուն որպես ձեր հովանավոր և օգնական...:**» Արդարության արտահայտումը նրանց նկատմամբ առանց հոգևոր կապվածության հնարավոր է, ինչպես արել էր Մարգարե Մուհամեդը Մեդինայի հրեաների հետ :

գործողություն է: Ապավինելը համոզվածության և հավաստի գիտելիքների պտուղ է: Այն լինում է երեք տեսակ.

1. Պարտադիր, սա Ալլահին ապավինել է այն բանում, որին ընդունակ է միայն Ալլահը: Որպես օրինակ կարելի է բերել հիվանդի բուժումը:

2. Արգելված, այս ապավինելը լինում է երկու տեսակի.

Ա. ՄԵՇ ՇԸՐԿ, այն դեպքն է երբ մարդ ամբողջովին ապավինում է պատճառներին և համարում է, որ նրանք ինքները կարող են օգուտ բերել և հեռացնել վտանգը:¹

Բ. ՓՈՔՐ ՇԸՐԿ, երբ մարդը ապավինում է և հույս է դնում ինչ որ մեկի վրա, սակայն չի համարում, որ նա ինքն կարող է բերել օգուտ կամ վնասել: Միևնույն ժամանակ, այդ մարդը ուղակի պատճառ է:

3. Թույլատրված, երբ մարդ մեկ ուրիշին անում է իր լիազորվածը և հույս է դնում նրա վրա գործերում, որոնք նա կարող է անել, օրինակ առք ու վաճառքի դեպքում: Սակայն այս դեպքում չի կարելի ասել, «Ես ապավինում եմ Ալլահին, հետո ինձ:» Կարելի է միայն ասել. « Ես լիազորում եմ քեզ: »

➤ **ԵՐԱՄՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ.** Երախտագիտությունը Ալլահին արտահայտվում է սրտով, (հավատքով), լեզվով (մեծարման խոսքերով) և գործողություններով (երկրպագությամբ): Երախտապարտ լինել նշանակում է Ամենաբարձրյալից նվիրածը օգտագործել ի օգուտ բարու:

➤ **ՀԱՄԲԵՐՈՒԹՅՈՒՆ.** Բողոքների մերժում է Ալլահից ուղարկված փորձություններին: Ամենաբարձրյալ Ալլահը ասաց. **«Ճշմարիտ, համբերատարներին կնվիրվի իրենց պարգևը առանց հաշվի:»** Իսկ Ալլահի

¹ Հակասում է արդյոք տվյալ արարքը Ալլահին ապավինելուն: Կան մի քանի տարբերակ.

1) Կորցրած բարիքին հասնելը, որը բաղկացած է երեք մասերից. **Ա.** Պարզ պատճառի ներկայություն, ինչպիսին է ամուսնությունը, տղա ունենալու համար, Ալլահին ապավինելը առանց գործողության տվյալ պահին, հանդիսանում է անհեթեթություն : **Բ.** Աներևույթ պատճառներ, մեծամասնությամբ ստացվում է, որ չի կարելի արդյունքի հասնել առանց նրանց: Եթե ճամփորդը գնում է անապատ առանց պատրաստության, ապա դա չի մտնում Ալլահին ապավինելու մեջ, հակառակը, նրան հրամայված է նախապատրաստվել, ինչպես արել էր մարգարե Մուհամեդը **(^{Օտյալանու}այնի՞նի ուս սայա)**: Երբ նա գնում էր Մեդինա, վերցրեց իր հետ ուտելիք և վարձեց ուղեկցորդ : **Գ.** Պատճառներ, որոնք կարող են բերել արդյունքի, բայց առանց համոզվածության, նման է նրան, ով ուսումնասիրում է մեծերժեք մեթոդներ օգտագործման համար, որպեսզի ստանա հեշտ վարձ: Վերը նշվածը չի շեղվում ապավինելուց, բայց դադարել վաստակել կյանքի համար, որը բնական է, չի հանդիսանում ապավինություն: Օմարը, թող Ալլահը գոհանա նրանով, ասաց. «Ապավինողը նա է, ով տալիս է իր սերը հողին և ապավինում է Ալլահին :»

2) Ունեցածի պահպանումը, բավարար ուտելիքի, չի նշանակում չապավինել Ալլահին, մանավանդ եթե կա ընտանիք: Մարգարեն **(^{Օտյալանու}այնի՞նի ուս սայա)** վաճառում էր արմավի պտուղներ Բենին Նադիրին, բայց թողնում էր իր ընտանիքին տարեկան պաշար: Հնադիրը համաձայնեցված է :

3) Վնասի հեռացում, մինչ այդ տեղի կունենա, չի նշանակում չապավինել, ինչպես ուղտի պահպանումը սահմանափակել միայն հույսով :

4) Վնասի հեռացնելը, նրա լինելուց հետո: Այստեղ կա երեք մաս. **Ա. Բացակա,** ինչպես ջուրը. **Բ. Հնարավոր լինել,** ինչպես արյուն թողնելը: Մարգարեն Ն.Ա.Ո.Ն բուժվում էր արյուն թողնելով և հրամայում էր ուրիշներին էլ բուժվել: **Գ. Լինել երևակայող,** նման է մանրէագերծման, լինելով առողջ, խուսափելու հիվանդությունից, հետևյալ արարքը հակասում է ապավինման ամբողջականությանը:

Մարգարեն (*Մայլապետ
այեցի ուս սայա*) ասաց. « **Ով կփորձի համբերատար լինել, նրան Ալլահը կներշնչի համբերություն և ոչ ոքի չի նվիրի ավելի լավ և լայնարձակ բան, քան համբերությունը:** » (ԱԼ_ԲՈՒԿԱՐԻ, Մուսլիմ)

Իսկ Ումար իբն ալ- Խատաբը ասաց. «Ինչ դժբախտություն, որ հասնի ինձ, ես ընդունում եմ Ամենաբարձրյալից չորս բարիք կապված դրա հետ, այն է որ այն կապ չունի իմ կրոնի հետ, որ այն չլինի ավելի մեծ և լուրջ, այն, որ Նա չի խանգարել ինձ ընդունել այն արժանապատիվ և այն, որ ես հուսով եմ, որ կպարզևատրվեմ համբերատար տանելու համար: »

ՀԱՄԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՒՆԻ ԱՍՏԻՃԱՆՆԵՐ. 1) ԱՄԵՆԱՑԱԾԻ ԱՍՏԻՃԱՆԸ, երբ մարդ նողկանք է ապրում իրեն հասածին, բայց խուսափում է բողոքելուց: **2) ՄԻՋԻՆ ԱՍՏԻՃԱՆ,** երբ մարդ խուսափում է բողոքելուց և արտահայտում է գոհունակություն: **3) ԳԵՐԱԳՈՒՅՆ ԱՍՏԻՃԱՆ,** երբ մարդ մեծարում է Ալլահին, երբ նրան են հասնում փորձություններ:

Իսկ մարդը, ում անարդար են վերաբերվել և նա դիմել է Ալլահին աղերսով պատժել մեղավորին, օգնում է ինքն իրեն և հաստատում է իր իրավունքը, նա չի ցուցաբերում համբերություն:

ՀԱՄԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԼԻՆՈՒՄ Է ԵՐԿՈՒ ՏԵՍԱԿԻ.

1) ՏԻՋԻԿԱԿԱՆ ՀԱՄԲԵՐՈՒԹՅՈՒՆ ԴԻՄԱՑԿՈՒՆՈՒԹՅՈՒՆ. Այստեղ մենք չենք խոսում այս տեսակի մասին: **2) ՀՈԳԵԿԱՆ,** երբ մարդ համբերում է, խուսափելով նրանից, ինչին շեղում են նրա կրքերը և ցանկությունները: ¹

ԱՄԵՆԸ, ԻՆՉ ԿԱՏԱՐՎՈՒՄ Է ՄԱՐԴՈՒ ՀԵՌ ԱՅՍ ԿՅԱՆՔՈՒՄ, ԿԱՐԵԼԻ Է ՊԱՅՄԱՆԱԿԱՆՈՐԵՆ ԲԱԺԱՆԵԼ ԵՐԿՈՒ ՏԵՍԱԿԻ.

1. Այն, ինչ համապատասխանում է մարդու ցանկություններին և կրքերին: ԱՅս դեպքում մարդը պիտի համբերություն ցուցաբերի, որպեսզի պատշաճ հետևի Ալլահի իրավունքին, երածտապարտ լինել Նրան և խուսափել Նրան չլսելուց:

2. Այն, ինչ հակասում է մարդու կրքերին և ցանկություններին: Այս տեսակը ունի երեք ենթատեսակ. **1)** Ալլահին հնազանդության համբերությունը. Եթե խոսքը գնում է պարտադիրի մասին, ֆարդ, ապա այն պարտադիր է, իսկ եթե խոսքը գնում է ցանկալիի մասին, լրացուցիչ, ապա այսպիսի համբերությունը ցանկալի է: **2)** Համբերություն, նպատակ ունենալով խուսափել Ալլահին չլսելուց. արգելվածից հրաժարվելը պարտադիր է, իսկ անցանկալից հրաժարվելը, ցանկալի: **3) ՀԱՄԲԵՐՈՒԹՅՈՒՆ ԱԼԼԱՀԻ ԿԱՆԽՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ.** Անհրաժեշտ է խուսափել բողոքներից,

¹ Եթե այս տեսակը հանդիսանում է խուսափում կրքերից, ապա կոչվում է ողջախոհություն, իսկ եթե այն արտահայտվում է պատերազմում, ապա կոչվում է համարձակություն, եթե այն արտահայտվում է բարկության կառավարմամբ, ապա կոչվում է զգուշություն, իսկ եթե արտահայտվում է գաղտնիքի պահպանմամբ, ապա կոչվում է գաղտնիքի բացում, իսկ եթե այն արտահայտվում է կյանքի հաճույքներից խուսափելով, ապա կոչվում է բարեպաշտություն, իսկ եթե արտահայտվում է կյանքի փոքր բավարարվածություններով, ապա կոչվում է բավարարվածություն :

պահելով սիրտը առարկություններից. բարկությունից, սրտնեղումից և ետ պահել մարմնի մասերը գործողություններից, որոնք հաճելի չեն Ալլահին, օրինակ մահացածի համար բարձրաձայն լացելը և այտերը քերծելը, շորերի պատռելը, բղավելը և այլն: Իսկ ցանկալին է հանդիսանում Ալլահի կանխորոշածին գոհանալը, որը արտահայտվում է սրտով:

Ո՛Վ Է ԱՎԵԼԻ ԼԱՎ, ԳՈՂՈՒՆԱԿ ՀԱՐՈՒՍՏԸ, ԹԵ ՀԱՄԲԵՐՍՏԱՐ ԱՂՔՍԱԸ.

Եթե հարուստը վատնում է իր հարստությունը Ալլահին հնազանդվելուն կամ, հավաքում է այնպիսի գործերի համար, որոնք հաճո են Ալլահին, ապա նա լավ է համբերատար աղքատից: Իսկ եթե հարուստը իր ունեցվածքի մեծ մասը վատնում է աշխարհիկ կյանքի թույլատրված բարիքներին, ապա համբերատար աղքատը նրանից լավն է: Ալլահի Մարգարեն <sup>(Մալլապահու
այնչի ուա սալա)</sup> ասաց. «**Երախտապարտ կերակրողը հավասար է համբերատար պահք պահողին:**» (Ահմեդ)

➤ **ԲԱՎԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ.** Այն լինում է գործողությունից հետո: Ալլահի կանխորոշմամբ բավարարությունը, Ալլահի մերձավորների ամենաբարձր աստիճանն է: Այս սիրո և ապավինության պտուղն է: Ամենաբարձրյալին դիմելը խնդրանքով, որ նա օգնի որևէ վատ բանից, չի նշանակում հակառակվել Նրա կանխորոշմանը:

➤ **ՀՆԱԶԱՆԴՈՒԹՅՈՒՆ,** սա Ամենաբարձրյալին մեծարել է, և Նրա դեմ համեստ և հնազանդ լինելը: Հուզեյֆան ասաց. «Զգուշացեք փարիսեցիների հնազանդությունից:» Նրան հարցրեցին. «Իսկ ի՞նչ է փարիսեցիների հնազանդությունը: «Նա պատասխանեց. «Դա, երբ մարմինը հնազանդ է, մինչ դեռ սրտում չկա հնազանդություն:» Հուզեյֆան նույնպես ասում էր. «Առաջինը, որից դուք կզրկվեք փեր կրոնից, հնազանդությունն է:» Յանկացած երկրպագում, որը պահանջում է հնազանդություն, հավատացյալին բերում է պարզև, համապատասխան աստիճանի հնազանդություն: Մարգարեն Խ.Ա.Ո.Ն բացատրեց, որ լինում է այնպես, որ աղոթողին հասնում է իր խնդրածի կեսը, քառորդը, հինգերորդը նույնիսկ տասներորդ մասը, իսկ երբեմն նաև ոչինչ, սա հնազանդության բացառման դեպքում:

➤ **ՀՈՒՅՍ,** Սա հուսահատության հակառակն է: Այն Ալլահի գուրթի սպասում և հույս է: Արարքները, որոնք արվում են Ալլահի գուրթի հույսով, ավելի արժանավայել են, քան արարքները, որոնք արվում են Ամենաբարձրյալի պատժի վախով: Որովհետև հույսը ստիպում է մարդուն սպասել Ալլահից լավ բան: Իսկ Ամենաբարձրյալ Ալլահը <sup>(Մալլապահու
այնչի ուա սալա)</sup> ասաց. «**Ես այնպիսին եմ, ինչ Իմ մասին մտածում է Իմ ստորուկը:**» (Մուայիմ)

Հույսը ունի աստիճաններ.

1. **Բարձրագույն,** մարդ անում է այն, ինչ հանդիսանում է հնազանդություն Ալլահին և հույս ունի Ամենաբարձրյալի պարզևին: Աիշան, թող Ալլահը գոհանա նրանով, մի անգամ հարցրեց. «Օ, Ալլահի Մարգարե, Ամենաբարձրյալ Ալլահը ասաց. «**Նրանք, ովքեր անում են այն, ինչ անում են, և սրտերը նրանց**

պարուրված են վախով:» Այս նրանց մասին է, ովքեր գողանում, շնանում և գինի են խմում Ալլահի վախը սրտերու՞մ:» Ալլահի Մարգարեն *(Մայլայածու այնչի ուս սպամ)* պատասխանեց. «**Ոչ, օ. Աս-Մադիկի դուստր: Այս նրանց մասին է, ովքեր աղոթում են, պահք են պահում և բարեգործություն են անում և միևնույն ժամանակ վաճենում են, որ նրանցից այդ չի ընդունվի:**»» (Ատ- Տիբիզի)

2. ԱՄԵՆԱՑԱՕՐ ԱՍՏԻՃԱՆԸ, սրանք մեղանչած մեղսագործներն են, որոնք Ալլահի ներման հույսը ունեն: Ինչ վերաբերվում է մեղսագործին, ով համառում է իր մեղքերում և մերժում է մեղանչել և միևնույն ժամանակ հույս է փայփայում Ալլահի ներման, ապա այդ արդեն հույս չէ, այլ անիրականալիի երազանք: Հավատացյալը անում է բարիք և վախենում է Ալլահից, իսկ փարիսեցին անում է չարիք և չի վաճենում Ալլահից:

➤ **ՎԱԽ.** Նրան հակասում է հանգստությունը, անվտանգության զգացումը: Վախը չի հանդիսանում հույսի հակառակը: Ուղակի վախը դրդում է գործողության, այդ զգացումով, իսկ հույսը խրախուսանքի զգացումով: Անհրաժեշտ է վախը զուգակցել սիրո և հույսի հետ:

Իբն ալ- Կաայիմը ասաց. « Միրտը իր ձգտմամբ Ամենաբարձրյալ Ալլահին նման է թռչունի: Սերը, նրա գլուխն է, իսկ վախը և հույսը երկու թևերը: Եթե սրտում բույն է դնում վախը, նա այրում է կրքերը, որոնք գտնվում են այնտեղ և այնտեղից դուրս է քշում այս աշխարհ:»

Պարտադիր վախը, այն է, որը դրդում է անհրաժեշտի կատարման և արգելվածի մերժման:

Ցանկալի վախը այն է, որը դրդում է անել ցանկալին և մերժել անցանկալին:

ՎԱԽԸ ԼԻՆՈՒՄ Է ՄԻ ՔԱՆԻ ՏԵՍԱԿ.

1) ԱՍՏՎԱԾԱՀԱՃՈ ՎԱԽ, դա այն է որը կարելի է զգալ միայն Ալլահի հանդեպ, այլապես մարդը կընկնի մեծ շըրկի մեջ: Օրինակ, մարդը վախենում է, որ հեթանոսական աստվածները նրան վնաս կպատճառեն:

2) ԱՐԳԵԼՎԱԾ ՎԱԽ, այս պարտադիրի մերժումն է կամ արգելվածի կատարումն է մարդկանց նկատմամբ վախից:

3) ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ՎԱԽ, սա բնական վախն է գիշատիչի և այլնի դեմ:

ՈՒՍՈՒՑՈՂԱԿԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ

«Աբդուլլահ» (Ալլահի ստրուկ) անունով մի մարդ հանդիպեց մեկ այլ մարդու, որի անունն էր «Աբդուննաբի» (մարգարեյի ստրուկ): Աբդուլլան զարմացավ Աբդուննաբի անվան վրա և ինքն իրեն մտածեց. «Ի՞նչպես կարող է մեկը չլինել Ալլահի ստրուկ:» շեռտ նա դիմեց Աբդուննաբիին և հարցրեց, «Դու Ալլահին չե՞ս երկրպագում:»

ԱԲԴՈՒՆՆԱԲԻ. Ոչ, ես ոչ ոքի չեմ եղջպագում բացի Ալլահից, ես մուսուլման եմ և երկրպագում եմ միայն Ալլահին:

ԱԲԴՈՒԼԼԱՆ. Այդ դեպքում այդ ի՞նչ անուն է, նման է արաբ քրիստոնյաների անուններին, որոնց մեջ գոյություն ունի Աբդումեսիհ (Մեսսիայի ստրուկ) անունը: Այդ զարմանալի չէ, քանի որ քրիստոնյաները երկրպագում են Հիսուսին, խաղաղություն նրան: Լսելով քո անունը մարդ անմիջապես ենթադրում է, որ դու երկրպագում ես Մարգարեյին (*Մայլապետու ալեյի ուա սայամ*), որը չի համապատասխանում մուսուլմանի համոզմունքներին: Նրանք պարտավոր են հավատալ, որ Մուհամեդը (*Մայլապետու ալեյի ուա սայամ*) Ալլահի ստրուկը և Նրա մարգարեն է:

ԱԲԴՈՒՆՆԱԲԻ. Մակայն Մուհամեդ մարգարեն (*Մայլապետու ալեյի ուա սայամ*) մարդկանցից լավագույնն է և մարգարեների Տերը, և մենք վերցնում ենք այս անունը, փնտրելով օրհնություն և մոտենալ Ալլահին Նրա Մարգարեյի մեծության և դրության միջոցով և խնդրում ենք նրա բարեխոսությունը այդ հարցում: Եվ մի զարմացիր, իմ եղբայրը ունի նմանատիպ անուն, Աբդուլիուսեյն (Հուսեյնի ստրուկ), իսկ իմ հոր անունն է Աբդուռոասուլ (Մարգարեյի ստրուկ): Այս անունները օգտագործվում են վաղ ժամանակներից և տարածված են մարդկանց մեջ: Եվ մենք հայտաբերեցինք, որ նախնիները արել են այդ, այնպես որ մի ցուցաբերի ավելորդ խստություն, քանի որ ամեն ինչ հեշտ է և կրոնը հեշտ է:

ԱԲԴՈՒԼԼԱՆ. Այս արարքը ավելի հանցապարտ է, քան առաջինը: Դու խնդրում ես բացի Ալլահից, այն ինչ կարող է տալ միայն Ալլահը: Եվ կարևոր չէ հանդիսանում է նա, ում դու խնդրում ես Մուհամեդ Մարգարեն (*Մայլապետու ալեյի ուա սայամ*), թե սուրբ մարդ, ինչպիսին է Հուսեյնը (*Մայլապետու ալեյի ուա սայամ*): Այս հակասում է Միաստվածությանը, որը մեզ հրամայված է, և այդ հակասում է խառի իմաստին. «Չկա աստվածություն բացի Ալլահից:» (Լե իլեհե իլա Ալլահ): Ես կտամ քեզ մի քանի հարց, որ դու գիտակցես, թե ինչքան մեծ է այս գործը և հասկանաս այսպիսի անունների արդյունքը: Եվ այս քայլով, ես չեմ հետևում ոչինչ բացի ճշմարտությունից և հետևելու դրան: Ես ցանկանում եմ բացատրել ճշմարտությունը, ետ պահել ստից և ցանկանում եմ խրախուսել գովելին: Եվ, Ալլահը Նա է, Ում պիտի խնդրել օգնություն, և Նրան պիտի ապավինել: Եվ չկա ուժ և հզորություն ոչ ոքի մոտ, բացի Ամենակարող և Մեծ Ալլահից: Մակայն, դրանից առաջ, ես ցանկանում եմ հիշեցնել քեզ Ամենաբարձրալի խոսքը. «**Եթե հավատացյալը կոչում է առ Ալլահ և Նրա Մարգարեն, որ Նա դատի նրանց, նրանք ասում են.**» Լսում և հնազանդվում ենք:» (սուրա 24 «Լույս » այաթ 51)

Եվ Ալլահն ասաց. «Եվ, եթե դուք որևէ բան կասկածի տակ եք առնում, ապա շրջվեք առ Ալլահ և Նրա Մարգարեն, եթե դուք իրավամար հավատում եք Ալլահին և Վերջին Օրվան:»» (սուրա 4 «Ալ-Նիսաս» այաթ 59)

Դու պնդում ես, որ հետևում ես Միաստվածությանը և վկայում ես. «Լե իլեհե իլա Ալլահ»: Իսկ կարո՞ղ ես ինձ բացատրել, ինչ է այդ նշանակում:

ԱԲԴՈՒՆՆԱԲԻ. Տաուհիդ, այս հավատք է Ալլահի գոյության և նրա, որ Նա Այն է, Ով արարել է երկինքն ու երկիրը և Նա Կենդանացնողն ու Մեռցնողն է և Նա տիրում է Տիեզերքում, և Նա Ամենագիտակն, Ամենահզորն և Ամենանվիրողն է:

ԱԲԴՈՒԼԼԱՀ. Եթե միայն այս է Տաուհիդի նշանակությունը, ապա Փարավոնը և նրա մարդիկ, Աբու Ջեհլը և մյուսները կարող են համարվել նույնպես միաստվածներ: Նրանք չեն արհամարհում այն փաստը, որը Ալլահը գոյություն ունի, ոչ էլ բազմաստվածների մեծամասնությունը: Փարավոնը, ով հայտարարեց իր Աստվածային լինելը, իր սրտի խորքում հավատում էր, որ Ալլահը գոյություն ունի և որ միայն Նա է կառավարում արարածներին: Դրա ապացույցն է Ալլահի խոսքերը. **Եվ, նա փարավոնը ժխտեց այն անարդարացիորեն և արհամարհելով, սակայն իր սրտի խորքում համոզված էր..... (27:14)**

Այս պարզվեց, երբ նա խեղդվում էր: Իրականում, Տաուհիդը, որի համար Ալլահը ուղարկել էր Մարգարեներին, որի համար Նա լուսաբանեց սուրբ գրերը և որի հաշվով Քուրեյշները¹ պայքարում էին, Ալլահին դուրս մղելու երկրպագությունից: Երկրպագությունը սահմանված է որպես այն, ինչ Ալլահը սիրում է գոհանում է, մեր խոսքերից և արարքներից, անկախ նրանից կատարվել է մեր սրտով թե մարմնով:

Իլահաի բառը, Լե Իլահաի Իլլ-Ալլահ բառակապակցության մեջ նշանակում է որևէ մեկը, կամ բանը, որին երկրպագում են և ուստի Լաա Իլահաի Իլլ –Ալլահ նշանակում է, որ ոչինչ և ոչ ոք չունի երկրպագության իրավունք բացառությամբ Ալլահի: Արդյո՞ք դու գիտես, թե ինչու է Ալլահը երկիր ուղարկել մարգարեների, որոնցից առաջինը Նոյն էր:

ԱԲԴՈՒՆՆԱԲԻ. Որպեսզի կոչեն բազմաստվածներին միայն Ալլահին երկրպագելու և մերժելու մյուսներին, ում տվել են զուգընկեր Ամենաբարձրյալ Ալլահին:

ԱԲԴՈՒԼԼԱՀ. Իսկ որո՞նք են պատճառները Նոյի ժողովրդի կատարել շրքի:

ԱԲԴՈՒՆՆԱԲԻ. Չգիտեմ...:

ԱԲԴՈՒԼԼԱՀ. Ալլահը ուղարկեց Նոյին իր ժողովրդի մոտ, որովհետև նրանք սկսեցին չափից դուրս մեծարել սրբերին. Վադդային, Սուվային, Յագուսային, Յաուկային և Նասրային:²

ԱԲԴՈՒՆՆԱԲԻ. Դու ուզում ես ասես, որ Վադդը, Սուվան և մնացյալը,

¹ Արաբական ցեղ, որը հետապնդեց վաղ մուսուլմանների, Մարգարեյի օրոք:

² Տես (Սուրա 71 «Նուուհ», այաթ 23)

սրբերի անուններ են, այլ ոչ թե անհավատ բռնապետների՝

ԱԲԴՈՒԼԼԱՅ. Այո, սրանք սրբերի անուններ են, որոնց Նոյի ժողովուրդը աստվածացրել է և այս հարցում նրանց հետևեցին արաբները: Իսկ որպես ապացույց, հանդիսանում է հաղիթը, որը հաղորդված է Իբն Աբբասից, որը ասում է. «Նոյի ժողովրդի կուռքերը արդյունքում անցան արաբներին: Վաղորդ Կայք ցեղի մոտ Դուատ ա—Ջանդայն էր, Մուվան, Խուզեյլ ցեղի մոտ էր, Յագուսը, Մուրադ ցեղի մոտ, հետո բանու Գուտեյֆ մոտ, ինչպես ալ-Ջուաֆե, Մաբայի մոտ: Յաուկը, Համդան ցեղի մոտ էր, իսկ Նասրը Հիմյար ցեղի մոտ, և Ջուլ էլ-Կալիի մոտ: Սրանք Նոյի ժողովրդի սրբերի անուններն են: Երբ նրանք մահացան, Մասանան ներշնչեց նրանց ժողովրդին, որ նրանք իրենց հավաքույթների վայրում դնեն արձաններ և կոչեն այդ սրբերի անուններով: Նրանք այդպես էր արեցին, բայց այդ ժամանակ չէին երկրպագում նրանց: Բայց, երբ այդպես արած մարդիկ մահացան և նրանց գիտելիքը անհայտացավ, արձաններին սկսեցին երկրպագել:» (Ալ- Բուխարի)

ԱԲԴՈՒՆՆԱԲԻ. Ասվածը զարմանալի է:

ԱԲԴՈՒԼԼԱՅ. Իսկ ուզու մ ես ես կպատմեմ քեզ ավելի զարմանալի բան: Իմացիր, որ ալլահը ուղարկել է Մարգարեների Կնիքը, մեր տեր Մուհամեդին ^(Մալլալահու ալեյի ուա սալամ) մարդկանց, ովքեր երկրպագում, ապաշխարհում, հաջ էին անում, և տավաֆ (շրջայց Քաբբայի շուրջ) և սաի (Մարվա և Մաֆա բլուրների միջև վազք) և բաժանում էին բարեգործություն, սակայն, միևնույն ժամանակ, նրանք որոշ արարածների, օրինակ հրեշտակների և սրբերի արել էին բարեխոսներ իրենց և Ալլահի միջև, և ասում էին. «Մենք ուզում ենք, որ նրանք մերձեցնեն մեզ Ալլահին և բարեխոսեն մեր համար Նրան:» Եվ, այդ ժամանակ Ալլահը ուղարկեց Մուհամեդին ^(Մալլալահու ալեյի ուա սալամ), որ նա վերադարձնի նրանց կրոնին իրենց նախահոր Իբրահիմի և հաղորդել նրանց, որ այդ մերձեցումը և համոզումնքը միմիայն Ալլահի իրավունքն է, և ոչինչ չի կարող պատկանել ուրիշ մեկին, քանզի Նա միակ արարիչն է և չկա Նրան գուգընկեր և չկա ոչ ոք, ով տալիս է ճակատագիր բացի Նրանից: Յոթ երկինք ամենցով, ովքեր այնտեղ են և յոթ երկիր ամենով, ովքեր այնտեղ են, բոլոր նրանք հանդիսանում են Նրա ստրուկներ, և նրանք բոլորը Նրա ենթակայության և ենթարկվածության տակ են: Ավելին, նրանք ասել են, որ աստվածությունները, որոնց նրանք երկրպագում են, գտնվում է Նրա հզորության և ենթակայության տակ:

ԱԲԴՈՒՆՆԱԲԻ. Ինչ ասացիր չափազանց հետաքրքիր և կարևոր է...: Իսկ կա՞ն ապացույցներ քո խոսքերին:

ԱԲԴՈՒԼԼԱՅ. Ապացույցներ շատ կան: Դրանցից են Ամենաբարձրյալի խոսքերը. «Ասա. «Ո՞վ է փեզ ճակատագիր տալիս երկնքից և երկրից: Ո՞վ է տիրում լսողությանը և տեսողությանը: Ո՞վ է ստեղծում մեռածից կենդանի, իսկ կենդանուց հանում է մեռածը, և ո՞վ է կառավարում ամեն ինչ:» Նրանք կասեն. «Ալլահը:» Ասա, «Մի՞ թե դուք չեք վախենա :»» (Մուրա 10 «Յունուս», այսթ 31)

Նաև Նրա Խոսքերը «Ասա. «Ու՛մ է պատկանում երկիրը և ուլքեր նրա վրա են, եթե դուք միայն գիտեք:» Նրանք կասեն.«Այլահին:» Ասա. «Մի՞ թե դուք չեք հիշի խրատը:» Ասա. «Ո՛վ է յոթ երկինքների և փառահեղ Գահի Տիրակալը:» Նրանք կասեն.«Այլահը:» Ասա. «Մի՞ թե դուք չեք վախենա:» Ասա. «Ու՛մ ձեռքերում է ամեն բանի իշխանությունը: Ո՛վ է պաշտպանում և ու՛մից չկա պաշտպանություն, եթե միայն դուք գիտեք:» Նրանք կասեն. «Այլահ:» Ասա. **Ինչքան եք դուք խաբված:»» (Մուրա 23 «Հավատացյալներ», այաթ 84-89)**

Ուխտագնացության, Հաջի ժամանակ բազմաստվածները կրկնում էին. «Ահա ես Քո առջև եմ. Օ. Այլահ, ահա, ես Քո առջև եմ: Ահա, ես Քո առջև եմ, չկա Քեզ զուգընկեր, բացի զուգընկերոջից, որը կա Քեզ մոտ, նա պատկանում է Քեզ և ամենը, ինչ նա ունի: » Բազմաստված քուրեյշների ճանաչումը, որ հենց Այլահն է կառավարում տիեզերքը, այսինքն Միաստվածության Տիրակալությունը, չի դարձրել նրանց մուսուլման: Եվ նրանց դիմումը հրեշտակներին, մարգարեներին և սրբերին բարեխոսության նպատակով, դարձրել է նրանց անհավատ: Այդ պատճառով անհրաժեշտ է ուղղել ամեն դուա, միմիայն Այլահին, ինչպես նաև ուխտը, օգնության խնդրանքը, գոհողությունը, և ընդհանրապես բոլոր տեսակի երկրպագությունները պիտի ուղղվեն միայն Այլահին:

ԱԲԴՈՒՆՆԱԲԻ. Եթե Այլահի գոյության ընդունումը և այն, որ նա կառավարում է ամբողջ Տիեզերքը տաուհիդ, Միաստվածությունն չէ, ինչպես դու պնդում ես... Ապա, ո՞րն է տաուհիդը, Միաստվածությունը:

ԱԲԴՈՒԼԼԱՅ. Տաուհիդը, որի համար ուղարկվել են մարգարեները մարդկանց և որը մերժել են ընդունել բազմաստվածները, դա Միայն Այլահին երկրպագելն է և ընդունելը այն, որ երկրպագությունից ոչինչ չպիտի ուղղվի որևէ մեկին, կամ բանին բացի Այլահից: Ոչ դուան, ոչ, ուխտը, ոչ գոհաբերությունը, ոչ էլ օգնության խնդրանքը...: Այս տաուհիդն է հանդիսանում քո արտաբերած «**ԼԵ ԻԼԵՉԵ ԻԼՍ ԱԼԼԱՅ**» բառերի իմաստը: Չկա իրական աստված արժանի երկրպագման, բացի Այլահից: «Բազմաստված քուրեյշների մոտ «Աստվածն» այն է, որին նրանք դիմում են այս բոլոր տեսակի երկրպագություններով, լինի դա հրեշտակ, մարգարե, սուրբ, ծառ, գերեզման, թե ջին: Եվ նրանք չեն պնդել, որ սա աստված է, ավելի ճիշտ, սուտ աստված, որը հանդիսանում է արարիչ, որը տալիս է ճակատագիր, կառավարում է տիեզերքը, քանի որ նրանք գիտեն, որ այս ամենը վերաբերվում է Միայն Այլահին, ինչպես արդեն ասել ենք: Եվ երբ, նրանց մոտ եկավ Այլահի Մարգարեն (*Մայլայանու (այլեհի ուա սայամ)*), նա սկսեց կոչել նրանց միաստվածության, տահուդի բանաձևի, «Չկա աստված, բացի Այլահից» և դրա իմաստի համակեցմանը, այլ ոչ միայն արտաբերմանը:

ԱԲԴՈՒՆՆԱԲԻ. Դու, կարծես ուզում ես ասել, որ բազմաստված քուրեյշները գիտեյին «Չկա աստված, բացի Այլահից» բառերի իմաստը ավելի լավ, քան շատ մուսուլմաններ մեր ժամանակներում:

ԱԲԴՈՒԼԼԱՅ. Այո, այսպիսին է տխուր իրականությունը: Անգրարետ

անհավատները գիտեյին, որ այս բառերով Ալլահի Մարգարեն *(Մալլապահու
այլեհի ուա սայամ)* նկատի ուներ Միայն Ալլահի երկրպագումը և մերժումը այն ամենի, որին երկրպագում էին: Եվ երբ նա ասաց. «Ասացեք. «Չկա աստված, բացի Ալլահից», նրանք պատասխանեցին. «Մի՞թե նա դարձրել է բոլոր աստվածներին մի աստված: Ըջմարիտ, սա զարմանահրաշ մի բան է:» (Մուրա

38 «Այգի», այտաթ5): Եվ այս ամենը այն դեպքում, որ նրանք հավատում էին, որ հենց Ալլահն է կառավարում ամբողջ տիեզերքը: Եվ եթե, անգրագետ անհավատները գիտեյին այդ, ապա մնում է միայն զարմանալ այն մարդկանց վրա, ովքեր պնդում են, որ իսլամի ներկայացուցիչներ են, բայց միևնույն ժամանակ չգիտեն այս բառերի իմաստը, որոնք հայտնի էին, նույնիսկ անգրագետ անհավատներին: Ավելին, որոշ մարդիկ համարում են, որ բավարար է արտաբերել այս խոսքերը միայն բերանով, նույնիսկ հավատ չունենալով սրտում: Մուսուլմանների որոշ մաս էլ կարծում են, որ «**ԼԵ ԻԼԵՇԷ ԻԼԱ ԱԼԼԱՅ**» բանաձևի իմաստը հետևյալն է. չի արարում, չի տալիս ճակատագիր, աշխարհիկ գործերը չի կառավարում ոչ ոք, բացի Ալլահից:

Չկա բարիք այն մարդկանց մեջ, ովքեր պնդում են, որ նրանք մուսուլման են, այն դեպքում, երբ անգրագետ անհավատ քուրեյշները ավելի տեղյակ էին «**ԼԵ ԻԼԵՇԷ ԻԼԱ ԱԼԼԱՅ**» բառերի իմաստին, քան նրանք:

ԱԲԴՈՒՆՆԱԲԻ. Սակայն ես Ալլահին զուգրնկեր չեմ տալիս, և ես վկայում եմ, որ չի արարում, չակատագիր չի տալիս, օգուտ և վնաս չի բերում ոչ ոք, բացի Միայն Ալլահից, Որը չունի զուգրնկեր, և որ Մուհամեդը *(Մալլապահու
այլեհի ուա սայամ)* չի կարող ոչ օգուտ, ոչ վնաս բերել իրեն: Իսկ Ալի ալ-Չուսեյնը, Աբդուլքադերը և մյուսները առավելա: Սակայն ես մեղսավոր եմ, և սրբերից, ովքեր ունեն որոշակի դիրք Ալլահի մոտ, խնդրում եմ բարեխոսություն ինձ համար:

ԱԲԴՈՒԼԼԱՅ. Քեզ կարող եմ պատասխանել միայն, ինչ արդեն ասել եմ, որ նրանք, ում հետ մարտնչում էր Ալլահի Մարգարեն *(Մալլապահու
այլեհի ուա սայամ)*, ընդունում էին այն, ինչ դու հիմա հիշատակեցիր, ինչպես նաև նրանք ընդունում էին, որ նրանց կուռքերը իրենք իրենց չեն որոշում: Եվ նրանց ձգտման առարկա էր առանձնակի դիրքը և բարեխոսությունը, և ես արդեն դրան ապացույց բերել եմ Ղուրանից:

ԱԲԴՈՒՆՆԱԲԻ. Սակայն այդ այաթները բերվում են նրանց համար, ովքեր երկրպագում են կուռքերի, ապա ինչպես կարող եք դուք հավասարեցնել մարգարեներին և սրբերին կուռքերի հետ:

ԱԲԴՈՒԼԼԱՅ. Մենք արդեն խոսել ենք այն մասին, որ այդ կուռքերից մի քանիսը անվանվել էին սրբերի անուններով, ինչպես եղել էր Նոյի ժամանակներում, և որ անհավատները նրանցից ուզում էին միայն բարեխոսություն Ալլահի մոտ, որովհետև նրանք ունեյին հատուկ դիրք և որպես ապացույց ծառայում են Ամենաբարձրյալի Խոսքերը. «**Իսկ նրանք, ովքեր վերցրել են իրենց Նրա փոխարեն ուրիշ հովանավորներ և օգնականներ, ասում են. «Մենք երկրպագում ենք նրանց, միայն նրա համար, որ նրանք մեզ**

մերձեցնեն Ալլահին, որքան որ հնարավոր է:» (Մուրա «Ամբոխներ», այսթ 3):

Ինչ վերաբերվում է քո խոսքերին.«Ինչպես եք դուք հավասարեցնում մարգարեներին և սրբերին կուռքերին», ապա այստեղ մենք ասում ենք. ճշմարիտ,անհավատների մեջ, ում ուղղարկվել է Ալլահի Մարգարեն, կային այնպիսիներ, ովքեր կոչում էին սրբերին նույնպես: Նրանց մասին Ամենաբարձրյալը ասում է. «**Նրանց, ում նրանք աղերսանքով կոչում են, իրենք են ուղիներ փնտրում մերձենալու իրենց Տիրոջը, փորձելով առաջ գնալ ուրիշներից: Նրանք հույս են դնում Նրա գթությանը և վախենում են Նրա պատժից: Ճշմարիտ, Քո տիրոջ պատժից պետք է խուսափել:**» (Մուրա 17 «Գիշերային Փոխադրում», այսթ 57):

Նրանց մեջ կային նաև նրանք, ովքեր խնդրանքով դիմում էին Հիսուսին և նրա մորը: Ամենաբարձրյալ Ալլահը ասաց. «**«Ահա ասաց Ալլահը. Օ, Հիսուս, Մարիամի որդի, Ասե՛լ ես դու մարդկանց. Ընդունեք ինձ և իմ մորը ինչպես երկու աստված Ալլահին հավասար:»**» (Մուրա 5 «Ճաշկերույթ» այսթ 116):

Կային նրանց մեջ նաև այնպիսիներ, ովքեր կոչում էին հրեշտակների: Ամենաբարձրյալ Ալլահը ասաց. «**Այդ Օրը Նա կժողովի նրանց բոլորին, հետո կասի հրեշտակներին.**» Այս նրա նք են երկրպագել ձեզ:» (Մուրա 34 «Մաբա», այսթ 40)

Խորհիր այս այսթների շուրջ: Այնտեղ Ալլահը ասում է նրանց անհավատության մասին, ովքեր երկրպագում են կուռքերին և նրանց, ովքեր դիմում են մարգարեներին, հրեշտակներին, սրբերին և այդ պատճառով Ալլահի Մարգարեն ուղղարկեց իր ուղերձը նրանց բոլորին, տարբերություն չդնելով նրանց մեջ:

ԱԲԴՈՒՆՆԱԲԻ. Մակայն անհավատները ցանկանում են հասնել օգուտի, ես վկայում եմ, որ Օգուտ և վնաս բերողը և կառավարողը Ալլահն է, և ես այդ չեմ սպասում որևէ ուրիշ մեկից, բացի Նրանից, Նա Ամենաբարձրյալն է: Սրբերը իրենք իրենց ոչինչ չեն որոշում: Ես դիմում եմ նրանց, ցանկանալով, որ նրանք բարեխոսեն ինձ համար Ալլահին:

ԱԲԴՈՒԼԼԱՅ. Քո, խոսքերը ճիշտ և ճիշտ անհավատների խոսքերն են: Այդ են ապացուցում Ամենաբարձրյալի խոսքերը. «**Նրանք երկրպագում են Ալլահին հավասար այն բանի, ինչ ոչ օգուտ է տալիս, ոչ վնաս: Նրանք ասում են. Նրանք, մեր բարեխոսներն են Ալլահի մտ:**» (Մուրա 10 «Յունուս», այսթ 18)

ԱԲԴՈՒՆՆԱԲԻ. Բայց ես չեմ երկրպագում ոչ ոքի բացի Ալլահից, և կոչն ու դիմումը նրանց առ օգնության չի հանդիսանում երկրպագություն:

ԱԲԴՈՒԼԼԱՅ. Բայց ես հարցնում եմ քեզ, ընդունում ես դու, որ Ալլահը պարտավորել է քեզ ուղղել երկրպագությունը միայն Նրան, և դա Իր իրավունքն է, որի ի կատար ածումը դրված է քեզ վրա: Այդ են ապացուցում Նրա Խոսքերը. «**Իսկ նրանց հրամայված էր միայն երկրպագել Ալլահին, ծառայել Նրան անկեղծ, լինելով Միաստվածության հետևորդներ:**» (Մուրա 98 «Պարզ նրաններ», այսթ 5):

ԱԲԴՈՒՆՆԱԲԻ. Այո, Ալլահը տվել է ինձ որպես պարտավորություն:

ԱԲԴՈՒԼԼԱՅ. Այդ դեպքում, ես խնդրում եմ քեզ ինձ բացատրել, ինչ է նշանակում այս դիմումը երկրպագելու Միայն Ալլահին, որը Նա դրել է քեզ վրա:

ԱԲԴՈՒՆՆԱԲԻ. Ես չեմ հասկանում, ինչ դու ի նկատի ունես, այս հարցը

տալով: Խնդրում եմ բացատրիր ինձ:

ԱԲԴՈՒԼԼԱՆ. Լավ, արի ես քեզ բացատրեմ: Ամենաբարձրյալ Ալլահը ասաց. «**Կոչեք ձեր Տիրոջը գաղտնի և հնազանդ: Ճշմարիտ, Նա չի սիրում հանցագործներին:**» (Մուրա 7 «Պատնեշներ», այաթ 55): Այսպես, հանդիսանում մ է արդյոք դուան Ալլահին երկրպագման ձև, թե ոչ:

ԱԲԴՈՒՆՆԱԲԻ. Իհարկե,ավելին, դուան երկրպագման հիմք է, ինչպես ասվել է հադիթում. «**Դուան երկրպագություն է:**» (Աբու Դաուդ)

ԱԲԴՈՒԼԼԱՆ. Եթե դու ընդունում ես, որ դուան հանդիսանում է երկրպագություն, և դիմում ես Ալլահին գիշեր ու ցերեկ վախով և հույսով,խնդրելով ինչ որ բան, իսկ դրանից հետո դիմում ես նույն խնդրանքով մարգարեյին,հրեշտակյին կամ սուրբին իր գերեզմանում, դա չի նշանակում, որ դու տալիս ես Ալլահին զուգրնկեր երկրպագության մեջ և շրրկ ես անում:

ԱԲԴՈՒՆՆԱԲԻ. Այո, դա շրրկ է և այստեղ ամեն ինչ պարզ է:

ԱԲԴՈՒԼԼԱՆ. Ահա քեզ մեկ այլ օրինակ: Եթե դու իմացար Ամենաբարձրյալի Խոսքերը. «**Այսպիսով աղոթիր քո Տիրոջը և զոհաբերիր**», և հնազադվեցիր Ալլահի այս հրամանին և զոհաբերեցիր Նրան կենդանի, համարվու մ է արդյոք այդ քո զոհաբերությունը Ամենաբարձրյալ Ալլահին երկրպագում, թե ոչ:

ԱԲԴՈՒՆՆԱԲԻ. Այո, այդ հանդիսանում է երկրպագություն:

ԱԲԴՈՒԼԼԱՆ. Եթե դու զոհաբերություն ես արել արարածներից որևէ մեկին, մարգարեյին, ջինին և այլն, Ալլահին հավասար, դա չի նշանակում արդյոք, որ դու զուգակցել ես Ալլահին ինչ որ մեկին քո երկրպագման մեջ:

ԱԲԴՈՒՆՆԱԲԻ. Այո, դա շրրկ է և կասկած չկա:

ԱԲԴՈՒԼԼԱՆ. Ես բացատրեցի քեզ դուայի և զոհաբերության օրինակով, որովհետև դուան, խոսքի երկրպագման ամենաախմաստալից տեսակն է, իսկ զոհաբերությունը գործելի տեսակը: Բայց երկրպագությունը չի սահմանափակվում այս երկու տեսակով: Այն բավական ընդարձակ է, այն ներառում է ուխտը, երդումը, պաշտպանության խնդրանքը, օգնությունը և այլն: Սակայն բազմաստվածները,որոնց համար լուսաբանվել են Դուրանի այաթները, արդյոք էրկրպագել են հրեշտակներին, սուրբերին և կուռքերին, ինչպիսիք են ալ-Լյաթը և այլն:

ԱԲԴՈՒՆՆԱԲԻ. Այո, նրանք արել են այդ:

ԱԲԴՈՒԼԼԱՆ. Իսկ եղել են արդյոք, նրանց երկրպագությունը ուրիշ բան, քան դուան, զոհաբերությունը, պահպանության կամ օգնության խնդրանք: Եթե մենք հաշվի չառնենք այդ ամենը, ապա նրանք ընդունում էին, որ նրանք Ալլահի ստրուկներ են և գտնվում են Նրա իշխանության տակ, և որ հենց Ալլահն է կառավարում ամեն բան...: Սակայն, նրանք սկսեցին կոչել նրանց, հրեշտակներին, մարգարեներին և այլն: Սկսեցին դիմել նրանց օգնության, ցանկանալով բարեխոսում և բարձրացում: Այս ամենը լիովին ակնհայտ է:

ԱԲԴՈՒՆՆԱԲԻ. Այդ չի նշանակում,օ, Աբդուլլահ,, որ դու մերժում ես Ալլահի Մարգարեյի ^(Սալլալահու ալեհի ուա ալլա) բարեխոսումը և հրաժարվում ես նրանից:

ԱԲԴՈՒԼԼԱՆ. Ոչ, ես չեմ մերժում նրան, և չեմ հրաժարվում նրանից: Ես ընդունում եմ, որ Մարգարեն <sup>(Մայլապահու
այլեհի ուս սպաս)</sup> բարեխոս է, որին տրված է այդ իրավունքը և ես ցանկանում եմ այդ: Սակայն ամբողջ բարեխոսումը պատկանում է Ալլահին, ինչպես Նա Ինքն է ասել. «**Ասա. Ալլահին է պատկանում բարեխոսումը ամբողջովին:**» (Մուրա 39 «Ամբոխներ» այաթ 44): Այն չի կարող օգտագործվել առանց Նրա թույլտվության, ինչպես Նա ասել է. «**Ո՛վ կբարեխոսի Նրան, առանց Նրա իսկ թույլտվության:**» (Մուրա 2 «Կով», այաթ 255): Բարեխոսները չեն բարեխոսի որևէ մեկի առանց նրա թույլտվության: Ամենաբարձրյալ Ալլահը ասաց. «**Նրանք բարեխոսում են միայն նանց, ումից Նա գոհ է:**» (Մուրա 21 «Մարգարեներ», այաթ 28): Իսկ նա չի գոհանում ոչնչով, բացի տաուհիդից: Նա ասաց. «**Նրանից, ով փնտրում է այլ կրոն բացի իսլամից, այդ երբեք չի ընդունվի, և Վերջին կյանքում, նա կհայտնվի պարտվածների մեջ:**» (Մուրա 3 «Իմրանի Ընտանիք», այաթ 85): Իսկ քանի որ բարեխոսությունը ամբողջովին պատկանում է Ալլահին, և իրականանում է միայն Իր թույլտվությամբ, ապա ոչ Ալլահի Մարգարեն <sup>(Մայլապահու
այլեհի ուս սպաս)</sup>, ոչ էլ որևէ մեկը չի բարեխոսի, մինչ Ալլահը չթույլատրի նրան այդ: Իսկ եթե թույլատրի, ապա միայն տաուհիդի հետևորդի: Եվ լիովին ակնհայտ է, որ բարեխոսությունը պատկանում է միայն Ալլահին, այդ պատճառով, ես խնդրում եմ Նրանից և ասում եմ. «Օ, Ալլահ, Մի գրկի ինձ Մարգարեյի բարեխոսությունից,» «Օ, Ալլահ, արա նրան բարեխոս ինձ համար » և այսպիսի բաներ:

ԱԲԴՈՒՆՆԱԲԻ. Մենք համաձայն ենք այն բանում, որ չի կարելի որևէ մեկից խնդրել այն, ինչ նրա իշխանության տակ չէ: Մարգարեյին <sup>(Մայլապահու
այլեհի ուս սպաս)</sup> տրված էր բարեխոսության իրավունք, իսկ քանի որ այն Նրան տրված էր, ապա այդ նրա իշխանության տակ է: Այստեղից ելնելով, կարելի է նրան խնդրել այն, ինչ նա ունի և դա չի հանդիսանա շրթկ:

ԱԲԴՈՒԼԼԱՆ. Այո, այս խոսքերը ճիշտ կլինեյին, եթե միայն Ալլահը չարգելած լիներ այդ ասելով. «**Մի կոչեք ոչ ոքի, Ալլահին հավասար:**» (Մուրա 72 «Զիններ» այաթ 18): Բարեխոսության խնդրանքը դուրան է: Հենց Ալլահն է նվիրել Մարգարեյին բարեխոսության իրավունք, և Նա արգելել է քեզ խնդրել այն որևէ մեկից, բացի Իրենից, անկախ նրանից, թե ով այդ մեկը: Բացի այդ, բարեխոսության իրավունքը տրված է ոչ միայն Մարգարեյին <sup>(Մայլապահու
այլեհի ուս սպաս)</sup>, փաստացի հայտնի է, որ հրեշտակները նույնպես կբարեխոսեն, և երեխաները, ովքեր մահացել են մինչ չափահաս դառնալը և սրբերը...: Ապա, ինչ ես ուզում ասել. «Ճշմարիտ, Ալլահը տվել է նրանց բարեխոսություն, և ես պիտի խնդրեմ այն նրանցից:» Ասելով այդ, դու կվերադառնաս սրբերին երկրպագելուն, ում մասին Ալլահը հիշատակել է Իր Գրքում: Եթե դու ասես. «Ոչ» ապա քո խոսքերը. «Ալլահը տվեց նրան բարեխոսում և ես խնդրում եմ այդ բարեխոսումը նրանից, ում այդ տրվել է» դառնում է սուտ և անկատար:

ԱԲԴՈՒՆՆԱԲԻ. Բայց ես չեմ անում շրթկ Ալլահի նկատմամբ, և սրբերին դիմելը չի հանդիսանում շրթկ:

ԱԲԴՈՒԼԼԱՆ. Դու ընդունու մ ես, որ շրթկի արգելքը ավելի խիստ է, քան

չնանալու արգելքը և որ Ալլահը չի ներում այդ:

ԱԲՂՈՒՆՆԱԲԻ. Այո, ես ընդունում եմ այդ և այդ ակնհայտ է Ամենաբարձրյալի Խոսքերից:

ԱԲՂՈՒԼԼԱՅ. Դու հենց նոր ասացիր, որ չես կատարում շրթկ, որը Նա արգելել է: Իսկ կարո՞ղ ես դու ինձ բացատրել, ինչ է նշանակում Ալլահին զուգընկեր տալը, որի մասին դու պնդում ես, որ չես արել և չես անի:

ԱԲՂՈՒՆՆԱԲԻ. Շրթկը կուռքերին երկրպագելն է, նրանց ձգտելը, դիմելը և նրանցից վախենալը:

ԱԲՂՈՒԼԼԱՅ. Ի՞նչ է նշանակում «կուռքերին երկրպագել»: Դու կարծու՞մ ես, որ անհավատ քուրեյշները համոզված էին, որ այդ քարի և փայտի կտորները արարում են, ճակատագրեր են տալիս և օգնում են նրանց, ովքեր կոչում են: Նրանք այդպես չէին կարծում, ինչպես արդեն ես քեզ ասել եմ:

ԱԲՂՈՒՆՆԱԲԻ. Ես նույնպես այդպես չեմ կարծում, ես նկատի ունեմ մարդու, ով դիմում է փայտի արձանին, կառույցին կամ քարին, որը դրված է գերեզմանի վրա, և կոչում է նրան, զոհաբերում է և ասում է. «Ճշմարիտ, նա մերձեցնում է մեզ Ալլահին, և Նա մեզանից հեռացնում է վտանգը հանուն նրա օրհնության և բարիքի»: Մա է երկրպագությունը կուռքերին, որը ես նկատի ունեմ:

ԱԲՂՈՒԼԼԱՅ. Դու ճիշտ ասացիր, սակայն այս է ձեր գործողությունները քարերի, գերեզմանների և կառույցների մոտ: Իսկ ինչ վերաբերվում է քո խոսքերին, «Շրթկը, կուռքերին երկրպագելն է...», ապա դու նկատի ունես, որ շրթկը սահմանափակվում է միայն նրանցով, ովքեր անում են այդպես, իսկ ով վստահում է սրբերին և կոչում է նրանց, չի՞ համարվում շրթկ անող:

ԱԲՂՈՒՆՆԱԲԻ. Այո, հենց այս էլ ես ուզում էի ասել:

ԱԲՂՈՒԼԼԱՅ. Այդ դեպքում, ո՞րն է քո դիրքորոշումը, այն բոլոր այաթների նկատմամբ, որոնք ես ասել եմ, որտեղ Ալլահը հիշեցնում է մարգարեներին և սրբերին վստահելը և հույս դնելը հրեշտակներին և այլն: Այստեղ ասվում է նաև նրանց անհավատության մասին, ովքեր արել են այդ:

ԱԲՂՈՒՆՆԱԲԻ. Բայց նրանք, ովքեր կոչել են հրեշտակներին և մարգարեներին, չեն ընկել անհավատության մեջ այդ պատճառով: Նրանք դարձել են անհավատներ, երբ ասել են. «Հրեշտակները, Ալլահի դուստրերն են» և «Մեսիան Ալլահի որդին է:» Մենք չենք ասում, որ Աբդուլքադերը Ալլահի որդին է, և որ Ջեյնաբը Ալլահի դուստրն է:

ԱԲՂՈՒԼԼԱՅ. Ինչ վերաբերվում է Ալլահին երեխաներ վերագրելուն, ապա սա այլ պատմություն է: Ամենաբարձրյալ Ալլահը ասաց. «**Ասա, «Նա- Ալլահը Միակն է, Ալլահը Ինքնաբավարար է: Նա չի ծնել և չի եղել ծնված:»**» (Սուրա 112 «Հավատքի Մաքրում», այաթներ 1-3): Միակը, Ով չունի նմանը, և չկա այդպիսի ուրիշ աստված: Ինքնաբավարար, Ում կարիքը բոլորը ունեն, Ում բոլորը դիմում են իրենց կարիքներով և պահանջներով: Իսկ, ով մերժում է այս, նա հանդիսանում է անհավատ, նույնիսկ եթե նա չի ժխտում սուրայի վերջին այաթը. «Նա չի ծնել և չի եղել ծնված:» Ուրիշ այաթում Ամենաբարձրյալը տարբերակում է երկու տեսակի անհավատություն. Ալլահին զուգընկեր

տալը և Նրան երեխաներ վերագրելը: Նա ասաց. «Ալլահը չի վերցրել Իրեն որդի, և չկա Նրան հավասար ուրիշ աստված: Այլապես ամեն աստված կտաներ իր հետ այն, ինչ արարել էր և նրանցից մեկը գերադաս կլիներ մյուսներին:» (Մուրա 23 «Հավատացյալներ», այսթ 91): Մեկ այլ ապացույց այս տարբերակմանը, կարող է հանդիսանալ այն, որ նրանք, ովքեր ընկել են անհավատության մեջ, երբ աղերսում էին ալ-Լյատ կուռքին, երբեք չեն պնդել, որ նա Ալլահի որդին է: Այսպես էլ ջիներին երկրպագողները, չեն պնդել, որ նրանք Ալլահի երեխաներն են: Եվ բոլոր չորս մզհաբները, պնդում են, որ մուսուլմանը, ով ասում է, թե Ալլահը ունի երեխաներ, հանդիսանում է ուխտադրուժ: Նա, ով Ալլահին զուգընկեր է տալիս նույնպես հանդիսանում է ուխտադրուժ և այս երկու տեսակները տարբերակվում են:

ԱԲԴՈՒՆՍԱԲԻ. Բայց Ամենաբարձրյալ Ալլահը ասում է. «Ճշմարիտ, նրանք, ովքեր մոտ են Ալլահին¹, չեն զգում վախ և չեն տխրի:» (Մուրա 10 «Յունուս», այսթ 62)

ԱԲԴՈՒԼԼԱՆ. Մենք հավատում ենք, որ այդ ճիշտ է և ընդունում ենք: Սակայն մենք չենք երկրպագում նրանց: Եվ միակ բանը, որ մենք մերժում ենք, նրանց երկրպագումն է Ալլահին հավասար և Նրան զուգընկեր տալը: Բացի դրանից, մենք պարտավոր ենք սիրել նրանց, և հետևել և ընդունել նրանց նվիրած հրաշք ունակությունները (կարամատ): Հրաշքները, որոնք կատարվել են Ալլահի հավատարիմ ստրուկների կողմից, կարող են մերժել միայն նորարարությունների կողմնակիցները: Ալլահի կրոն, ոսկե միջին է, սա երկու մոլորությունների ճշմարիտ ճանապարհ է և սա ճշմարտություն է երկու ստի արտահայտման միջև:

ԱԲԴՈՒՆՍԱԲԻ. Նրանք, ում չէին լուսաբանվում Ղուրանի այսթները, չէին վկայում, որ չկա աստված բացի Ալլահից և չէին հավատում Ալլահի Մարգարեյին (*Մայլայանու ալեհի ուս սայան*), մերժում էին Հարությունը, չէին հավատում Ղուրանին, և համարում էին այն կախարդանք: Մենք վկայում ենք, որ չկա աստված բացի Ալլահից և որ Մուհամեդը Ալլահի Մարգարեն է և հավատում ենք Ղուրանին, Հարությանը, աղոթում ենք և պահք ենք պահում: Եվ ի՞նչպես ես դու մեզ նմանեցնում նրանց:

ԱԲԴՈՒԼԼԱՆ. Գիտնականների մեջ տարաձայնություն չկա կապված այն բանի հետ, որ եթե մարդ համարում է Ալլահի Մարգարեյի մի խոսքը ճիշտ, իսկ մյուսը սուտ, ապա նա անհավատ է, մտած չլինելով Իսլամ: Նույնպես և անձը, ով հավատում է Ղուրանի մի մասին և չի հավատում մյուսին, ինչպես նաև նա, ով ընդունում է տաուհիդ, բայց մերժում է նամազը, կամ ընդունում է տաուհիդը և նամազը, բայց մերժում է բարեգործության պարտավորվածությունը, կամ ընդունում է այս բոլորը, բայց մերժում է պահքի պարտավորվածությունը, կամ ընդունում է այս ամենը, բայց մերժում է հաջի պարտավորվածությունը: Երբ, Մարգարեյի (*Մայլայանու ալեհի ուս սայան*)

¹ Այստեղ նկատի ունեն իրական հավատացյալներին, խիստ աստվածավախ և իրոք Ալլահին հավատարիմ մարդիկ, ովքեր փորձում են մերձենալ Նրան, իրենց հավատարմությամբ, բարի արարքներով և ջանալից երկրպագությամբ :

ժամանակ, որոշ մարդիկ չենթարկվեցին հաջ կատարելու հրամանին, Ամենաբարձրյալ Ալլահը լուսաբանեց այաթ նրանց. «**Մարդիկ պարտավոր են Ալլահի նկատմամբ, հաջ կատարել Տուն (Քաաբա), եթե նրանք ի վիճակի են կատարել այդ ճանապարհը: Եթե մեկը չի հավատում, ապա Ալլահը կարիք չունի հանգստության:**» (Մուրա 3 «Իմրանի Ընտանիք»-այաթ 97): Իսկ եթե մարդ մերժում է Հարությունը, սա անհավատություն է և սրա հետ կապված չկա տարաձայնություն: Հենց այս պատճառով Ամենաբարձրյալ Ալլահը պարզ ասել է Իր Մուրբ Գրքում այն մասին, որ, ով հավատում է Գրքի մի մասին և չի հավատում մյուսին, ապա իրականում անհավատ է: Եվ Նա հրամայեց ընդունել Իսլամը լիարժեք և ամբողջովին, և ով վերցնի մի բան և թողնի մյուսը, նա հանդիսանում է անհավատ: Ընդունում մ ես դու, որ նա, ով հավատում է մի մասին և թողնում է մյուսը, կընկնի անհավատության մեջ:

ԱԲԴՈՒՆՆԱԲԻ. Այո, ես ընդունում եմ դա: Այս պարզ երևում է Առաքինի Ղուրանում:

ԱԲԴՈՒԼԼԱՅ. Եթե դու ընդունում ես, որ նա, ով հավատացել է Մարգարեյին Խ.Ա.Ո.Ն ինչ որ բանում և միևնույն ժամանակ մերժեց պարտադիր աղոթքը, կամ ընդունել է ամեն ինչ, բացի Հարությունից, ապա նա կընկնի անհավատության, ապա իմացիր, որ տառուխիդը ամենամեծ պարտավորությունն է, որով եկել էր Ալլահի Մարգարեն (*Սալլալահու ալեյհի ուա սալամ*): Այն ունի ավելի մեծ իմաստ, քան աղոթքը, բարեգործությունը և հաջը: Ապա, ինչպե՞ս կարող է լինել, որ եթե մարդ մերժում է այս բաներից մեկը, նա դառնում է անհավատ, նույնիսկ, եթե նա կատարում է մնացյալը, իսկ եթե նա մերժում է տառուխիդը, որը հանդիսանում է բոլոր մարգարեների կրոն, նա չի դառնում անհավատ: Փառք Ալլահին: Ինչ կարող է լինել ավելի զարմանալի, քան այս անգրագիտությունը: Նույնպես մտածիր, Ալլահի Մարգարեյի (*Սալլալահու ալեյհի ուա սալամ*) հետևորդները մարտնչում էին Յամամում, բանու Հանիֆա ցեղի հետ, չնայած նրանք իսլամ էին ընդունել Մարգարեյի օրոք և վկայել էին, որ չկա աստված, բացի Ալլահից, և որ Մուհամեդը Ալլահի Մարգարեն է և աղոթք են արել և կոչել են աղոթքի:

ԱԲԴՈՒՆՆԱԲԻ. Բայց միևնույն ժամանակ, նրանք վկայել են, որ Մուսեյլիման¹ մարգարե է, մինչ դեռ մենք ասում ենք. «Մուհամեդից հետո չի կարող մարգարե լինել:»

ԱԲԴՈՒԼԼԱՅ. Սակայն, դուք մեծարում եք Ալիյին, կամ Աբդուլքադիրին, կամ մարգարեներից մեկին, կամ հրեշտակներին, հասցնելով նրանց երկրի և երկնքի Տիրակալին: Եվ եթե մարդ, ով մեծարել է մեկին Մարգարեյի (*Սալլալահու ալեյհի ուա սալամ*) աստիճանի, դառնում է անհավատ, և նրան այլևս օգուտ չի

¹ Մուսայլիմա, փաղաքշական Մասյամայից, - սուտ մարգարեներից մեկը, ով նմանեցնում էր իրեն Ալլահի Մարգարեյին: Նա Հանիֆա ցեղից էր, ով բնակվում էր Յամամում, Արաբիայի արևելքում: 634 թվականին Աբու Բաքր խալիֆը, Յամամա ուղարկեց զորք, իսալիդ իբն ալ-Վալիդի գլխավորությամբ: Առկաբայի մարտում Մուսայլիմի կողմնակիցները պարտվում են, իսկ նա մահանում է:

բերում վկայությունը, աղոթքը: Իսկ Ալլահի աստիճանին հասցնելը, առավել ևս: Նույնպես նրանք, ում Ալին ^(Մալլաթանու ալեհի ուս սալա) հրամայեց այրել, պնդում էին, որ նրանք մուսուլման են և նրանք Ալիի հետևորդներն էին և ստանում էին Մարգարեյի ^(Մալլաթանու ալեհի ուս սալա) հետևորդներից գիտելիքներ: Սակայն այդ ժամանակ, նրանք Ալիի նկատմամբ ունեյին նույն վերաբերմունքը, ինչ դուք ունեք Աբդուլբադիի և մյուսների նկատմամբ: Ինչպես հետևորդները դարձան միահամուռ այն կարծիքում, որ այդ մարդիկ հանդիսանում են անհավատներ և որ նրանց դեմ պիտի պայքարել: Մի թե դու կարծում ես, որ հետևորդները ունակ են մեղադրել մուսուլմանին անհավատության մեջ: Կամ դու կարծում ես, որ այսպիսի համոզմունքները ինչ որ մեկի նկատմամբ չեն վնասում, իսկ Ալիի նկատմամբ նույն վերաբերմունքը դարձնում է մարդուն անհավատ: Արժե նաև ասել, եթե մեզանից առաջ ապրողները հանդիսանում էին անհավատներ, որովհետև միացրել էին շրջկը և անհավատությունը Մարգարեյին ^(Մալլաթանու ալեհի ուս սալա), Ղուրանին և Հարության մերժումը և այլն, ինչու այդ դեպքում բոլոր մագհաբների գիտնականները հիշատակում են Շարիաթի որոշումները կապված ուխտադրուժի հետ, որը դարձել է անհավատ, իսլամ ընդունելուց հետո...: Եվ այստեղ նրանք հիշատակում են շատ պատճառներ, որոնցից յուրաքանչյուրը անհատական, կարող է մարդուն դուրս հանել իսլամից: Նրանք հիշատակել են նույնիսկ այն բաները, որոնց մեջ մարդ հեշտությամբ կարող է ընկնել, ինչպես խոսքեր, որոնց մեջ մարդ հեշտությամբ կրնկնի և կառաջացնի Ալլահի բարկությունը, նույնիսկ եթե նրանք ասված չեն սրտով, կամ ասված են կատակով: Այստեղ են մտնում նաև նրանք, ում մասին Ամենաբարձրյալ Ալլահը ասում է. «Ասա. «Մի թե դուք ծաղրել եք Ալլահին, Նրա այաթներին և Նրա Մարգարեներին: Մի խնդրեք ներողություն: Դուք անհավատ եք դարձել հավատալուց հետո:»» (Մուրա 9 «Ապաշխարհություն», այաթ 66): Այս մարդիկ անհավատ են դարձել հավատալուց հետո, որովհետև, լինելով Մարգարեյի ^(Մալլաթանու ալեհի ուս սալա) հետ Տաբուկի արշավանքի ժամանակ, ինչ որ բան են ասել կատակով: Կարելի է նաև հիշատակել այն, ինչ ասել է Ամենաբարձրյալ Ալլահը Իսրայելի որդիների մասին, ովքեր հավատարիմ էին Նրան, ունեյին գիտելիքներ և բարեպաշտ էին: Նրանք ասացին Մովսեսին. «Սարքիբ մեզ համար աստված:» Սրա նման ասել են նաև Մարգարեյի հետևորդները: Նրանք ասել էին. «Սարքիբ մեզ համար «Զաթու-ալ-անվալ:»» Իսկ Ալլահի Մարգարեն ^(Մալլաթանու ալեհի ուս սալա) երդվեց, որ այս նման է Իսրայելի որդիների խոսքերին. «Սարքիբ մեզ համար աստված, նման նրան, ինչպես նրանք ունեն աստված:» (Մուրա 7 «Բարձրունքներ», այաթ 138)

ԱԲՂՈՒՆՆԱԲԻ. Սակայն, Իսրայելի որդիները և նրանք, ովքեր խնդրեցին Մարգարեյին սարքել իրենց համար «Զաթու ալ-անվատ»-ը, դրանից չդարձան անհավատ:

ԱԲՂՈՒԼԱՀ. Պատասխանը այսպիսին է, որ Իսրայելի որդիները և նրանք,

ովքեր դիմեցին Մարգարեյին նույն խնդրանքով, չդարձրեցին խոսքը գործ, և եթե նրանք դա անեյին, ապա կդառնային անհավատներ: Եվ, եթե նրանք, ում Մարգարեն արգելեց անել այդ, նրան չենթարկվելին և անեյին դա, նրանք նույնպես կդառնային անհավատներ:

ԱԲՂՈՒՆՆԱԲԻ. Մակայն, ինձ մոտ ծագեց այսպիսի հարց. ՈՒսամա իբն Ձեյդը սպանեց մարդու, ով ասաց, «Չկա աստված, բացի Ալլահից;» իսկ Ալլահի Մարգարեն ^(Մալլալահու ալեյհի ուա սալամ) նախատեց նրան և ասաց. «**Օ, Ուսամա, Մի թե դու սպանեցիր նրան այն բանից հետո**», ինչ նա ասաց, «**Չկա աստված, բացի Ալլահից:**»» (Ալ-Բուխարի): ^(Մալլալահու ալեյհի ուա սալամ) խոսքերն են. «Ինձ հրամայված էր մարտնչել մարդկանց հետ, այնքան ժամանակ, մինչ նրանք չեն ասի. «**Չկա աստված,բացի Ալլահից:**» (Մուսլիմ): Եվ ինչպե՞ս ես կարող եմ այս համաձայնեցնել այն բանի հետ ինչ դու ասացիր: Բացատրիր ինձ, թող Ալլահը քեզ տանի ճիշտ ճանապարհով:

ԱԲՂՈՒԼԼԱՅ. Հաղիթներից հայտնի է, որ Ալլահի Մարգարեն ^(Մալլալահու ալեյհի ուա սալամ) մարտնչում էր հրեաների հետ և նրանց պատանդ էր վերցնում, այն դեպքում, որ նրանք ասում էին. «Չկա աստված, բացի Ալլահից », և որ նրա հետևորդները մարտնչում էին բանու Հանիֆի հետ այն պարագայում, որ նրանք վկայել էին, որ չկա աստված, բացի Ալլահից, և որ Մուհամեդը Ալլահի Առաքյալն է և աղոթում էին: Նույնպես նրանք, ում հրամայեց այրել Ալին...: Դու ընդունում ես, որ նա, ով մերժում է Հարությունը ընկնում է անհավատություն, նույնիսկ եթե նա ասում է. «Չկա աստված, բացի Ալլահից» և որ նա, ով մերժում է որևէ բան իսլամի սյուներից, ընկնում է անհավատություն, նույնիսկ եթե նա արտաբերել է այդ բառերը: Ինչպե՞ս այս ամենից հետո, դու կարող ես համարել, որ եթե նա մերժում է ինչ որ բան կրոնի ճյուղերից, նրան այս խոսքերը չեն օգնի: Այն ժամանակ, եթե նա մերժում է տահուդը, որը կրոնի հիմք է, ապա այդ բառերի արտաբերումը բավարար է:

Կարծես դու չես հասկացել այս հաղիթների իմաստը:

Կապված Ուսամա իբն Ձեյդի հաղիթի հետ, ապա նա սպանեց մարդուն, ով արտահայտեց խոսքերով, որ ընդունել է իսլամ, որովհետև նա որոշեց, որ այդ մարդը արտաբերեց այդ խոսքերը իր կյանքի և ունեցվածքի կորստի վախից: Ինչ էլ որ այնտեղ եղած լինի, թշնամի է նա, թե բարեկամ, եթե մարդ արտահայտում է իսլամի ընդունում, ապա նրան պիտի համարել մուսուլման, մինչ ակնհայտ չի երևա, որ նա հակազդում է իսլամի ընդունմանը: Ամենաբարձրյալ Ալլահը ասաց. «**Օ, Նրանք, ովքեր հավատացել են: Երբ դուք հանդես եք գալիս Ալլահի ճանապարհին, ապա համոզվեք:**» (Մուրա 4 «Կանայք»,այաթ 94); Այսինքն փնտրեք հաստատում: Այաթը մատնանշում է այն, որ նույնիսկ պատերազմի ժամանակ, եթե թշնամին հայտարարում է իսլամի ընդունում, նրան չի կարելի սպանել, մինչ չերևա որևէ բան, որ նա այնուամենայնիվ մուսուլման չէ:

ԱԲՂՈՒՆՆԱԲԻ. Իսկ ինչ դու կասես Մարգարեյի ^(Մալլալահու ալեյհի ուա սալամ) խոսքերի մասին, այն, որ Դատաստանի օրը մարդիկ օգնություն կխնդրեն Ադամից,

հետո Նոյից, հետո Իբրահիմից, հետո Մովսեսից, հետո Հիսուսից, բայց նրանք կասեն, որ չեն կարող ոչինչ անել և վերջիվերջո նրանք կգան Մուհամեդի մոտ: Այս ցույց է տալիս այն, որ Ալլահին օգնություն չի ներդրելը չի հանդիսանում շքրկ:

ԱԲԴՈՒԼԼԱՀ. Դու աղավաղեցիր հարցի բուն իմաստը, քանի որ մենք ընդհանրապես չենք մերժում կենդանի մարդուն դիմած խնդրանքը, ով կարող է օգնել տվյալ պարագայում: Ամենաբարձրյալը Մովսեսի պատմության մեջ ասաց. «Նա, ով նրա հետևորդների թվից էր, խնդրեց նրան օգնել ընդդեմ նրա, ով նրա թշնամիների թվից էր:» (Մուրա 28 «Պատմվածք», այսթ15)

Կյանքում մարդ շատ դեպքերում դիմում է իր ընկերներին օգնությամբ, որը նրանք կարող են անել: Բայց, մենք մերժում ենք օգնության խնդրանք, որը հանդիսանում է երկրպագություն, որը դուք անում եք սրբերի գերեզմաններում, կամ նրանց բացակայության ժամանակ, և դուք նրանց խնդրում եք այն, ինչ կարող է միայն Ամենաբարձրյալ Ալլահը իրականացնել: Իսկ Դատաստանի օրը մարդիկ կդիմեն մարգարեներին, ցանկանալով, որ նրանք կոչեն Ալլահին, և Նա դատի մարդկանց, որպեսզի Դրախտի բնակիչները կարողանան հանգստանալ, վերջապես, ծանր սպասումից: Եվ այս թույլատրելի է և այս և մյուս աշխարհում: Գալ սրբի մոտ, նստել նրա հետ, լսել նրա խոսքը և ասել. «Դիմիր Ալլահին, ինձ համար խնդրանքով:» Մարգարեյի ^{(Մայլալանու} _{պեյհի ուս սայամ)} հետևորդները խնդրում էին նրան իր կենդանության օրոք, իսկ մահից հետո նրանք երբեք չեն կոչել նրան: Նրանք այդ չեն խնդրել նրա գերեզմանի մոտ, ավելին, մեր նախնիները դժկամություն էին ցուցաբերում նրան, ով գալիս էր գերեզման, որ կոչեր Ալլահին:

ԱԲԴՈՒՆՆԱԲԻ. Իսկ ինչ դու կասես Իբրահիմի, խաղաղություն նրան, դեպքում, երբ նրան գցեցին կրակի մեջ և օդում հայտնվեց Գաբրիելը, խաղաղություն նրան, և հարցրեց. «Քեզ պե տք է որևէ բան» և Իբրահիմը, խաղաղություն նրան, պատասխանեց. «Քեզանից, ոչ:» Իսկ Գաբրիելին օգնության խնդրանքը լինելը շքրկ, ապա նա չէր առաջարկի այդ Իբրահիմին:

ԱԲԴՈՒԼԼԱՀ. Այս կասկածը նման է առաջինին: « Բացի այդ այս հաղիթը հաստատված չէ: Եթե նույնիսկ մենք ենթադրենք, որ այն ճիշտ է, ապա Գաբրիելը, խաղաղություն նրան, առաջարկեց նրան անել այն, ինչ նա ի վիճակի է: Ալլահը ասաց նրա մասին. «Մովորեցրի նրան հզոր ուժ:» (Մուրա 53 «Մատթ», այսթ5): Եվ եթե նրան Ալլահը թույլատրեր վերցնել կրակը, որը պատրաստված էր Իբրահիմի համար, ինչպես նաև նրա շուրջ հողը և լեռները և այս բոլորը գցել արևելք և արևմուտք, նա ի վիճակի կլիներ անել այդ: Այսպես նաև հարուստը, ով առաջարկում է կարիքավորին գումար պարտքով, որպեսզի նա կարողանա ծածկել իր անհրաժեշտ ծախսերը, և նա մերժեր և սպսեր, երբ Ալլահը կտա նրան այդ հնարավորությունը, որը չի լինի գթասարտություն ոչ ոքի կողմից և որ ոչ ոք չէր կարող նախատել նրան: Ինչքան հեռու է այդ այն օգնության խնդրանքից, որը հանդիսանում է

երկրպագություն և շրթկ, և որով դու ներկա պահին զբաղված ես:

Իմացիր, եղբայր, որ մեր նախահայրերի շրթկը, ում ուղարկվել էր Մուհամեդը
(Մալլապահու
*այեհի ուս սայսու)***, ավելի քիչ նշանակալից էր, քան մեր ժամանակներում սալթոդների**
շրթկը: Եվ այս կատարվում է երեք պատճառով.

★ Մեր նախնիները Ալլահին զուգընկեր էին տալիս միայն բարօրության ժամանակ: Երբ գալիս էր դժբախտությունը, նրանք իրենց հավատը ուղղում էին միայն Ալլահին և այս ապացուցում է Ամենաբարձրյալի Խոսքերը. «**Երբ նրանք նստում են նավ, ապա կոչում են Ալլահին, Նրա առջև մաքրում են իրենց հավատքը, և դիմում են Միայն Նրան իրենց երկրպագության մեջ: Երբ Նա փրկում է նրանց և հասցնում է ափ, նրանք անմիջապես սկսում են տալ զուգընկեր:**» (Մուրա «Մարդ», այաթ 65): Նույնպես Նրա խոսքերը. «**Երբ ալիքը ծածկում է նրանց, ինչպես ստվեր, նրանք կոչում են Ալլահին, մաքրելով Նրա առջև իրենց հավատքը, անկեղծորեն դիմում են միայն Նրան իրենց երկրպագությամբ: Երբ Նա փրկում է նրանց և հասցնում է ափ, ապա նրանց մեջ հայտնվում են նրանք, ովքեր շեղվում են պատշեճ շնորհակալությունից: Բայց, Մեր նշանները մերժում են միայն անշնորհակալ դավաճանները:**» (Մուրա 31 «Լուկման» այաթ 32): Եվ բազմաստվածները, ում շրթկի դեմ պայքարում էր Ալլահի Մարգարեն *(Մալլապահու*
այեհի ուս սայսու), կոչում էին Ալլահին և ուրիշներին բարեհաջող օրերին, իսկ երբ գալիս էր դժբախտությունը, նրանք կոչում էին Միայն Ալլահին և մոռանում էին իրենց տերերին: Իսկ մեր օրերի բազմաստվածները կոչում են որևէ մեկին բացի Ալլահից և բարեհաջող և վատ օրերին, իսկ եթե նրանցից մեկը լինի վատ դրության մեջ, նա անմիջապես կբացականչի. «Օ, Ալլահի Մարգարե, Օ, Հուսեյն » և այլն: Սակայն, ո՞վ է հասկանում այդ:

★ Առաջինները կոչում էին Ալլահին հավասար նրանց, ովքեր Նրա մերձավորներից էին, ինչպես Մարգարեն, սուրբը կամ հրեշտակը, կամ ծայրահեղ դեպքում քարը կամ ծառը, ինչը հնագանդ է Ալլահին և լսում է Նրան: Իսկ մարդիկ մեր օրերում կոչում են Ալլահին հավասար, մեղավոր և վատ մարդկանց: Իսկ ունենալ այսպիսի համոզմունք այն մարդկանց վերաբերյալ, ում անբարոյականությունը և մեղսագործությունը ակնհայտ է, ավելի վատ է, քան սրբի կամ Ալլահին հնագանդ արարածի վերաբերյալ:

★ Մարգարեյի ժամանակաշրջնի բազմաստվածների մեծամասնությունը, տալիս էին Ալլահին զուգընկեր, երկրպագման իրավունքով, բայց ոչ թե Տիրակալության պարագայում: Ի տարբերություն նրանց ժառանգորդների շրթկի,, մեր օրերի շրթկը և մերժում է ամեն ինչ: Օրինակ, նրանք պնդում էին, որ Տիեզերքը ղեկավարում է բնությունը, կենդանացնում և մեռցնում է և այլն: Խոսքերս ես կավարտեմ բացատրելով հարցը, որը գալիս է իմ ասածներից. տարաձայնությունն չկա այն բանում, որ տաուհիդը սրտում եղած համոզմունք է, որը արտաբերվում է լեզվով և ապացուցվում է գործերով: Եվ եթե դրանցից որևէ բան խախտվում է, ապա մարդ այլևս մուսուլման չէ: Եվ եթե նա գիտի, ինչ է տաուհիդ, և չի գործում համաձայն

դրա, նա հանդիսանում է համառ անհավատ, ինչպես փարավոնը և Իբլիսը: Այստեղ շատ մարդիկ սխալվում են ասելով. «Այդ ճիշտ է, բայց մենք ի վիճակի չենք գործնականի մեջ դնել այդ, այս անհեթեթ է մեր երկրում և մեր ազգի համար, մենք պետք է համաձայնենք նրանց հետ, վախենալով այն չարիքից, որ նրանք կարող են պատճառել:» Այդ խեղճերը չգիտեն, որ անհավատության ներկայացուցիչների մեծամասնությունը գիտեն ճշմարտությունը և թողել են այն իրենց որոշակի պատճառներով, ինչպես ասել է Ամենաբարձրյալը. **«Նրանք վաճառել են Այլահի նշանները չնչին գնով և ուրիշներին շեղել են Նրա Ուղղուց: Ինչ նողկալի են նրանց արարքները:»** (Մուրա 9 «Ապաշխարանք», այաթ 9)

Նա, ով ապրում է համաձայն տաուհիդի, և չի հասկանում կամ ընդունում սրտանց այն, հանդիսանում է փարիսեցի և նա իր մոլորության մեջ ավելի վատն է քան սովորական անհավատը, քանի որ Ամենաբարձրյալը ասաց. **«Ճշմարիտ, փարիսեցիները կհայտնվեն Կրակի ամենաստորին աստիճանում և դու չես գտնի նրանց համար օգնական:»** (Մուրա «Կանայք», այաթ 145)

Այս հարցը կլինի պարզ և հասկանալի, եթե դու նայես մարդկանց դրությանը: Դու կտեսնես նրանց, ովքեր գիտեն ճշմարտությունը, բայց մերժում են վարվել դրան համապատասխան, վախենալով կորցնել որևէ բան իրենց աշխարհիկ բարիքներից, ինչպես Հարունը, կամ կորցնել իրենց դիրքը ինչպես Համանը, կամ իրենց իշխանությունը, ինչպես Փարավոնը: Եվ դու կտեսնես նրանց, ովքեր գործում են դրանց համապատասխան ի ցույց մարդկանց, չընդունելով այդ իրենց հոգիներում, ինչպես փարիսեցիներ: Եվ եթե դու հարցնես նրանցից մեկին, ինչին է նա հավատում սրտով, դու կհայտնաբերես, որ նա չգիտի տաուհիդ:

ՄԱԿԱՅՆ, ՔԵՁ ՊԵՏՔ Է ՀԱՄԿԱՆԱԼ ԱՄԵՆԱԲԱՐԶՐՅԱԼ ԱԼԼԱԶԻ ԳՐՔԻՑ ԵՐԿՈՒ ԱՅԱԹ:

★ Սրանք Ամենաբարձրյալի Խոսքերն են, որոնք մենք արդեն հիշատակել ենք. **«Թողություն մի խնդրեք, դուք դարձել եք անհավատ, հավատալուց հետո:»** (Մուրա 9 «Ապաշխարություն», այաթ 66): Այսպիսով, իմանալով, որ նրանցից ոմանք, ովքեր գնացել են արշավի հռոմեացիների դեմ Մարգարեյի Խ.Ա.Ո.Ն հետ, ընկել են անհավատության գիրկը, խոսքերի պատճառով, որոնք ասվել են կատակով: Դու հասկանում ես, որ նրանց արարքը, ովքեր արտաբերում են խոսք կամ գործում են արարք, որը հանդիսանում է անհավատություն, վախենալով կորցնել իրենց հարստության մի մասը կամ իրենց դիրքը, կամ ի օգուտ ինչ որ մեկի, հանդիսանում է ավելի մեծ հանցանք, քան կատակով արված խոսքերը: Որովհետև մարդը, ով կատակում է, սովորաբար իր սրտում չի հավատում նրան, ինչ ասում է իր լեզվով, շրջապատին ուրախացնելու համար: Ինչ վերաբերվում է նրան, ով արտաբերում է անհավատության խոսքերը կամ անում է այդ, վախենալով արարածներից, կամ ցանկությամբ հասնել նրանցից որևէ բանի, ապա նա հավատացել է Շեյթանի խոստմանը. **«Շեյթանը սպառնում է ձեզ աղքատություն և հրամայում է անել նողկալի**

արարքներ:» (Մուրա 2 «Կով»,այսթ 268) և վախեցել է նրա սպառնալիքից: «**Ռա միայն Մատանան վախեցնում է ձեզ իր օգնականներով:**» (Մուրա 3 «Իմրանի Ընտանիք»,այսթ 175) և նա չի հավատում Ամենագթասրտին. «**Ալլահը խոստանում է ձեզ ներում Իրենից և գթասրտություն»** (Մուրա 2 «Կով»,այսթ268) և չի վախենում Ամենահզորի սպառնալիքից.«**Մի վախեցեք նրանցից, վախեցեք Ինձանից:**» (Մուրա 3 «Իմրանի Ընտանիք»,այսթ 175)

Ապա ինչի է արժանի մարդը, որը գտնվում է այդ դրության մեջ, լինել Ամենաբարձրյալի մերձավորների ց, թե Շեյթանի:

★ Ամենաբարձրյալի խոսքերը. «**Ալլահի բարկությունը կրնկնի նրանց վրա, ովքեր կներժեն Ալլահին այն բանից հետո, երբ հավատացել են, ոչ թե նրանց վրա, ովքեր ստիպված են եղել դրան,մինչ նրանց սրտում հանգրվանում է ամուր հավատքը, այլ նրանց վրա, ովքեր իրենք են բացել իրենց կրծքերը անհավատության:Նրանց համար պատրաստված է մեծ տանջանքներ:**»

(Մուրա 16 «Մեղուներ»,այսթ 106): Ալլահը չի տվել նրանց արդարացում, բացի նրանցից, ովքեր ստիպված են, բայց սրտերը նրանց հանգիստ են հավատքի հարցում: Ինչ վերաբերվում է մնացածներին, ապա նրանք, միանշանակ,հանդիսանում են անհավատներ, անկախ նրանից, նրանց պատճառ է հանդիսացել վախը, թե ձգտումը ստանալ որևէ բան, կամ ինչ որ մեկին գոհացնելը հայրենիքի,ընտանիքի,ցեղի հետքրքրություններից ելնելով, կամ հանուն ունեցվածքի, կամ որպես կատակ, կամ նրանք ունեյին այլ պատճառներ: Բացառություն են կազմում միայն ստիպվածները:Իսկ այսթը մատնանշում է այն, որ ստիպողականությունը լինում է միայն խոսքերին և արարքներին: Ինչ վերաբերվում է համոզմունքներին, որոնք սրտում են,ապա այստեղ ստիպողականությունը անհնար է: Ամենաբարձրյալը նույնպես ասաց. «**Այդ այն պատճառով է, որ նրանք գերադասեցին աշխարհիկ կյանքը, Վերջին Կյանքից: Ճշմարիտ, Ալլահը չի տանում ուղիղ ճանապարհով անհավատ մարդկանց:**» (Մուրա 16,«Մեղուներ» այսթ107): Այստեղ պարզ ասվում է, որ պատժի պատճառ հանդիսանում է ոչ թե համոզմունքը, կամ տգիտությունը, կամ կրոնի հանդեպ ատելությունը, կամ անհավատության հանդեպ սերը, այլ այն, որ մարդ այդ ճանապարհով ձգտում է աշխարհիկ բարիքների, որոնք նա գերադասում է կրոնից:

Իսկ Ալլահը ամենի մասին լավ գիտի: Այս ամենից հետո, արդյոք չի եկել ժամանակը, թող Ալլահը քեզ ճիշտ ուղղու դնի, ապաշխարհել քո Տիրոջը, վերադառնալ Նրան, և թողնել այն, ինչին դու հակվում ես:Քանի որ գործը շատ կարևոր է, ինչպես դու հասկանում ես: Հարցը լուրջ է, իսկ վտանգը մեծ:

ԱԲՂՈՒՆԱԲԻ. Թողություն են խնդրում Ալլահից, և երկրպագում են Նրան, և վկայում են, որ չկա աստված բացի Ալլահից, և որ Մուհամեդը Ալլահի Առաքյալն է:Ես թողեցի հավատքը այն ամենին, ինչին ես երկրպագում էի բացի Ալլահից, և ես խնդրում եմ Նրան, որ Նա ների ինձ այնի համար, ինչ ես արել եմ դրանից առաջ և չհարցնի ինձանից, և տարածի իմ վրա Իր բարությունը, ներողամտությունը և գթասրտությունը

և ամուր պահի ինձ իրական Միաստվածության և «ակիդայի» մեջ, մինչ ես կհանդիպեմ Նրան:Եվ ես խնդրում եմ, որ նա արժանին պարզևի քեզ, իմ եղբայր Աբդուլլահ,քո այս խորհուրդների համար:Ճշմարիտ, կրոնը խորհուրդ է: Եվ թող նա արժանին տա քեզ այն բանի համար նաև, որ դու դատեցիր ինձ իմ անվան համար «Աբդուննաբի», և ես ցանկանում եմ ասել քեզ, որ իմ անունը հիմա «Աբդունռահմեն» է, որը նշանակում է Գթասիրտի ստրուկ:Եվ այն բանի համար, որ դու անհամաձայնություն հայտնեցիր իմ համոզմունքներին:Նրանք հանդիսանում են մոլորություն, և եթե ես հանդիպելի Ալլահին, ունենալով այդ համոզմունքները, ես երբեք չէի լինի հաջողակ: Սակայն ես ունեմ վերջին խնդրանքը, ասա ինձ դատապարտելի արարքները, որոնք մարդիկ հաճախ անում են մեր օրերում:

ԱԲԴՈՒՆՆԱԲԻ. Խնդրեմ, լսիր.

• Մի ձգտիր ընտրել քեզ շահավետ կարծիք, հենվելով նրան, որ տվյալ հարցում կա տարաձայնություն,տարածելով մոլորություն և փորձելով գտնել բացատրություն կամ արդարացում քո կարծիքին, քանի որ դրա էությունը ոչ ոք չգիտի բացի Ալլահից:Թող քո կարգախոսը լինի այնը, որը հիմնված է հիմնավոր գիտելիքների վրա, որոնք ասում են ակնարկող այսպիսի մասին. «Մենք հավատացինք նրանց, նրանք բոլորը մեր Տիրոջից են», իսկ այն դեպքում, երբ կա տարաձայնություն Ալլահի Մարգարեյի ^{(Մայլապահու} ^{այլեհի ուս սայամ)} խոսքերը «Թող, այն, ինչ քեզ մոտ կասկած է առաջացնում,ի օգուտ նրա, ինչը չի առաջացնում այդ կասկածը:» (Ահմեդ, աս-Թիրմիզի): Ինչպես նաև Մարգարեյի ^{(Մայլապահու} ^{այլեհի ուս սայամ)} խոսքերը. «**Ով խուսափում է կասկածելիից, նա մաքրել է իրեն իր կրոնում և պատվում, իսկ ով ընկել է կասկածելին, նա ընկել է արգելվածի մեջ:**» (Ալ-Բուխարի, Մուսլիմ): Ինչպես նաև Մարգարեյի ^{(Մայլապահու} ^{այլեհի ուս սայամ)} հետևյալ խոսքերը «Մեղքը այն է, ինչ առաջացնում է անհանգստություն սրտում, այն, ինչի մասին դու չես ցանկանում որ մարդիկ իմանան:» (Մուսլիմ) Նույնպես Նրա ^{(Մայլապահու} ^{այլեհի ուս սայամ)} հետևյալ խոսքերը. «**Խորհուրդ հարցրու քո սրտից և հոգուց (Նա կրկնեց այդ երեք անգամ): Բարեպաշտությունը այն է, ինչում քո հոգին հանգիստ է, իսկ մեղքը այն է, ինչ առաջացնում է քո հոգում անհանգստություն և ճնշում կրծքում, նույնիսկ եթե մարդիկ համոզեն քեզ, որ դրա մեջ վատ բան չկա:**»¹ (Ահմեդ)

• Խուսափիր հետևել քո կրքերին, քանզի ճշմարիտ, Ամենաբարձրյալ Ալլահը պաշտպանում է մեզ դրանից, ասելով.«**Տես լ ես դու նրան, ով իր աստվածն է արել իր իսկ կիրքը:**» (Մուրա 45 « Ծնկապաշտություն »,այսթ 23)

• Խուսափիր ծայրահեղական կապվածությունից որոշակի մարդկանց և կարծիքներին, ինչպես նաև նրանց, ինչին հետևում էին հայրերը, քանի որ այդ հեռացնում է մարդուն ճշմարտությունից: Ճշմարտությունը հավատացյալի մոլորված գառն է, որտեղ որ նա չգտնի այն, նա միշտ ունի

¹ Այսինքն, նույնիսկ եթե մարդիկ, ովքեր չունեն գիտելիք, բազմակի կրկնեն քեզ, որ տվյալ արարքը բոլորովին մեղք չէ:

ավելի շատ իրավունքներ, քան մյուսները: Ամենաբարձրյալ Ալլահը ասաց. «Երբ նրանց ասում են. «Հետևեք նրան, ինչ լուսաբանել է Ալլահը », նրանք պատասխանում են. «**Ոչ, Մենք կհետևենք նրան, ինչին հետևում էին մեր հայրերը:**» Իսկ եթե նրանց հայրերը ոչինչ չգիտեյի ն և հետևում էին սխալ ուղղու:»» (Մուրա 2 «Կով», այաթ 170)

- Խուսափեք նմանվել անհավատներին: Ալլահի Մարգարեն ^(Մալլալահու ալեհի ուա սալամ) ասաց. «**Ով նմանակում է ինչ որ մարդկանց, ապա նա ինքը նրանցից է:**»
- **Խուսափեք չվստահել Ալլահին: Ամենաբարձրյալ Ալլահը ասաց. «Նա, ով վստահում է Ալլահին, բավարար կլինի Նա:**» (Մուրա 65 «Անունսպումծություն», այաթ 3)
- Մի ենթարկվիր արարածին այն բանում, ինչը հանդիսանում է Արարչին անհնազանդություն: Ալլահի Մարգարեն ^(Մալլալահու ալեհի ուա սալամ) ասաց. «**Չի կարող լինել հնազանդություն արարածին այն բանում, ինչը հանդիսանում է Արարչին անհնազանդություն:**» (Ատ-Թիբաթի)
- Խուսափեք մտածել վատ Ալլահի մասին, այսինքն սպասել նրանից միայն վատը¹, քանի որ Նա ասել է կուդսի հադիթում. «**Ես այնպիսին եմ, ինչպես մտածում է իմ մասին Իմ ստրուկը**» (Ալ-Բուխարի, Մուսլիմ)
- Մի կրիր մատանի, թել կամ որևէ այլ բան, որպեսզի հեռացնես քեզանից եկող վտանգը, կամ վտարես այն, երբ արդեն եկել է:
- Խուսափեք կրել թալիսման այքի դեմ, քանզի այդ շրրկ է: Ալլահի Մարգարեն ^(Մալլալահու ալեհի ուա սալամ) ասաց. «**Ով կրում է թալիսման, կամ դրա նման մի բան, նա տրված է նրան:**» (Ատ-Թիբաթի)
- Խուսափեք փնտրել օրհնություն, քարերից, ծառերից, այն բանից, ինչ եղել էր մարդու մի մաս, (մազ, քրտինք և այլն) և տարբեր կառույցներից, (գերեզմանաքարերից և այլն), քանի որ այն հանդիսանում է շրրկ:
- Խուսափեք վատ նշաններին հավատալուն և ցանկացած սնոտիապաշտությունից, քանի որ այդ շրրկ է: Ալլահի Մարգարեն ^(Մալլալահու ալեհի ուա սալամ) ասաց. « **Վատ նշաններին հավատալը շրրկ է, վատ նշաններին ահավատալը շրրկ է:**» Եվ կրկնեց այդ երեք անգամ: (Ահմեդ, Աբու Դաուդ)
- Խուսափեք հավատալ կախարդներին և աստղաբաններին, ովքեր պնդում են, որ գիտեն գաղտնին, որոնք հրապարակում են գուշակությունները աստղերով թերթերում, կանխորոշելով մարդկանց երջանկություն կամ դժբախտություն, կապված աստղերի տեղաբաշխության հետ: Ով հավատում է նրանց, նա անում է շրրկ, որովհետև ոչ ոք չգիտի գաղտնին, բացի Ալլահից:
- Խուսափեք կապել անձրևի գալը աստղերի (մուլորակների) հետ, կամ միայն սեզոնային ժամանակի հետ:¹ Քանի որ ամեն ինչ, այդ թվում նաև անձրևի գալը կախված է միայն Ամենագոր Ալլահից:

¹ Այստեղից հետևում է, որ մուսուլմանը, ով մահամերձ է, պիտի մտածի Ալլահի գթության և գթասրտության մասին: Նրա սիրո մասին դեպի ստրուկները և Նրա ներման ընդարձակության մասին, այլ ոչ թե Նրա բարկության: Նա պիտի հուսա լավագույնը և ապավինի Ալլահին, որի գուրթը անսահման է: Եվ նրան չպետք է ներշնչել, որ իրեն անպատճառ սպասվում է պատիժ Ալլահից, իր մեղքերի և արարքների համար:

- Խուսափեք երդվել ինչ որ մեկով, կամ բանով բացի Ալլահից,քանի որ սա շըրկ է և հադիթում ասվում է. **«Ով երդվել է ոչ Ալլահին, նա ընկել է անհավատություն կամ արել է շըրկ:»** (Ահմեդ, Աբու Դաուդ): Մրան են վերաբերվում Մարգարեներին երդումը հավատարմությամբ, պատվով, խղճով և կյանքով:
- Մի պախարակեք ժամանակը, ինչպես նաև քամին, արևը, ցուրտը և շոգը, քանի որ այդ պախարակում է Ալլահին, Ով ստեղծել է դրանք:
- Մի ասեք. «Ահ, եթե լիներ այս կամ այն...», երբ քեզ հասել է դժբախտությունը, կամ անհաջողությունը, քանի որ այդ դուռ է բացում Շեյթանի խաղերին, և այդ խոսքերը հանդիսանում են Ալլահի Կանխորոշումների դեմ բողոք: Դրա փոխարեն ասա. «Ալլահը կանխորոշել է և արել է, ինչ ցանկացել է:»
- Խուսափեք ընտրել գերեզմանները աղոթատեղի:Չի կարելի աղոթել մզկիթում, որտեղ կա գերեզման: Հադիթում ասվում է, որ Ալլահի Մարգարեն **(Մալլաահու ալեյհի ուա սալամ)** ասաց. **«Ճշմարիտ նրանք, ովքեր ապրել են ձեզանից առաջ, դարձնում էին իրենց մարգարեների և սրբերի գերեզմանները աղոթատեղիներ:Այսպիսով մի դարձրեք գերեզմանները մզկիթներ: Ճշմարիտ, ես արգելում եմ այդ ձեզ:»** (Աբու Ավանա)
- Խուսափեք հավատալ հադիթներին, որոնք սուտասանները վերագրում են Ալլահի Մարգարեյին **(Մալլաահու ալեյհի ուա սալամ)** և որոնցում կա դրդում մերձենալ Ալլահին (տավասուլ) Մարգարեյի կամ սրբի միջոցով նրա ումմայի: Այս բոլոր հադիթները սուտ և երևայական են:Դրանցից են.«Մոտեցեք Ալլահին, իմ դրությամբ, ճշմարիտ իմ դիրքը Ալլահի մոտ բարձր է:» Ինչպես նաև. «Եթե ձեզ հոգնեցրել են գործերը, այսինքն (անհաջողությունները և դժբախտությունները), դիմեք հնազանդությամբ գերեզմաններին:» Նաև. «Ճշմարիտ,Ալլահը թողնում է հրեշտակ ամեն սրբի գերեզմանի մոտ, (վալի), որ նա բավարարի մարդկանց կարիքները:» Ինչպես նաև. «Եթե ձեզանից յուրաքանչյուրը լավ մտածի քարի մասին², ապա այն կբերի օգուտ նրան:» Գոյություն ունի այսպիսի շատ սուտ հադիթներ:
- Խուսափեք նշել այն, ինչ կոչվում է «կրոնական տոն», ինչպես Մարգարեյի **(Մալլաահու ալեյհի ուա սալամ)** ծննդյան տոնը (մուվալիդ), Հարության Գիշերը, շաբան ամսվա գիշերը և այլն: Այս բոլորը նորարարություններ են և նրանք չունեն ոչ մի հիմք, ոչ Ալլահի Մարգարեյից, ոչ նրա հետևորդներից, ովքեր սիրում էին Ալլահի Մարգարեյին, ավելի շատ քան մենք, և եթե այտեղ լիներ բարիք, նրանք կասեյին մեզ անել այդ:

¹ Այսինքն, մուսուլմանը չպիտի համոզված լինի, որ իրեն համար սովորական պատկերը, ինչպիսիք են, անձրևի գալը, ձյունը, չի կարող փոխվել :Որովհետև Ալլահը ամենագորն է և Նա արարում է ինչ ցանկանում է, Նրա իշխանության տակ է փոխել հաստատված կարգը: Օրինակ, անել այնպես, որ անրձրևը գա այն ժամանակ, որը սովորաբար չի լինում :

² Այսինքն կհավատա նրան, որ այդ քարը կարող է օգնել նրան և օգուտ բերել :

ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ

«ՉԿԱ ԱՍՏՎԱԾ, ԲԱՑԻ ԱԼԼԱՀԻՑ»

(Լե իլեհե իլա Ալլահ)

Միաստվածության բանաձևը բաղկացած է երկու մասերից.

1. «Չկա աստված...», այս իրական աստծո մերժումն է, ով էլ որ նա լինի, բացի Ալլահից: 2. «...բացի Ալլահից:» Այս համոզմունք է իրական աստվածության, Միայն Ալլահի: Ամենաբարձրյալ Ալլահը ասաց. «**Ահա Իբրահիմը (Աբրահամը) ասաց իր հորը և ազգին. «Ճշմարիտ, ես կապ չունեմ նրան, ինչին դուք երկրպագում եք, բացի Նրանից, Ով ստեղծել է ինձ: Ճշմարիտ, Նա կտանի ինձ ուղիղ ճանապարհով:»** Բավարար չէ ուղակի երկրպագել Ալլահին, անհրաժեշտ է երկրպագել Միայն Նրան: Իրական միաստվածությունը, Միայն Ալլահին երկրպագելն է և մերժելը որևէ մեկին կամ բանին, բացի Ալլահից: Հաղորդված է, որ Դրախտի բանալին «Չկա աստված, բացի Ալլահից» խոսքերն են: Մակայն, արդյոք ք ամեն ոք, ով կասի այդ, արժանի է որպեսզի Դրախտի դռների բացվեն նրա առջև:

Վահբ իբն Մունահիբույին, թող Ալլահը գթա նրան, ասացին. ««Մի թե «Չկա աստված բացի Ալլահից» խոսքերը չեն հանդիսանում Դրախտի բանալի:» Նա պատասխանեց. «Իհարկե, սակայն, ամեն բանալի ունի ատամներ, և եթե դու գաս համապատասխան ատամներ ունեցող բանալիով, ապա քեզ համար կբացվի, իսկ եթե ոչ, ապա չի բացվի:» Շատ հաղիթներ մեր Մարգարեյից ^(Մալլաանու ալեհի ուս սայամ) նույնպես պարզաբանում են մեզ, թե ինչ է հանդիսանում ատամները այդ բանալիի: Օրինակ, Ալլահի Մարգարեյի խոսքերը. « Ով ասում է. «Չկա աստված, բացի Ալլահից «անկեղծորեն», կամ «...ունենալով խոր համոզմունք սրտում...», կամ «...ասաց այդ անկեղծ, սրտանց...» և այլն, այս հաղիթները կապում են Դրախտի մուտքը խոսքերի իմաստով և մինչ մահ դրանց հետևելով:

Որպեսզի «Չկա աստված, բացի Ալլահից» խոսքերը լինեն Դրախտի բանալի և բերեն օգուտ ասողին, ապա նրանք պիտի հետևեն որոշ պայմանների և բացասեն որոշակի խոչընդոտներ: Ապացույցների շարքից են գիտնականների կողմից արված հետևյալ պայմանները, Նրանք էլ հանդիսանում են բանալու ատամները: Ահա նրանք.

1. **Գիտելիք.** Ամեն խոսք ունի իմաստ, և դու պիտի իմանաս «Չկա աստված, բացի Ալլահից» խոսքերի իմաստը ամբողջովին և բազմակողմանի: Այս խոսքերը մերժում են որևէ մեկի աստվածայնությունը, բացի Ալլահից, և պնդում են միայն Նրա Աստվածայությունը: Այսինքն, չկա ուրիշ մեկը արժանի երկրպագման, բացի Ալլահից: Ամենաբարձրյալ Ալլահը ասաց. «**Բարեխոսություն կլինի միայն նրանց, ովքեր գիտակցաբար վկայել են Ճշմարտությունը, միաստվածությունը:»** (Մուրա 43 «Չարդարանք» այաթ 86) Եվ ասաց Ալլահի Մարգարեն ^(Մալլաանու ալեհի ուս սայամ) «**Ով մահացել է, իմանալով, որ չկա աստված բացի Ալլահից, կմտնի Դրախտ:»** (Մուալիմ)

2. **ԽՈՐ ՀԱՄՈՉՄՈՒՆՔ.** Այսինքն, իմաստի հաստատուն հավատք, որոնք ներառված են այս խոսքերում: Այստեղ, տեղ չկա կասկածի, ենթադրության, տատանման և անվստահության: Այս խոսքերի արտաբերումը, պետք է հիմնված լինի խոր և հաստատուն համոզվածության վրա: Ամենաբարձրյալը ասել է նկարագրելով հավատացյալներին. «**Հավատացյալ համարվում են միայն նրանք, ովքեր հավատացել են Ալլահին և Նրա**

առաքյալին և հետո, չեն ունեցել կասկած և պայքարել են Այլահի ճանապարհին իրենց ունեցվածքով և իրենց հոգիներով:» (Մուրա 49 «Մեկյակներ», այաթ 15): Եվ բավարար չէ այս խոսքերի հասարակ արտաբերումը, նրանք պիտի համակցվեն սրտում գտնվող խոր հավատքով: Եթե այդ չկա, ապա այն պարզապես փարիսեցիություն է: Այլահի Մարգարեն (^{Մայլալանու} ^{այեհի ուս սայամ}) ասաց. «Վկայում եմ, որ չկա աստված բացի Այլահից, և որ ես Այլահի Մարգարեն եմ: Մարդ, ով կհանդիպի Այլահին այս խոսքերով, առանց կասկածելու, անպատճառ կմտնի Դրախտ:» (Մուսլիմ)

3. ԸՆԴՈՒՆՈՒՄ. Եթե դու իմացել և հավատացել ես, ապա այս հաստատուն գիտելիքը պիտի ունենա արտահայտում, և ընդունում այնի, ինչ ենթադրում են այս խոսքերը բառերով և սրտում: Ով մերժել է տառուիդի կոչը և չի ընդունել այն, նա հանդիսանում է անհավատ: Եվ կարևոր չէ, այդ մերժման պատճառը եղել է գոռոզությունը, նախանձը, թե համառությունը: Ամենաբարձրյալ Այլահը ասել է այն հավատացյալների մասին, ովքեր մերժել են իրենց գոռոզությունից ելնելով. «Երբ նրանց ասել են. Չկա աստված բացի Այլահից, նրանք գոռոզացել են:» (Մուրա 37 «Շարք կանգնածներ » այաթ 35)

4. ՀՆԱԶԱՆԴՈՒԹՅՈՒՆ տառուիդին, բացարձակ ձևով: Այս միակ չափանիշն է և (իմանի), հավատքի, իրական արտահայտումը: Այն իրականանում է գործնականում այն բանով, ինչ պատվիրել է Ամենաբարձրյալ Այլահը և մերժում այն, ինչ արգելել է Նա: Ամենաբարձրյալ Այլահը ասաց. «Ով իր երեսը թեքել է առ Այլահ, կատարելով բարիք, նա բռնել է վատահեղի ձեռք, իսկ գործերի որոշումը Այլահինն է:» (Մուրա 31 «Լուկման», այաթ 22): Եվ սա կատարյալ հնազանդություն է:

5. ԱՅՍ ԽՈՍՔԵՐԻ ԱՐՏԱԲԵՐՄԱՆ ՃՇՄԱՐՏԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ. Եթե մարդ արտաբերում է այն լեզվով, իսկ սիրտը նրա համարում է դրանք սուտ, ապա այդ փարիսեցիություն է և որպես ապացույց հանդիսանում են Ամենաբարձրյալի Խոսքերը, որոնցով Նա պախարակում է փարիսեցիներին. «Նրանք արտաբերում են իրենց լեզվով այն, ինչ չկա իրենց սրտերում:» (Մուրա 48 «Հադթանակ », այաթ 11)

6. ՄԵՐ. Հավատացյալը սիրում է այս խոսքերը, և սիրում է գործել համաձայն դրանց և սիրում է նրանց, ովքեր նվիրված են այս խոսքերին և գործում են համաձայն դրա: Ստրուկի սիրո նշանը առ Աստված այն է, որ մարդ առաջին տեղում է դնում այն, ինչ սիրում է Այլահը, նույնիսկ եթե այն հակասում է իր կրթերին և ցանկություններին: Ինչպես նաև Այլահին և նրա Մարգարեյին հավատարմությունը, և թշնամությունը նրանց նկատմամբ, ովքեր թշնամաբար են վերաբերվում Այլահին, հետևելով Նրա Մարգարեյին և ընդունելով նրան որպես օրինակ:

7. ԱՆԿԵՂԾՈՒԹՅՈՒՆ. Մարդ, ով արտաբերում է այս խոսքերը չպիտի ձգտի ոչ մի բանի, բացի Այլահի գոհության: Ամենաբարձրյալ Այլահը ասաց. « Իսկ նրանց հրամայված էր միայն երկրպագել Այլահին, ծառայել Նրան անկեղծ, լինելով Միաստվածության հետևորդներ:» (Մուրա 98 «Պարզ նախանշաններ», այաթ 5): Այլահի Մարգարեն (^{Մայլալանու} ^{այեհի ուս սայամ}) ասաց. ««Ճշմարիտ, Այլահը արգելեց կրակին կպնել նրան, ով ասել է.«Չկա աստված, բացի Այլահից », փորձելով գոհացնել Այլահին:»» (Ալ- Բուխարի)

ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ

«Մուհամեդը Ալլահի Մարգարե»

Հանգուցյալը գերեզմանում ենթարկվում է փորձության, և նրան տալիս են երեք հարց: Եթե նա պատասխանի դրանց, ապա կփրկվի, իսկ եթե չպատասխանի, կկործանվի: Այդ հարցերից մեկն է. «Ո՞վ է քո մարգարեն:» Այս հարցին կպատասխանի միայն նա, ում Ալլահը օգնել է հետևել անհրաժեշտ պայմանների, որոնք վերաբերվում են «Մուհամեդը Ալլահի Մարգարե» վկայությանը կյանքի ընթացքում, իսկ հետո ամրապնդել է այն և ներշնչել է նրան ճիշտ ուղղի գերեզմանում, իսկ դրանից հետո, բերել է մարդուն օգուտ հավիտենական աշխարհում, այն Օրը, երբ չի բերի օգուտ, ոչ հարստությունը, ոչ որդիները: Ահա այս անհրաժեշտ պայմանները.

1. ՀՆԱԶԱՆՂՈՒԹՅՈՒՆ ՄԱՐԳԱՐԵ ՄՈՒՀԱՄԵԴԻՆ այն բանում, ինչ նա հրամայել է, քանի որ Ալլահը հրամայել է մեզ ենթարկվել նրան: Ամենաբարձրյալ Ալլահը ասաց. «Ով հնազանդվել է Մարգարեյին, նա հնազանդվել է Ալլահին:» (Մուրա 4 «Կանայք», այաթ 80): Նա նույնպես ասաց. ««Ասա. «Եթե դուք սիրում եք Ալլահին, ապա հետևեք ինձ, և այդ ժամանակ Ալլահը կսիրի ձեզ...»» (Մուրա 3 «Իմրանի Ընտանիք » այաթ 31); Դրախտի մուտքը անմիջականորեն կապված է նրան հնազանդվելով, Մարգարեն ասաց. «Իմ ամբողջ ումման կյանքի Դրախտ, բացի նրանցից, ովքեր կմերժեն:» Մարդիկ հարցրեցին, «Օ, Ալլահի Մարգարե, ո՞վ կմերժի:» Նա ասաց. «Ով լսում է ինձ, նա կյանքի Դրախտ, իսկ ով չի լսել ինձ, նա կմերժի:» (Ալ-Քուխարի): Ով սիրում է Մարգարեյին ^(Մալլաանու ալեյհի ուա սալամ), նա անպատճառ պիտի ենթարկվի նրան, քանի որ հնազանդությունը սիրո պտուղ է: Իսկ նա, ով պնդում է իր սերը Մարգարեյի ^(Մալլաանու ալեյհի ուա սալամ) նկատմամբ և չի հետևում նրա օրինակին, չի հնազանդվում նրան, նա ստում է:

2. ՀԱՎԱՏՔ ԱՅՆ ԲԱՆԻՆ, ԻՆՉ ՆԱ ՀԱՂՈՐԴԵԼ Է. Ով համարել է սուտ, հավաստի հաղորդակցությունը, որը տրվել է Մարգարեյի (Ի.Ա.Ո,Ն) կողմից, իր կրքերից և գայթակղություններից ելնելով, ապա նա սուտ է դրել Ալլահի և Նրա Մարգարեյի վրա: Իսկ Մարգարեն ^(Մալլաանու ալեյհի ուա սալամ) պաշտպանված է ստից և սխալներից: Ղուրանում ասվում է. «Եվ ասում է նա ոչ թե նախասիրությունից ելնելով, այլ սա ոչ ինչ է, քան ուղարկված լուսաբանում:»

3. ԱՄԵՆ ԻՆՉԻՑ ՀԵՌԱՆԱԼ, ինչ արգելել է Ալլահի Մարգարեն ^(Մալլաանու ալեյհի ուա սալամ) և ինչից նախազգուշացրել է: Այն ներառում է ամենամեծ մեղքը, շրրկը և այլն, մեծ մեղքերից մինչ փոքրերը, որը ավարտվում է անցանկալի (մակրուհ) խոսքերով և արարքներով: Ըստ մուսուլմանի սիրո աստիճանի դեպի Մարգարեն ^(Մալլաանու ալեյհի ուա սալամ), ավելանում է նրա իմանը: Իսկ երբ ավելանում է նրա իմանը, այն ներշնչում է նրան, կատարել բարի արարքներ և ատելի է դարձնում անհավատությունը, մեղքերը և Ալլահին անհնազանդ լինելը:

4. ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ԵՐԿՐՊԱԳԵԼ ԱԼԼԱՀԻՆ ՄԻՍՅՆ ԱՅՆՊԵՍ, ինչպես հասցրել է մեզ Ալլահի Մարգարեն ^(Մալլաանու ալեյհի ուա սալամ): Քանի որ, երկրպագության հիմքը արգելք է և չի կարելի երկրպագել Ալլահին այլ ձև, բացի այնից, ինչպես տվել է մեզ Մարգարեն ^(Մալլաանու ալեյհի ուա սալամ): Մարգարեն ^(Մալլաանու ալեյհի ուա սալամ)

ասաց. «Ով արել է որևէ բան, որը չի համապատասխանում մեր գործին, այն կմերժվի:» (Մուսլիմ)

ՄԱՆՈՒՑՈՒՄ.

Իմացիր, որ Մարգարեյի նկատմամբ սերը պարտադիր է, և միայն սիրելը բավարար չէ: Մենք պարտավոր ենք սիրել նրան բոլորից շատ աշխարհում, նույնիսկ ավելի շատ քան մեզ: Քանի որ, ով սիրում է որևէ մեկին, նա գերադասում է նրան իրենից, զոհաբերում է ամեն ինչ հանուն նրա և փորձում է ոչնչում չհակաճառել նրան: Անկեղծ սիրող մարդու վարքագծում, ով սիրում է Մարգարեյին, երևում են նշանները: Նա հետևում է Սուննային խոսքերով և արարքներով, հնազանդվում է նրա ազդեցությանը, խուսափում է այն ամենից, ինչ նա արգելել է, հետևում է Նրա էսթետիկ նորմերին և դժվարին, և հեշտ պահերին: Քանի որ հնազանդությունը և հետևելը հանդիսանում են սիրո արդյունք, առանց որոնց սերը չի կարող լինել անկեղծ:

ՄԱՐԳԱՐԵՅԻ ՀԱՆԴԵՊ ԿԱՆ ՆԱԿ ՈՒՐԻՇ ՄԻՐՈ ՆՇԱՆՆԵՐ.

որոնցից են օրինակ, Նրան հաճախակի հիշատակելը և Ալլահի օրհնությունը խնդրելը, քանր որ մարդ ով սիրում է, անընդհատ հիշում է իր սիրած էակին: Ինչպես նաև նրան հանդիպելու ցանկությունը, քաղի ցանկացած սիրող մարդ ձգտում է հանդիպել իր սիրած էակին: Նաև նրան հարգելը և պատվելը հիշատակելիս: Իսհակը, թող Ալլահը գոհանա նրանով, ասաց. «Երբ Մարգարեյի հետևորդները հիշեցին նրան մահից հետո, նրանց սրտերը լցվեցին հնազանդությամբ և նրանք արտասվեցին:» Նրա հանդեպ սիրո նշան է նաև ատել այն, ինչ նա ատում էր, առանձնացումը, Նրա Սուննային հակառակվելը և կրոնի մեջ նորարարություններ բերելը: Սիրո նշան է նաև սերը այն մարդկանց նկատմամբ, ում սիրել է Մարգարեն, նրա ընտանիքը, կանայք, հետևորդները մուջադջիրներից և ասարներից: Ինչպես նաև թշնամական վերաբերմունք նրանց նկատմամբ, ովքեր թշնամաբար էին վերաբերվում նրան և ատելություն նրանց, ովքեր ատում և պախարակում են նրան:

Մարգարեյի նկատմամբ սիրո մեկ այլ նշան է նրան կրկնօրինակելը իր առաքինի պահվածքում և բարոյականությունում: Նա մարդկանցից ամենաառաքինին էր: Աիշան հադորդում է. «Ալլահի Մարգարեյի *(Մայլաանու ալեհի ուա սալամ)* բարոյականությունը Ղուրանն էր: Այսինքն, նա ինքն իրեն պարտադրել էր անել այն, ինչ հրամայում էր Ղուրանը:

Բացի դրանից, նա մարդկանցից ամենա անվախն էր, մանավանդ մարտերում և ամանաառատաձեռն և մեծահոգին էր, ռամադան ամսում: Նա մարդկանցից ամենահամբերատարն էր և երբեք վրեժխնդիր չէր եղել իր համար: Նա, նաև ամենահաստատակամն էր, երբ գործը վերաբերվում էր Ամենաբարձրյալին: Սակայն այս ամենի հետ, նա ամենահամեստ և առաքինին էր, և ավելի ամաչկոտ էր, քան հարսնացուն: Նա ամենալավն էր մարդկանց մեջ, կապված իր ընտանիքի հետ և ամենագթասիրտը:

ԾԻՍԱԿԱՆ ՄԱՔՐՈՒԹՅՈՒՆ (ՏԱՀԱՐԱ)

Նամագը հանդիսանում է իսլամի երկրորդ այունը և այն վավերական է միայն որոշակի մաքրության դեպքում, իսկ ծիսական այդ մաքրությունը կատարվում է ջրի կամ հողի օգնությամբ:

ՋՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

1) ՄԱՔՐՈՒՐ ՋՈՒՐ, ինքն իրեն մաքուր է և մաքրում է ամեն ինչ, այսպիսի ջուրը հեռացնում է անմաքրությունը և կեղտը (նեջես): **2) ԱՆՄԱՔՐՈՒՐ ՋՈՒՐ**, այն է, որը խառնվել է կեղտի հետ (նաջաս), եթե նրա քանակը քիչ է, և այն ջուրը, որի համը, գույնը և հոտը փոխվել է ինչ որ անմաքուր (նաջես) բանի հետևանքով, նույնիսկ այն դեպքում, երբ նրա քանակը մեծ է:

ՄԱՆՈՒՑՈՒՄ

ջրի մեծ քանակությունը համարվում է անմաքուր այն դեպքում, եթե ինչ որ բանի ազդեցության տակ այն փոխել է իր որակներից մեկը, գույնը, համը, հոտը: Իսկ քիչ քանակությամբ ջուրը դառնում է անմաքուր, նույնիսկ ամենահասարակ կեղտի հետ խառնվելուց: Մեծ քանակություն է համարվում 210 լիտրից ավել ջուրը:

ՏԱՐՐԱ. Ցանկացած տարրա համարվում է մաքուր և այն կարելի է օգտագործել, բացի ոսկե և արծաթե տարրաներից: Այդպիսի տարրաներից օգտագործվող ջրով մաքրվելը վավերական է, բայց համարվում է մեղք: Նույնպես կարելի է օգտագործել անհավաստի տարրան և հագուստը, բացի այն դեպքերից, երբ մենք գիտենք, որ նրանց վրա կա ինչ որ անմաքուր բան (նաջաս), կամ այն օգտագործվել է դրանք արտադրելու ժամանակ:

ԳԻՇԱԿԵՐԻ ՄՈՐԹԻՆ

ամեն դեպքում համարվում է նաջաս: Գիշակերը լինում է երկու տեսակի.

1) Կենդանի, որի միսը չի օգտագործվում ուտելիքի մեջ.

2) Կենդանի, որի միսը օգտագործվում է ուտելիքի մեջ, բայց մորթի ժամանակ չի հիշատակվել Ալլահի անունը:

Երկրորդ տեսակի կենդանու մորթին մշակումից հետո կարելի է օգտագործել չոր բաներ պահպանելու, բայց ոչ հեղուկ:

ԼՎԱՑՈՒՄ (իստինջա). Այս մաքրվելն է մեծ և փոքր կարիքներից հետո: Եթե այդ ժամանակ օգտագործվում է ջուր, ապա այն կոչվում է «իստինջա», իսկ եթե քար, թուղթ և այլն, այն կոչվում է «իստիջմար»: Եթե իստիջմարը համարվի վավերական, այն պիտի կատարվի որևէ մաքուր, թույլատրելի, մաքրող և ուտելիքի մեջ չօգտագործվող առարկայով: Քարի օգտագործման ժամանակ դրանք պիտի լինեն երեք և ավելի: Իստինջան կամա իստինջմարը պարտադիր է այն ամենի համար, ինչ դուրս է գալիս համապատասխան օրգաններից:

ԿԱՐԻՔԸ ՀՈԳԱՑՈՂԻՆ արգելվում է գտնվել այդ վայրում ավելի երկար ժամանակ, քան պահանջում է այդ կարիքը: Արգելվում է նաև հոգալ կարիքը ջրի աղբյուրի, ճանապարհի, ստվերի, մարդկանց հանգստանալու վայրերի, ծառերի մոտ: Կարիք հոգալուց չի կարելի ուղղվել Քիբլայի ուղղությամբ:

ԿԱՐԻՔ ՀՈԳԱՑՈՂԻՆ ԱՆԹՈՒՅՆԱՏՐԵԼԻ Է այնտեղ տանել որևէ բան, ինչ պարունակում է Այլահի անունը, և խոսել այդ ժամանակ: Նաև անթույլատրելի է կարիք հոգալ որևէ բնի մոտ և այլն: Չի թույլտրվում աջ ձեռքով ձեռք տալ սեռական օրգանները և թեքվել Քաբբայի ուղղությամբ փակ տարածքում: Սակայն անհրաժեշտության դեպքում այս ամենը թույլատրելի են:

ԿԱՐԻՔ ՀՈԳԱՑՈՂԻՆ ՑԱՆԿԱԼԻ Է. սրբել կամ լվալ համապատասխան օրգանները անհաշվելի անգամներ և օգտագործել ջուր քարով, թղթով և այլն:

ՄԻՎԱԿը հանդիսանում է սուննա, ատամների մաքրության համար: Այն հանդիսանում է արակ ծառի նման ծառի ճյուղ: Այն առանձնակի ցանկալի է անել նամազից, Ղուրան կարդալուց, փոքր լվացում (վուդու) անելուց, բերանը ողողելուց, քնից արթնանալուց, տուն կամ մզկիթ մտնելուց առաջ, ինչպես նաև տհաճ հոտերից խուսափելու համար: Սուննա է համարվում անել այդ աջ ձեռքով, իսկ ձախը պիտի օգտագործել անցանկալի մանրուքները հեռացնելու ժամանակ:

ՓՈՔԸ ԼՎԱՑՈՒՄ (ՎՈՒԴՈՒ): Նրա հիմքերն են (ոուկն)

- 1) երեսի լվացումը, այն ներառում է բերանի ողողումը և քթի մաքրումը;
- 2) ձեռքերի լվացումը մատերի ծայրերից մինչև արմունկ;
- 3) գլխի և ականջների սրբելը;
- 4) ոտքերի լվացումը, ներառելով կոճերը;
- 5) բոլոր գործողությունների հերթականությունը;
- 6) անդադարությունը, որպեսզի գործողությունների կատարման միջև չանցնի երկար ժամանակ:

ՊԱՐՏԱԴԻՐ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ (վաշաք).

Լվացումից առաջ Այլահի անունը հիշատակելը և երեք անգամ ձեռքերի լվանալը քնից արթնանալուց հետո:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ, ՈՐԸ ՀԱՆԴԻՍԱՆՈՒՄ Է ՑԱՆԿԱԼԻ ՍՈՒՆՆԱ.

Միվակի օգտագործումը, ձեռքերի դաստակների լվացում վուդույից առաջ, և մինչ երես լվանալը բերանի ողողումը և ականջների լվալը: Անհրաժեշտ է, որ ջուրը խորը ներթափանցի քթի և բերանի խոռոչը, որը սակայն, ցանկալի չէ պահք պահողի համար: Պետք է թավ մորուքը մատներով սանրել և այդ մասի մաշկի մանրակրկիտ լվալ: Անհրաժեշտ է սկսել լվացումը աջ կողմից: Մարմինը պիտի լվալ երկու կամ երեք անգամ: Սկսել աջ ձեռքով և ավարտել ձախով, և լվացման ժամանակ թեթև մերսել մարմնի մասերը: Ամենը կատարել մանրակրկիտ և ասել որոշակի դուա դրանից հետո:

ԼՎԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՆՑԱՆԿԱԼԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ (ՄԱԿՐՈՒՅ) Է

շատ տաք կամ սառը ջրի օգտագործումը, մարմնի որևէ մասի լվացումը ավելի քան երեք անգամ, ջրի թափահարումը լվացված մասերից, և աչքերի ներսից լվացումը: Ինչ վերաբերվում է լվացումից հետո սրբիչի օգտագործմանը, ապա այն թույլատրելի է:

ԾԱՆՈՒՑՈՒՄ. Բերանի խոռոչի ողողման ժամանակ անհրաժեշտ է ջուրը շարժել այնտեղ, իսկ քթի լվացման ժամանակ, պետք է զգույշ քաշել ջուրը ներս շնչելով, և դուրս անել այդ արտաշնչելով:

ՎՈՒԴՈՒՅԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ.

Մուսուլմանը իր սրտում, նպատակ է դնում անել այդ, հետո հիշատակում է Ալլահի անունը և լվնում է ձեռքերի դաստակները, հետո ողողում է բերանը և լվանում է քիթը, որից հետո լվանում է երեսը: Հետո նա լվանում է ձեռքերը մինչև արմունկները, որից հետո սրբում է գլուխը ճակատից մինչև ծոծորակ, ներառելով ականջների ետևի մաշկը, մինևույն ժամանակ ցուցամատով մաքրում է ականջների ներսը, իսկ բույթ մատով դրսի մասը: Դրանից հետո նա լվանում է ոտքերը ներառելով կոճերը:

ՕՍՆՈՒՑՈՒՄ. Եթե մոռուքը թավ չէ, ապա պետք է լվալ նրա տակի մաշկը, իսկ եթե ոչ, բավարար է լվալ նրա արտաքին մասը:

ԽՈՒՖՈՎՆԵՐԻ ՍՐԲՈՒՄԸ. Խուֆը, հատուկ կոշիկ է կաշվից կամ նմանատիպ նյութից: Եթե դրանք պատրաստվում են բրդից կամ դրա նման նյութից, ապա դա նույնն է ինչ գուլպան: Դրանք թույլատրված են սրբել միայն փոքր կեղտից հետո և պետք է հետևել հետևյալ պայմանները.

- 1) **խուֆերը** հագնում են ծիսական կատարյալ մաքրության դեպքում, այսինքն երկրորդ ոտքի լվալուց հետո;
- 2) **ծիսական** մաքրումը պիտի կատարվի ջրով;
- 3) **խուֆերը** պիտի ծածկեն այն ամբողջ մասը, որը անհրաժեշտ է լվանալ վուդույի ժամանակ;
- 4) **խուֆերը** պիտի լինեն թույլատրելի, այսինքն չգողացված և այլն;
- 5) **դրանք** պիտի լինեն մաքուր, այսինքն չպարունակեն իրենց մեջ այն, որը հանդիսանում է անմաքուր (նաջաս):

ՍՐԲԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՆՍՎԱԾԸ.

Այն մեկ օր է, այն մարդու համար, ով գտնվում է իր մշտական բնակության վայրում և երեք օր ճանապարհորդին, որին թույլատրվել է կարճեցնել նամազը, որը անցել է 85 կիլոմետր: Այս ժամանակահատվածը սկսվում է առաջին սրբումից և հազնելուց և ավարտվում է 24 ժամ հետո, իսկ ճանապարհորդին թույլատրվում է սրբել խուֆերը երեք օր հետո:

ՕԳՏԱԿԱՐ ԽՈՐՀՈՒՐԴ. Ով եղել է տանը, հետո ճանապարհ է անցել, կամ հակառակը, ճանապարհ է անցել և վերադարձել է տուն, կամ կասկածում է ժամանակահատվածի սկզբին, ապա նա սրբում է ինչպես բոլոր մարդիկ:

ԽՈՒՖԵՐԻ ՍՐԲՄԱՆ ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆԸ.

Այն ներառում է ոտքի վերին մասի մեծամասնությունը, մատներից մինչև կոճերը: Կարելի է սրբել մատների բացված դիրքով:

ՕԳՏԱԿԱՐ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆ. Լավ է սրբել երկու խուֆերը միաժամանակ և չսկսել աջից, պարտադիր չէ սրբել նրանց տակերը և ետևի մասը: Ցանկալի չէ լվանալ խուֆերը սրբելու փոխարեն, ինչպես նաև կատարել կրկնակի սրբում: Սակայն պետք է սրբել չալման և կանացի գլխաշորը:

ՉԱԼՄԱՅԻ ՍՐԲԵԼԸ. Այն կարելի է սրբել հետևելով հետևյալ պայմաններին:

- 1) եթե այն կրում է տղամարդ,
- 2) եթե այն ծածկում է գլխի այն մասը, որը պիտի ծածկի;
- 3) եթե սրբումը տեղի է ունենում փոքր կարիքներից հետո;
- 4) եթե դրան նախորդած ծիսական մաքրումը կատարվել է ջրով:

ԿԱՆԱՅԻ ԳԼԽԱՇՈՐԻ ՍՐԲՈՒՄԸ.

Թույլատրվում է, եթե կատարվում է ըստ հետևյալ պայմանների.

1) եթե այն կրում է կին; 2) տեղ է գտնում միայն փոքր կեղտոտումը; 3) գլխաշորը ծածկում է կոկորդի մասը; 4) նախորդող լվացումը կատարվել է ջրով;

5) այն պիտի ծածկի այն ամենը, ինչ սովորաբար ծածկում է կանացի գլխաշորը:

ԲԵՎԱԿԱԼ: Ձողեր, որոնք դրվում են կոտրվածքի մասում: Այն կարելի է սրբել, հետևելով հետևյալ պայմաններին:

1. մարդ պիտի իսկապես կարիք ունենա դրա;

2. այնպիտի դրվի միայն վնասված մասում;

3. այն անհրաժեշտ է սրբել վուդույի ժամանակ, առանց հանելու այն: Օրինակ, եթե այն դրված է ձեռքին, ապա պիտի անել վուդու նորմալ ձևով, միայն վնասված ձեռքի վնասալու փոխարեն, պետք է սրբել դրված ձողը:

Եթե ձողը ընդգրկում է ոչ միայն վնասված մասը, այդ դեպքում մնացած մասը պիտի ազատել դրանից: Եթե մարդ վախենում է, որ այդ անելուց կվնասի իրեն, ապա նրան թույլատրվում է սրբել ձողը իր սկզբնական տեսքով:

ԻՆՉՆ Է ԽԱԽՏՈՒՄ ՎՈՒԴՈՒՆ.

1. Այն, ինչ դուրս է գալիս միզածորանից և հետանցքից, անկախ նրանից, թե դրանք մաքուր արտադրություն են, ինչպիսիք են գազերը, սերմը, թե անմաքուր, ինչպիսիք են մեզը և կղղանքը: 2. Գիտակցության անջատվելը, որոնք են գիտակցության կորուստը կամ քունը, բացի այն դեպքերից, երբ մարդ անջում է կանգնած, կամ նստած, երբ նրա վուդուն չի խախտվում:

3. Մեզի կամ այլնի դուրս գալը, ոչ բնական մասերից:

4. Մարմնից որոշ բաների դուրս գալը, ինչպիսիք են արյունը և այլն, որոնք համարվում են նաջա: 5. Ուղտի մսի օգտագործումը սննդի մեջ:

6. Ձեռքով սեռական օրգաններին ձեռք տալը:

7. Տղամարդու կրքով կնոջը ձեռք տալը 8. Կրոնադրությունը:

ԾԱՆՈՒԹՅՈՒՄ: Նա, ով համոզված է, որ կատարել է լվացում, բայց կասկածում է խախտել է այն թե ոչ, անում այն, ինչին վստահ է:

ԼԻԱԿԱՏԱՐ ԼՎԱՑՈՒՄ (դուսուլ): Պատճառները. այդ կատարելու

1) Սերմնահեղուկի դուրս գալը, որին հաջորդում է բերկրանք, ինչպես նաև նրա արտազատումը քնի ժամանակ, բերկրանքով կամ առանց; 2) Կնոջ և տղամարդու սեռական օրգանների մերձեցումը, նույնիսկ եթե սերմարտադրություն չի լինում: 3) Անհավատի իսլամ ընդունելու ժամանակ, նույնիսկ եթե նա եղել է ուխտադրուժ: 4) Ամսականի ժամանակ եղած արյունը: 5) Հետծննդյան շրջանի արյունահոսությունը: 6) Մուսուլմանի մահը:

ՂՈՒՍՈՒԼԻ ԺԱՄԱՆԱԿ ԿԱՏԱՐՎՈՂ ՊԱՐՏԱԴԻՐ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.

Բավարար է ցողել մարմինը ջրով լիակատար մաքրվելու ցանկությամբ: Միևնույն ժամանակ պետք է ողողել բերանը և քիթը: Որպեսզի դուսուլը լինի կատարյալ անհրաժեշտ է. 1) Մտադրվել; 2) Հիշատակել Ալլահի անունը;

3) Լվալ ձեռքերը մինչ այն տարրայի մեջ մտցնելը; 4) Լվանալ սեռական օրգանները, հեռացնելով բոլոր աղտերը; 5) կատարել վուդու;

6) գլխին լցնել երեք թաս ջուր; 7) ցողել ջրով ամբողջ մարմինը;

8) միևնույն ժամանակ թեթևակի մերսել; 9) Սկսել աջ կողմից:

ՆՐԱՆ, ՈՎ ԳՏՆՎՈՒՄ Է ՓՈՔՐ ԱՆՄԱՔՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ, ԱՐԳԵԼՎՈՒՄ Է.

- 1) ձեռք տալ արաբերեն լեզվով գրված Ղուրանին;
- 2) նամագ անել; 3) շրջել Քաաբայի շուրջ:

Նրան, ով գտնվում է մեծ անմաքրության մեջ, բացի բոլոր հիշատակված գործողություններից, արգելվում է կարդալ Ղուրան և մտնել մզկիթ առանց լվացման: Անցանկալի է համարվում նաև քունը, սեռական գործողությունից հետո, առանց վուդույի: Նաև անցանկալի է ջրի մեծ քանակի օգտագործումը դուսուլի ժամանակ:

ՀՈՂՈՎ ԿԱՄ ԱՎԱԶՈՎ ՄԱՔՐՎԵԼԸ, (ՏԱՅԱՄՈՒՄ):

Նրա պարտադիր պայմաններն են.

- 1) ջրի բացակայությունը; 2) այն պիտի կատարվի մաքուր, թույլատրելի հողի փոշով, որը ունի իր սկզբնական վիճակը:

ՀԻՄՆԱԿԱՆ ԳԱՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (ռուկն);

ամբողջ երեսի մաքրումը, հետո ձեռքերինը մինչև դաստակները, և գործողությունների հերթականությունը և անդադարությունը:

ԻՆՉՆ Է ԴԱՐՁՆՈՒՄ ՏԱՅԱՄՈՒՄԸ ԱՆՎԱՎԱԵՐ.

- 1) այն ամենը, ինչ դարձնում է վուդուն անվավեր;
- 2) ջրի գտնելը, եթե նա տայամում է արել նրա բացակայության պատրվակով;
- 3) պատրվակի հեռացումը, օրինակ եթե նա տայամում է արել հիվանդության պատճառով, հետո այդ անցել է:

ՈՐՆ Է ՀԱՆԴԻՄԱՆՈՒՄ ՍՈՒՆԱ ՏԱՅԱՄՈՒՄԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ.

- 1) **հետևել** կարգին և գործողությունների անդադարությանը մեծ աղտոտության ժամանակ; 2) **նամագի** ժամանակի հետաձգումը;
- 3) **դուայի** ընթերցումը, որը արվում է վուդույից հետո: Անցանկալի է կրկնել երեսը գետնին կայցնելը մի քանի անգամ:

ՏԱՅԱՄՈՒՄԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ.

ընդունել մտադրությունը, հիշատակել Ալլահի անունը, ձեռքերով հարվածել գետնին մեկ կամ երկու անգամ, սրբել ձեռքի ափերով երեսը, մորուքը, որից հետո սրբել ձեռքի դաստակները, սկզբում աջը, հետո ձախը:

ԱՂՏԻ (ՆԱԶԱՍ) ՀԵՌԱՅՈՒՄԸ.

Կենդանի էակները բաժանվում են երկու տեսակի.

- 1. **ԱՆՄԱՔՐՈՒՐ (ՆԱԶԱՍ).** Որոնցից են շները, խոզերը, նրանց ձագերը, ինչպես նաև կենդանիները, որոնց միսը չի օգտագործվում սննդում, (կենդանիներ և թռչուններ, որոնց չափսերը մեծ են կատվի չափսերից): Այս կենդանիների մեզը, կերակրի ավելցուկները, թուքը, սերմը, քրտինքը, կաթը, քթի արտադրությունը անմաքուր (նաջաս) են:

- 2. **ՄԱՔՐՈՒՐ.** Նրանք լինում են երեք տեսակի.

- 1) **Մադդ.** Նրա սերմը, քրտինքը, կաթը, քթի արտադրությունը, կանացի օրգանների խոնավությունը, համարվում են մաքուր: Այդպիսին են համարվում մարմնի բոլոր մասերը և դրանցից դուրս եկող ամեն ինչ, բացի մեզից, կղզանքից, քուկից և արյունից: Այս բոլորը համարվում են անմաքուր (նաջաս):

2) ԿԵՆՂԱՆԻՆԵՐ, որոնց միսը օգտագործվում է սննդի մեջ: Այդ կենդանիների մեզը, սննդի մնացորդները, սերմը, կաթը, քրտինքը, թուփը, քթի արտադրությունը, քսուքը, փսխումը մաքուր են:

3) ԿԵՆՂԱՆԻՆԵՐ, որոնց հավելը կամ կողքին ապրելը անխուսափելի է: Այդպիսիներից են կատուն, ավանակը, մուկը և այլն: Մաքուր են համարվում նրանց միայն քրտինքը և թուփը:

ԳԻՇԱԿԵՐ. Ցանկացած գիշակեր համարվում է անմաքուր (նաջաս), բացի մեռած մարդուց, ինչպես նաև ձկից, մորեխից և արարածներից, որոնք չունեն արյուն: Այդպիսիք են կարիճը, մրջյունը, մոծակը:

ԱՆՕՐԳԱՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ.

Դրանք բոլորը մաքուր են: Այդպիսիք են քարը, հողը և այլն: Բացառություն են կազմում այդ նյութերի պինդ և կարծրացած տեսակները:

ՕԳՏԱԿԱՐ ԾԱՆՈՒՑՈՒՄ. Արյունը, փսխանքը և թարախը նաջաս են: Նամազի ժամանակ և մյուս դեպքերում ներելի են համարվում դրանց քիչ քանակությունը, եթե աղբյուրը մաքուր կենդանիներն են: Երկու տեսակի արյունը համարվում է մաքուր.

1) ձկան արյունը; **2)** արյունը, որը մնացել է մսի և տարրայի մեջ կենդանու մորթից հետո, որի ժամանակ հիշատակվել է Ալլահի անունը:

Ամենը, ինչ առանձնացրած է կենդանի կենդանուց, միսը, որը օգտագործվում է սննդի մեջ, լինի դա արյան լերդացում, կամ մսի կտոր, համարվում է նաջաս:

Աղտի հեռացնելը կարիք չունի մտադրության և, եթե այն հեռացրել է անձրևը, ապա այդ համարվում է մաքրում:

Որևէ աղտի ձեռքով հպումը, կամ վրայով քայլելը, չի խախտում վուդուն, և պետք է ուղակի հեռացնել այն մարմնից կամ հագուստից:

ՆԱԶԱՍԸ ՀԵՌԱՑՎՈՒՄ Է ԸՍՏ ՀԵՏԵՑԱԼ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ.

1) Մաքրումը պիտի կատարվի մաքուր ջրով; **2)** ինչ կարելի է քամել, պիտի անել այդ, հանելով ջրից; **3)** նաջասը պետք է հեռացնել շփումով կամ թափ տալով, եթե լվալը բավարար չէ; **4)** պետք է լվալ յոթ անգամ ջրով և դրանցից մեկ անգամը հողի կամ օճառի առկայությամբ:

ԾԱՆՈՒՑՈՒՄ. Նաջասը, որը գտնվում է հողի երեսին, եթե այն հեղուկ է, ինչպիսին է մեզը, բավական է ջրել, այնպես որ մաքրվի այն, հոտը և գույնը:

★ Եթե այն ավելի առարկայական է, պետք է հեռացնել այն և նրա հետքերը: Եթե հնարավոր չէ հեռացնել նաջասը ոչնչով բացի ջրից, ապա պետք է լվալ այն: ★ Եթե տեղը, որտեղ կար նաջաս դժվար է գտնել, ապա պետք է լվալ կամ մաքրել ամբողջ ենթադրյալ մասը, այնպես, որ համոզված լինել որ այն այլևս չկա: ★ Ով արել է վուդու որպեսզի կատարի ոչ պարտադիր նամազ, ապա նույն վուդույով կարող է կատարել պարտադիր նամազ: ★ Նրան, ով քնել է և արտագատել է աղիքային գազեր, կարիք չկա լվացման, քանի որ այդ գազերը համարվում են մաքուր, բայց նա պետք է անի վուդու:

ԿԱՆՈՆՆԵՐ. ՈՐՈՆՔ ԿԱՊՎԱԾ ԵՆ ԱՄՍԱԿԱՆԻ (ՀԱՅԴԻ) ՀԵՏ և ԴՐԱ ՆՄԱՆ ԱՐՅՈՒՆԱՀՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (ԻՍՏԻՀԱԴԻԱ)

ՀԱՐՑ	ՇԱՐԻԱԹԻ ՈՐՈՇՈՒՄԸ
Կանանց ամսականի առկայության ամենամեծ և ամենափոքր տարիքը	Ամենափոքր տարիքը, որի ժամանակ հնարավոր է ամսականի հայտնվելը, ինը տարեկանն է: Արյունը, որը հայտնվում է այդ տարիքից առաջ, համարվում է իստիհադա: Ամսականի սկսման ամենամեծ տարիք գոյություն չունի:
Ամսականի առկայության ամենակարճ ժամանակահատվածը	Մեկ օր: Եթե արյան արտադրության ժամանակահատվածը կարճ է, ապա այդ իստիհադա է:
Ամենաերկար ժամանակահատվածը	Տասնհինգ օր: Եթե արյան արտադրությունը շարունակվում է հետո էլ, այն արդեն իստիհադա է:
Երկու ամսականների միջև մաքրության ժամանակահատվածը	Տասներեք օր: Եթե արյունը սկսել է հոսել մինչև այդ ժամանակահատվածի ավարտը, ապա այդ իստիհադ է:
Կանացի ամսականի սովորական տևողությունը	Վեց- յոթ օր
Երկու ամսականների միջև եղած սովորական ժամանակահատվածը	Քսաներեք- քսանչորս օր
Հղիության ժամանակ տեղի ունեցող արյունահոսությունը արդյոք համարվում է ամսական:	Արյունը, ինչպես նաև դեղին կամ շագանակագույն արտադրությունը հղիության ընթացքում, համարվում է իստիհադա: ¹
Ինչպե՞ս կ'ինը իմանամ, որ նա մաքրվել է ամսականից	1. Սովորական սպիտակ արտադրությունից ² , եթե դրանք կան կնոջ մոտ, ամսականների միջև ընկած ժամանակահատվածում; 2. Դադարը արյան հոսքի, ինչպես նաև շագանակագույն և դեղին արտադրության դուրս գալը, եթե կնոջ մոտ սովորաբար չի լինում սպիտակ արտադրություն:
Այն, ինչ դուրս է գալիս կնոջ սեռական օրգաններից ամսականների միջև	Եթե արտադրությունը թափանցիկ կամ սպիտակ է, ապա համարվում են մաքուր: Եթե այն արյուն, դեղին կամ շագանակագույն արտադրություն է, ապա այդ համարվում է նաջաս: Ամեն դեպքում դրանք

¹ Ամսականը, բնական արյուն է, որի առկայությունը բնական է կնոջ օրգանիզմում, և որը որը ունի ժամանակին արտահայտումը, անկախ առողջական վիճակից:

Իստիհադան, արյունահոսություն է ոչ ամսական բնույթի, որը կարող է տեղի ունենալ անորոշ ժամանակում, կախված առողջական վիճակից: Հայդի և իստահադայի միջև եղած տարբերությունը.

1. Ամսականի արյունը մուգ կարմիր գույնի է, մոտ սևի, իսկ իստիհադայի ժամանակ արյունը վառ կարմիր է, ինչպես քթի արյունահոսության ժամանակ:
2. Ամսական արյունը թանձր է և կարող է պարունակել թանձրույթներ, իսկ իստիհադայի ժամանակ արյունը հեղուկ է և հոսում է, ինչպես վերքի արյունը;
3. Ամսական արյունը սովորաբար ունի տհաճ հոտ, իսկ իստիհադայի ճամանակ, սովորական արյան հոտ է գալիս: Ամսականաի ժամանակահատվածում արգելվում է սեռական հարաբերություն, ամուսնալաուծություն, աղոթել, պահք պահել, շրջայց կատարել Քաարա, կարդալ Դուրան, վերցնել այն ձեռքը, և գտնվել մզկիթում:

² Նկատի է առնվում սպիտակ հեղուկը, որը սովորաբար արտադրվում են սեռական օրգաններից ամսականների միջև մաքրման ժամանակահատվածում: Այդ արտադրությունը համարվում է մաքուր, բայց այն խախտում է վուդուն:

եղած ժամանակահատվածում	խախտում են վուդուն, իսկ եթե այն շարունակվում է երկար ժամանակ, ապա այդ արդեն իստիհադ է:	
Դեղին և անորոշ արտադրությունը	Եթե դրանք տեղի են ունենում ամսեկանից հետո կամ առաջ, ապա հանդիսանում են ամսականի մաս, մնացած այլ դեպքերում այն իստիհադա է:	
Եթե ամսականը ավարտվել է ավելի շուտ, քան սովորաբար, օրինակ միշտ եղել է վեց օր, իսկ մի անգամ միայն չորս:	Կինը համարվում է մաքրված, եթե դադարել է արյան հոսքը և նա տեսնում է մաքրման նշանները, նույնիսկ եթե այն տևում է սովորականից քիչ:	
Եթե ամսականը սկսվել է սովորականից շուտ կամ ուշ	Այս ամենը համապատասխանում է ամսականի նկարագրությանը, անկախ նրանից թե երբ է եկել, սակայն կարևորը այն է, որ վերջին ամսականից պիտի անցած լինի տասներեք օր: Այլապես այն իստիհադա է:	
Եթե ամսականի շարունակականությունը ավելացել կամ պակասել է համեմատած սովորականի	Այն ամսական է պայմանով, որ այն կշարունակվի ոչ ավելի քան տասնհինգ օր:	
Եթե արյունը շարունակվում է ամբողջ ամիս կամ ավելի	1. Կինը, ով գիտի երբ է նրա մոտ սովորաբար տեղի ունենում ամսականը և քանի օր է տևում, սպասում այն օրերը, որի ժամանակ լինում է ամսեկանը, նա այդ ժամանակ չի աղոթում, և պահք չի պահում: 2. Կինը, ով գիտի ամսեկանի գալու ժամանակը, բայց չգիտի նրա տևողությունը, սպասում է վեց – յոթ օր, այն ժամանակը երբ նրա մոտ սովորաբար լինում են ամսականները: 3. Կինը, ով գիտի քանի օր է սովորաբար տևում նրա ամսեկանը, բայց չգիտի այն գալու ժամանակը, սպասում է համապատասխան քանակի օրեր ամեն լուսնային ամսվա սկզբում:	

ՀԵՏՏՆՆԴՅԱՆ ԱՐՅՈՒՆԱՀՈՍՈՒԹՅՈՒՆ (ՆԻՖԱՍ)

ՀԱՐՑ	ՇԱՐԻԱԹԻ ՈՐՈՇՈՒՄԸ
Եթե կինը ծննդաբերել է, բայց չի տեսել արյուն	Նա չի համարվում նիֆասի վիճակում, նա կարիք չունի անել դուսույ և նրա պահքը չի խախտվում
Եթե կինը տեսնում է սկսվող ծննդաբերության նշանները	Արյան արտադրությունը և ջրերի հեռանալը, որոնք բնորոշ են կնոջը ծննդաբերությունից առաջ և հաջորդում է ցավով, չի համարվում նիֆաս, բայց հանդիսանում է իստիհադա:
Արյունը, որը գալիս է ծննդաբերության ժամանակ	Այդ արյունը նիֆաս է, նույնիսկ եթե երեխան չի հայտնվել, կամ հայտնվել է նրա կեսը: Եվ կինը պարտավորված չէ վերականգնել նամազը, որը նա բաց է թողել այդ ժամանակ
Ո՞ր պահից է սկսվում նիֆասի օրերի հաշվարկը:	Այն բանից հետո, երբ պտուղը ամբողջովին դուրս է գալիս մոր արգանդից:
Ո՞րն է նիֆասի ամենակարճ տևողությունը:	Գոյություն չունի նիֆասի ամենակարճ ժամանակահատված: Եթե կինը ծննդաբերել է, և արյունահոսությունը ավարտվել է ծննդաբերությունից անմիջապես հետո, նա պիտի կատարի դուսույ և աղոթի, չսպասելով քառասուն օրվա ավարտին:

<p>Ո՞րն է նիֆասի ամենաերկար ժամանակահատվածը:</p>	<p>Քառասուն օր, բայց եթե արյունահոսությունը շարունակվում է հետո էլ, ապա դրա վրա այլևս ուշադրություն չեն դարձնում, այսինքն այդ իստիհադ է, և կինը պիտի կատարի դուսուլ և սկսի նամազ անել, եթե միայն այն չի համընկնում ամսականի սովորական ժամանակին, որը եղել էր կնոջ մոտ հղիությունից առաջ: Այս դեպքում արյունահոսությունը համարվում է ամսական:</p>
<p>Եթե կինը ծննդաբերել է երկվորյակ և եռյակ</p>	<p>Նիֆասի սկիզբ է հանդիսանում առաջին երեխայի լույս աշխարհ գալու պահը:</p>
<p>Վիժումից հետո տեղի ունեցող արյունահոսությունը</p>	<p>Եթե պտուղի տարիքը ութանասուն օր կամ պակաս է, ապա դրանից հետո արյունահոսությունը իստիհադ է: Եթե տարիքը ավելի քան իննսուն օր է, ապա այդ նիֆաս է: Իսկ եթե ութանասուն կամ իննսուն օրականի միջև է, ապա ամեն ինչ կախված է պտուղի ձևավորման տեսանկյունից: Եթե վիժված երեխան ունի մարդու տեսք, այսինքն կարելի է հասկանալ, որ այն մարդկային էմբրիոն է, ապա արյունը նրանից հետո նիֆաս է, իսկ եթե ոչ, ապա այդ իստիհադ է:</p>
<p>Եթե արյունահոսությունը ավարտվել է նիֆասի քառասուն օրվա ընթացքում, և կրկին սկսել է մինչ նրա ավարտվելը</p>	<p>Եթե կինը նիֆասի ժամանակահատվածում տեսնում է, որ նա մաքրվել է, ապա նա պիտի դուսուլ անի և կատարի նամազ: Եվ եթե արյունահոսությունը կրկնվել է մինչ այդ քառասուն օրվա ավարտը, ապա կինը համարվում է նիֆասի իրավիճակում, և այդպես մինչև նրա ավարտը:</p>

ԾԱՆՈՒՑՈՒՄ:

★ Կինը, որի մոտ իստիհադ է, պարտավոր է նամազ անել, բայց այդ դեպքում, նա վուդու է անում ամեն նամազից առաջ: ★ Եթե կինը մաքրվել է ամսեկանից մորեք ադոթքից առաջ, նա պիտի կատարի այդ օրվա դուհր և ասր նամազները: Իսկ եթե նա մաքրվել է մինչ առավոտյան նամազը, ապա նա պետք է կատարի մեղրեք և աիշա նամազները: ★ Եթե եկել է ժամը որևէ նամազի, իսկ կնոջ մոտ սկսել է ամսեկանը կամ ետծննդյան արյունահոսությունը մինչ նա կկատարի այդ նամազը, նա պարտավոր չէ վերականգնել այդ: ★ Կինը պարտավոր է բաց արձակել մազերը դուսուլի ժամանակ, որը նա կատարում է ամսեկանից կամ նիֆասից հետո և նա պարտավոր չէ անել այդ դուսուլի ժամանակ, որը նա կատարում է սեռական հարաբերությունից հետո: ★ Համարվում է անցանկալի ժողովվել կնոջ մոտ, որը իստիհադայի մեջ է, սակայն այն թույլատրվում է, եթե նրա ամուսինը կարիք ունի դրա: ★ Ամսեկանի ավարտից հետո, լիակատար լվացումից հետո, կինը, որի արյունահոսությունը ոչ ամսական բնույթ է կրում, պետք է կատարի փոքր լվացում ամեն ադոթքի համար, մինչ արյունահոսության ավարտը: ★ Կնոջը թույլատրվում է ընդունել դեղեր, որոնք ժամանակավոր հետաձգում կամ հեռացնում են ամսականը: Այդ կատարվում է հաջի կամ ումրայի, կամ պահքի ավարտելու համար: Սակայն այն ունի մի պայման, այն չպիտի վնասի առողջությանը:

ԿԻՆԸ ԻՍԼԱՄՈՒՄ

Կնոջ պարզև և արժանապատվությունը Ալլահի դեմ ոչ պակաս է, քան տղամարդունը: Ամեն ինչ կախված է հավատքից և արարքներից: Ալլահի Մարգարեն ^(Մայլապահու ալեհի ուա սայամ) ասաց. **«Ճշմարիտ, կանայք տղամարդկանց զարմիկներն են:»** (Աբու Դաուդ) Կինը իրավունք ունի պահանջել այն, ինչ իրեն է պատկանում օրենքով, կամ հեռացնել իրեն եկող անարդարությունը, որովհետև կրոնի օրենքները տարածվում են ինչպես տղամարդկանց, այնպես էլ կանանց վրա: Բացառություն են կազմում այն բաները, որոնք վերաբերվում են միայն տղամարդկանց: Այդպիսիները շատ քիչ են, իսկ նրանց առկայությունը բացատրում է նրանով, որ Ամենաբարձրյալ Ալլահը հաշվի է առնում կնոջ և տղամարդու կառուցվածքի առանձնահատկությունները: Ամենաբարձրյալ Ալլահը ասաց. **«Միթե չգիտեք, որ Նա, Ով արարել է, և Նա Բարի է, Գիտակ:»** Կանայք ունեն իրենց նախագծածը, իսկ տղամարդիկ իրենցը: Եվ եթե նրանցից յուրաքանչյուրը խառնվի մյուսի պարտավորություններին, ապա այն կարող է աղետաբեր լինել հավասարությանը և հարմոնային, որը դրել է Ամենաբարձրյալ Ալլահը մարդկային կյանքում: Կինը ստանում է նույն պարզև, ինչ որ տղամարդը, մնալով իր տանը: Մեկ անգամ, Ալլահի Մարգարեյի ^(Մայլապահու ալեհի ուա սայամ) մոտ եկավ Ասմե բնթ Յազիդը և ասաց. «Թող հայրս ու մայրս քեզ լինեն փրկագին: Ես կանանց դեսպանն եմ քեզ և արևմուտքի ու արևելքի ցանկացած կինը իմանար որ գալիս եմ քեզ մոտ թե ոչ, ունի նույն կարծիքը ինչ ես: Ճշմարիտ Ալլահը ուղարկել է քեզ ճշմարտությամբ տղամարդկանց ու կանանց, և մենք հավատացել ենք քեզ և Աստծոն, Ով ուղարկել է քեզ: Մենք, կանայք սահմանափակված ենք շարժման մեջ: Մենք նստում ենք տանը բավարարելով ձեր կրքերը, և կրելով ձեր երեխաներին: Իսկ դուք, տղամարդիկ առավելություն ունեցաք մեզանից, որովհետև այցելում եք ուրբաթ օրվա և պարտադիր աղոթքները, այցելում եք հիվանդներին, ուղեկցում եք մահվան թափորը, կատարում եք հաջ, հաջի ետևից: Ավելին, դուք պայքարում եք Ալլահի ճանապարհին: Եվ եթե, ձեզանից մեկը գնում է հաջ կամ ումրա, կամ գնում է հետախուզության, մենք ձեր համար պահպանում ենք ձեր ունեցվածքը, պատրաստում ենք հագուստ, դաստիարակում ենք ձեր երեխաներին: Մի թե մենք չենք կիսում ձեր հետ ձեր պարզև, Օ, Ալլահի Մարգարե:» Ալլահի Մարգարեն ^(Մայլապահու ալեհի ուա սայամ) շրջվեց իր հետևորդների կողմը և ասաց. « Դու երբևէ լսել եք, որ կինը ինչ որ բան հարցնի իր կրոնում ավելի լավ, քան նա:» Նրանք ասացին. « Օ, Ալլահի Մարգարե, մենք չէինք մտածում, որ կինը ի վիճակի է այսպիսի կարծիք ունենալ:» Այդ ժամանակ Ալլահի Մարգարեն ^(Մայլապահու ալեհի ուա սայամ) շրջվեց դեպի կինը և ասաց. «Գնա, Օ. Կին և հաղորդի քեզ ուղարկած կանանց, որ լավ կին լինելը և ամուսնուն գոհացնելը և նրա հետ համաձայնություն փնտրելը հավասար է այս ամենին:» Եվ կինը շրջվեց ու գնաց, մեծարելով Ալլահին և բացականչելով. «Չկա աստված, բացի Ալլահից:» (Ալ-Բայեկի)

Մի անգամ Ալլահի Մարգարեյի ^(Մայլապահու ալեհի ուա սայամ) մոտ եկան կանայք և ասացին.

«Օ, Ալլահի Մարգարե, տղամարդիկ մեզանից առավել են, որովհետև մարտնչում են Ալլահի ճանապարհին: Իսկ կա՞ այնպիսի արարք, որը անելով մենք կարող ենք ստանալ նույն պարգևը, ինչ Ալլահի ճանապարհին մարտնչողը:» Ալլահի Մարգարեն ^(Մալլալահու ալեյհի ուա սալամ) ասաց. «**Կատարելով ձեր տնային պարտականությունները, դուք ստանում եք այնպիսի պարգև, ինչպիսին Ալլահի ճանապարհին մարտնչողը:**» (Ալ- Բայիակի)

Ալլահի Մարգարեն ^(Մալլալահու ալեյհի ուա սալամ) նույնպես ասաց, որ բարեկամին բարի գործ անելը առաքինի է, որի համար մեծ պարգև է ենթադրվում. «Ով ապահովել է երկու դուստր, երկու քույր կամ երկու բարեկամ, հուսալով Ամենաբարձրյալի պարգևին, այնքան ժամանակ, որքան նրանք դրա կարիքը ունեն, նրանք կհանդիսանան նրա համար Կրակից պաշտպան:» (Ահմեդ, Ատ-Տաբարիսի)

ՇԱՐԻԱԹԻ ՈՐՈՇ ԼՈՐՄԵՐ ԿԱՊՎԱԾ ԿԱՆԱՆՑ ՀԵՏ

➤ Կնոջը և տղամարդուն, որոնց միջև չկա մոտ բարեկամական կապ (մահրամ) կամ ամուսնական կապ, արգելվում է մնալ մենակ իրար հետ:¹ Ալլահի Մարգարեն ^(Մալլալահու ալեյհի ուա սալամ) ասաց. «**Տղամարդը չպիտի առանձնանա կնոջ հետ, եթե նա նրան մոտիկ բարեկամ չէ:**» (Ալ- Բուխարի, Մուսլիմ)

➤ Կնոջը թույլատրվում է աղոթել մզկիթում, սակայն այդ անցանկալի է: Եթե կա գայթակղության հավանականություն: Աիշան, թող Ալլահը գոհանա նրանով, ասաց. «**Եթե Ալլահի Մարգարեն ^(Մալլալահու ալեյհի ուա սալամ) տեսներ ինչի են հասել կանայք, ապա նա կարգել էր նրանց դնալ մզկիթ, ինչպես այն արգելված էր բանու Իսրայելի կանանց:**» (Ալ- Բուխարի, Մուսլիմ)

Եթե տղամարդը մզկիթում աղոթքի համար ստանում է ավելի մեծ պարգև քան տանը աղոթելու համար, ապա կնոջ պարագայում այն հակառակն է: Իմամ Ահմեդը հաղորդում է. «Մի կին եկավ Մարգարեյի մոտ ^(Մալլալահու ալեյհի ուա սալամ) և ասաց. «Օ, Ալլահի Մարգարե, ճշմարիտ, ես ցանկանում եմ աղոթել քո մզկիթում քեզ հետ:» Նա ասաց. «Ես գիտեմ, որ դու ցանկանում ես աղոթել ինձ հետ, սակայն քո կողմից կատարված աղոթքը սենյակի մեկուսացված մասում ավելի լավ է քեզ համար, քան քո սենյակում կատարած աղոթքը, իսկ քո սենյակում կատարած աղոթքը ավելի լավ է քեզ համար, քան քո տանը կատարած աղոթքը, իսկ քո տանը կատարած աղոթքը քեզ համար ավելի լավ է, քան աղոթքը կատարած քո ազգի մզկիթում, իսկ աղոթքը քո ազգի մզկիթում (այսինքն քո տանը մոտիկ մզկիթում), ավելի լավ է քեզ համար, քան աղոթքը իմ մզկիթում:» Ալլահի Մարգարեն ^(Մալլալահու ալեյհի ուա սալամ) նույնպես ասաց. «**Կանանց համար լավագույն մզկիթը, նրանց տունն է:** » (Ահմեդ)

➤ Կինը պարտավոր է կատարել հաջ կամ ումրա միայն այն դեպքում, եթե նա ունի մոտիկ բարեկամ (մահրամ), ով կարող է ուղեկցել նրան, որովհետև, կնոջը չի թույլատրվում ճամփորդել, առանց մոտիկ

¹ Մահրամ կնոջ համար այն տղամարդն է, որի հետ նա իրավունք չունի ամուսնանալ մինչ կյանքի վերջ: Նրանք են հայրը, պապը, նախապապը և այլն, որդին, թոռը, ծոռը և այլն, եղբայրը և նրա որդիները, քրոջ որդիները, քեռիները և հորեղբայրները, ամուսնու հայրը, պապը, նախապապը, ամուսնու որդին, թոռը և ծոռը, կաթնահայրը, եղբայրը, որդին, ինչպես նաև դստեր ամուսինը և մոր ամուսինը:

բարեկամի ուղեկցության: Ալլահի Մարգարեն <sup>(Մալլալահու
այեյիհի ուա սալամ)</sup> ասաց. «Կինը չի կարող ճանապարհ գնալ, որը երեք օրից ավել է, առանց մոտիկ բարեկամի ուղեկցության:» (Ալ- Բուխարի, Մուալիմ)

➤ Կնոջը արգելվում է հաճախ այցելել գերեզմաններ և հետևել թաղման թափորին: Ալլահի Մարգարեն <sup>(Մալլալահու
այեյիհի ուա սալամ)</sup> ասաց. «Ալլահը անիծել է կանանց, ովքեր հաճախ այցելում են գերեզմաններ:» Իսկ ՌԻ-մ Ատիյյան (թող Ալլահը գոհանա նրանով) ասաց. «Մեզ արգելվել էր հետևել թաղման թափորին, սակայն ոչ շատ խիստ:»

➤ Կնոջը թույլատրվում է ներկել մազերը ցանկացած գույն, սակայն սևը անցանկալի է: Բայց մի պայմանով այդ կարելի է անել, եթե այդ նպատակ չունի խաբել փեսացուին:

➤ Կինը իրավունք ունի ժառանգության բաժնի, որը որոշված է Շարիաթով, և արգելվում է նրան գրկել նրանից, ինչ հասնում է: Ալլահի Մարգարեն <sup>(Մալլալահու
այեյիհի ուա սալամ)</sup> ասաց. «Ով կզրկի ժառանգորդին նրա օրինական ժառանգությունից, նրան Ամենաբարձրյալ Ալլահը կզրկի դրախտային ժառանգությունից Դատաստանի Օրը:» (Իբն Մաջա)

➤ Ամուսինը պարտավոր է ապահովել կնոջը ամեն անհրաժեշտ բաներով, սննդով, ըմպելիքով, հագուստով և կացարանով ըստ սովորույթի: Ամենաբարձրյալ Ալլահը ասաց. «Թող, ով ունի ունեցվածք, վատնի այն ըստ դրա: Իսկ նա, ով նեղված է նյութականում, թող վատնի նրանից, ինչ տվել է նրան Ալլահը:» Եթե կինը ամուսնացած չէ, ապա նրան պարտավոր են պահել հայրը, եղբայրը կամ որդին: Իսկ եթե նա չունի բարեկամներ, ցանկալի է որ նրան պահեն ուրիշ մարդիկ: Ալլահի Մարգարեն <sup>(Մալլալահու
այեյիհի ուա սալամ)</sup> ասաց. «Այրու կամ աղքատի մասին հոգացողը, նման է Ալլահի ճանապարհում մարտնչողի, կամ գիշեր ու ցերեկ աղոթողի:» (Ալ- Բուխարի, Մուալիմ)

➤ Կինը ունի ավելի շատ իրավունքներ իր փոքրիկ երեխայի դաստիարակության գործում, մինչ չի ամուսնացել կրկին: Իսկ ամուսինը պարտավոր է պահել երեխային, վճարելով կնոջը այդ նպաստը, այնքան ժամանակ, մինչ նա հոգում է երեխայի մասին և նա մոր խնամակալության տակ է:

➤ Անցանկալի է որ կինը, առաջինը ողջունի ինչ որ մեկին, մանավանդ եթե խոսքը գնում է երիտասարդ աղջկա մասին և գոյություն ունի գայթակղության հնարավորություն:

➤ Ցանկալի է, որ կինը սափրի ինտիմ մասերի և թևատակերի մազերը, ինչպես նաև կտրի եղունգները ամեն ուրբաթ: Ցանկալի չէ հետաձգել այդ գործողությունները ավելի քան քառասուն օր:

➤ Արգելվում է հանել երեսի մազերը, նաև հանել հոնքերը: Ալլահի Մարգարեն <sup>(Մալլալահու
այեյիհի ուա սալամ)</sup> ասաց. «Ալլահը անիծել է նրան, ով հանում է մազերը, և նրան, ով խնդրում է հանել դրանք:» (Աբու Դաուդ)

➤ **Սուգ.** Կնոջը արգելված է որևէ մեկի համար երեք օրից ավել սուգ պահել, բացի ամուսնու համար: Ալլահի Մարգարեն <sup>(Մալլալահու
այեյիհի ուա սալամ)</sup> ասաց. «Թույլ մի տվեք կնոջը, ով հավատում է Ալլահին և Վերջին Օրվան, որևէ

մեկի համար սուգ պահել ավելի քան երեք օր, բացառությամբ ամուսնու, սուգը որի համար չորս ամիս և տաս օր է: » Ամուսնու համար սուգը չորս ամիս և տաս օր է: Սուգի ընթացքում նա չպիտի կրի զարդեղեն և օծանելիք, նույնիսկ մատանի, վառ, տոնական հագուստ, զարդարի իրեն հինալով: Նա չպիտի օգտագործի դիմահարդարում, սուրմա կամ բուրավետ յուղեր: Նրան թույլատրելի է կտրել եղունգները հանել մազերը և լվացվել: Նա պարտավորված չէ կրել հագուստ որոշակի գույնի, օրինակ սև: Իր իդրան, նա պարտավոր է անցկացնել տանը, որտեղ նա բնակվել է ամուսնու մահվանից առաջ և նրան արգելվում է մեկնել ուրիշ վայր առանց անհրաժեշտության: Նա պիտի տանից դուրս գա միայն անհրաժեշտության դեպքում և միայն ցերեկը:

➤ Կնոջը արգելվում է սափրել գլուխը առանց կարիքի, սակայն թույլատրվում է կարճացնել մազերը պայմանով, որ նա չի նմանվի տղամարդու: Այլահի Մարգարեն ^(Մայլապահու ալեհի ուա սայամ) անիծեց կանանց, ովքեր նմանվում են տղամարդու, ինչպես հաղորդում է ատ-Տիրմիզին: Մուսուլման կանայք, նույնպես, չպիտի նմանակեն անհավատ կանանց, քանի որ Այլահի Մարգարեն ^(Մայլապահու ալեհի ուա սայամ) ասաց. « **Ով նմանակում է ինչ որ մարդկանց, նա ինքը նրանցից է:**» (Աբու Դաուդ)

Տանից դուրս գալուց, կամ օտար տղամարդկանց ներկայությամբ, կինը պարտավոր է ծածկել մարմինը հագուստով, որը պիտի համապատասխանի հետևյալ պայմաններին. **1)** Այն պիտի ծածկի ամբողջ մարմինը: **2)** Ինքնին հագուստը չպիտի լինի զարդարանք: **3)** Այն պիտի լինի բավական ամուր և չպիտի թափանցի: **4)** Այն պիտի լինի բավական լայն և չպիտի ցուցադրի մամինը: **5)** Հագուստից չպիտի որևէ բուրմունք գա: **6)** Հագուստը չպիտի նմանվի տղամարդու հագուստի: **7)** Հագուստը չպիտի նմանվի անհավատ կնոջ հագուստին: **8)** Հագուստը չպիտի ուշադրություն գրավի: Միննույն ժամանակ արգելվում է կրել հագուստ մարդու կամ կենդանու պատկերով: Այսպիսի հագուստը չի կարելի կախել տեսանելի մասում, ծածկել նրանով պատը և վաճառել:

ԿՆՈՋ ԱՌԻՐԱՆ ՄՅՈՒՄ ՄԱՐԴԿԱՆՑ ՆԿԱՏՄԱՍԲ ԲԱԺԱՆՎՈՒՄ Է ԵՐԵՔ ԴԱՍԱԿԱՐԳԵՐԻ: **1.** Ամուսնու առջև, նրանց միջև չկա աուրա, այսինքն նրանք կարող են տեսնել միմյանց մարմինները ամբողջովին: **2.** Կանայք և մոտիկ բարեկամները, նրանք կարող են տեսնել մարմնի այն մասերը, որոնք սովորաբար երևում են: Դրանք են դեմքը, մազերը, պարանոցը, ձեռքերը, ուսերը, ոտքի կոճերը և այլն: **3.** Մնացած տղամարդկանց առջև, նրանք չպիտի տեսնեն մարմնի որևէ մաս, բացառությամբ անհրաժեշտ դեպքերի: Այդ դեպքերից են նշանադրությունը¹, բուժումը և այլն, որովհետև ամենամեծ զայթակողությունը կնոջ, նրա երեսն է: Ֆաթմա բնթ ալ- Մունզիրը ասաց. «**Մենք ծածկում էինք մեր երեսները տղամարդկանցից**» (Ալ- Հակիմ) Աիշան,

¹ Փեսացուն իրավունք ունի տեսնել հարսնացույի դեմքը և ձեռքերը :

(թող Ալլահը օրհնի նրան), հաղորդում է. « **Երբ մենք գտնվում էինք իհրամի վիճակում Ալլահի Մարգարեյի հետ, մեր կողքով անցնում էին հեծյալներ, և երբ նրանք մոտենում էին մեզ, մենք ծածկում էինք մեր երեսները, իսկ երբ նրանք հեռանում էին, մենք կրկին բացում էինք մեր երեսները:**» (Աբու Դաուդ)

➤ **ԻԴԴԱ**, այսինքն ժամանակահատվածը ամուսնու մահից կամ ամուսնալուծությունից հետո, որի ժամանակ կինը իրավունք չունի կրկին ամուսնանալ, կաձված է կնոջ դիրքից: **1)** Հղի կնոջ, ամուսնալուծվածի, այրու իղղան ավարտվում է, երբ նա ավարտում է բեռը: **2)** Այրու իղղան, կազմում է չորս ամիս և տաս օր: **3)** Ամուսնալուծվածի իղղան, ով ունի ամսական կազմում է երեք ամսական ցիկլ: Այսինքն իղղան ավարտվում է այն ժամանակ, երբ սկսում է մաքրման ժամանակահատվածը երրորդ ամսականից հետո: **4)** Ամուսնալուծվածի իղղան, ով չունի ամսական, կազմում է երեք ամիս: Կինը իղղայի ընթացքում պարտավոր է մնալ ամուսնու հետ մինչ դրա ավարտը, և նա կարող է նայել նրան, այնպես ինչպես անում էր ամուսնալուծությունից առաջ և առանձնանալ նրա հետ: Միգուցե նրանց հարաբերությունները կվերականգնվեն և ամուսնական կյանքը կվերադառնա նորմալ հուն: Այդ ժամանակարնթացքում կնոջը վերադարձնելը չի պահանջում նրա համաձայնությունը: Վերադարձնելու համար բավարար է ասել. «Ես վերադարձրել եմ քեզ» կամ ունենալ սեռական հարաբերություն:

➤ Կինը չի կարող ինքն իրեն ամուսնացնել: Ալլահի Մարգարեն ^(Մալլապահու այեհի ուա սայամ) ասաց. «**Ցանկացած կնոջ ամուսնությունը, ով ամուսնացել է առանց խնամակալի համաձայնության, անվավեր է:**» (Աբու Դաուդ)

➤ Կնոջը արգելվում է սերտաճեցնել մազեր, ամրացնելով ուրիշ մազեր, ինչպես նաև անել դաջվածք մարմնի վրա: Այս արարքները համարվում են ծանր մեղքեր: Ալլահի Մարգարեն ^(Մալլապահու այեհի ուա սայամ) ասաց. «**Ալլահը անիծել է նրան, ով ամրացնում է ուրիշ մազեր և նրան, ով խնդրում է անել այդ, ինչպես նաև նրան, ով անում է դաջվածքներ և նրան, ով խնդրում է անել այդ:**» (Ալ- Բուխարի, Մուսլիմ)

➤ Կնոջը արգելվում է խնդրել ամուսնուց ամուսնալուծություն, առանց հարգալի պատճառի: Ալլահի Մարգարեն ^(Մալլապահու այեհի ուա սայամ) ասաց. «**Ցանկացած կին, ով կխնդրի ամուսնուց ամուսնալուծություն առանց հարգալից պատճառի, չի զգա Դրախտի բույրը:**» (Աբու Դաուդ)

➤ Կինը պարտավոր է ենթարկվել ամուսնուն սովորաբար, մանավանդ եթե նա կանչում է նրան ամուսնական առազաստ: Ալլահի Մարգարեն ^(Մալլապահու այեհի ուա սայամ) ասաց. «**Եթե տղամարդը կանչեց կնոջը անկողին և նա մերժեց գալ և տղամարդը գնաց քնելու բարկացած, ապա հրեշտակները կանիծեն կնոջը մինչ առավոտ:**» (Ալ- Բուխարի, Մուսլիմ)

➤ Կնոջը արգելվում է օձվել օձանելիքով, եթե նա գիտի, որ պիտի անցնի օտար տղամարդկանց մոտով կամ գտնվի նրանց շրջապատում: Ալլահի Մարգարեն ^(Մալլապահու այեհի ուա սայամ) ասաց. «**Եթե կինը օձել է իրեն բույրով, իսկ հետո անցել է ինչ որ մարդկանց մոտով, որպեսզի նրանք զգան նրանից եկող բույրը, ապա նա այսպիսին և այսպիսին է, այսինքն անատակ:**» (Աբու Դաուդ)

ՄԱԼԱՀ (ՆԱՄԱԶ)

Կանչ աղոթքի (ազան)¹ և կանչ աղոթքից անմիջապես առաջ (իկամա)², ֆարդ կիֆայա³ տղամարդկանց համար, եթե միայն նրանք ճանապարհորդներ չեն և սուննա ճանապարհորդի և միայնակ նամազ անողի և անցանկալին (մակրուհ) կնոջ համար: Եվ նրանց արտաբերումը մինչ նամազի սկսելու սկիզբը անվավեր է, բացառությամբ առավոտյան նամազի առաջին ազանի: Այն կարելի է արտաբերել, սկսած գիշերվա երկրորդ կեսից:⁴

ՆԱՄԱԶԻ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

1. Իսլամ, մարդ պիտի լինի մուսուլման; 2. Գիտակցություն, մարդը չպիտի տառապի խելացնորությամբ; 3. Ունակություն տարբերել լավը վատից, թույլատրելին անթույլատրելիից և այլն: Նա պիտի հասնի հասկացության որոշակի աստիճանի: Սովորաբար այդ տեղի է ունենում յոթ տարեկանում; 4. Հնարավորության դեպքում ծիսական մաքրություն; 5. Ժամանակի սկսելը: Կեսօրվա աղոթքի ժամանակը, դըհր, սկսվում է այն ժամանակից, երբ արևը սկսում է թեքվել արևմուտք, այսինքն կանցնի զենիթի կետից և մինչ այն ժամանակ երբ ամեն առարկայի ստվերը չի սկսի հավասարվել այդ առարկային երկարությամբ: Ետկեսօրվա նամազի ժամանակը, ասր, այն է, երբ ավարտվում է կեսօրցա նամազը և մինչ այն պահը, երբ առարկայի ստվերը կդառնա կրկնակի երկար առարկայից, գերադասելի ժամանակ⁵ և մինչ արևի մայր մտնելը: Այնուհետև սկսվում է երեկոյան աղոթքի ժամանակը, մդրեբ: Այն ձգվում է մինչև երեկոյան արևի

¹ Ազանը աղոթքի կոչ է, որը բաղկացած է

1. «Ալլահու Աքբար», Ալլահը Մեծ է, խոսքերի չորս անգամ կրկնությամբ :

2. «Ըշհեդու Լեիլեհ իլ Ալլահ» խոսքերի երկակի կրկնությամբ :

3. Ըշշեդու ընը Մուհամեդուն ռասուլ ուլլահ «խոսքերի երկակի կրկնությամբ »:

4. « Հայա ալ Մայահ» խոսքերի կրկնակի արտաբերմամբ, որը նշանակում է շտապեք աղոթքի:

5. «Հայա ալ ֆելեհ» խոսքերի երկակի արտաբերմամբ, որը նշանակում է, շտապեք փրկության:

6. Իկամելի ժամանակ Ալլահու Աքբար խոսքերի երկակի արտաբերումը մնում է ինչպես կա:

7. «Լե իլեհե իլ Ալլահ» խոսքերի արտաբերումը մեկ անգամ :

8. Բացի դրանից առավոտյան աղոթքից առաջ, «շտապեք փրկության» խոսքերից առաջ արտաբերվում է «Աս սալաթ խեյրուն մին ան նոուն» խոսքերը, որը նշանակում է աղոթքը քնից լավ է :

² Իկաման աղոթքի սկզբի հայտարարումն է: Իկամը կարդացվում է մուազինի կողմից մզկիթում, անմիջապես աղոթքից առաջ, հավաքվածների մեջ: Իկաման ձևով նման է ազանին, եթե հաշվի չառնենք այն, որ այն երկու անգամ կարճ է, քանի որ այն ամենը ինչ ազանի ժամանակ արտաբերվում է չորս անգամ, այստեղ արտաբերվում է երկու անգամ, իսկ ազանի ժամանակ արտաբերվածը կրկնվում է մեկ անգամ: Եվս մեկ տարբերություն կայանում է նրանում, որ «Հայալ ել ֆելեհ» խոսքերից հետո, իկամայի ժամանակ երկակի անգամ կրկնվում է «Կադ կամատի սալեհ», աղոթքը սկսվեց, խոսքերը:

³ Ֆարդ կիֆայա, գործողությունների տեսակ է, որոնք պարտադիր են մուսուլման ումմայի համար, բայց այն պարտադիր չէ ամեն մուսուլմանի համար: Եթե այն կատարում են ումմա ընկալից, ապա այդ հանում է ամբողջ ումմայի մեղքը, իսկ եթե այն ոչ ոք չի կատարում, մեղքը ընկնում է ամբողջ ումմայի վրա:

⁴ Գիշերը համարվում է արևամուտքից մինչ արևածագ ժամանակահատվածը:

⁵ Այն ժամանակ, մարդ կարող է ազատ կատարել նամազ : Իսկ դրանից հետո եկող ժամանակ, որը շարունակվում է մինչ արևի մայր մտնելը, այն ժամանակն է, երբ մարդ կարող է կարդալ տվյալ նամազը, բայց միննույն ժամանակ անցանկալի է, հետաձգել այն մինչ այդ առանց լուրջ պատճառների :

անհայտանալը: Դրան հաջորդում է գիշերվա նամագը, իշա, ցանկալի ժամանակն է մինչ գիշերվա կեսը, իսկ հետո անհրաժեշտության դեպքում մինչ արևածագ: դրանից հետո սկսվում է առավոտյան նամագի, ֆջրի ժամանակը, արևածագից մինչ արևի դուրս գալը:

6. Աուրայի¹ ծածկումը, հնարավորության դեպքում ինչ որ բանով, որի միջով չի երևում մաշկը: Տղամարդու աուրան, ով հասել է հասունացման, պորտի և ծնկների շրջանն է, իսկ ազատ կնոջինը, ով հասել է հասունության, աուրա է ամբողջ մարմինը, բացի երեսից և ձեռքի դաստակներից:

7. Խուսափել որևէ անմաքուր բանից, որը կընկնի մարմնի վրա, հագուստի և վայրի, որտեղ մարդ նամագ է անում:

8. Քիբլայի ուղղության շրջվելը, եթե դա հնարավոր է: **9.** Մտադրություն: **ՆԱՄԱԶԻ ԺԱՄԱՆԱԿ ԿԱՏԱՐՎՈՂ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (ՌՈՒԿՄ)**

1. Կանգնելը, եթե հնարավոր է, պարտադիր նամագի կատարման ժամանակ; **2.** նամագը բացող տակբիրը² (տակբիրատուլ իհրամ); **3.** Մուրա «Ալ-Ֆետիհա»-յի կարդալը; **4.** Գոտկատեղի կքանիստ (ռուկու), նամագի ամեն ռակատում; **5.** Բարձրացումը, դրանից հետո ուղղվելը; **6.** մինչև վերջ ուղղվելը գոտկատեղային կքանիստից և կարճ կանգնելուց հետո; **7.** երկրային կքանիստ, որի հիմք են հանդիսանում մարմնի յոթ մասեր, երեսը, ճակատը և քիթը, ձեռքի ավերը, ծնկները և ոտքի մատերը; **8.** երկու երկրային կքանիստների միջև նստելը; **9.** Վերջին տաշահուղը; **10.** դրա արտաբերման ժամանակ նստելը; **11.** Մարգարեյի (*Մարգարեի այլ կամ*) համար աղոթքը վերջին տաշահուղի ժամանակ; **12.** տալիմ³; **13.** բոլոր գործողությունների կատարման հանգստությունը և հավասարակշռվածությունը; **14.** Կատարվող գործողությունների հերթականության հետևելը:

Նամագը կլինի վավերական, միայն այս բոլոր պայմանները կատարելուց հետո և ռակատը համարվում է անվավեր, եթե մարդ խախտում է դրանցից մեկը անուշադրության պատճառով և ամբողջ աղոթքը դառնում ա անվավեր, եթե մարդ դիտմամբ է խախտել այդ գործողություններից մեկը:

¹ Աուրան մարդու ամոթալի մասերն են և խոցելիները : Տղայի աուրան, ով յոթ տարեկան է, սեռական օրգանները և կոնքերն են, իսկ տաս տարեկանից, պորտից մինչև ծնկները: Ազատ, հասունության հասած կինը, պետք է ծածկի ողջ մարմինը, բացի երեսից: Աղոթքի ժամանակ երեսը ծածկելը անցանկալի է: Եթե նա աղոթել է կամ շրջայց է կատարել Քաաբայի շուրջ և միննույն ժամանակ նրա մարմնի որևէ մաս բաց է եղել, ապա նրա երկրպագումը անվավեր է : Այս հատիքը ապացույց է հանդիսանում նրա, որ աուրան, ամոթալի մասերը, պիտի ծածկվեն ոչ միայն աղոթքի ժամանակ : Առանց անհրաժեշտության դրանք բացելը անցանկալի է, նույնիսկ մթության մեջ և երբ մարդ մենակ է: Մակայն թույլատրվում է բացել աուրան ամուսնու առջև, ինչպես նաև բուժման կ թլպատման ժամանակ:

² Տակբիրը Ալլահու Աքբար խոսքերի արտաբերումն է, որը նշանակում է Ալլահը Մեծ է: Նրա իմաստն է, որ ոչ ոք և ոչինչ չունի ավելի շատ մեծություն, քան Ալլահը :

³ Տալիմը աս-սալամ ավելքում ուս ռահմատուլահ բառերի արտաբերումն է ամեն նամագից հետո :

ՆԱՍԱԶՈՒՄ ՊԱՐՏԱԴԻՐ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (ՌԻԱԶԵԲ)

1. Բոլոր տակբիրները, բացի բացման տակբիրից;
2. «Սամի լեռու լիման համիդահ խոսքերը իմամի և միայնակ նամազ անող մարդու համար, որը նշանակում է, թող Ալլահը լսի նրան, ով Նրան մեծարում է;
3. Գոտկատեղային կքանստումից ուղղվելուց հետո «Ռաբբանա ուա լեկատեղ համդ, բառերը, որը նշանակում է Տեր մեր Քեզ փառք;»
4. Գոտկատեղային կքանստումի ժամանակ կրկնումը մեկ անգամ «Սուբհանա Ռաբբիյա ել Ազիմ», որը նշանակում է Փառահեղ է Տերը իմ և Հզոր;
5. Մեկ անգամ գետնային կքանիստի ժամանակ «Սուբհանա Ռաբբիյա ալԱելե» խոսքերը, որը նշանակում է իմ Տերը Ամենաբարձրյալն է;
6. Երկու երկրային կքանիստների միջև «Ռաբբի դֆիիր լի» խոսքերը, որը նշանակում է իմ Տեր ներիր ինձ;
7. Առաջին տաշահուդը; 8. Տաշահուդի արտաբերման համար նստելը: Եթե մարդ այս գործողություններից մեկը թողել է դիտմամբ, նրա նամազը դառնում է անվավեր, եթե նա այդ անում է անուշադրությունից ելնելով, նա պիտի կատարի էչկու գետնային կքանիստ, սուջուդ u սահֆ:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ԽՈՍՔԵՐ, ՈՐՈՆՔ ՀԱՆԴԻՍԱՆՈՒՄ ԵՆ ՑԱՆԿԱԼԻ ՍՈՒՆՆԱ.

Եթե մարդ թողնում է դրանցից որևէ մեկը, նույնիսկ դիտավորյալ, նրա նամազը չի դառնում անվավեր:

1. ԽՈՍՔԵՐ. Բացող դուա (դուա իստիֆտահ), որոնք են. «Աուդուբիլեհի մինաշ շեյտանիտ ռեջիմ, բիսմիլեհի ռահմեն ռահիմ»¹, ինչպես նաև «Ամեն» բառը և նրա բարձրաձայն արտաբերումը նամազների ժամանակ, որոնցում սուրաները կարդացվում են բարձրաձայն և այն բանի կարդալը, որը մարդու համար դժվար չէ Ղուրանից, «Ալ –Ֆատիհա»-ից հետո: Նաև իմամի կամ միայնակ նամազ անողի համար կարդալ բարձրաձայն «Համդան քաթիրան տայիբան մուբարական ֆիհի միյուս-սամաուստի ոա միյուս ել առդ...»² խոսքերը, «Ռաբբանա ուա լյաքա ել համդ» խոսքերից հետո, որը նշանակում է «Տեր մեր, Քեզ փառք;» Արտաբերվում է նաև Ալլահի փառաբանող խոսքեր գոտկատեղային և երկրային կքանիստի ժամանակ և «Ռեբբին դֆիիր լի» խոսքերը ավելի քան մեկ անգամ: Ինչպես նաև պետք է դուա «Ասսալամ ալեյքում ուա ռահմատուլահ» խոսքերից առաջ:

2. ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ձեռքերի բարձրացնելը բացող տակբիրի ժամանակ, ինչպես նաև գոտկատեղային կքանիստից առաջ, դրա ուղղվելուց հետո և առաջին տաշահուդից ելնելուց հետո: Աջ ձեռքի դնելը ձախին կրծքի տակ, կանգնելու ժամանակ: Հայացքը պիտի լինի գետնային կքանիստի վայրի վրա, և տարածություն ոտքերի միջև: Երկրային

¹ «Փնտրում եմ պաշտպանություն Ալլահից, անիծված Շեյթանից.. Ալլահի անունով Ամենագթասիրտ և Ամենաներող :»

² «Փառք ամենին, բարիքին և պտղաբերին, որը լցնում է երկիրն ու երկինքը ...»

կքանհաստը պիտի լինի հետևյալ ձևով. Սկզբում ծնկները, հետո ձեռքերը հետո ճակատը և քիթը: Պետք է առանձնացնել ուսերը կողքերից, փորը կոնքերից և կոնքերը ոտքի թաթերից: Պիտի թողնել տարածություն ծնկների միջև, և ոտնաթաթերը դնել այնպես, որ նրանք չկանեն և միյնույն ժամանակ ոտքի մատները հենվեն գետնին: Ձեռքերի դաստակները պիտի լինեն ուսերի դիմաց, բաց ավերով և միացած մատներով: Ոտքի կանգնելուց հենքը պիտի լինի ոտնաթաթերի կենտրոնական մասում, և ձեռքերը հենքը ծնկներին: Առաջին տաշահուղի ժամանակ, երկու գետնային կքանհաստների միջև, ոտնաթաթերը պիտի խաչվեն և երկրորդ տաշահուղի ժամանակ, ոտքի կանգնելուց, ձախ ոտնաթաթը և աջը պիտի հենվի ոտքի մատներին: Երկու երկրային կքանհաստի միջև ինչպես նաև տաշահուղի ժամանակ ձեռքերը պիտի լինեն կոնքերի վրա դիմացից, մատները պիտի լինեն միացված, իսկ դաստակները ռուղիդ: Այս դեպքում պիտի մեծ և միջնամատը միացնել օղակի ձևով և ծալել ճկույթը և մատներմատը: Ցուցամատը ուղղել տաշահուղ կարդալու սկզբից մինչև վերջ: Հետո պիտի թեքել գլուխը սկզբում աջ, հետո ձախ ասելով «Ասսալամ ալեյքում ուա ռահմատուլահ» խոսքերը:

ԵՐԿՐԱՅԻՆ ԿՔԱՆԻՍՏԸ, ՈՐԸ ԿԱՏԱՐՎՈՒՄ Է ԱՆՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԵՏՆԱՆՔՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ. Այն հանդիսանում է

ցանկալի, եթե մարդ ասել է պատեհ բառը, ոչ տեղին, այնպես, ինչպես օրինակ սկսել է կարդալ Ղուրան սուջուղի ժամանակ: Այն նաև թույլատրելի է, եթե մարդ թողել է որևէ բան նրանից, որը հանդիսանում է սուննա: Այն համարվում է պարտադիր, եթե աղոթողը կատարել է ավելորդ գոտկատեղային կամ երկրային կքանհաստ, կանգնելը կամ նստելը կամ ասել է. «Ասսալամ ալեյքում, ուառահմատուլահ» մինչ նամազի ավարտը, կամ եթե սխալ բան է կարդացել, որի արդյունքում փոխվել է խոսքի իմաստը, կամ թողել է որևէ բան պարտադիրից, ուաջաբից, կամ նրան թվացել է, որ նա ավելորդություն է թույլ տվել նամազի ժամանակ: Նամազը դառնում է անվավեր, եթե աղոթողը դիտավորյալ թողել է սուջուղ ս սահվր: Այս սուջուղը իրենից ներկայացնում է երկու երկրային կքանհաստ և դրանք կարելի է անել մինչ «Աս սալամ ալեյքում ուա ռահմատուլահ» խոսքերը կամ նրանցից հետո: Եթե մարդը մոռացել է անել այդ և երկար ժամանակ է անցել, կատարման պարտավորվածությունը հանվում է աղոթողից:

ՆԱՄԱԶԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ. Ցանկանալով կատարել նամազ,

մուսուլմանը թեքվում է Քաբբայի ուղղությամբ, արտաբերելով «**Ալլահու Աքբար**» խոսքերը: Իմամը արտաբերում է այս բացող տակբիրը և մնացած տակբիրները բարձրաձայն, որ ետևում գտնվողները լսեն: Միևնույն ժամանակ, նա բարձրացնում է ձեռքերը ուսերին հավասար, որից հետո դնում է աջ դաստակը ձախին, բռնում է դրանք և դնում է կրծքի տակ: Հայացքի պիտի լինի այն վայրին որտեղ նա պիտի կատարի երկրային

կքանիստ: Հետո նա ինքն իրեն կարդում է բացող դուա, դրանցից, որոնք կատարվում են Սուննայի ժամանակ: Օրինակ. «ՍուրհանակաԼյահումա ուա բիհամդիկա ուա տակբարակա ս սմուկա, ուա տաալա ջադուկա ուալաիլահա հայրուկա»¹, ինչպես նաև ասում է. «Աուգուբիլեհի մինաշեյտանոռաջիմ» և «Բիսմիլեհիռահմեն ռահիմ», կրկին իր մեջ: Հետո, նա կարդում է սուրա «Ալ-Ֆետիհա», և մարդը, ով աղոթում է իմամի ետևից, ցանկալի է, կարդալ այդ իմամի լռության ժամանակ և միևնույն ժամանակ, երբ նա ոչինչ բարձրաձայն չի կարդում այդ նամազների ժամանակ, որտեղ սուրաները կարդացվում են բարձրաձայն: Իսկ նամազներում, որտեղ սուրաները կարդացվում են անձայն, նա պարտավոր է կարդալ այդ: Բացի դրանից, նա կարդում է այն, ինչ նրան դժվար չէ Ղուրանից: Առավոտյան նամազի ժամանակ, ցանկալի է կարդալ որևէ բան 50 –ից մինչ 78 սուրաներից որևէ բան, մեղրեք նամազում 93 –ից մինչ 114, իսկ մնացած նամազներում 78- ից մինչև 93: Առավոտյան նամազում իմամը կարդում է բոլոր սուրաները բարձրաձայն, իսկ մեղրեք ու իշա նամազներում միայն առաջին երկու ռակատում: Մնացյալը կարդացվում է անձայն: Դրանից հետո աղոթողը ասում է. «Ալլահու Աքբար», բարձրացնելով ձեռքերը ինչպես բացող տակբիրում և կատարում է գոտկատեղային կքանիստ դնելով ձեռքերը բաց մատներով ծնկներին և ուղղելով մեջքը այնպես, որը գլուխը գտնվի նրա հետ նույն գծի վրա: Հետո նա ասում է. «ՍուրհանաՌաբբիյաալ Ազիմ» երեք անգամ և բարձրացնում է գլուխը «Սամիլահու լիման համիդի» խոսքերով: Այնուհետև բարձրացնում է ձեռքերը ինչպես բացող տակբիրում, ուղղվում է և ասում է. «Ռաբբանա ուա լկալ համդու համդան կաթիրան տայիբուն, մուբարական ֆիհի միյլուսսամաուատ ուա միյլուարդի ուա միյլու մա շիտա մին շեյին բադ:» Որից հետո նա կատարում է երկրային կքանիստ, ասելով «Ալլահու Աքբար» խոսքերը, հեռացնելով ուսերը կոնքերից և փորը նույնպես, այնպես, որ ձեռքի դաստակները լինեն ուսերի դիմաց, իսկ ձեռքի և ոտքի մատները ուղղվեն Քաաբայի ուղղությամբ: Հետո նա ասում է «Սուրհանա Ռաբբիյա Ալա» երեք անգամ, դրանից հետո նա կարող է ավելացնել որևէ դուա, կամ խոսք, որը հիշատակում է Ալլահին: Դրանից հետո նա բարձրացնում է գլուխը «Ալլահու Աքբար» խոսքերով, նստում է ձախ ոտքի փոված թաթին և դնում է աջը այնպես, որ մատները ուղղված լինեն Քաաբայի ուղղությամբ, կամ դնում է այդպես երկու ոտնաթաթերն, նստում է դրանց վրա և ասում է. «Ռաբբի դաֆիր լի» երկու անգամ: Նա կարող է նաև ավելացնել. «...ուատահմենի ուաջբուրնի ուարֆա նի ուատգուկնի ուանսուրնի ուահդինի

¹ «Փառաբանված ես Դու, օ, Ալլահ, և փառք Քեզ, օրհնյալ է Անունը Քո, ամենից մեծ է Քո մեծությունը, և չկա աստված բացի Քեզանից :»

ուա աֆինի ուա ֆու աննի:»¹ Հետո աղոթողը կատարում է երկրորդ երկրային կրանիստը, այնպիսին, ինչպիսին առաջինն է, որից հետո բարձրացնում է գլուխը «**Ալլահու Աքբար**» խոսքերով և վեր է կենում, հենվելով ոտնաթաթերի կենտրոնական մասին և կատարում է երկրորդ նույնանման գործողությունների միություն, ռակաթ: Ավարտելով այն, նա մնում է նստած, կատարելով տաշահուդ, ժամանակ, ձախ ոտնաթաթը փռված է իֆտիրաշ և ձախ ձեռքը նա դնում է ձախ կոնքին, իսկ աջը աջին, սեղմում է ցուցամատը և ճկույթը և միացնում է մեծ մատը մատնեմատի հետ օղակի ձևով, և ցուցամատով ցույց տալով, նա ասում է. «**Ատ-տայյատու լիլեհի ուա սալաուատու, ուա-տայիբատու, աս-սալամ ալեյքում այյուհաննաֆիյհուն, ուա ռահմատուհու, աս սալամ ալեյնա ուա ալաիբադիլեհի սալիհուն:** Աշշահդու ալլա իլեհե իլԱլլահ, ուա աշշհադու ընը Մուհամեդան աբդուհու ուա ռասուլուհու:»² Հետո նա ոտքի է կանգնում, եթե նամազը երեք կամ չորս ռակատ է, նա արտաբերում է «**Ալլահու Աքբար**» և բարձրացնում է այդ ժամանակ ձեռքերը: Նույնպես նա կատարում է մնացած ռակատները, ոչինչ չասելով բարձրաձայն, և կարդում է միայն « Ալ-Ֆատիհա », հետո նստում է վերջին տաշահուդի համար, տարածելով ձախ ոտնաթաթը և դուրս է հանում աջ կոնքի տակից և դնում է աջ ոտնաթաթը հորիզոնական դիրքով, այնպես որ մատները ուղղված լինեն Քիբլայի ուղղությամբ, նստած լինելով գետնին: Այսպիսի դիրք ունի աղոթողը նամազում, որը ունի երկու տաշահուդ: Հետո նա արտաբերում է այն, ինչ կոչվում է առաջին տաշահուդ, որից հետո ասում է «**Ալլահումա սալի ալա Մուհամմադին ուա ալե ալի Մուհամմադին քամա սալլայտա ալե Իբրահիմ ուա ալլա ալի Իբրահիմա իննակա Համիդուն Մաջիդ, Ալլահումա բարեք ալա Մուհամմադին ուա ալե ալի Մուհամմադին կամա բարակտա ալա Իբրահիմա ուա ալա ալի Իբրահիմա, իննակա Համիդուն Մաջիդ:**»³ Մուննա է համարվում նաև « **Ալլահումա իննա աուզու բիկա մին ազաբիլ կաբրի ուա մին ազաբին նառի, ուա մին ֆիտնաթի ել մահյա ուա լա մամատի ուա մին ֆիտնատի ել մասիհիդ դադջալ:**»⁴: Եվ ուրիշներ, որոնք փոխանցված են Մարգարեյից: Որից հետո

¹ «... և ներիր ինձ և գթա ինձ և բարձրացրու ինձ և նվիրիր ինձ ճակատագիր և օգնիր ինձ և տար ինձ ուղիղ ճանապարհով, և նվիրիր ինձ բարեկեցություն և նվիրիր ինձ թողություն:»

² «Ողջուն Ալլահին և աղոթքներ ու լավագույն խոսքերը, խաղաղությունը քեզ, օ, Մարգարե և Ալլահի գուրբը և օրհնությունը, խաղաղություն մեզ Ալլահի ստրուկներին: Վկայում եմ, որ չկա աստված բացի Ալլահից, և վկայում եմ, որ Մուհամեդը Նրա ստրուկն ու առաքյալն է:»

³ «Օ, Ալլահ, օրհնիր Մուհամեդին և նրա ընտանիքը, ինչպես օրհնել ես Դու Իբրահիմին և Իբրահիմի ընտանիքը, ճշմարիտ, Դու Արժանի ես գովասանքի, Փառավոր: Օ, Ալլահ ուղարկիր օրհնություն Մուհամեդին և ընտանիքին Մուհամեդի, ինչպես ուղարկել ես Դու Իբրահիմին և ընտանիքին Իբրահիմի, ճշմարիտ, Դու Արժանի ես գովասանքի, Փառահեղ:»

⁴ «Օ, Ալլահ, ճշմարիտ, ես գալիս եմ Քեզ մոտ Դժոխքի և գերեզմանի տանջանքներից պաշտպանվելու, կյանքի գայթակղություններից և մահից և ադ-Դաջալի չարիքի գայթակղություններից:»

նա արտաբերում է «Աս սալամ ալեյքում ուա ռահմատուլեհ » խոսքերը, և թեքում է գլուխը աջ, հետո անում է նույնը թեքելով գլուխը ձախ: Սուննա է հանդիսանում համապատասխան դուայի արտաբերումը դրանից հետո:¹

ՀԻՎԱՆԴԻ ՆԱՄԱԶ. Եթե կանգնած վիճակում նամազը վատթարացնում է նրա վիճակը, կամ նա ի վիճակի չէ կանգնել, նա աղոթում է նստած: Եթե այդ էլ նրա ուժերից վեր է, նա աղոթում է պատկած կողքի վրա: Եթե այդ դժվար է նրա համար, ապա նա աղոթում է մեջքի վրա պառկած: Եթե նա չի կարող կատարել երկրային և գոտկատեղային կքանստումները, բավարար է գլխով նշան անել կամ փակել կոպերը: Ամեն դեպքում հիվանդը չպիտի բաց թողնի աղոթքը: Եվ նա պիտի լրացնի բոլոր բաց թողած նամազները: Եթե նրան դժվար է կատարել ամեն նամազ ժամանակին, նա կարող է միացնել կեսօրվա նամազը ետկեսօրյա նամազի հետ, կատարելով դրանք միասին: Ինչպես նաև երեկոյան աղոթքը գիշերվա աղոթքի հետ:

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԻ ՆԱՄԱԶ. Եթե նրա անցած տարածությունը ավելի քան 85 կիլոմետր է և այդ ճանապարհորդությունը չունի արգելված նպատակներ, ապա նա կարճեցնում է նամազը չորս ռակյաթից երկուսի: Եթե նա պատրաստվում է կանգ առնել որևէ վայրում ավելի քան չորս օր, ապա այդ

¹ Հենց պիտի ասել «Աստախֆիրուլլահ», որը նշանակում է խնդրում եմ թողություն Ալլահից երեք անգամ, որից հետո ասել . «Ալլահումա, Անտասսալամ ուա մինկա սալամ տաբարակա յազալ ջալալի ուալ իկրամ, լաիլեհե իլլալահու ուահդահու լա շարիկա լեհու, լեհու էլ մուլքու ուա լեհուել համդու ուա հուֆա պա կուալի շեյին կադիր: Լե հաուլա ուա լա քուվատա իլլա բիլեհի, լա իլեհե իլլեհու լա նա բուդու իլլա լահու, լեհուննի մատու ուա լահուֆադու ուա լեհու սասնաու էլիասան: Լե իլեհե իլլահու մուվախսինա լահուդդինա, ուա լաու կարիհալ քեֆիրուն: Ալլահումա լամանի ա լիմա ատայտա ուա լա մուտի լիմա մանատա ուա յանֆաու, գալջադի մինկել ջադորը նշանակում է Օ, Ալլահ, Դու Աշխարհ ես և Քեզանից է աշխարհը, օրհնյալ ես Դու, Օ մեծության և պատվի տիրակալ: Չկա աստված, բացի միայն Ալլահից, Ով չունի գուգրնկեր, Նրան է պատկանում Տիրակալությունը, Նրան փառք և Նա Ամենագորն է: Ոչ ոք չունի ուժ կամ հզորություն, բացի Ալլահից : Չկա աստված, բացի Ալլահից և մենք չենք երկրպագում որևէ մեկին բացի նրանից: Նրան է պատկանում գուրքը և բարիքը և Նրանն է գեղեցիկ մեծարումը: Չկա աստված, բացի Ալլահից, և մենք ուղղում ենք հավատքը միայն Նրան, նույնիսկ եթե այն ատելի է անհավատներին: Օ, Ալլահ, ոչ ոք չի գրկի այն բանից, ինչ դու պարգևել ես, ր ոչ ոք չի պարգևի այն ինչից Դու գրկել ես և Քո առջև կլինի անձգուտ հզորությունը, ով ունի հզորություն:» Իսկ ֆաջր և մադրեբ նամազներից հետո պետք է ասել ավելացնելով վերը նշված խոսքերին. «Լե իլեհե աֆլեհու ուահդու լաշարիկա լեհու, լեհու էլմուլքու, ուա լեհուել համդու յուհի ուա յումիտու ոա հուվա ալե կուալի շեյին կադիր:» որը նշանակում է չկա աստված բացի միայն Ալլահից, Ով չունի գուգրնկեր, Նրան է պատկանում արքայությունը: Նա Կենդանացնում և մեռցնում է, Փառք Նրան և Նա Հզոր է; Այս պիտի ասել տաս անգամ: Պիտի ասել «Սուբհան Ալլահ» երեսուն անգամ, որը նշանակում է Փառաբանված է Ալլահը: Երեսուն երեք անգամ «Ելիամդուլիլեհ» որը նշանակում է Փառք Ալլահին, երեսուն երեք անգամ «Ալլահու աքբար», որը նշանակում է Ալլահը Հզոր է : Այս ամենից հետո պիտի ասել . «Լե իլեհե իլլալեհու ուահդու լե շարիկա լեհու, լեհոր էլ մուլքու ուա լեհու ալիամդու, ուա հուվա ալե կուալի շեյին կադիր», որը նշանակում է չկա աստված բացի միայն Ալլահից, որը չունի գուգրնկեր, Նրան է պատկանում արքայությունը, Փառք Նրան և Նա Ամենահզորն է: Հետո պիտի կարդալ այաթ «ալ Քուռսին» և 112, 113, 114 սուրաները: Ֆաջր և մադրեբ նամազներից հետո, այս սուրաները պետք է կարդալ երեք անգամ:

վայր գալու պահից նա կատարում է նամագ լիարժեք առանց կրճատումների: Եթե ճանապարհորդը նամագ է անում մի մարդու ետևից, ով ճանապարհորդ չէ, կամ նա մոռացել է անել նամագ, գտնվելով իր բնակության վայրում և հիշել է այդ մասին ճամփորդության ժամանակ, ապա երկու դեպքում էլ նա պիտի կատարի նամագ լիարժեք ճանապարհորդին թույատրվում է նամագ կատարել լիարժեք, բայց կրճատելը ավելի լավ է:

ՈՒՐԲԱԹՕՐՅԱ ՆԱՄԱԶ (ԶՈՒՄԱ). Այն կեսօրվա նամագից լավն է և այն հանդիսանում է առանձին նամագ, այլ ոչ թե կեսօրյա նամագի կրճատ ձև: Այդ դեպքում չի կարելի կատարել չորս ռաքյատ և այն անվավեր է, եթե կատարել այդ դուհր նամագի մտադրությամբ: Այն ոչ մի պարագայում չպիտի միացնել ասր նամագին, նույնիսկ եթե առիթ կա:

ՆԱՄԱԶ ՈՒԻԹՐ. Ուիթը հանդիսանում է Սուննա: Այն կարելի է կատարել գիշերվա աղոթքի և առավոտյան աղոթքի միջև: Ամենաքիչ ռաքյատի քանակը մեկն է, իսկ ամենաշատը տասնմեկ: Ավելի լավ է ամեն երկու ռակյաթից հետո արտաբերել տաալիմ: Ամենաքիչ քանակի ռակյաթները վիթրի, որոնք անհրաժեշտ են կատարել, որ այն լինի լիարժեք երեքն են: Սուննա է համարվում «Ամենաբարձրյալը» սուրայի ընթերցումը, վիթրի առաջին ռակյաթի ժամանակ: «Անհավատները» սուրան երկրորդ և «Անկեղծություն» սուրան երրորդ ռակյաթում: Կունուտը ցանկալի է կատարել գոտկատեղային կքանստումից հետո, բարձրացնել ձեռքերը և ասել դուա բարձրաձայն, նույնիսկ եթե մարդ աղոթում է միայնակ:

ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՆԱՄԱԶ. Հանգուցյալի լվացումը, նրան փաթաթելը պատանքի մեջ, նամագ անելը նրա համար, տանելը գերեզմանոց և թաղելը հանդիսանում են միասնական պարտավորություն (ֆարդ կիֆայա): Բացառություն է կազմում մարտում զոհվածը հանուն Ալլահի: Նրա մարմինը չեն լվանում և չեն փաթաթում պատանքի մեջ, բայց հուղարկավորման նամագը թույատրվում է: Նրան թաղում են այնպես, ինչպես զոհվել է: Հանգուցյալ տղամարդուն փաթաթում են երեք կտոր սպիտակ կտորով, իսկ կնոջը հինգ. Բզար,¹ գլխի ծածկոց (խիմար), շապիկի նման և երկու մաս կտոր: Ըստ սուննայի, իմամը կամ մարդը, ով կատարում է այդ նամագը, կանգնում է հանգուցյալ տղամարդու կրծքավանդակի մոտ, և կնոջ մարմնի մոտ և կրկնում է «Ալլահու Աքբար» խոսքերը չորս անգամ, ամեն անգամ բարձրացնելով ձեռքերը: Այս բառերը առաջին անգամ արտաբերելով, նա ասում է. «Աուզուբիլեհի մինեյլեյթանոռ ռաջիմ», հետո «Բիսմիլեհի ռահմեն, ռահիմ» խոսքերը և մտքում կարդում է միայն «Ալ- Ֆատիհա» սուրան: Հետո հետևում է երկրորդ տակբիրը և կոչ օրհնելու Մարգարեյին (*Մալլաախու պեյհի ռա սալամ*), որից հետո գալիս է երրորդ տակբիրը և խնդրանք Ալլահին, հանգուցյալի համար:

¹ Բզար, հագուստ, որը իրենից ներկայացնում է կտորի մաս, որը փաթաթում են մարմնի ներքևի մասում:

Հետո աղոթողը արտաբերում է չորրորդ տակբիրը և կանգնած է մնում որոշ ժամանակ, որից հետո արտաբերում է տասլիմը. «Աս-սալամ ալեյքում ուա ռահմատուլլահ:» Արգելվում է բարձրացնել գերեզմանը ավելի քան ոտքի կոճերն են, ինչպես նաև ծածկել այն գիպտով, համբուրել, ծխել անուշաբույր, անել գրառում, նստել նրա վրա և անցնել նրա տակով: Արգելվում է լուսավորել գերեզմանները, շրջայց կատարել նրա շուրջ, կառուցել մզկիթ նրանց վրա և մզկիթում հուղարկավորել: Նույնպես անհրաժեշտ է հեռացնել բոլոր կառույցները, որոնք կառուցված են գերեզմանի վրա, ինչպիսիք են գմբեթները, դամբարանները և այլն:

Ցավակցելու համար չկա որևէ սահմանափակում: Կարելի է օրինակ ասել. «Ազամալահու աջրակա ուա ահսանա ազաակա ուա դաֆարա լի մայյիտիկա:»¹ Իսկ մուսուլմանին, ում անհավատ բարեկամն է մահացել, կարելի է ասել. «Ազամալահու աջրակա ուա ահսանա ազաակա:» Եթե մուսուլմանը գիտի, որ իր բարեկամները սովորություն ունեն բարձրաձայն ողբալ, ապա նա պետք է արգելի նրանց անել այդ, այլապես նա տանջանքների կենթարկվի նրանց ողբերից:

Աջ-Շաֆիին, (թող Ալլահը օրհնի նրան), ասաց. «Անցանկալի է հանգուցյալի բարեկամներին հավաքվել տանը և նստել այնտեղ, որպեսզի նրանց մոտ զան ցավակցություն հայտնելու: Նրանք պիտի դուրս զան իրենց գործերով: Այս վերաբերվում է և կանանց, և տղամարդկանց:»

Սուննա է հանդիսանում հանգուցյալի բարեկամների համար ուտելիք պատրաստելը և անցանկալի է այդ անել հավաքվածների մոտ: Սուննա է նաև գերեզմանի այցելությունը, եթե այն երկար ճանապարհ չի պահանջում: Թույլատրվում է այցելել անհավատի գերեզման, ինչպես նաև անհավատին մուսուլմանի գերեզման:

★ Սուննա է համարվում, գերեզման մտնելուց արտաբերել հետևյալ խոսքերը: «Ասսալամ ալեյքում, ահլադ դիյարի, մինալ մումինինա: Ուա ինշաալլահու բիկուն լալահիկուն ուա երհամուլեհուլ մուստակդիմինա միննա ուալ մուստախիրինա: Իննա նասալու լենա ուա լյակումու աֆիյատա: Ալլահումա լա տահրիմնա աջրահում, ուալա տաֆտինա բադահում ուադֆիր լանա ուա լյահում:»²

ԵՐԿՈՒ ՏՈՆԵՐԻ ՆԱՄԱԶԸ. Ֆարդ կիֆայա. Ժամանակը, դուռհա նամազի ժամանակն է³, այսինքն, այն բանից հետո, երբ արևը բարձրանում է

¹ «Թող Ալլահը մեծացնի քո պարզը և թող ուղարկի քեզ մխիթարություն և թող ների նրան, ով մահացել է:»

² «Խաղաղություն ձեզ, օ, այստեղ պառկած հավատացյալներ: Ճշմարիտ, եթե Ալլահին պետք լինի, մենք կմիանանք ձեզ, և թող Ալլահը ների մեզանից նրանց, ով գնացել է ավելի շուտ և նրանց, ովքեր մնացել են և ես Ալլահին խնդրում եմ, որ նա ազտի մեզ և ձեզ : Օ, Ալլահ, մի գրկի մեզ նրանց պարզևից, և մի ենթարկիր մեզ փորձության նրանցից հետո, և ներիր և մեզ, և նրանց:»

³ «Ադ-Դուռհա» ժամանակի հատված է, որը սկսվում է երբ արևը բարձրանում է հորիզոն նիզակի երկարությամբ, և շարունակվում է համարյա մինչ կեսօր :

հորիզոն: Եթե հայտնի է դարձել, որ այդ օրը տոն է, միայն այն բանից հետո, երբ արևը մոտենում է մայրամուտ, այդ նամագը կատարվում է հաջորդ օրը որպես փոխհատուցում: Նրա անհրաժեշտ պայմանները նույնն են, ինչ ուրբաթ օրվա նամագը, բացի երկու քարոզչություններից (խուտբա): Անցանկալի է կատարել կամավոր լրացուցիչ նամագներ, դրանից հետո և առաջ, նույն վայրում:

ՆԿԱՐՍԳՐՈՒԹՅՈՒՆ. Երկու ռաքյատ, առաջին ռակյատում, բացող տակբիրից հետո ասվում է ևս վեց տակբիր մինչ «Աուզուբիլեհի մինաշշայտանո ռաջիմ» խոսքերի արտաբերումը: Իսկ երկրորդ ռակյատում, կատարվում է հինգ տակբիր, սուրա կարդալուց առաջ: Հետո ասում է. «Աուզու բիլեհի մինաշշայտանո ռեջիմ », կարդում է սուրա «Ալ-Ֆետիհան» բարձրաձայն, հետո առաջին ռակյատում 87 –րդ սուրան, իսկ երկրորդում 88-րդը: Տաալիմից հետո կարդում են երկու քարոզներ խուտբա, որոնք նման են ուրբաթ օրվա նամագի խուտբայի, բայց սուննա է հանդիսանում դրանց ժամանակ «Ալլահու Աքբար» խոսքերի բազմակի օգտագործումը: Եթե մարդ կատարում է տոնական աղոթքը ինչպես կամովի լրացուցիչ աղոթք, այն վավեր է, քանի որ լրացուցիչ տակբիրները և Ալլահի հիշատակումը դրանց միջև, սուննա է:

ՆԱՄԱԶ, ՈՐԸ ԿԱՏԱՐՎՈՒՄ Է ԼՈՒՄՆԻ ԿԱՍ ԱՐԻԻ ԽԱՎԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ.

Այն հանդիսանում է սուննա: Ժամանակն է լուսնի կամ արևի խավարման սկզբից մինչ ավարտը և այն չի վերականգնվում առիթի անհայտանալուց հետո: Այն իրենից ներկայացնում է երկու ռակյատ: Առաջինում կարդում են բարձրաձայն, սուրա «Ալ- Ֆատիհա»-ն և ուրիշ ցանկացած երկար սուրա, որից հետո կատարվում է երկար գոտկատեղային կքանիստ: Ուղղվելուց հետո աղոթողը չի կատարում երկրային կքանիստ, այլ կարդում է սուրա «Ալ-Ֆատիհա»-ն և երկար սուրա, որից հետո կրկին կատարում է երկար գոտկատեղային կքանիստ, հետո նա ուղղվում է, որից հետո կատարում է երկու, երկար երկրային կքանիստ: Նույն ձևի էլ կատարվում է երկրորդ ռակյատը, որին հետևում է տաշահուղը և տաալիմը: Եթե իմամի ետևից աղոթողը եկել է առաջին գոտկատեղային կքանստումից հետո, ապա համարվում է, որ նա չի հասել այդ ռակյատին:

ՆԱՄԱԶ, ԽՆԴԲԱՆՔ ԱՐՁՐՆԻ. Այս աղոթքի կատարումը համարվում է սուննա, այն դեպքում, եթե հողը դարձել է չոր և անպտուղ, և անձրևներ համարյա չեն գալիս: Դրա ժամանակը, նկարագրությունը և ձևը, նույնն են ինչպես երկու տոների աղոթքը, բայց իմամը կարդում է մեկ խուտբա աղոթքից հետո: Սուննա է հանդիսանում անձրևային թիկնոցի շրջելը, ինչպես հույսի նշան, որ իրավիճակը կփոխվի:

Լրացուցիչ Նամագ (սուննա) Հայտնի է, որ Ալլահի Մարգարեն *(Մալլաթանու ալկեհի ռա սալա)* ամեն օր բացի պարտադիր նամագից, աղոթում էր տասներկու ռակյատ ինչպես սուննա: Երկու ռակյատ մինչ ֆաջր նամագը, չորս գուհր

նամագից առաջ և երկու դրանից հետո, երկու մաղրեք նամագից հետո և երկու աիշա նամագից հետո: Հավաստի տեղեկացվում է, որ նա կատարում էր, ուրիշ լրացուցիչ աղոթքներ ևս:

ԱՐԳԵԼՎՈՒՄ Է ԿՍՏԱՐԵԼ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԿԱՄՈՎԻ ԱՂՈԹՔՆԵՐ ՕՐՎԱ ԱՐԳԵԼՎԱԾ ԺԱՄԵՐԻՆ: Այդ ժամերն են.

1. Արշալույսից մինչ արևածագը և այնքան ժամանակ, մինչ նա չի բարձրանում հորիզոնի վրա նիզակի բարձրությամբ; 2. Կեսօր, մինչ արևը զենիթում է; 3. Ասր աղոթքի սկսելուց հետո, մինչ արևի մայր մտնելը:

Ինչ վերաբերվում է աղոթքներին, որոնք պայմանավորված են որոշակի պատճառներով, ապա դրանք կարելի է կատարել նաև այդ ժամերին: Այդպիսի աղոթքներ են մզկիթի ողջույնը (տահիյաթ ալ մեզջիթ), երկու ռակյաթ (տաուաֆա,) երկու ռակյաթ ֆաջրի նամագը, հուղարկավորության աղոթք (ջանագա), փոքր լվացումից հետո կատարվող երկու ռակյաթ, ինչպես նաև երկրային կքանիստ, որը կատարվում է Ղուրանի որոշ այաթների կարդալուց հետո (սուջուդ ատ-տիյավա) կամ որպես շնորհակալություն երկրային կքանիստ Արարիչին (սուջուդ աշ-շուկր):

ՇԱՐԻԱԹԻ ՆՈՐՄԵՐԸ, ՈՐՈՆՔ ՎԵՐԱԲԵՐՎՈՒՄ ԵՆ ՄԶԿԻԹԻՆ.

Մզկիթների կառուցելը այնպիսի չափսերով, որպեսզի բավարարի գոյություն ունեցող պահանջը: Դրանք հանդիսանում են Ալլահի համար ամենասիրելի վայրերը երկրի վրա:

Այնտեղ արգելվում է երգել, ծափ տալ, նվագել երաժշտական գործիք, կարդալ արգելված բանաստեղծություններ, նստել կանանց ու տղամարդկանց հետ միասին, սեռական կապ ունենալ, առևտուր անել: Եվ սուննա է մզկիթում առևտուր անողին ասել. «Ալլահը չի տա քեզ եկամուտ քո առևտրից:»

Ազելվում է հարց ու փորձ անել կորած անասունի մասին և սուննա է, ասել այդպիսի մարդուն. «Ալլահը չի վերադարձնի այն քեզ:»

Թույլատրվում է երեխաներին սովորեցնել մզկիթներում, եթե նրանցից վնաս չկա, ինչպես նաև կատարել ամուսնություններ, դատել, կարդալ թույլատրելի բանաստեղծություններ, քնել, այն մարդկանց համար, ովքեր կատարում են տիկաֆ, ով առանց հեռանալու մնում է մզկիթում, ինչպես նաև ճանապարհորդներին և հիվանդներին և հանգստանալ կեսօրվա ժամերին:

Սուննա է պահպանել մզկիթները աղմուկից, վեճերից, շատախոսություններից, վատ խոսքերից, բարձր ձայներից և անառիթ ճանապարհ դարձնելուց:

Անցանկալի է մզկիթում աշխարհիկ խոսակցություններ տանել: Մզկիթների գորգերը, լամպերը և էլեկտրականությունը չի կարելի օգտագործել հարսանեկան կամ ցավակցական առիթներով հավաքույտների համար:

ԶԱՔՅԱԹ

ԶԱՔՅԱԹԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ. Զաքյաթը համարվում է պարտադիր չորս տեսակի ունեցվածքից: **1.** Անասուն, որը գտնվում է արոտավայրերում: **2.** Հողից վերցվածը: **3.** Թանկարժեք ապրանքներից: **4.** Ապրանքներից:

ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ, զաքյաթը հանդիսանում է պարտադիր, միայն հետևյալ պայմանների առկայության դեպքում;

1. Մարդը պիտի լինի մուսուլման; **2.** Ազատ, ոչ ստրուկ; **3.** Նա պիտի ունեն հիշատակված բաները այն քանակությամբ, որից վերցնում են զաքյաթ, այդ քանակությունը կոչվում է նիսաբ¹; **4.** Տվյալ ունեցվածքի լիակատար տնօրինելը; **5.** Լիարժեք տարվա լրանալը ըստ լուսնային օրացույցի, որը 354 օր է, բացի բերքահավաքից:

ԶԱՔՅԱԹ ԱՆԱՍՈՒՆԻՑ. Անասունը լինում է երեք տեսակի. ուղտ, կով և ոչխար: Որպեսզի զաքյաթը լինի պարտադիր, պետք է կատարվի հետևյալ պայմանները. **1.** Ամբողջ տարին, կամ դրա մեծ մասը անասունը պիտի լինի արոտավայրում; **2.** այն պիտի լինի կաթի կամ պտղաբերության համար, այլ ոչ թե աշխատանքի: Եթե այն պիտի վաճառքի հանվի, ապա նրանից վերցնում են զաքյաթ, ինչպես ապրանքից:

ԶԱՔՅԱԹ ՈՒՂՏԵՐԻՑ

Քանակ	1-4	5-9	10-14	15-19	20-24	25-35	36-45	46-60	61-75	76-90	91-120
Զաքյաթ	Զաքյաթ չեն վերցվում	1 ուղտ	2 ուղտ	3 ուղտ	4 ուղտ	1 մեկամյա ուղտ	1 երկամյա ուղտ	1 եռամյա ուղտ	1 քառամյա ուղտ	2 երկամյա ուղտ	2 եռամյա ուղտ
Եթե նրանք 120 ից ավելի են, ամեն 50 դիմաց վերցնում են 1 եռամյա ուղտ, իսկ ամեն 40 ից 1 երկամյա:											

ԶԱՔՅԱԹ ԿՈՎԵՐԻՑ

Քանակ	1-29	30-39	40-59
Զաքյաթ	Զաքյաթ չի վերցվում	1 մեկամյա հորթ	1 երկամյա հորթ
Եթե դրանք 60 -ից ավելի են ամեն 30-ի դիմաց վերցվում է 1 մեկամյա հորթ, իսկ ամեն 40-ից երկամյա:			

ԶԱՔՅԱԹ ՈՉՄԱՐՆԵՐԻՑ

ՔԱՆԱԿ	1-39	40-120	121-200	201-399
ԶԱՔՅԱԹ	Զաքյաթ չի վերցվում	1 ոչխար ²	2 ոչխար	3 ոչխար
Եթե դրանք 400-ից ավել են, ամեն հարյուրից վերցվում է մեկ ոչխար, բայց չի վերցվում այծ, ձեր կենդանի, մեկաչքանի, բեղմնավորման համար օգտագործվող, կամ հղի, ինչպես նաև այն, որը ունի հատուկ արժեք:				

ԶԱՔՅԱԹ ԲԵՐՔԻՑ. Զաքյաթը վերցվում է հացահատիկից և պտուղներից, որի ընթացքում հաշվի է առնվում երեք պայման.

¹ Նիսաբը գումարի ամենափոքր քանակությունն է, կամ ծավալը, կշիռը կամ ապրանքների քանակը, որոնցից պետք է վճարել զաքյաթ:

² Այն պիտի լինի այծ մեկ տարեկանից ավել կամ ոչխար 6 կամ ավել ամսական :

1. Բույսը պիտի լինի նրանցից, որոնք չափում և ամբարում են, ինչպիսիք են ցորենը և գարին հացահատիկային կուլտուրաներից, իսկ պտուղներից խաղողը և արմավը:

2. Որոշակի քանակություն, քաշ, 653 կիլոգրամ և ավելի:

3. Բուսականությունը պետք է պատկանի տվյալ մարդուն, այն ժամանակ, երբ նրանից պետք է վերցվի գաքյաթ, այսինքն այն ժամանակ, երբ արդեն երևում է պտուղների հասունությունը, երբ դրանք արդեն դեղնել կամ կարմրել են: Իսկ հացահատիկները, երբ նրանք արդեն չորացել են:

Այն բանից, ինչ աճում է առանց ջանք գործադրելու, այսինքն արձրևի կամ գետի շնորհիվ, վերցվում է տասներորդ մասը (ուշր), իսկ այն բանից, որը պահանջում է ծախս և ջանք, օրինակ ջրհորից ջուր բերել և այլն, այս դեպքում վերցվում է կես ուշր (5%): Ինչ վերաբերվում է երկու ձևերին էլ, ապա այս դեպքում հաշվի է առնվում, որ ձևն է ավելի շատ օգտագործվել, հաշվվում է տարվա օրերի քանակը, որի ընթացքում ցանքը մշակում են այս կամ այն ձևով:

ԱՐԺԵՔԱՎՈՐ ԻՐԵՐԻ ԶԱՔՅԱԹԸ.

Արժեքավոր իրերը բաժանվում են երկու տեսակի.

1. Ոսկի, որից գաքյաթ չեն վերցնում, մինչ նրա 85 գրամ հասնելը:

2. Արծաթ, որից չեն վերցնում գաքյաթ, մինչ նրա 595 գրամ հասնելը:

Մետաղական և թղթե դրամներից գաքյաթ չի վերցվում այնքան ժամանակ, մինչ նրանց ընդհանուր արժեքը վճարելու պահին չի հասնում 85 գրամ ոսկու կամ 595 գրամ արծաթի արժեքին: Զաքյաթի չափը 2,5%-է:

Թույլատրելի թանկարժեք զարդեղենից, որոնք օգտագործվում են, գաքյաթ չի վերցվում: Իսկ նրանցից, որոնք վարձով են տրվում կամ ուղակի պահվում են, գաքյաթ վերցվում է:

Թույլատրելի է կանանց համար սովորութային ոսկե և արծաթե զարդերը: Նույնպես թույլատրվում է ավսենները մի փոքր արծաթով օժել: Տղամարդկանց թույլատրվում է քիչ քանակությամբ արծաթ կրել մատանու, ակնոցի և այլնի տեսքով: Տղամարդուն թույլատրվում է կրել քիչ քանակությամբ ոսկի, եթե այն կապված է որևէ ուրիշ բանի հետ, օրինակ անդրավարտիքի կոճակ, ատամի դրոշմ և այլն, որտեղ նրանք չեն նմանվում կանանց:

Մարդ, ում գումարները անընդհատ ավելանում կամ պակասում են, այնպես որ նա դժվարանում է վճարել գաքյաթ տարվա ամեն գումարի հետ, պիտի ընտրի տարվա որոշակի օր և վճարի գաքյաթ: Այդ օրը նա նայում է, ինչքան է նրա գումարը այդ պահին և վճարում է 2,5%, նույնիսկ եթե այդ գումարի մասը չի մնացել տարվա մեջ: Մարդ, ով ստանում է աշխատավարձ կամ վարձով է տալիս տունը, հողը և միևնույն ժամանակ ետ չի գցում այդ գումարից, չպիտի վճարի գաքյաթ, նույնիսկ եթե գումարը մեծ է: Իսկ եթե, նա ետ է գցում որևէ գումար, ապա նա պիտի վճարի

դրանից զաքյաթ տարվա ընթացքում: Իսկ եթե այդ դժվար է նրա համար, ապա նա պիտի ընտրի մեկ օր և վճարի զաքյաթ, ինչպես արդեն ասվել է:

ԶԱՔՅԱԹ ՊԱՐՏՔԻՑ,

մարդ, ում պարտք է հարուստը կամ որևէ մեկը, ումից առանց խոչընդոտների կարելի է ետ վերցնել պարտքը, պարտավոր է վճարել զաքյաթ, հենց որ ետ ստանա այդ, ամբողջ անցած ընթացքի համար: Եթե այդ պարտքը հնարավոր չէ վերադարձնել, ապա նրանից զաքյաթ չի վերցվում, քանի որ նա հնարավորություն չունի տնօրինել այդ գումարը:

ԶԱՔՅԱԹ ԱՊՐԱՆՔՆԵՐԻՑ,

զաքյաթ դրանցից վերցվում է միայն որոշակի պայմանների պարագայում.

1. Դրանք պիտի գտնվեն տվյալ մարդու տնօրինության տակ;
2. Նա պիտի մտադրված լինի, որ դրանք միայն առևտրի համար են;
3. Դրանց արժեքը պիտի համապատասխանի 85 գրամ ոսկու և 595 գրամ արծաթի արժեքին;
4. Տարվա լրանալը:

Եթե բոլոր պայմանները կատարվում են, ապա այս դեպքում վճարվում է զաքյաթ այդ ապրանքների արժեքին համապատասխան: Եթե մարդ ունի նաև ոսկի, արծաթ ինչպես նաև թղթադրամ և մետաղական փող, դրանք ավելացնում են ապրանքին, որպեսզի նրանց ընդհանուր արժեքը հասնի անհրաժեշտին, նիսաբին: Եթե մարդու մոտ առաջացել է մտադրություն օգտագործել ապրանքները, ինչպիսիք են հագուստը, տունը, մեքենան և այլն, ապա զաքյաթ նրանցից չեն վճարվում: Եթե ավելի ուշ նա որոշի օգտագործել դրանք առևտրի համար, վերականգնվում է տարին, որի ավարտից հետո վճարվում է զաքյաթը:

ԶԱՔՅԱԹ ԵՆ _ՖՏԸ.

Այն պարտավոր է վճարել յուրաքանչյուր մուսուլմանը, ով ունի ունեցվածք, որը ավելին է քան իր ընտանիքին և իր կերակրման մինիմումը: Վճարում է նա այդ Տոնի գիշերը, կամ Տոնին, աղոթքից առաջ: Դրա չափն է այդ երկրին համապատասխան 2.25 կիլոգրամ սնունդ, ամեն մարդուց, լինի դա տղամարդ թե կին: Նա, ում վրա է իր փոխարեն վճարելու պարտավորությունը, պիտի վճարի նաև նրանց համար, ովքեր գտնվում են նրա խնամակալության տակ Տոնի գիշերը, եթե նա ունի այդ հնարավորությունը: Ցանկալի է վճարել այն Տոնի օրը, մինչ տոնական աղոթքը, և չի կարելի հետաձգել այն դրանից հետո: Թույլատրվում է վճարել այն նաև Տոնից մեկ կամ երկու օր առաջ, կարելի է տալ մեկ մարդու զաքյաթ մի քանիսի կողմից և կարելի է մի քանի հոգու, մեկ մարդու կողմից:

ԶԱՔՅԱԹԻ ՎՃԱՐՈՒՄԸ.

Այն վճարվում է անմիջապես տարվա ընթացքում, իսկ անչափահասի և հոգեկան հիվանդի խնամակալը պիտի վճարի այդ նրանց ունեցվածքից: Սուննա է ինքնակամ վճարը և ունեցվածքի տարաբաժանումը զաքյաթի համար: Չափահասի մուկալաֆ և գիտակից մարդու համար, վճարման անհրաժեշտ պայմանն է

մտադրությունը: Եթե մարդ վճարում է այդ բարեգործության նպատակով, ապա զաքյաթը համարվում է անվավեր, նույնիսկ եթե նա գոհաբերել է իր ամբողջ գումարը: Լավ է վճարել զաքյաթ ցանկացած ունեցվածքից աղքատ մարդկանց, ովքեր բնակվում են տվյալ տարածքում: Կարելի է նաև ուղարկել այլ վայրեր, եթե կա անհրաժեշտություն: Եթե մարդ ունի նիսաբ, նա կարող է զաքյաթ վճարել երկու տարվա համար:

ՈՒՄ Է ՎՃԱՐՎՈՒՄ ՉԱՔՅԱԹ. Այն տրվում է ութ տեսակի մարդկանց.

1. Աղքատներ;
2. Չքավորներ;
3. Չաքյաթ հավաքողներ;
4. Նրանց, ում սրտերը պիտի ուղղել առ իսլամ;
5. Ստրուկներ, տալ փրկագին կամ ազատել նրանց;
6. Պարտք ունեցողներ;
7. Ալլահի ճանապարհին ծախսողներ;
8. Ճանապարհորդներ: Բոլոր նշվածներին տրվում է այնքան որքան անհրաժեշտ է, բացի զաքյաթ հավաքողներից: Նրանց տրվում է այնքան, որքան նրանց աշխատանքի գինն է, նույնիսկ եթե նա հարուստ է: Չաքյաթի վճարումը խարիջիտներին և անարդարություն անողներին, այսինքն, բռնապետներին, կեղեքիչներին, եթե տվյալ երկիրը հայտնվել է նրանց իշխանության տակ, վավեր է:

Եթե իշխանավորը կորզում է զաքյաթ մարդկանցից պարտադրաբար, կամ կամովի, նրա վճարումը վավեր է, անկախ նրանից նա արդար է թե ոչ:

Ավավեր է համարվում անհավատին, ստրուկին, հարուստին, ում առանց այդ կարիքի ապահովում են և Մարգարեյի ^{(Մալլադահու} ^{այեհի ուա սալամ)} ցեղին, (հաշիմին) վճարած զաքյաթը: Եվ եթե մարդ վճարել է զաքյաթ նրան, ով չունի դրա իրավունքը, անգիտակցաբար և հետո պարզում է, նրա զաքյաթը չի հաշվվում: Բացառություն է կազմում այն դեպքը, երբ մարդ տալիս է զաքյաթ նրան, ում համարում է աղքատ, իսկ արդյունքում պարզվում է, որ նա հարուստ է:

ԻՆՔՆԱԿԱՍ ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ (ՄԱԴԱԿԱ).

Ալլահի Մարգարեն ^{(Մալլադահու} ^{այեհի ուա սալամ)} ասաց. « **Ճշմարիտ, այն ամենից ինչ հասնում է հավատացյալին իր բարի գործերից, մահից հետո գիտելիքն է, որը նա սովորեցրել և տարածել է, առաքինի զավակը, որը նա թողել է, Ղուրանի մասը, որը նա թողել է ժառանգներին, մզկիթը, որը նա կառուցել է, կամ ճամփորդների համար տունը, որը նա է կառուցել կամ գետը, որը նա է գցել հունը, կամ բարեգործությունը, որը նա բաժանել է իր գումարներից կյանքի ընթացքում, առողջ ժամանակ: Այս ամենի պարզևր հասնում է նրան մահից հետո:» (Իբն Մաջա)**

ԱԼՍԻԱՄ (ՊԱՀՔ)

Պահքը պիտի պահի յուրաքանչյուր մուսուլման, ով գտնվում է գիտակից վիճակում, չափհաս է, և ի վիճակի է տանել այն: Կինը չպիտի գտնվի ետծննդյան արյունահոսության (նիֆասի) կամ ամսականի (հայդի) մեջ: Երեխային պատվիրում են պահք պահել, եթե նա ի վիճակի է դրան, որպեսզի սովորական դառնա այն: Ռամադանի գալը իմանում են հետևյալ նշաններից մեկով:

1. Վստահելի մուսուլմանի վկայությամբ, ով գիտակից և չափահաս է, ով տեսել է ռամադանի չծնված ամիսը: Այն կարող է նաև կին լինել:

2. Շաբեն ամսվա 30- երորդ օրվա ավարտը:

Պահքի պահելը պարտադիր է արևածագից մինչև արևի մայր մտնելը: Պարտադիր պահքի համար մարդը պիտի նպատակ այդ կատարելու, մինչև արևածագ:

ՊԱՀՔԸ ԽԱԽՏՈՒՄ Է.

1. Սեռական հարաբերությունը: Դրա համար պետք է փոխհատուցում և թողություն (կաֆֆարա): Թողություն է հանդիսանում ստրուկի ազատումը, իսկ ով չի կարող, նա պիտի պահք պահի երկու ամիս շարունակ, իսկ ով այդ էլ չի կարող, նա կերակրում է վաթսուն աղքատ, իսկ ով այդ էլ չի կարող, նա ոչինչ չպիտի անի:

2. Սերմնահեղուկի արտազատումը համբույրի, մաստուրբացիայի կամ շոշափման հետևանքով: Իսկ այն մարդու պահքը, ում մոտ տեղի է ունեցել պոլուցիա, չի խախտվում:

3. Մննդի կամ ըմպելիքի ընդունումը մոռացության պատճառով, պահքը չի խախտվում:

4. Արյան դուրս հանելը հիջեմայի կամ դոնորական արյան պատճառով: Իսկ եթե դուրս է գալիս քիչ քանակությամբ արյուն, օրինակ քթից կամ վերքից, կամ արյան քնումից, ապա այս դեպքում այն չի խախտվում:

5. Դիտավորյալ փսխումը:

Եթե պահք պահողի կոկորդ ընկել է փոշի, կամ եթե նա լվացել է քիթը կամ ողողել է բերանը և այնտեղ ջուր է մտել, կամ եթե նրա մոտ մտքերից սերմնաազատում է եղել, կամ պոլուցիա, կամ արյուն կամ փսխում է եղել, նա չի խախտում իր պահքը:

Ով կերել է մտածելով, որ դեռ գիշեր է և պարզվել է, որ ոչ, նա հաջորդ օրը պիտի փոխհատուցի այդ: Իսկ ով կերել է գիշերը կասկած ունենալով, արդյոք արևածագ է թե ոչ, նրա պահքը չի խախտվում: Ով կերել է ցերեկը, կասկածելով, արևը մայր է մտել, ապա նա պիտի փոխհատուցի պահքը ուրիշ օր:

ՆՈՐՄԵՐԸ, ՈՐՈՒՔ ՎԵՐԱԲԵՐՎՈՒՄ ԵՆ ՊԱՀՔԻՑ ԱԶԱՏՎՈՂՆԵՐԻ.

Պահքից խուսափելը ռամադանին, արգելված նրան, ով չունի հարգալից պատճառ: Խուսափումը պարտադիր է կնոջ համար, ով ամսականի, կամ ետծննդյան արյունահոսության մեջ է, ինչպես նաև նրան, ով դրա կարիքը ունի կյանքի պահպանման համար: Խախտումը համարվում է ցանկալի

Ճանապարհորդի համար, ում թույլատրվում է կրճատել նամագները, եթե նրան դժվար է պահք պահել, ինչպես նաև հիվանդի համար, որին այն կարող է վնաս պատճառել: Թույլատրվում է խախտել այն մարդուն, ով ճանապարհ է ընկնում օրվա կեսին: Սակայն նա պարտավոր է փոխհատուցել այդ մեկ ուրիշ օր:

Հղի կնոջը կամ կերակրող մորը նույնպես թույլատրելի է խախտել այն, եթե նրանք վախենում են իրենց կամ երեխայի համար: Նրանք պարտավորված չեն փոխհատուցել այդ, սակայն նրանք պիտի կերակրեն աղքատին ամեն օրվա դիմաց: Նա, ով չի կարող պահք պահել ծերության կամ անբուժելի հիվանդության պատճառով, պետք կերակրի ամեն օրվա դիմաց աղքատի, և պարտավոր չէ փոխհատուցել այդ:

Ով հետաձգել է պահքի փոխհատուցումը մինչ հաջորդ ռամադան հարգալից պատճառով, պարտավոր է միայն փոխհատուցել բաց թողնված օրերը: Իսկ ով այդ արել է առանց պատճառի, պետք է փոխհատուցման հետ միասին կերակրի աղքատի: Եթե մարդ հետաձգել է փոխհատուցումը հարգալից պատճառով և մահացել է չհասցնելով անել այդ, ապա այդտեղ ոչ մի վատ բան չկա: Եթե նա այդ արել է առանց պատճառի, նրա փոխարեն կերակրում են ամեն օր աղքատի: Սուննա է հանդիսանում այդպիսի մարդու բարեկամի համար փոխհատուցել նրա փոխարեն: Ինչպես նաև կարող է կատարել նրանց կողմից արված ուխտը, որը ենթադրում է պահք, ինչպես նաև ցանկացած ուխտ, որը հանդիսանում է Ամենաբարձրյալին հնազանդություն: Եթե մարդ պահք չի պահել հարգալից պատճառով, որից հետո այդ պատճառը անհայտանում է ռամադանի ժամանակ, ինչպես նաև երբ անհավատը ընդունում է իսլամ, կամ եթե կինը մաքրվում է ամսականից, կամ բուժվում է հիվանդը, կամ ճանապարհորդը վերադառնում է տուն, կամ մանուկը դառնում է հասուն, կամ գիտակցության է գալիս մեկ օր հետո խելագարը, և բոլոր վերը նշվածները չեն պահել պահք, նրանք պարտավոր են փոխհատուցել այդ օրը, նույնիսկ եթե կեսը պահք են պահել: Նրանց, ում թույլատրվում է ռամադանի պահքի խախտելը, այլ ուրիշ պահքեր չպիտի պահեն:

ԿԱՄԱՎՈՐ ՊԱՆՔ. Դրա ամենալավ տեսակը մեկ օր հետո պահքն է: Դրան հետևում է երկուշաբթվա և հինգշաբթվա պահքը, հետո ամեն ամիս երեք օրվա պահքը, և ցանկալի է որ դրանք լինեն «սպիտակ օրեր», այսինքն ամեն լուսնային ամսվա 13-րդ, 14-րդ և 15-րդ օրերը: Սուննա է նաև պահք պահել մուհարրամ և շաբեն ամիսների մեծ մասը, «աշուրա» օրը: Ցանկալի է նաև «Արաֆա» օրվա պահքը և վեց օր շավալ ամսին: Անցանկալի է պահքի համար ռաջաբ ամիսը, ինչպես նաև ուրբաթ և շաբաթ օրերը և «կասկածի օրը», այսինքն շաբան ամսվա 30-րդ օրը, պայմանով, որ երկինքը պարզ է:

Արգելվում է պահք պահել տոն օրերին, տաշրիկա օրերին, որոնք են 11-րդ, 12-րդ, 13-րդ օրերը զուլ էլ հիջրա ամսվա: Մակայն բացառություն են այն դեպքերը, երբ մարդ պարտավոր է անել զոհաբերություն հաջի տամատույում և կիրանում:

ԿԱՐԿՈՐ ԾԱՆՈՒՑՈՒՄ:

- Մարդ, ով գտնվում է մեծ աղտի մեջ, այսինքն ունեցել է սեռական հարաբերություն, ինչպես նաև կանայք, ովքեր մաքրվում են հայդից կամ նիֆասից մինչ արևածագը, կարող են հետաձգել դուսուլը և կարող են անել այդ ֆաջր նամազից հետո, ավարտելով առավոտվա սնունդը, սուհուրը, մինչ արևածագը: Այս դեպքում նրանց պահքը կլինի ճիշտ:
- Կնոջը թույլատրվում է ընդունել դեղեր, որոնք հետաձգում են ամսականը ռամադան ամսում, որպեսզի նա կարողանա մասնակցել այն բանին, ինչ կոչվում է բարի գործ և Ալլահին հնազանդություն, մյուս մուսուլմանների հետ: Մակայն այդ կարող է տեղի ունենալ մի պայմանով, որ դեղօրայքը չի վնասում առողջությանը:
- Պահք հետևողին թույլատրելի է կուլ տալ թուրք, ինչպես նաև մարմնում գտնվող հեղուկները:
- Մարգարեն *(Մայլալահու ալեյհի ուա սալամ)* ասաց. «Իմ ումման կլինի բարիքի մեջ այնքան ժամանակ, որքան արագ նա կմիանա իֆտարի ավարտին և կհետաձգի համարյա մինչև արևածագ սուհուրը:» (Ահմեդ) Նա *(Մայլալահու ալեյհի ուա սալամ)* նույնպես ասաց. «Կրոնը չի դադարի լինել հզոր և ծաղկուն այնքան ժամանակ, մինչ մարդիկ կշտապեն ավարտելու պահքը, քանի որ հրեաները և քրիստոնյաները հետաձգում են այն:» (Աբու Դաուդ)
- Ցանկալի է կարդալ դուա պահքի ավարտի ժամանակ: Մարգարեն *(Մայլալահու ալեյհի ուա սալամ)* ասաց. «Ճշմարիտ, պահքի ավարտի ժամանակվա խնդրանքը չի մնա անպատասխան:» (Իբն Մաջա) Այդ դուաներից մեկն է Մարգարեյի *(Մայլալահու ալեյհի ուա սալամ)* խոսքերը. «Չահարագ զամաու ուա բտայլատի էլ ուրուկու ուա սաբատա էլ աջուրու ինշա Ալլահ:»¹ (Աբու Դաուդ)
- Սուննա է պահքը ավարտել թարմ խուրմաներով, իսկ եթե չկա, չորացրած: Եթե դա էլ չկա, ապա պահքը կտրտում են ջրի մի քանի կումով:
- Պահք պահողին պետք է խուսափել սուրմայից, աչքի և քթի կաթիլներից, որպեսզի չլինեն կասկածներից: Քանի որ գիտնականների մեջ կան տարաձայնություններ կապված դրանց հետ: Եթե մարդ իրոք դրանց կարիքը ունի որպես բուժում, ապա օգտագործումը ոչինչ վատ չի նշանակում: Նույնիսկ եթե նա զգա դեղը բերանի խոռոչում, նրա պահքը չի խախտվում:
- Սուննա է նաև սիվակի օգտագործումը պահքի օրվա ցանկացած ժամանակ, առանց որևէ անցանկալի հետևանքների:

¹ «Անցել է ծարավը և լցվել են տարրաները և հաստատվել է պարզևր Ալլահի թույլտվությամբ:»

• Պահք պահողը պիտի թողնի հուլան, բամբասանքը, ստելը և դրա նման բաները, իսկ եթե որևէ մեկը սկսի պախարակել նրան, նա պիտի ասի. «Ճշմարիտ, ես պահք եմ պահում:» Պահպանելով իր լեզուն և մարմնի մյուս մասերը մեղքերից, նա պահպանում է իր պահքը: Մարգարեն ^{(Մայայանու} ^{այեհի ուս սայամ)} ասաց. «Ով չի հրաժարվել վատաբանումից և սուտ վկայությունից և գործում է դրանց համապատասխան, Ալլահը կարիք չունի, որ նա հրաժարվի սննդից և ըմպելիքից:» (Ալ- Բուխարի)

• Մուննա է պահք պահողի խնդրանքը Ալլահին այն մարդու համար, ով հրավիրել է նրան ուտելու, իսկ եթե նա պահք չի պահում, նա պիտի ուտի:

• Կանխագուշակման գիշերը, լեյլատու քաղր, լավագույնն է տարվա մեջ: Այն պիտի սպասել Ռամադանի վերջին տաս օրվա ընթացքում: Ամենահավանական ժամանակը ռամադանի 27- րդ օրն է: Այդ գիշերը կատարած բարիքը, ավելի լավ է բարիքը, որը կատարվում է հազար ամիսների ընթացքում: Դրա նշաններն են, որ արևը արևածագին, առավոտյան սպիտակ է, փոքր փայլերով, իսկ եղանակը օրվա ընթացում հանգիստ և լավն է: Կարող է պատահել, որ այդ օրը անցնի և մուսուլմանը չնկատի, ուստի ռամադանի վերջին տաս օրվա ընթացքում պետք է ավելի ջանասեր լինել երկրպագման մեջ և փորձել բաց չթողնել ոչ մի գիշեր, կատարել կամավոր գիշերային աղոթքներ: Եթե նա մասնակցում է միասնական տարաուիի աղոթքին, նա չպիտի գնա, մինչ իմամը չի վերջացնի աղոթքը ամբողջովին, քանի որ այդ դեպքում, նրան կգրվի կամովի գիշերային աղոթք:

• Ով սկսել է կամավոր պահք օրերից մի օր, ապա սուննա է ավարտել այն, բայց այդ չի հանդիսանում պարտավորվածություն: Իսկ եթե նա ավարտում է իր պահքը դիտավորյալ, չկա վատ բան դրա մեջ, և նա պարտավոր չէ փոխհատուցել այդ:

Իտիկաֆը գիտակից մուսուլմանի մնալն է մզկիթում բարի, աստվածահաճ գործերի համար: Իտիկաֆի պարտադիր պայմաններից է. Մուսուլմանը չգտնվի մեծ աղտի մեջ: Իտիկաֆ անողը չպիտի թողնի մզկիթը առանց անհրաժեշտության: Իտիկաֆը դառնում է անվավեր, եթե մարդը դուրս է եկել մզկիթից առանց կարիքի: Իտիկաֆը սուննա է ցանկացած ժամանակ, սակայն ռամադան ամսվա ընթացքում այն ավելի ցանկալի է, առավելապես վերջին տաս օրերին: Իտիկաֆի նվազագույն ժամանակը մեկ ժամն է, բայց ցանկալի է. որ այն շարունակվի նվազագույնը մեկ օր: Կինը պիտի կատարի իտիկաֆ միայն ամուսնու թույլտվությամբ: Իտիկաֆ կատարողի համար սուննա է հանդիսանում երկրպագությունը և Ալլահին գոհացնող արարքները, ցովության մերժումը և այլն:

ՈՒՒՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆ. ՀԱՁ ԵՎ ՈՒՄՐԱ

Կյանքի ընթացքում մեկ անգամ հաջ կամ ումրա կատարելը մուսուլմանի պարտքն է:

ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ և ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ:

1. Մարդը պիտի մուսուլման լինի;
 2. Նա պիտի գտնվի գիտակից վիճակում;
 3. Պիտի չափահաս լինի; 4. Նա պիտի ազատ լինի;
 5. Պիտի ունենա բավարար միջոցներ ճանապարհի և կենդանու համար:
- ՈՎ հետաձգել է այս երկու ուխտագնացությունները մինչ մահը, նրա գումարից բաժին են հանում հաջի և ումրայի ծախսերը, և կատարում են դրանք նրա անունից: ԱՆհավատի և հոգեկան հիվանդի հաջը համարվում է անվավեր: Անչափահաս երեխայի կամ ստրուկի հաջը վավերական է, սակայն այն չի բացառում հետագա հաջ ևս, այսինքն երբ երեխան դառնում է չափահաս, իսկ ստրուկը ազատություն է ձեռք բերում: Եթե մարդ չի կարող կատարել հաջ աղքատության պատճառով, բայց այնուամենայնիվ կատարել է այդ, ապա այդ հաջը համարվում է վավերական:

ԻՀՐԱՍՄ¹ Յանկացողի համար մտնել իհրամի վիճակ սուննա է հանդիսանում դուսուլը, լիակատար լվացումը, մարմնի ընդհանուր մաքրումը և անուշաբույրերով օծվելը: Նա հանում է կարած հագուստը և հագնում է մաքուր, սպիտակ իզար և նույնանման թիկնոց, որից հետո մտնում է իհրամի վիճակի մեջ ասելով. «Լեբեյկ Ալլահումա ումրատան, կամ հաջատան»², կամ «Լեբեյկա Լահումա հաջան ուա ումրատան»³ Եթե նա վախ ունի որևէ խոչընդոտի, նա պիտի պայման դնի ասելով. «Իսկ եթե իմ առջև ծագի խոչընդոտ, ապա իմ իհրամի դուրս գալու վայրը կլինի այնտեղ, որտեղ Դու ինձ կպահես:»

ՈՒՒՏԱԳՆԱՑՐ ԸՆՏՐՈՒՄ Է ՀԱՁԻ ԵՐԵՔ ՏԵՍԱԿՆԵՐԻՑ ՄԵԿԸ.

տամատու⁴, իֆրադ և կիրան: Լավագույնը հանդիսանում է տամատուն, մուսուլմանը մտնում է իհրամի վիճակ հաջի ամիսներից մեկում, որոնցից են շավալը, զուլ-կիդան և զուլ-հիջան: Կատարում է ումրա, որից հետո դուրս է գալիս իհրամի վիճակից, հետո նորից մտնում է այդ վիճակ, երբ գալիս է հաջի ժամանակը և կատարում է հաջ: Իֆրադը, երբ մուսուլմանը միայն հաջ է կատարում: Կիրանի ժամանակ ուխտագնացը հագնում է

¹ Իհրամ, ուխտագնացի վիճակ է, ով կատարում է հաջ և ումրա, երբ նա պիտի հետևի որոշակի արգելքների, որից ազատված են մյուս մուսուլմանները: Իհրամը նաև որոշակի հագուստն է, որը որոշակի մասերում, միկատ, մերկացնում է մարդուն, ով կատարում է մեծ կամ փոքր ուխտագնացություն: Իհրամը բաղկացած է երկու կտոր մաքուր սպիտակ, չկարված կտորից: Մի մասը, ռիդան, ուխտագնաց տղամարդը զցում է վզին և ձախ ուսին, իսկ մյուսով, իզար ծածկում է գոտկատեղը:

² « Ահա էս քո առջև եմ, օ, Ալլահ, մտադրվել եմ կատարել ումրա կամ հաջ:»

³ « Ահա էս քո առջև եմ, օ, Ալլահ, մտադրված եմ կատարել հաջ և ումրա :»

⁴ Իհրամի առավելագույն տեսակը, երբ ուխտագնացը այդ կատարում է հաջի ամիսներից մեկում :Այդ ամիսներն են շավալը, զուլ-կիդան և զուլ-հիջրան :

իհրամ հաջի և ումրայի համար, կամ հագնում է այն ումրա կատարելու համար, որին հետևում է հաջը: Մա տեղի է ունենում Քաաբայի շուրջ շրջայցից (տաուաֆ)առաջ, ումրայի համար:

Հաջից հետո մարդ նստում է իր տեղաշարժման միջոցը և սկսում է ասել տալիբի խոսքերը: «ԼբեյկաԼահումա լբեյկ, լբեյկալաշարիկալեքե լբեյկ, իննալ համդա ուանի մատա լեքա ուալ մուլք լե շարիկալեքե:»¹ Ցանկալի է արտաբերել այդ որքան հնարավոր է շատ և այդ ժամանակ բարձրացնել ձայնը: Սակայն այդ չի վերաբերվում կանանց:

ԻՆՉ Է ԱՐԳԵԼՎԱԾ ԱՆԵԼ ԻՇՐԱՄԻ ՎԻՃԱԿՈՒՄ ԳՏԵՎԵԼՈՒՑ:

1. Սափրել մազերը; 2. Կտրել եղունգները;
3. Տղամարդկանց համար հագնել կարած հագուստ: Իսկ նա, ով չի գտել իզար, նա կարող է հագնել շալվար, իսկ ով չի գտել սանդալներ, կարող է հագնել խուֆեր, նախօրոք կարճացնելով այն, այնպես որ լինի կոճերից ցածր: Այդ դեպքում նա պարտավոր չէ հատուցել դրա համար:
4. Տղամարդկանց համար կարևոր է նաև ծածկել գլուխը;
5. Մարմինը և հագուստը օձել անուշայուղերով:
6. Որս անել, որը թույլատրվում է վայրի կենդանու սննդի համար:
7. Ամուսնություն կնքել: Այդ հարամ է, արգելված, բայց դրա համար նա չի հատուցում:
8. Մոտենալ կնոջը կրքով: Այս դուպքում հատուցումն է ոչխարի զոհաբերությունը, կամ երեք օրվա պահք կամ կերակրել վեց աղքատ:
9. Սեռական հարաբերություն: Եթե այդ կատարվի մինչ իհրամի առաջին դուրս գալը, ապա այս դեպքում հաջը դառնում է անվավեր: Ուխտագնացը պիտի ավարտի այդ և հաջորդ տարի կրկնի, զոհաբերելով ուղտ, որի միսը պետք է բաժանի Մեքքայի աղքատներին: Իսկ եթե այդ տեղի է ունեցել իհրամից առաջին դուրս գալուց, որը լիարժեք չէ, այս դեպքում հաջը համարվում է վավեր, բայց նա պիտի զոհաբերի ուղտ կամ կով: Եթե սեռական հարաբերությունը եղել է ումրայի ժամանակ, այն դառնում է անվավեր և ուխտագնացը պետք է զոհաբերի ոչխար և նորից կատարի ումրա: Միայն սեռական հարաբերությունն է դարձնում հաջը, և ումրան անվավեր: Կհնը նման է տղամարդուն ամեն ինչում, միայն նրան թույլատրվում է կրել կարած հագուստ և նա չպիտի հագնի փարաջա, նիկաբ և ձեռնոցներ:

ՔԱՎՈՒԹՅՈՒՆ (ՃԻՂՑԱ). Այն լինում է երկու տեսակ;

1. Ըստ ընտրության, որը ներկայացնում է քավություն մազերի կտրելու համար, անուշաբույրերի օգտագործման, եղունգների կտրման համար: Իսկ տղամարդկանց դեպքում նաև կարած հագուստ հագնելու և գլուխը ծածկելու համար: Այս դեպքերում, ուխտագնացը ընտրում է երեք օրյա պահքի, վեց աղքատ կերակրելու և ոչխար զոհաբերելու միջև: Իսկ որսի

¹ «Ահա ես Քո առջև եմ, Օ, Ալլահ, ահա ես Քո առջև եմ, չկա Քեզ զուգրնկեր, ահա ես Քո առջև եմ: Ճշմարիտ փառք Քեզ և գութը պատկանում է Քեզ և արքայությունը, չկա Քեզ զուգրնկեր:»

Ժամանակ սպանված կենդանու համար պատիժն է նմանատիպ կենդանու վերադարձնելը, իսկ եթե այդպիսին չկա ապա, նա պիտի վճարի դրա արժեքը աղքատներին և այլն:

2. Հերթականությամբ: Կիրան և տամատու կատարողի քավությունն է, ոչխար: Մեռական հարաբերության քավությունն է, կովը կամ ուղտը: Եթե նա չի կարող, ապա նա պիտի պահք պահի երեք օր հաջի ժամանակ և յոթ օր վերադառնալուց հետո: Զոհաբերված միսը տրվում է միայն Մեքքայի աղքատներին:

ՄՈՒՏՔԸ ՄԵՔՔԱ. Մտնելով Արգելված մզկիթ (ալ մասջիդ ալ-հարամ), ուխտագնացը Ալլահին հիշատակելու խոսքեր է արտաբերում, որը ասվում է ներս մտնելուց: Հետո նա կատարում է տավաֆ ումրայի համար, իսկ եթե հաջ է, ապա տամատու: Կամ Ժամանման տավաֆ, (տավաֆ –ալ-կուդում, եթե նրա հաջը կիրան կամ իֆրադ է): Այդ ժամանակ, նա փաթաթվում է թիկնոցով, (ռիդա), բռնելով մի ծայրը աջ ձեռքով, իսկ մյուսը դնելով ձախ ուսին: Նա սկսում է տավաֆ Սև քարից, շոշափելով և համբուրելով, կամ մատնացույց է անում ասելով. «Բիսմիլեհի, ուա լեհու Աքքար:»¹ Այսպես նա անում է ամեն շրջանի ժամանակ: Նույն ժամանակ նա կանգնում է այնպես, որ Քաբբան լինի իր ձախ կողմում և պտտվի նրա շուրջ յոթ անգամ, ըստ ժամացույցի սլաքի և ըստ հնարավորության արագացնի և մոտեցնի քայլերը երեք շրջան, իսկ մանացածը քայլի սովորական քայլերով: Ամեն անգամ հայտնվելով Քաբբայի անկյան դիմաց, որը ուղղված է Յեմենի ուղղությամբ, նա պիտի հնարավորին չափ մոտենա նրան, իսկ գտնվելով երկու անկյունների միջև, պիտի ասի. «Ռաբբանա ատինա ֆիդ դունյա հասանեթան ուա ֆիլախիրաթի հասանեթան ուա կինա ազաբաննա:»² Մնացած շրջանների ժամանակ, ուխտավորը կարող է կոչել Ալլահին ցանկացած խնդրանքներով: Հետո նա աղոթում է երկու ռակյաթ Իբրահիմի կանգնած վայրի ետնամասում, եթե դա հնարավոր է: Այդ երկու ռակյաթի ժամանակ, նա կարդում է «Քաֆիրուն», («Անհավատներ») սուրան և «Իխլաս» («Մաքրում») սուրան: Դրանից հետո, նա ըմպում է Զամզամ ջուրը, որքան շատ, այնքան լավ: Որից հետո, վերադառնում է Սև քարի մոտ և շոշափում է այն, եթե հնարավոր է: Գտնվելով Քարի և Քաբբայի դռների միջև, նա կարդում է դուա: Այս ամենից հետո, ուխտագնացը ուղղվում է աս-Մաֆա բլրի ուղղությամբ, մազլցում է այն և ասում է. «Աբդաու բիմա բադաալեհու բիհի,»³ և կարդում է Ամենաբարձրյալի Խոսքերը. « Ճշմարիտ աս- Մաֆա և ալ-Մարվա բլուրների միջև վազքը, ծեսերից մեկն է, որը օրինականացրել

¹ «Հանուն Ալլահի և Ալլահը Մեծ է»

² «Տեր մեր, պարզևիր մեզ բարիք այս աշխարհում և Վերջին Կյանքում և պահպանիր մեզ Կրակի տանջանքներից:»

³ «Ես սկսում եմ նրանից, ինչից սկսել է Ալլահը :»

է Ալլահը: Ով կատարում է հաջ կամ փոքր ուխտագնացություն Քաբբա, նա չի մեղանչի, եթե անցնի նրանց միջով: Իսկ եթե մեկը կամովի բարիք է անում, ապա Ալլահը Գոհունակ և Իմացյալ է:» (Մուրա 2 «Կով», այաթ 158:) Այս ամենից հետո, նա կրկնում է « Ալլահու Աքբար » և «Լե իլեհե իլա Ալլահ» խոսքերը, շրջվում է Քաբբայի ուղղությամբ, բարձրացնում է ձեռքերը և դուա է կարդում: Այնուհետև նա իջնում է, հասնում է մինչև կանաչ նշանը և վազում է, կամ արագ քայլում է, մինչ հաջորդ նշանը, հետո սովորական քայլերով հասնում է ալ-Մարվա բլուրը և անում է այն, ինչ արել է աս Մաֆա բլուրում, բացի վերոհիշյալ դուաների կարդալուց: Որից հետո, նա իջնում է և անում է նույնը յոթ անգամ: աս- Մաֆայից մինչ ալ- Մավրա կատարած վազքը համարվում է մեկ հատ: Այնուհետև նա կտրում է մազերը կամ սափրում: Բացառություն է կազմում այն ուխտավորը, ով կատարում է ումրա հաջում տամատու, քանի որ նա հաջ է անում դրանից հետո: Ինչ վերաբերվում է կիրան կամ իֆրադ կատարողներին, ապա նրանք դուրս չեն գալիս իհրամի վիճակից տավաֆայից հետո, մինչ Տոնին (ջամրաթու ալ ակաբա) չքարկոծեն: Կինը անում է նույնը, ինչ տղամարդը, բայց նա չի արագացնում քայլերը տավաֆայի և աս-Մաֆա և ալ-Մարվա բլուրների միջև վազքի ժամանակ:

ՀԱՋԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ. Զուլ էլ- հիջր ամսվա 8-րդ օրը, ուխտագնացը հագնում է իհրամ, եթե նա այդ չի կրում, և ուղղվում է Մինայի հարթավայր, որպեսզի այնտեղ անց կացնի 9-րդ գիշերը: 9-րդ օրվա արևածագից հետո, նա ուղղվում է Առաֆա և երբ արևը զենիթի դիրքից անցնում է, նա կատարում է գուհր և ասր նամագները, դրանք միացնելով և կրճատելով: Ամբողջ Արաֆան կանգնելու վայր է, բացի Ուրանա հարթավայրից: Այնտեղ գտնվելու ժամանակ ուխտագնացը պիտի շատ կրկնի. « Լե իլեհե իլա Ալլահու ուահդահու լե շերիկա լեհու, լեհու էլ մուլկու ուա լեհու էլ համդու, ուա հուվա կուլի շեյին կադիր » և շատ դուաներ է ասում: Նա նաև թողություն է խնդրում և ձգտում է մոտենալ Ալլահին: Արևի մայր մտնելուց հետո, նա հանգիստ և անշտապ ուղղվում է Մուզդալիֆա, արտաբերելով տալբիի խոսքերը և հիշատակելով Ալլահին: Հասնելով Մուզդալիֆա ուխտագնացը կատարում է մաղրեբ և իշա նամագները, կրճատելով և միացնելով դրանք: Այնուհետև գիշերում է այնտեղ: Հետո նա կատարում է ֆաջր նամզարը հենց սկզբից և մնում է այնտեղ դուա կարդալով, մինչ լիարժեք լուսացումը: Մինչ արևածագը նա հեռանում է և հասնում է Մուխասիբ հարթավայրը, որպեսզի հաղթահարի այդ վայրը որքան հնարավոր է շուտ: Դրանից հետո նա ժամանում է Մինա հարթավայր և սկսում է զցել յոթ քար «ջամրատու ալ ակաբ»-ից: Քարերը պիտի լինեն սիսեռի կամ ընկույզի չափսի: Ամեն անգամ ուխտագնացը բարձրացնում է ձեռքը, շպրտում է քարը և արտաբերում է «Ալլահու Աքբար» խոսքերը: Անհրաժեշտ պայման է, որ քարերը ընկնեն խորության մեջ, նույնիսկ եթե

նրանք չկաշեն սյանը: Քարերի նետման սկզբով, ուխտագնացը ավարտում է տալիբյան: Հետո նա դնում է զոհաբերվող կենդանին, որից հետո կարճեցնում է մազերը կամ սափրում է գլուխը: Այդ ամենի ավարտից հետո ուխտավորին թույլատրվում է ամեն ինչ, ինչ արգելված էր իհրամի ընթացքում, բացի սեռական հարաբերությունից: Այս առաջին, մասնակի դուրս գալն է իհրամից: Այնուհետ նա վերադառնում է Մեքքա և կատարում է նոր տավաֆ (տավաֆ ալ իֆադա), որը պարտադիր է և որով ավարտվում է հաջր: Եթե նրա հաջր տամատու է, կամ եթե նա չի վազել տավաֆ ժամանման, ապա այս ամենից հետո նա յոթ անգամ վազում է աւ- Մաֆա և ալ-Մարվա բլուրների միջև: Այդ ամենի ավարտից հետո, նրա համար ավարտվում են իհրամի բոլոր արգելքները, նրան թույլատրելի է դառնում ամեն ինչ, նույնիսկ սեռական հարաբերությունը: Սա իհրամի վիճակի երկրորդ և վերջնական դուրս գալն է:

Դրանից հետո նա վերադառնում է Մինա հարթավայր և պարտադիր կարգով այնտեղ անց է կացնում տաշրիկի 11-րդ, 12-րդ և 13-րդ օրերը: Այնտեղ ամեն օրվա կեսօրից հետո, նա քարեր է նետում: Սկզբում նա նետում է յոթ քար առաջին սյան վրա, հետո առաջ է շարժվում և կանգ է առնում, կարդում է դուա և նետում է յոթ քար միջին սյան վրա և նորից կարդում է դուա, հետո յոթ քար վերջին սյան (ջամրատ ալ- ալաբա) վրա կանգ չառնելով դրանից հետո: Նույնը նա անում է երկրորդ օրը: Եթե ուխտագնացը շտապում է, նա պիտի լքի Մինա հարթավայրը մինչ 12-րդ օրվա արևի մայր մտնելը: Եթե այդ օրվա արևը մայր է մտել և նա դեռ գտնվում է Մինա հարթավայրում, ապա նա պարտավոր է գիշերել այնտեղ և քարեր նետել հաջորդ օրը: Բացառություն են կազմում այն դեպքերը, երբ նրան խոչընդոտել են մարդկանց բազմությունը, բայց նա հստակ մտադրվել է դուրս գալ: Այս դեպքում նա կարող է դուրս գալ արևի մայր մտնելուց հետո: Հաջ կիրան կատարողը նման է հաջ իֆրադ կատարողի, միայն նա պարտավոր է զոհաբերություն անել, ինչպես հաջ տամատու կատարողը: Տուն վերադարձող ուխտագնացը պետք է հրաժեշտ տա Տանը (Քաբբային), կատարելով տավաֆ: Կինը, ով ետձննդյան արյունահոսության կամ ամսեկանի մեջ է, պարտավոր չէ կատարել հրաժեշտի տավաֆը: Եթե ուխտագնացը դրանից հետո զբաղվել է առք և վաճառքով, նա պիտի կրկնի այդ կրկին: Ով դուրս է եկել չկատարելով հրաժեշտի տավաֆ, պետք է վերադառնա, եթե գտնվում է մոտիկ: Եթե նա արդեն մեկնել է հեռու, ապա նա պետք է զոհաբերություն տա, որպես թողություն:

ՀԱԶԻ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (ՌՈՒԿՆ)

1. Հաջի ծեսերի կատարման մտադրությունը նշանակված վայրից (միկատ);
2. Արաֆայում կանգնելը մինչ արևի մայր մտնելը;
3. Մուզդալիֆում գտնվելը մինչ կեսգիշեր;
4. Տաշրիկ օրերին Մինայում մնալը;

5. Քարերի նետումը;
6. Մազերի կարճացնելը կամ սափրելը;
7. Հրաժեշտի տավաֆ (տավաֆ ալ- վադա);
8. Մուտամատիի և կարինի պարտադիր գոհաբերությունը:

ՈՒՄՐԱՅԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (ՌՈՒԿՆ).

1. Ումրայի ծեսերի կատարման մտադրությունը:
2. Տավաֆ, որը վերաբերվում է ումրային:
3. Ումրային վերաբերվող վազքը:

ՈՒՄՐԱՅԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (ՌՒԱԶԱԲ).

1. Ումրայի ծեսերի կատարման մտադրություն, նշանակված վայրից (միկաս):
2. Մազերի կարճեցումը կամ սափրումը:

Ով թողել է ռուկունի իրականացումը, առանց այս մեկի, նրա հաջը չի համարվում կատարված: Ով չի կատարել ուաջաբը, նա պիտի տա թողության գոհաբերություն: Նա, ով չի կատարել այն, ինչ սուննա է, չունի ոչ մի պայման իր առջև:

ՔԱԲԲԱՅԻ ՇՐՋԱՅՑԻ (ՏԱՎԱՖ) ՃԻՇՏ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ;

1. Իսլամ:
2. Գիտակցություն:
3. Որոշակի մտադրություն:
4. Կատարման ժամանակի սկիզբ:
5. Ուխտագնացի մարմնի այն մասերի ծածկումը, որոնք հանդիսանում են աուրա, եթե կա այդ հնարավորությունը:
6. Ծիսական մաքրության վիճակում գտնվելը, որը չի վերաբերվում երեխաներին:
7. Քաբբայի յոթ անգամ շրջանցի համոզվածությունը:
8. Շրջայցի ժամանակ Քաբբայի ձախ կողմում լինելը և այն շրջանների կրկին անցումը, որոնցում եղել է շփոթմունք չկատարելով այս պայմանը:
9. Շրջայցի ժամանակ, ետ չվերադառնալը:
10. Ինքնուրույն տեղաշարժումը, ովքեր ի վիճակի են:
11. Բոլոր յոթ շրջանները, անցումը մեկը մյուսի ետևից, առանց դադարի:
12. Շրջայցը կատարումը ալ Հարամ մզկիթի ներսում:
13. Շրջայցը սկսելը Սև քարից:

ՏԱՎԱՖԱՅԻ ԺԱՄԱՆԱԿՎԱ ՍՈՒՆԱ Է, շոշափել Սև քարը, համբուրել այն, և նրա մոտ « Ալլահու Աբբար » խոսքերը արտաբերել: Քաբբայի անկյուններին կպնելը, որոնք ուղղված են Յեմենի կողմը: Իհրամ թիկնոցի ընտրությունը, յուրահատուկ ձևով, քայլերի արագացնել և դանդաղեցնելը, կախված պահանջից: Ինչպես նաև դուայի կարդալը և Ալլահին հիշատակելը: Քաբբային մոտենալը և երկու ռակյատով աղոթք անելը տավաֆայից հետո, Իբրահիմի կանգնած վայրի ետնամասում:

ՎԱԶՔԻ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ (ՄԱԱԻ);

1. Իսլամ:
2. Գիտակցություն:
3. Մտադրություն:
4. Անդադարություն:
5. Ինքնուրույն տեղաշարժում, եթե հնարավոր է:
6. Երկու բլուրների միջև տարածության հաղթահարում:
7. Երկու բլուրների միջև տարածության լիակատար հաղթահարում:
8. Դրան ճիշտ կատարված տավաֆի նախորդում:
9. Աս- Մաֆա բլրից կենտ վազք, իսկ Ալ-Մարվայից գույգ:

ՎԱԶՔԻ ՍՈՒՆԱՆ. Մաքրությունը, որը իր մեջ ներառում է ծիսական մաքրությունը, հագուստը: Աուրայի ծածկելը, դուայի կարդալը և Ալլահին

հիշատակելը, ինչպես նաև արագացված և սովորական քայլքը, երկու բլուրների բարձրանալը, և տավաֆից անմիջապես հետո վազքի կատարելը: **ՕԱՆՈՒՑՈՒՄ.** Ամենից լավ է նետել քարեր նույն օրը, սակայն նետումը վավերական կլինի նաև տաշրիկայի երկրորդ և երրորդ օրերի ժամանակ: **ՋՈՂԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ.** Հաստատված սուննա է: Երբ գալիս է գուլ էլ հիջր ամսվա 10 -րդ օրը, գոհաբերություն կատարողին արգելվում է առանձնացնել իր մազերից, մաշկից և եղունգներից որևէ մաս այնքան ժամանակ, մինչ նա չի մորթել գոհաբերվող կենդանուն:

ԱԿԻԿԱ. Այն սուննա է: Ծնված օրվանից յոթ օր հետո, տղա երեխայի համար մորթում են երկու ոչխար, իսկ աղջկա համար մեկ: Սուննա է նաև նույն օրը մազերի սափրելը և բարեգործության բաժանելը արծաթի տեսքով, որը համապատասխանում է մազերի քաշին: Այդ ժամանակ էլ երեխային անուն են տալիս: Լավագույն անուններն են Աբդուլլան և Աբդուռոռահմենը: Արգելված է երեխային կոչել այնպիսի անուններով, որը չի նշանակում Ալլահի ստրուկ: Այդ անուններից են Աբդուննաֆի, Աբդունռասուլ: Եթե ակիկան համընկնում է գոհաբերության օրվա հետ, ապա կարելի է սահմանափակվել դրանցից մեկով:

ՕԳՏԱԿԱՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

Մարդ, ով այցելում է Մարգարեյի *(Մալլալահու ալեհի ուա սալամ)* մզկիթը Մեդինայում, պիտի մտնի մզկիթ և աղոթի մզկիթի ողջույն, երկու ռակյատով: Հետո նա պիտի մոտենա Մարգարեյի *(Մալլալահու ալեհի ուա սալամ)* գերեզմանին և կանգնի նրա դիմաց, Մարգարեյի *(Մալլալահու ալեհի ուա սալամ)* գլխի ուղղությամբ, և մեջքը շրջած կիբլայից: Մինևնույն ժամանակ հավատացյալի սիրտը պիտի լի լինի հրճվանքով կարծես իրոք նա տեսնում է Մարգարեյին *(Մալլալահու ալեհի ուա սալամ)*: Դրանից հետո, նա պիտի արտաբերի հետևյալ ողջույնը «Խաղաղություն քեզ, օ, Ալլահի Մարգարե:»¹ Ողջույնը կարող է լինել ավելի երկար: Հետո նա պիտի շարժվի աջ արմուկի երկարությամբ և ասի. «Խաղաղություն քեզ օ, Աբու Բաքր աս- Սադիկ: Խաղաղություն քեզ, Օ, Ումար ալ-Տարուկ: Օ, Ալլահ, տուր նրանց իրենց Մարգարեյից և իսլամից բարիք:»² Մրանից հետո, նա պիտի շրջվի կիբլային այնպես, որ սենյակը գտնվի նրանից ձախ և դիմի Ամենաբարձրյալին խնդրանքով:

¹ «Ասսալամ ալեյկա յա ռասուլիլլահ:»

² «Ասսալամ ալեյկա յա Աբու Բաքր աս- Սադիկ, ասսալամ ալեյկա յա Ումար ալ-Տարուկ: Ալլահումմա ջազահումմա ան նաֆիհիմա ուա անիլ իսլամի խեյրան:»

ՕԳՏԱԿԱՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱՐԲԵՐ ԹԵՄԱՆԵՐՈՎ

★ **ՎԱՏ ԱՐԱՐՔՆԵՐԸ ԿԱՐԵԼԻ Է ՄԱՔՐԵԼ և ՔԱՎԵԼ ՀՈՏԵՑԱԼ ԿԵՐՊՈՎ.**
Պետք է անկեղծ գոջալ, խնդրել, բարի գործեր անել, որպեսզի Ալլահից ուղարկված փորձությունները հաղթահարել: Կարելի է բարեգործություն տալ, որը կոչվում է սաղակա, կարելի է կարդալ դուա, աղոթել: Եթե մարդու մահվան ժամանակ դեռ գոյություն ունեն չներված մեղքեր, ապա նա պատժի է ենթարկվում գերեզմանում կամ Դատաստանի Օրը կամ Դժոխքի կրակներում այնքան ժամանակ, մինչ չի մաքրվում, որից հետո նա կմտնի Դրախտ, եթե մահացել է Միաստվածության հետևորդ լինելով: Իսկ նրանց, ովքեր մահացել են կեֆիր, մուշրիկ, կամ փարիսեցի, սպասվում է Կրակում հավերժ բնակություն:

ՄԵՂՔԵՐԻ և ԱԼԼԱԶԻՆ ԱՆՆԱԶԱՆԴՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՐԴՈՒՎՐԱ.

Դրանցից են;

★ Ազդեցություն սրտի վրա, որոնք բերում են միայնակության, ճնշման, անհանգստության, մթության զգացում: Նրան նվաստացնում են, բերում են հիվանդություն և կարծես վարագույրով ծածկում են Ալլահից:

★ Ազդեցություն կրոնի վրա: Դրանք իրենց հետ բերում են նոր մեղքեր և արարքներ, որոնք ետ են մղում Ալլահին հնազանդվելուց, լավ արարքներից և զրկում են մարդուն Մարգարեյի ^{(Մայլապետու} _(այլեհի նուա սայամ) հրեշտակների և հավատացյալների բարի աղոթքներից:

★ Ազդեցություն ճակատագրի վրա: Դրանք խոչընդոտում են ճակատագրի ստացմանը, հեռացնում են բարիքը և զրկում են ունեցվածքը օրհնությունից:

★ Դրանց ազդեցությունը առանձին մարդու վրա: Դրանք մաքրում են կյանքի ապրելաձևի առաքինությունը, լցնում են այն զրկանքներով և բարդացնում են մարդու գործերը:

★ Մեր կողմից կատարվող արարքների վրայի ազդեցությունը: Դրանք խոչընդոտում են Ալլահի կողմից ընդունվելուն:

★ Ազդեցություն հասարակության վրա: Դրանք հեռացնում են անվտանգությունը և հանգստությունը, ազդում են գների բարձրացմանը, իշխանավորների կամայականություններին: Դրանց շնորհիվ թշնամին տնօրինում է, դադարում է արձրևը և այլն:

★ **ԱՆՀԱՆԳՍՏՈՒԹՅՈՒՆ.** Յուրաքանչյուրի ցանկությունն է սրտի ուրախությունը և թեթևությունը, տխրության և կարիքների վերացումը: Միայն այսպես կարելի է հասնել բարեկեցիկ կյանքի: Իսկ դրան հասնելուն նպաստում են որոշակի կրոնական, բնական և գործնական միջոցները, որոնք չի կարող ընտրել ոչ ոք, բացի հավատացյալից: Դրանց թվում են.

1. Հավատքը Ալլահին:
2. Ամենաբարձրյալ Ալլահի հրամանների կատարելը և Նրա արգելքներին հետևելը:
3. Բարեգործությունը խոսքերով և արարքներով Ալլահի արարածների նկատմամբ:
4. Օգտակար գործերով

զբաղվելը կամ օգտակար կրոնական գիտելիքներ ձեռք բերելը: **5.** Անցյալի կամ ապագայի անօգուտ մտորումները թողնելը և ամենօրյա գործերով զբաղվելը: **6.** Այլահի հաճախակի հիշատակելը: **7.** Մարդկանց Այլահի գաղտնի և պարզ գթասրտության պատմելը: **8.** Պետք է նայել նրանց, ովքեր մեզանից ցածր են դիրքով, այլ ոչ թե նրանց, ում տրված է աշխարհիկ ավելի շատ բարիք, քան մեզ: **9.** Ջանքերի ներդնումը, որպեսզի հեռացնել այն, ինչ ծնում է տխրություն և բեռ և ձգտում նրան, ինչ բերում է ուրախություն: **10.** Այլահին դիմելը այնպիսի աղոթքներով, որոնցով դիմում էր Մարգարեն (*Մայլաանու (այլեհի ուս սպաս)*), որպեսզի ազատվեր տխրությունից և կարիքից:

Իբրահիմ ալ-Հավասը, թող Այլահը ների նրան, ասաց. «Սրտի դարման են հանդիսանում հինգ բան. Ղուրանի ընթերցումը, նրա այաթների մասին մտորումը, դատարկ փորը, գիշերը աղոթելը, հնազանդ խնդրանքը, Այլահին դիմելը լուսաբացին և առաքինիների հետ զրույցը:»

★ ԱՄՈՒՄՆՈՒԹՅՈՒՆ. Ամուսնանալը ցանկալի է, սուննա է, այն մարդու համար, ով ցանկություն ունի հակառակ սեռի նկատմամբ, բայց, ով չի վախենում, որ կշնանա: Այն համարվում է թույլատրելի (մուբահ) նրա համար, ով չի զգում կիրք և պարտադիր (ուաջաբ) այն մարդու համար, ով վախենում է, որ կարող է շնանալ: Տվյալ պարագայում այն առաջնակարգ է, համեմատած հաջի հետ: Տղամարդուն արգելվում է նայել օտար կնոջ, ինչպես նաև կրթով նայել տարեց կնոջը կամ անչափահաս տղային:

ԱՄՈՒՄՆՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՎԵՐԱԿԱՆ Է ՄԻԱՅՆ ՀԵՏՆՅԱԼ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՊԱՐԱԳԱՅՈՒՄ.

1. Ամուսինների հստակ որոշումը: Որովհետև, երբ խնամակալը ունի մի քանի դուստր, ապա նրա խոսքերը «Ես տալիս եմ կնության իմ դուստրերից մեկին» չի համարվում վավերական:

2. Գիտակից և չափահաս (մուկայյաֆ) տղամարդու և ազատ և գիտակից կնոջ համաձայնությունը:

3. Խնամակալի ներկայությունը: Առանց նրա, կնոջ ինքնուրույն կայացած ամուսնությունը անվավեր է: Նրան ամուսնացնում է միայն վալին, բացառությամբ այն դեպքերի, երբ նա մերժում է նրան ամուսնացնել այն մարդու հետ, ով ամեն ինչով համապատասխանում է նրան: Խնամակալի իրավունքը պատկանում է աղջկա հորը:¹ Նրան հետևում է հորական պապը, ապուպապը և այլն: Հետո որդին, ով չափահաս է, թոռը տղայի կողմից և այլն: Նրանց հետևում է հարազատ եղբայրը, հետո եղբայրը հոր կողմից, հետո զարմիկը և այլն:

4. Վկաներ, երկու արդար, գիտակից և չափահաս տղամարդ:

5. Արգելքի բացակայությունը, որը իրենից ներկայացնում է կաթի կամ արյունակցական կապը կամ ամուսնական բարեկամությունը:

¹ Կարևոր է նշել, որ խնամակալը իրավունք չունի ստիպողաբար ամուսնացնել իր խնամյալին:

ԿԱՆԱՅՔ, ՌԻՄ ՀԵՏ ԱՐԳԵԼՎԱԾ Է ԱՄՈՒՄՆԱՆԱԼ.

ՑՄԱՀ ԱՐԳԵԼՔ Է.

1. Արյունակցական բարեկամությունը, մայրը, տատը, դուստրը, որդու դուստրը, թոռան դուստրը և այլն, ինչպես նաև քույրը, հարազատ կամ մոր կամ հոր կողմից, քրոջ դուստրը, նրա որդու կամ դստեր դուստրը, եղբոր դուստրը հոր կամ մոր կողմից, նրա դուստրերը, հորաքույրները կամ մայրերը:

2. Կաթնային բարեկամություն; Այն արգելում է այն խմբերը, որոնք և արյունակցականը, նույնիսկ եթե խոսքը վերաբերվում է ամուսնական բարեկամությանը:

3. Ամուսնությամբ բարեկամությունը, որը ներկայացնում են կնոջ մայրը և տատը, նախնիների և ժառանգորդների կանայք, կնոջ դուստրերը, նրա երեխաների դուստրերը, թոռները և այլն:

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՐԳԵԼՔ.

1. Միանալու պատճառով, ինչպես արգելք ամուսնանալ երկու հարազատ քույրերի, կամ աղջկա, կամ նրա մորաքրոջ և այլն:

2. Պատճառով, որը կարող է անհայտանալ, ինչպես արգելք ամուսնանալ ուրիշի հետ ամուսնացած կնոջ հետ:

ԾԱՆՈՒՑՈՒՄ. Տղամարդու ծնողները իրավունք չունեն ստիպել նրան ամուսնանալ որևէ մեկի հետ անկախ իր կամքից: Նա պարտավոր չէ ենթարկվել նրանց այդ հարցում:¹ Եվ այդ չի դիտվի որպես անհարգալից վերաբերմունք ծնողների նկատմամբ:

Ամուսինը պարտավոր է ապահովել կնոջը սննդով, հագուստով և բնակարանով:

★ **ԱՄՈՒՄՆԱԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ.** Արգելվում է կնոջը ամուսնալուծություն տալ հայդի, նիֆասի կամ մաքրության ժամանակ, որի ընթացքում ամուսինների միջև եղել է սեռական հարաբերություն, բայց մինևույն ժամանակ ամուսնալուծությունը կարող է հաշվի առնվել: Անցանկալի (մակրոհ) է համարվում ամուսնալուծությունը առանց որևէ պատճառի: Ամուսնալուծությունը թույլատրվում է, եթե կա անհրաժեշտություն: Ամուսնալուծությունը համարվում է ցանկալի այն մարդու համար, ում ամուսնությունը վնաս է պատճառում: Պարտադիր չէ ենթարկվել ծնողներին ամուսնալուծության հարցում: Կնոջից ամուսնալուծվել ցանկացողին արգելվում է այդ անել անմիջապես մեկ անգամից: Այսինքն արտաբերել տալակի բանաձևը մի քանի անգամ անընդհատ, համարելով ամեն այդպիսի արտաբերումը առանձին ամուսնալուծություն:

★ **ԵՐԴՈՒՄՆԵՐ.** Նրանց թողությունը պարտադիր է դառնում հետևյալ պայմաններում.

1. Եթե մարդ նպատակ է ունեցել երդման: Եթե նա ինչ որ բան է ասել նկատի

¹ Այս վերաբերվում է և կանանց և տղամարդկանց :

չունենալով երդվելը, այդ կոչվում է դատարկաբանություն երդման մեջ: Այդպիսի խոսքերից են օրինակ «Ուալլահ» բառը, որը օգտագործվում է խոսակցության մեջ առանց նկատի առնվելու որպես երդում:

2. Եթե երդումը վերաբերվում է ապագայում ինչ որ հնարավորի մասին և հաշվի չի առնվում երդումը, կապված անցյալի հետ, որի մասին նա տեղեկություններ չունի, կամ համոզված է իր ճշտության վրա, երբ մարդ երդվում է ինչ որ բանում, համոզված լինելով, որ ամեն ինչ այդպես է, ինչպես նա երդվում է, իսկ հետո ստացվում է, որ ամեն ինչ այդպես չէ: Կամ մտադրված սուտ երդումը, որը արդեն մեծ մեղքերի թվում է: Եվ երբ մարդ երդվում է մի բանում, որը լինելու է ապագայում, և նա համոզված է իր ճշտի մեջ, իսկ հետո պարզվում է, որ ամեն ինչ այլ կերպ է:

3. Եթե երդումը եղել է կամավոր, ապա մարդուն ոչ ոք չի կարող պարտադրել:

4. Եթե երդումը խախտվել է, ինչպես եթե մարդ արել է այն, ինչ երդվել է թողնել, կամ թողել է այն, ինչ երդվել է անել:

Ով, երդվելով բացառություններ է արել, այսինք իր երդումը թողել է Ալլահի կամքին, և հետո արել է այդպես, ապա այդ դեպքում նա պարտավոր չէ քավել իր երդումը: Բայց այս դեպքում էլ անհրաժեշտ է հետևել երկու պայմանի.

1. Բացառությունը պիտի հնչի երդման հետ միասին:

2. Այդ բացառությամբ մարդ պիտի ենթադրի, որ երդումը կախված է դրանից, օրինակ, երբ նա ասում է. «Ուալլահ, նշահԱլլահ», որը նշանակում է «Երդվում է Ալլահով, եթե Ալլահը ցանկանա:»

Ով երդվել է անել ինչ որ բան, իսկ հետո պարզել է, որ ավելի լավ և օգտակար է այլ կերպ վարվել, ապա ցանկալի է քավել երդումը և անել այն, ինչ լավ է: Այս սուննա է:

ԵՐԴՄԱՆ ՔԱՎՈՒԹՅՈՒՆԸ. Այդ կարող է լինել տաս աղքատի կերակրելը, հագուստ տալը, կամ ստրուկին ազատելը: Իսկ ով չի կարող, նա պիտի պահք պահի երեք օր: Ով պահք է պահել հնարավորություն ունենալով կերակրել և հազցնել աղքատներին, նրանից քավության պատասխանատվությունը չի վերցվում: Քավությունը կարելի է անել և երդման խախտումից առաջ և հետո: Եթե մարդ երդվել է նույն բանի համար մի քանի անգամ, նրան բավարար է մեկ քավությունը: Իսկ եթե երդումները կապված են եղել տարբեր բաների հետ, ապա այս դեպքում անհրաժեշտ է մի քանի քավություն:

★ ՈՒԻՏ, ԽՈՍՏՈՒՄ. Դրանք լինում են տարբեր տեսակի.

1. Ուիստ առանց սահմանման: Օրինակ երբ մարդ ասում է. «Եթե ես ապաքինվեմ, ապա ես ուիստ ունեմ Ալլահին:» Այս ասելով, եթե մարդ լռում է, և նա մտադրված չէ որևէ որոշակի ուիստի, ապա ապաքինումից հետո, նա պիտի քավի իր ուիստը նույն ձևի, ինչպես երդման քավության ժամանակ:

2. Ուիստ, որը տրվում է բարկության կամ վեճի ժամանակ, երբ մարդ կապում

է այն որոշակի պայմանների հետ, ցանկանալով արգելել ինչ որ մեկին անել ինչ որ բան կամ հակառակը, ստիպել ինչ որ մեկին անել ինչ որ բան: Այդպիսի խոսքեր են. «Եթե ես խոսեմ քեզ հետ, ապա պահք կպահեմ ամբողջ տարին:» Այս դեպքում ուխտ անողը ընտրում է կատարել այդ, թե քավել, այն բանից հետո, երբ խոսել է այդ մարդու հետ:

3. Թույլատրելի ուխտ, ինչպես. «Ես Ալլահին ուխտ եմ անում, որ կհագնեմ իմ հագուստը:» Տվյալ դեպքում, մարդ ընտրում է հագուստը կրելու և քավության միջև:

4. Անցանկալի ուխտ (մակրուհ), օրինակ. « Ալլահին իմ ուխտն է, որ ես կամուսնավորվեմ իմ կնոջից:» Տվյալ դեպքում, ինչպես սուննա, ցանկալի է ուխտը փոխարինել քավությամբ:

5. Ուխտ, որը հանդիսանում է Ալլահին չլսելը, օրինակ. «Իմ ուխտն է, որ ես գողություն կանեմ:» Այսպիսի ուխտը արգելվում է իրականացնել, այդ պատճառով, այն պիտի քավվի: Եթե մարդը այդ իրագործում է, ապա այդ դառնում է մեղք և քավություն չի պահանջվում:

6. Ուխտ, որը հանդիսանում է Ալլահին հնազադվելը, օրինակ. « Ես ուխտ եմ անում, կատարել այսքան ռակյատ աղոթք», որպեսզի մերձենամ Ալլահին: Իսկ եթե նա այդ կապում է պայմանով, ապա նա պիտի կատարի այդ այն դեպքում, եթե տվյալ պայմանը իրականացել է: Իսկ եթե այդ կապված չի եղել որևէ պայմանով, ապա այն ամեն դեպքում պիտի կատարվի:

★ ԿՐՕՔՈՎ ԿԵՐԱԿՐԵԼԸ. Այն արգելք է դարձնում այն, ինչ արգելք է համարում արյունակցական կապը, երեք պայմանների կատարմամբ.

1. Կաթի արտադրվածության պատճառը պիտի լինի ծննդաբերությունը:

2. Երեխային կերակրելը, պիտի լինի ծնված օրվանից, երկու լուսնային տարի:

3. Պիտի համոզվածություն լինի, որ կերակրումը կատարվել է հինգ և ավել անգամ: Մեկ անգամ նկատի է առնվում, որ երեխան բռնել է կուրծքը և որոշ ժամանակ անց բաց է թողել այդ և չի կշտացել: Կաթնային կապը ժառանգության և ապահովման իրավունք չի տալիս:

79	Կառավարողի արդարությունը, երիտասարդի առաքինությունը, մզկիթների հետ կապը և սերը հանուն Այլահի	«Յոթ տեսակի Այլահր կթաքցնի Իր սովերում այն Օրը, երբ բացի Նրա սովերից ոչ մի սովեր չի լինի. նրանք են կառավարիչը, երիտասարդը, ով մեծացել է Ամենաբարձրյալ և Ամենահզոր Այլահին երկրպագելու, մարդու, ում սիրտը կապված էր մզկիթին, այն երկուսին, ովքեր սիրում են միմյանց հանուն Այլահի, հանդիպում և բաժանվում են միմյանցից միայն հանուն Այլահի, տղամարդուն, ով կկանչի իրեն ցանկացող հարուստ և գեղեցիկ կնոջը և կասի « Իրոք, ես վախենում եմ Այլահից », նրան, ով բարեգործություն է անում այնքան գաղտնի, որ իր ձախ ձեռքը չգիտի, թե որքան է վատնում աջը, ինչպես նաև նրան, ում աչքերը լցվում են արցունքով, երբ նա միայնակ հիշատակում է Ամենաբարձրյալ Այլահին:»
80	Թողություն խնդրելը	«Ով հաճախ Այլահից թողություն է խնդրում, նրան Այլահը տալիս է ելք ամեն իրավիճակից, ազատում է տխրությունից և տալիս է ելք այնտեղից, որտեղից նա չի սպասում:»
81	Աստծոց նահատակություն խնդրելը	Եթե Աստծոց խնդրեն նահատակություն անկեղծորեն, ապա Նա մահը կհամարի այդպիսին, նույնիսկ եթե մարդը մահանա տանը, անկողնում:

ՄԱՐԳԱՐԵՅԻ ԿՈՂՄԻՑ ԱՐԳԵԼՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՐԳԵԼՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ		ԱՐԳԵԼՔԸ ՀԱՍՏԱՏՈՂ ՀԱՎԱՍՏԻ ՀԱՐԻԹ
1	Հանուն մարդկանց կատարվող արարքներ	«Ամենաբարձրյալ Ալլահը ասաց. « Ես բոլորովին կարիք չունեմ, որ Ինձ զուգրնկեր տան, եթե որևէ մեկը որևէ արարք կատարի ոչ Ինձ համար, այլ ուրիշի համար, Ես կհրաժարվեմ և նրանից, և նրա շիրկից:» ¹
2	Ցուցադրական արարքների կատարում	«Ով խայտառակել է ինչ որ մեկին, պատմելով բոլորին նրա թերությունների մասին, նրան Ալլահը կխայտառակի Դատաստանի օրը, իսկ ով որևէ բան է արել ցուցադրաբար, նրան Ալլահը կխայտառակի ի ցույց բոլորի, թե ով է նա իրականում:»
3	Ամբարտավանություն	«Չի մտնի Դրախտ նա, ում սրտում կար փոշու հատիկի չափ ամբարտավանություն:» Ամբարտավանությունը ճիշտը բնորոնելու մերժումն է, և մարդկանց ատելն է:
4	Երկար հագուստի կրելը	«Մարդիկ կրում են երկար իզար, երկար վերնաշապիկ և երկար չավա: Ով իր ետևից տանի իր հագուստը մեծամտությունից և ինքնաբավարարվածությունից ելնելով, Հարության օրը Ալլահի նույնիսկ չի նայի նրան:»
5	Նախանձ	«Զգուշացեք նախանձից, քանզի, ճշմարիտ, նախանձը կույ է տալիս բարի արարքները, ինչպես կրակը, փայտը:»
6	Վաշխառություն	Ալլահի Մարգարեն անիծել է վաշխառույից պարտք վերցնողին և դրանով զբաղվողին: «Դիրհեմը լիհֆին, որը մարդ վերցնում է իրեն, իմանալով այդ, ավելի վատ է, քան երեսուն վեց դավաճանություն:»
7	Այկոռոյի օգտագործումը	«Դրախտ չեն մտնի գինուն սովորածները, կախարդությանը հավատացողները և բարեկամական կապեր խզողները:» «Ով գինի է խմում, նրա աղոթքը չի բնորոնվի քառասուն օր:»
8	Սուտը	«Վայ նրան, ով ինչ որ բան է պատմում, որպեսզի ծիծաղեցնի մարդկանց և միևնույն ժամանակ նա ստում է: Վայ նրան, վայ նրան:»
9	Ծածուկ լսելը և նայելը	«Ով լսում է մարդկանց խոսակցությունը գաղտնի, նրա ականջի մեջ Ալլահի Դատաստանի օրը կլցնի տաք արույր:»
10	Պատկերների ստեղծումը	«Ճշմարիտ, Դատաստանի օրը ամենատանջալից տառապանքները սպասում են նրանց, ովքեր ստեղծում են կենդանի արարածների պատկերներ:» «Հրեշտակները չեն մտնում տուն, որտեղ կա շուն կամ կենդանի էակի պատկեր:»
11	Չարախոսություն	«Հայտնի է ձեզ ի նչ է հուլան:» Մարդիկ ասացին. «Ալլահը և Նրա մարգարեն ավելի լավ գիտեն այդ մասին:»

¹ Այս նշանակում է, որ այդպիսի մարդու արարքները կլինեն հաշվելի և նա ոչ մի պարգև չի ստանա :

		Մարգարեն <i>(Մայրապետի ասացած)</i> ասաց. « Այն, երբ դու քո եղբոր մասին հիշատակում ես այնպես, որք դուր չեր գա նրան:» Նրան հարցրեցին. «Իսկ եթե նրան բնորոշ է ասածը» Մարգարեն <i>(Մայրապետի ասացած)</i> ասաց. « Եթե նրան բնորոշ է այդ, նշանակում է դու չարախոսում ես նրան, իսկ եթե նա այդպիսին չէ, նշանակում է դու գրպարտում ես նրան:»
12	Բամբասանքներ	«Բամբաստողի չի մտնի Դրախտ:» Բամբաստողի մի մարդ է, ով տարածում է բամբասանք, մարդկանց մեջ թշնամություն առաջացնելու:
13	Անեծք	«Հավատացյալի անեծքը նման է նրա սպանության:» «Մի անիծեք քամին, որովհետև այն փչում է Այլահի հրամանով, իսկ ով անիծում է այսպիսի մի բան, որ իրավունք չունի անիծելու, ապա անեծքը կվերադառնա նրան:»
14	Գաղտնիքի բացահայտումը	«Դատաստանի օրվա ամենավատ մարդկանցից նրանք են, ովքեր մերձենում են իրենց կանանց, իսկ նրանք ամուսիններին, որից հետո նա բացահայտում է կնոջ գաղտնիքները:» ¹
15	Անպարկեշտություն	«Իրոք, Այլահի մոտ Դատաստանի օրը ամենավատ մարդիկ կլինեն նրանք, ումից մարդիկ շրջվում են անպարկեշտության պատճառով:» «Ադամի որդիների մեղքերի մեծամասնությունը նրանց յեզվից է:»
16	Մուսուլմանին անհավատության մեջ մեղադրելը	««Եթե մարդ իր եղբորը ասում է, «Անհավատ», ապա այն ունի երկու հետևանք, կամ նրա եղբայրը իրոք այդպիսին է, ինչպիսին մյուսը ասում է, կամ այդպես չէ: Այդ դեպքում նրա խոսքերը վերադառնում են հենց իրեն:»»
17	Հաստատել այն, որ նա ինչ որ մեկի որդին է, ով իր հայրը չէ	«Ով տեղյակ լինելով իրեն հայր է կոչել մարդու, ով իրոք նա չէ, Դրախտը կլինի արգելված:» «Ով չի ցանկանում ընդունել, որ նա իր հոր որդին է, ապա այդ հանդիսանում է անհավատություն:»
18	Մուսուլմանին ահաբեկելը	«Մի թույլատրեք մուսուլմանին ահաբեկել մեկ ուրիշ մուսուլմանի:» «Ով իր հավատքի եղբոր վրա երկաթյա իր է ուղղել, նրան հրեշտակները կանիծեն մինչև նա չիջեցնի այդ:»
19	Ոչ մուսուլմանի սպանությունը, ով գտնվում է մուսուլմանի տարածքում պայմանագրով	«Ոչ մուսուլմանի անօրեն սպանողը, ում հետ կա խաղաղության համաձայնագիր, չի զգա Դրախտի բույրը: Իսկ այդ բույրը զգացվում է հարյուր տարվա տարածությամբ:»
20	Այլահին հաճո մարդկանց նկատմամբ թշնամական վերաբերմունքը	«Ես պատերազմ եմ հայտարարում նրան, ով թշնամություն է անում Իմ մերձավորի հետ:»
21	Փարիսեցուն և մեղաավորին "Տեր" կոչելը	«Մի կոչեք փարիսեցուն 'տեր', քանզի եթե նա լինի տեր, դուք կգայրացնեք ձեր Ամենաբարձրյալ Տիրոջը:»

¹ Այլ կերպ ասած, ամուսինը գիշերը անց է կացնում իր կնոջ հետ և հետո պատմում է ուրիշներին այն մասին, ինչ է կատարվել նրանց միջև և նկարագրում է կնոջը :

22	Մարդու հովանավորության տակ գտնվողի խաբեությունը	«Ցանկացած ստրուկի, ում վստահված է ժողովը և նա մահանում է խաբելով նրանց, Այլահր կարգելի Դրախտ մտնել:»
23	Առանց գիտելիքների կրոնական հարցերին,(Ֆետվա) որոշումներ կայացնելը	«Ում տրվել է ֆետվա առանց գիտելիքների, մեղք է հանդիսանում նրան, ով տվել է այդ:»
24	Ուրբաթ օրվա աղոթքի կամ ասր աղոթքի արհամարհելը	«Ով երեք անգամ արհամարհել է ուրբաթ օրվա աղոթքը, չունի արդարացում և Այլահր կորոշմի նրա սիրտը:» «Ով թողել է ասր նամագը, նրա արարքները կլինեն հաշվելի:»
25	Աղոթքների բաց թողնելը	«Մեր և նարնց միջև կա որոշում, նամագ, և ով թողել է այդ, նա դարձել է անհավատ:» «Մարդու, շիրկի և անհավատության միջև նամագի չկատարելն է:»
26	Աղոթողի դիմացով անցնելը	«Եթե նա, ով անցնում է աղոթողի դիմացով իմանա, թե ինչ մեղք է վերցնում իր վրա, ապա կհասկանա, որ տեղում քառասուն ¹ կանգնելը ավելի լավ է, քան այդ անելը:»
27	Աղոթողին անհանգստություն պատճառելը	«Թող սոխ, սխտոր կերած անձը ոչ մի դեպքում չմտնե՞ն անգլիթին, քանգի, իրոք հրեշտակներին նույն տառապանքն է պատճառում, ինչ Աղամի որդիներին:»
28	Հողի անօրինական գավթումը	«Այն մարդու պարանոցով, ով գավթել է մի թիզ հող առանց իրավունքի, կփաթաթվի յոթ հողերից հավաքվածը:»
29	Այլահի գայրույթը առաջացնող խոսքերը	«Պատահում է, որ ստրուկը արտաբերում է խոսք, որը Այլահի գայրույթն է առաջացնում, նա ինքը ուշադրություն չի դարձնում դրա վրա, բայց դրա պատճառով նա կրնկոմվի Դժոխքի ընդերքը յոթանասուն տարի:»
30	Առանց Այլահին հիշատակելու շատախոսելը	«Մի արտաբերեք շատ բառեր, առանց Այլահին հիշատակելու, իրոք, առանց Նրան հիշատակելը, շատախոսությունը համարվում է կարծրասրտություն:»
31	Պարծենկոտությունը	«Իսկ ամենաատելին ինձ համար կլինեն նրանք, ովքեր Հարության օրը կգտնվեն Ինձանից ամենահեռուն: Դրանք կլինեն շատախոսները, պարծենկոտները և չաչանակները:»
32	Այլահին չհիշատակելը	«Այլահի վրեժը կլինի այն մարդկանց, ովքեր ինչ որ տեղ կհավաքվեն միասին և չեն հիշատակի Այլահին և չեն աղոթի Մարգարեյի համար: Իսկ եթե Նա ցանկանա, նա կենթարկի նրանց տանջանքների, իսկ եթե ցանկանա, ապա կների:»
33	Մուսուլմանի հանդեպ չար ձևով ուրախանալը	«Երբեք չար կերպով մի ուրախացեք ձեր եղբոր նկատմամբ, այլապես Այլահը կների նրան, իսկ ձեզ կուղարկի փորձություն:»
34	Կապի կտրելը մուսուլմանների միջև	«Մուսուլմանին չի թույլատրվում թողնել իր եղբորը ավելի քան երեք օր:»
35	Բացահայտ մեղք գործողը	«Իմ ամբողջ համայնքին կներվի, բացի բացահայտ մեղք գործողից:»

¹ Այս հաղիթի փոխանցողը ասաց. «Եվ ես չգիտեմ, ինչ է նա ասել, քառասուն օր, քառասուն ամիս, թե քառասուն տարի» Ալ- Բուխարի և Մուսլիմ

36	Վատ վարքը	«Վատ վարքը փչացնում է մադու արարքը, ինչպես քացախը փչացնում է մեղրը:»
37	Նվերի ետ պահանջելը	«Նվերը ետ պահանջողը նման է շան, որը վերադառնում է իր փսխած տեղին:» «Մարդուն չի թույլատրվում ինչ որ բան նվիրել և հետո հրաժարվել դրանից:»
38	Հարևանի նկատմամբ անարդար լինելը	«Տղամարդու համար տաս կնոջ հետ դավաճանելը ավելի քիչ մեղք է, քան հարևանի կնոջ հետ դավաճանելը: Տաս տուն կողոպտելը ավելի քիչ մեղք է տղամարդու համար, քան հարևանին կողոպտելը:»
39	Արգելվածին հայացք գցելը	«Ադամի որդուն կանխորոշված է դավաճանության բաժինը, որից նա չի կարող խուսափել: Աչքերի դավաճանությունը, որը հանդիսանում է արգելվածին նայելը, ականջների դավաճանությունը, որը հանդիսանում է արգելվածի լսելը, լեզվի դավաճանությունը, որը հանդիսանում է արգելվածի արտասանելը, ինչպես նաև ձեռքերի դավաճանությունը, երբ մարդ վերցնում է այն, ինչ իրենը չի և ոտքերի դավաճանությունը, երբ նա մոտենաում է արգելվածին: Ինչ վերաբերվում է սրտին, ապա այն ցանկանում է, իսկ սեռական օրգանները կամ ընդունում, կամ մերժում են այդ:» ¹
40	Ուրիշ կնոջը հպվելը	«Ճշմարիտ, երկաթյա ասեղը գլուխը մտցնելը ավելի լավ է, քան կնոջ հպվելը, որի համար դուք իրավունք չունեք:» «Ես կանանց ձեռքսեղմումով չեմ բարևում:»
41	Շիզար ամուսնությունը	Ալլահի Մարգարեն արգելել է շիզարը: Այն, երբ մի տղամարդ ամուսնանում է մյուսի դստեր հետ և տալիս է նրան իր դստերը կնության: Եվ այդ կատարվում է առանց ամուսնական նվերների, մահրի:
42	Հանգուցյալի համար բարձրաձայն ողբար²	«Նա, ում համար բարձրաձայն ողբում են, Դատաստանի օրը կենթարկվի տանջանքների:» ³
43	Ոչ Ալլահի անունով երդվելը	«Ով չի երդվում Ալլահով, նա ընկնում է անհավատության կամ շիրկի մեջ:» «Ով պատրաստվել է երդվել, թող երդվի Ալլահով, կամ լռի:» «Ով երդվում է հավատարմությամբ մեզանից չէ:»
44	Սուտ երդումը	«Ով սուտ երդվել և վերցրել է ուրիշ մուսուլմանի ունեցվածքը, Ալլահը կհանդիպի նրան զայրացած:»
45	Երդումը առևտրի ժամանակ	«Խուսափեք վաճառքի ժամանակ արված բազմաթիվ երդումներից, քանզի այն օգնում է վաճառել ապրանքը, բայց չեզոքացնում է առևտրի բարիքը:» «Երդումը օգնում է վաճառել, բայց ջնջում է բարիքը:»

¹ Այսինքն, նա կամ կդավաճանի, կամ կզսպի իրեն :

² Նկատի են ունենում ողբը բարձր ձայնով, բղավոցով, ճանգոտոցով և հագուստի պատռելով :

³ Նա կենթարկվի տանջանքների, եթե կտակել է այդպես կամ խրախուսել է այդ կյանքի ընթացքում;

46	Անհավատին նմանվելը	«Ով նմանվում է ինչ որ մարդկանց, նա նրանցից է:» «Մեզանից չէ նա, ով նմանակում է մյուսներին, այսինքն ոչ մուսուլմաններին:»
47	Գերեզմաններին կառույցներ դնելը	«Ալլահի Մարգարեն արգելեց գերեզմանը պատել գիպսով, նստել կամ կառուցել նրա վրա:»
48	Ուխտադրություն և դավաճանություն	««Երբ Դատաստանի օրը Ալլահը կհավաքի նրանց, ամեն դավաճանի համար կբարձացվի դրոշ և կասվի «Այս այսինչի ուխտադրությունն է, ով այսինչի որդին է:»»
49	Գերեզմանի վրա նստելը	«Ածուխի վրա նստելը և հագուստի այրելը մինչ մաշկը, ավելի լավ է, քան գերեզմանի վրա նստելը:»
50	Ով սիրում է, որ իր առջև ոտքի են կանգնում	«Ով սիրում է, որ իր առջև կանգնում են, անպատճառ իր տեղը կզբաղեցնի Կրակում:»
51	Մուրացիկությունը	«Ես երդվում եմ ձեզ երեք բաներում և կասեմ ձեզ մի բան, իսկ դուք հիշեք այդ: Երդվում եմ, որ բարեգործությունը չի նվազեցնում ստրուկի հարստությունը: Եթե ստրուկի հետ անարդար վերաբերվեն, և նա համբերատար լինի, Ալլահ կավելացնի նրա փառքը: Եթե ստրուկը բացի մուրացիկության դուռը, Ալլահը կբացի նրա համար աղքատության դուռը:» «Ով խնդրում է մարդկանց որպեսզի ավելացնի իր ունեցվածքը, նա խնդրում է թեժ ածուխ: Թող նա վերցնի շատ կամ քիչ:»
52	Գնի բարձրացնելը առևտրում	Ալլահի Մարգարեն արգելում է հիմնական բնակչին վաճառել բեդվինի փոխարեն ¹ , բարձրացնել գները և խախտել եղբոր առևտուրը:
53	Մզկիթում կորած անասունի մասին հարցնելը	«Ով լսել է մարդու, որը մզկիթում հարցնում է կորած անասունի մասին, թող ասի. « Թող Ալլահը չվերադարձնի այն:» Քանզի, մզկիթը չի կառուցվել դրա համար:»
54	Շեյթանին պախարակելը	«Մի պախարակեք շեյթանին, այլ Ալլահից խնդրեք պաշտպանություն նրանից:» Հետևորդներից մեկը պատմում է. ««Ես նստած էի նժույգին Մարգարեյի ետևը, և նրա կենդանին թուլացավ: Ես ասեցի. «Թող կորի շեյթանը:» Ալլահի Մարգարեն ասաց. «Մի ասա, թող կորի շեյթանը, որովհետև այդ դեպքում նա կսկսի մեծանալ չափսերով և երբ դառնա տան չափ կասի. « Այս իմ ուժերի շնորհիվ է:» Դրա փոխարեն ասա. Ալլահի անունով: Այդ ժամանակ նա կփոքրանա և կնմանվի ճանճի:»»
55	Տենդի պախարակելը	«Մի պախարակեք տենդին, քանի որ այն հեռացնում է Ադամի որդիների մեղքերը ինչպես դարբինը դուրս է փչում երկաթի տաքությունը:»

¹ Նկատի է առնվում այն դեպքը, երբ հաստատված բնակիչը բեդվինից վերցնում է ապրանքը և վաճառում է այն նրա փոխարեն, տալով նրան որոշակի գումար : Ինքը այն վաճառում է բարձր գնով շահույթի համար, իսկ եթե բեդվինը վաճառեր իր իսկ ապրանքը, ապա այն մարդկանց կհասներ ավելի էժան :

56	Կոչ որևէ բանի, որը հանդիսանում է մոլորություն	«Ով մյուսներին մոլորության կոչ է անում, նրան կլինի մեղքի բեռ, որոնք կտանեն նրան հետևողները, որը չի թեթևանա:»
57	Ըմպելուն վերաբերվող արգելքները	Այլահի Մարգարեն արգելել է խմել մեծ կամ փոքր տարրաների բերանից: Նա զգուշացրեց խմել կանգնած և արգելեց փչել տարրայի մեջ:
58	Ոսկյա կամ արծաթյա տարրայից ըմպելը	«Մի ըմպեք ոսկյա և արծաթյա տարրաներից և մի կրեք հագուստ մետաքսից և դիպակից, քանզի այս ամենը նախատեսված է այս աշխարհում անհավատների համար, իսկ ձեզ համար Հավիտենական աշխարհում:»
59	Չախ ձեռքով ըմպելը	«Թող ոչ որ ձեզանից յուտի և յրմպի ձախ ձեռքով, քանզի Շայթանը ուտում և ըմպում է ձախ ձեռքով:»
60	Բարեկամական կապի կտրելը	«Դրախտ չի մտնի բարեկամակն կապ կտրողը:»
61	Մարգարեյին օրհնելու կոչի թողնելը	«Ստորացված կլինի նա, ում մոտ հիշատակվել է իմ մասին և նա կոչ չի արել ինձ օրհնելու:» «Գծուձ է նա, ով լսելով իմ մասին հիշատակումը, չի կոչում օրհնության:»
62	Շան ձեռք բերումը	«Այն մարդու բարի արարքները, ով շուն է պահում, օրեցօր նվազում է երկու կարատով, եթե միայն նա չի պահում նրանց որսի կամ անասունների պաշտպանման համար:»
63	Անասունների տանջելը	«Մի կին ենթարկվեց տանջանքների կատվի պատճառով, որին նա փակի տակ էր պահում, մինչ այն չի սատկում: Այդ պատճառով նա հայտնվում է Կրակում: Փակի տակ պահելով նա ոչ կերակրել, ոչ էլ ջուր էր տվել կատվին և ոչ էլ թույլ էր տվել միայնակ անել այդ:» «Մի դարձրեք թիրախ ձեր համար այն ամենը, ինչում կա հոգի:»
64	Անասուններին զանգակ կապելը	«Հրեշտակները չեն ուղեկցի այն մարդկանց խմբին, որտեղ կա շուն կամ զանգակ:» «Ձանգակը Շեյթանի խողովակն է:»
65	Երբ մեղսավորին տրվում է բարիք	«Եթե տեսնես, ինչպես է Այլահը Իր ստրուկներից մեկին աշխարհիկ բարիք նվիրում, չնայած նրա անհնազանդության, իմացիր որ Այլահը նրան ժամանակ է տալիս և փորձում է նրան:» Ամենաբարձրյալ Այլահը ասաց. «Երբ նրանք մոռացան այն, ինչ հիշեցվում էր, Մենք բացեցինք նրանց առջև ամենի դարպասները: Երբ նրանք ուրախացան տրվածի համար, Մենք նրանց հանկարծակի բռնեցինք և նրանք հուսահատության մեջ ընկան:»
66	Նրան, ում անհանգստացնում է այս աշխարհը	«Նրան, ում խնդիրը եղել է ՄոտիկԿյանքը, Այլահը ցույց կտա աղքատությունը, որը կհետևի նրան և Նա այնպես կանի, որ մարդիկ կլքեն նրան և ոչինչ չի հասնի այս աշխարհում, բացի նրանից, ինչ կանխորոշված էր նրա համար:»

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.

ՔՈ ՃԱՆԱՊԱՐՀԸ ԴՐԱԽՏ ԿԱՍ ԴԺՈՒՔ

➤ ԳԵՐԵԶՄԱՆ.

Հավերժ Կյանքի առաջին կանգառը, փոս, որը անհավատի և փարիսեցու համար լցված է կրակով, իսկ հավատացյալի համար այգով: Մարգարեն (*Մայլապահու
(այեհի ուա սայամ)*) հաղորդում է, որ այնտեղ մարդիկ ենթարկվում են տանջանքի Ալլահին չհնազանդելու համար: Նրանք ենթարկվում են տանջանքի այնպիսի արարքների համար, ինչպիսիք են սեփական մեզից չմաքրվելը, բամբասանքի տարածելը, անարդար ձևով ունեցվածքի զավթելը, ստելը, նամազից խուսափելը, Ղուրան չընթերցելը, դավաճանելը, նույն սեռի հետ կենակցելը, վաշխառությունը, պարտքի չվերադարձնելը և այլն: Գերեզմանի տանջանքներից կփրկի բարի արարքը, որը կատարվում է հանուն Ալլահի, Ալլահից թողություն խնդրելը, սուրա 67-ի ընթերցելը և այլն: Այս տանջանքներից ձեռքազատվում է նահատակը, մարդ, ով գտնվել է Ալլահի ճանապարհի պաշտպանության ուղղում, ով մահացել է ուրբաթ օրը, որովայնի հիվանդությունից և այլն:

➤ ԵՂՁՅՈՒՐԻ ՀՆՉԵԼԸ.

Այդ հսկայական եղջյուր է, որը պահում է Իսրաֆիլ հրեշտակը, և սպասում է, թե երբ է նրան հրաման գալու հնչեցնել այն: Կլինի «վախի հնչոց:» Ամենաբարձրյալը ասաց. «Եվ կհնչի Եղջյուրը և այդ ժամանակ գիտակցությունը կկորցնեն կամ կմահանան նրանք, ովքեր երկնքում են և նրանք, ովքեր երկրի վրա են, բացի նրանցից, ում Ալլահը կցանկանա թողնել:» Դրանից հետո ամբողջ տիեզերքը կվերանա, իսկ քառասունից ¹ հետո, կլինի «Հարության հնչյունը:» Ամենաբարձրյալը ասաց. « Հետո այն կհնչեցնեն ևս մեկ անգամ և նրանք վեր կկենան և կնայեն:» (Սուրա 39 այաթ 68)

➤ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ.

Հետո Ալլահը անձրև կոտարակի, որից մեռածների մարմինները կաճեն և նրանք կլինեն բոլորովին նոր, անմահ արարածներ, մերկ, անոթի և առանց թլպատման և նրանք կտեսնեն հրեշտակներին և ջիներին: Նրանք հարություն կառնեն այնպես, ինչպես մահացել են: Նրանք կանեն այն, ինչ անում էին մահից առաջ, այսինքն իհրամ ունեցողը կարտաբերի տալբիյա, նահատակի վերքերից արյուն կհոսի, իսկ անհոգը զբաղված

¹ Հաղորդվում է, որ մի անգամ Աբու Հուրեյրան, ասաց, որ Ալլահի Մարգարեն (*Մայլապահու
(այեհի ուա սայամ)*) ասաց. «Առաջին և երկրորդ հնչոցների միջև կանցնի քառասուն:» ««Նրանք հարցրեցին, «Օ, Աբու Հուրեյրա քառասուն օր», և հրաժարվեցի պատասխանել, չիմանալու պատճառով: Նրանք կրկին հարցրեցին. «Քառասուն տարի:» Եվ ես կրկին հրաժարվեցի պատասխանել: Նրանք կրկին հարցրեցին . «Քառասուն ամիս» Աբու Հուրեյրան ասաց, «Եվ ես հրաժարվեցի պատասխանել, իսկ հետո ավելացրեցի, որ Մարգարեն ասաց. «Եվ կփտեն մարդու մարմնի բոլոր մասերը, բացի պոչուկից, որից Ալլահը կարարի նրան կրկին :»

կլինի անհմաստ գործով: Մարգարեն (*Մայլապահու
այեհի ուս սայամ*) ասաց. « **Ամեն ստրուկ
հարություն կառնի այնպես, ինչպես մահացել է:**» (Մուսլիմ)

➤ **ՀԱՎԱՔ.**

Հետո Ալլահը կժողովի արարածներին հաշվի համար, և նրանք սարսափից արբած կլինեն մեծ Օրը, որի տևողությունը կլինի հիսուն հազար տարի, իսկ այնտեղ մնալը կթվա ժամեր: Արևը կմոտենա նրանց մղոն և մարդիկ կխեղդվեն իրենց քրտինքից, կախված արարքներից: Նրանք կսկսեն վիճել միմյանց հետ, թույլերը և գոռոզները: Անհավատները կվիճեն իրենց ընկերների, շեյթանի և սեփական մարմնի մասերի հետ:¹ Եվ նրանք կանիծեն միմյանց իսկ անարդարության մասնակիցը կկծի իր ձեռքերը: Հետո կբերեն Դժոխքը յոթանասուն հազար պարաններով, որոնցից յուրաքանչյուրը կձգի յոթանասուն հազար հրեշտակ: Եվ երբ անհավատը կտեսնի նրան, նա կցանկանա արդարացնել իրեն ցանկացած ճանապարհով, կամ կցանկանա փոշի դառնալ: Ինչ վերաբերվում է նրանց, ովքեր անհնազանդ են եղել Ալլահին, ապա հարստությունը, որը չի վերածվել զաքյաթի, կդոնա հուր կրակ և կայրի: Գոռոզները կհավաքվեն ինչպես մրջյուններ, դավաճանները, ովքեր վերցրել են այն ինչ նրանց չի պատկանում, կբացահայտվեն և կնսեմացվեն: Իսկ գողը կգա նրանով ինչ գողացել է: Ամեն գաղտնիք երևան կգա և ճշմարտությունը կբացահայտվի: Իսկ ինչ վերաբերվում է աստվածավախներին, նրանց չի հասնի այդ Օրվա սարսափը, և այն կգա նրանց համար, ինչպես դուրս նամազ:

➤ **ԲԱՐԵՆՈՍՈՒԹՅՈՒՆ.**

Ամենահզոր իրավունքը, տրված է միայն մեր Մարգարեյին (*Մայլապահու
այեհի ուս սայամ*): Նա կբարեխոսի մարդկանց համար հավաքի ընթացքում, որպեսզի նրանք ազատվեն դժբախտությունից, հաշվից և փորձությունից: Մյուս տեսակի բարեխոսությունները տեղի կունենան, ոչ միայն հավաքի օրը և միայն Մարգարեյից (*Մայլապահու
այեհի ուս սայամ*), այլև մեկ ուրիշից: Այդպիսի բարեխոսություն կարող է լինել հավատացյալի Կրակից դուրս գալը և աստիճանի բարձրացումը:

➤ **ՀԱՇԻՎ.**

Մարդիկ կներկայանան իրենց Տիրոջը շարքերով և Նա ցույց կտա նրանց արարքները և կհարցնի դրանց մասին: Նա նաև կհարցնի ապրած կյանքի, երիտասարդության, ունեցվածքի, գիտելիքների, Ալլահի կողմից տրված պատգամների մասին, ինչպես նաև հաճույքների, լսողության, տեսողության և բանականության մասին²: Անհավատին և փարիսեցուն

¹ Այսինքն նրա իսկ մարմնի մասերը կվկայեն նրա դեմ, բացահայտելով այն, ինչ նա արել է :
² Այսինքն մարդուն կհարցնեն, թե ինչպես է նա ապրել իր կյանքը, ինչպես է օգտագործել Ալլահի պարզները, ինչպիսիք են տեսողությունը, լսողությունը, բանականությունը : Արդյոք նա օգտագործել է դրանք բարի արարքների համար, Ալլահին երկրպագելու,

Այլափի հաշվի կկոչի բոլորի ներկայությամբ, որպեսզի ցույց տա իր իմացությունը, ցույց տա նրանց դեմ փաստերը և որպեսզի մարդիկ, հողը, ցեղերն ու գիշերը, ունեցվածքը, հրեշտակները և նրանց մարմնի մասերը վկայեն նրանց դեմ: Ճշմարտությունը կվերականգնվի և նրանք կրնաունեն իրենց բոլոր վատ արարքները: Հավատացյալները կհայտնվեն իրենց Տիրոջ հետ առանձին և կխոստովանեն իրենց մեղքերը այնպես, որ երբ նրանք կորոշեն, որ կորած են, Այլափի կասի նրանց.« Ես քողարկել եմ դրանք Մոտիկ Կյանքում և ես այսօր ներում եմ դրանք:» Առաջին համայնքը, ով հաշվի կնստի, Մուհամեդի (*Մայլալահու այեհի ուա սայամ*) համայնքն է: Առաջին արարքը, որի համար մարդիկ հաշվի կնստեն նամագն է և թափված արյան գինը:

➤ **ԾՐԱՐՆԵՐԻ ԲԱԺԱՆՈՒՄԸ.**

Հետո կտրվեն ծրարներ և բոլոր նրանք կվերցնեն գրառումները. « **Այնտեղ բաց թողնված չեն, ոչ փոքր, ոչ էլ մեծ մեղքերը, ամենը հաշվարկված է:**» (Մուրա 18, այաթ 49) Հավատացյալը այն կվերցնի աջ ձեռքով, իսկ անհավատը և փարիսեցին ձախ, մեջքի ետևից:

➤ **ԿՇԵՈՔ.**

Հետո կկշռվեն արարածների արարքները և նրանց կտրվի դրանց պատասխան: Կշիռը կկատարվի իրական, շատ ճշգրիտ կշեռքով, որը ունի երկու կողմեր: Բարի արարքների կողմը կծանրացնեն արարքները, որոնք համապատասխանել են Շարիաթին և որոնք կատարվել են հանուն Այլափի: Այն նույնպես ծանրացնում են «Լե իլեհե իլ Ալլահ», « Ալ համդուլիլեհ », «Մուբհանա լեհի ուա բիհամդի, սուբհանա լեհիլ ազիմ» արտահայտությունները: Մարդիկ կընտրվեն ըստ իրենց բարի և վատ արարքների:

➤ **ԼՃԱԿ.**

Հետո հավատացյալները կհայտնվեն լճակի մոտ, ով կըմպի դրանից, այլևս երբեք չի զգա ծարավ: Ամեն Մարգարե ունի լճակ, սակայն ամենահզորը Մուհամեդինն է (*Մայլալահու այեհի ուա սայամ*): Դրա ջուրը կաթից էլ սպիտակ է, մեղրից էլ քաղցր է, իսկ համը մուսկուսից էլ հաճելի է: Նրա ջուրը գտնվում են ոսկյա և արծաթյա տարրաներ, որոնք նման են աստղերի իրենց քանակով: Լճակի երկարությունը գերազանցում է Հորդանանում գտնվող Այլիից, մինրև Ադենա: Ջուրը հոսում է Կոուսար գետից:

➤ **ՀԱՎԱՏԱՑՅԱԼՆԵՐԻ ՓՈՐՁՈՒԹՅՈՒՆԸ.**

Այդ Օրվա վերջում, անհավատները կգնան իրենց աստվածների ետևից, որոնց նրան երկրպագել են և նրանք կտանեն նրանց Դժոխք: Եվ նրանք կգնան խմբերով, ինչպես ոչխարների հոտ, իրենց ոտքերով կամ երեսների վրա և կմնան միայն հավատացյալները և փարիսեցիները և կգա նրանց

պատվիրանները կատարելու համար, թե օգտագործել է Ալլահի արգելքները իրականացնելու :

մոտ Այլահր և կհարցնի. « Ինչի՞ն էք դուք սպասում:» Նրանք կասեն. « Մենք սպասում ենք մեր Տիրոջը », և նրանք կիմանան Նրան ըստ Մրունքի, երբ Նա կբացի այդ և նրանք երեսով կընկնեն գետնին, բացի փարիսեցիներից: Ամենաբարձրյալը ասաց. **«Այդ Օրը, երբ Այլահի Մրունքը կմերկանա, նրանց կկոչեն երեսը հատել գետնին, բայց նրանք չեն կարողանա անել այդ:»** (Մուրա 68, այաթ 42) Հետո նրանք կհետևեն Նրան, և կդրվի կամուրջ, աս-Մրբատ և Նա կտա նրանց յույս և կմարի փարիսեցիների յույսը:

➤ ԱՍ-ՍԸՐՄՏ (կամուրջ).

Այդ կամուրջը Դժոխքի վրա է, որպեսզի հավատացյալները անցնեն նրանով Դրախտ: Մարգարեն ^(Մալլալահն: այեհի ուա սայամ) նկարագրել է այն հետևյալ կերպ. «...սահող, նրա վրա կան կեռեր և եռաժանիներ, որոնք նման են սադանի՜ փշերի... ավելի բարակ քան մագը և ավելի սուր քան սուրը:» (Մուսլիմ) Երբ հավատացյալները հայտնվեն նրա մոտ, նրանց կպարզեն յույս ըստ իրենց արարքների: Ամենամեծը կլինի սարի չափ, իսկ ամենափոքրը կլինի ոտքի մեծ մատի անկյունում և այս յույսով նրանք կլուսավորվեն և նրանք կանցնեն այդ, ըստ իրենց արարքների: Նրանց մեջ կլինեն «... հաջող անցածներ, քերծվածներ, բայց փրկվածներ և Դժոխք ընկածներ:» (Ալ- Բուխարի և Մուսլիմ) Ինչ վերաբերվում է փարիսեցիներին, ապա նրանք չեն ունենա յույս, նրանք կվերադառնան և նրանց և հավատացյալների միջև կկառուցվի պատնեշ, որը նրանք կփորձեն հաղթահարել և կընկնեն Կրակ:

➤ ԿՐԱԿ

Այնտեղ են մտնում անհավատները և որոշ հավատացյալներ, ովքեր չեն հնազանդվել Այլահին և փարիսեցիները: Այն ունի յոթ դարպաս, և այն այս աշխարհի կրակից յոթանասուն անգամ տաք է: Անհավատի մարմինը այնտեղ մեծանում և ամրանում է, որպեսզի նա ճաշակի պատիժը: Նրա ուսերի միջև տարածությունը հավասարվում է երեք օրյա ճանապարհի, իսկ ատամը նմանվում է Ուհուդ լեռան, իսկ մաշկը հաստանում է: Կրակի բնակիչների ըմպելիքը եռացրած ջուրն է, որը պատառոտում է երիկամները, իսկ կերակուրը Չակում ծառի պտուղներն են, թարախը և աղոր: Կրակի միջի ամենահեշտ պատիժը այն է, երբ ոտքերի տակ կդրվի երկու ածուխ, որից կեռա նրա ուղեղը: Դրա խորությունը այնքան հեռու է, որ եթե այնտեղ գցեյին նորածին երեխա, նա կհասներ յոթանասուն տարեկանի, մինչ կհասներ այնտեղ: Վառելիքը կլինեն անհավատները և քարերը: Նրա օդը կրակի փոթորիկն է, իսկ ստվերը, այրող սև ծուխը: Այն կլանում է ամեն ինչ, առանց թողնելու և ափսոսալու, նա այրում է մաշկը և հասնում է ոսկորներին, ծխում է սրտում, փոթորկում է և ձայներ է

¹ Սադան, արմավի փշեր, ինչպես նաև փշավոր բույսի տեսակ

արձակում: Ամեն հազարից 999 կմտնեն այնտեղ: Նրա հազուստը կրակ է, իսկ պատիժը մաշկի այրելն է, մինչ հալվելը, երեսի այրելը, գետնով քարշ տալը և դեմքերի սևանալը:

➤ **Կանտարա (կամուրջ).**

Մարգարեն ^{(Մալլալահու} _(այեհի ուա սայամ) ասաց. «Երբ հավատացյալները կփրկվեն կրակից, նրանք կկանգնեն կամրջի վրա, որը գտնվում է Դրախտի և Դժոխքի միջև, որտեղ մարդիկ ներողություն կխնդրեն միմյանցից վիրավորանքների և նեղությունների համար, որ նրանք պատճառել են միմյանց այս աշխարհում, երբ նրանք կմաքրվեն և կազատվեն մեղքերից, նրանց կթույլատրվի մտնել Դրախտ և երդվում են Նրանով, Ում Ձեռքերում է Մուհամեդի հոգին, նրանցից յուրաքանչյուրը Դրախտում կգտնի իր բնակարանը ավելի հեշտ, քան նա գտնում էր իր տունը այս աշխարհում:»

(Ալ-Բուխարի)

➤ **ԴՐԱԽՏ.**

Հավատացյալների բնակավայրը: Այնտեղի կառույցները ոսկուց և արծաթից են, իսկ ծածկը մուկուսից, քարերը մարգարիտ և սուտակ են, իսկ հողը զաֆրան: Այն ունի ութ դարպաս, որից յուրաքանչյուրի լայնությունը հավասար է տարածության, որը ճանապարհորդը հաղթահարում է երեք օրում, սակայն մարդիկ մտնելուց կնեղեն միմյանց: Այն ունի հարյուր աստիճան, որի տարածությունը երկնքի և երկրի միջև եղած տարածությունն է: Ֆիրդուսը, ամենաբարձրն է, այնտեղից են սկիզբ առնում Դրախտի գետերը, իսկ նրա դամբարանը, Ամենագթասիրտի Գահն է: Գետերը հոսում են առանց հորձանուտների և հավատացյալը ուղղորդում է այն, ինչպես ցանկանում է: Այդ գետերը մեղրից, կաթից, դրախտային գինուց և ջրից են, պտուղները մշտական են և մոտ են Դրախտի բնակիչներին: Այնտեղ կա մարգարտյա վրան, որի լայնությունը վաթսուն մղոն է, և ամեն անկյունում Դրախտի բնակիչ է, նրանց մարմինները զուրկ են մազերից, աչքերը սև են, չի ավարտվում նրանց երիտասարդությունը և չի մաշվում նրանց հազուստը: Եվ չկա այնտեղ ոչ մեզ, ոչ արտաթորանք և ոչ էլ որևէ աղտ: Նրանց սանրերը ոսկուց են, իսկ քրտինքը մուսկուս: Դրախտի կանայք, գեղեցիկ կույսեր են, ովքեր սիրված են իրենց ամուսիններից, և նույն տարիքի են: Առաջինը, ով կմտնի այնտեղ Մուհամեդն է ^{(Մալլալահու} _(այեհի ուա սայամ) և մարգարեները: Նվազագույն ցանկացողին տրվում է տասնապատիկ ավելին: Դրախտում ծառայում են հավերժ երիտասարդները, ովքեր մարգարտի նման գեղեցիկ են: Իսկ Դրախտի ամենամեծ հաճույքը Ալլահին տեսնելն է, Նրա գոհությունը և անմահությունը վայելելը:

ՓՈՔԻ ԼՎԱՑՄԱՆ ՀԵՐԹԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ «ՎՈՒԴՈՒ»



Լվացումը պիտի կատարել միայն մաքուր ջրով, այսինքն, որը մնացել է իր նախնական վիճակում:

ՄԱՆՈՒՑՈՒՄ. Ջրի քիչ քանակությունը դառնում է անմաքուր, հասարակ աղտից, իսկ մեծ քանակությունը, մոտ 210 լիտր և ավելին, դառնում է անմաքուր, եթե փոխվում է նրա գույնը, համը և հոտը:



Լվացումից առաջ պետք է արտաբերել «Բիամիլե» խոսքերը և լվանալ ձեռքերը: Գիշերային քնից հետո անհրաժեշտ է լվալ ձեռքերը երեք անգամ:

ՄԱՆՈՒՑՈՒՄ. ցանկալի չէ լվալ ձեռքերը ավելի քան երեք անգամ:



Հետո անհրաժեշտ է ողողել բերանը, հավաքելով ջուրը աջ ձեռքով մեկ անգամ: Այդ պարտադիր է, սակայն ցանկալի է կրկնել այն երեք անգամ:

ՄԱՆՈՒՑՈՒՄ. 1. Բավարար չէ ուղղակի ջուր վերցնել բերանի մեջ և թքել, անհրաժեշտ է ողողել բերանը; 2. Բերանի ողողման ժամանակ, ցանկալի է մաքրել ատամները սիվակով:



Լվալ քիթը, ջուրը վերցնելով աջ ձեռքով և դուրս հանելով ձախով, մեկ անգամ: Սակայն, լավ կլինի կրկնել այդ երեք անգամ:

ՄԱՆՈՒՑՈՒՄ. Ցանկալի է թեթևակի ներս քաշել ջուրը քթի խոռոչ:



Հետո պետք է լվալ երեսը մեկ անգամ, սակայն ցանկալի է կրկնել այդ երեք անգամ: Երեսը պիտի լվալ ականջից մինչ մյուս ականջ և մազերի աճի մասից մինչ կզակ:

ՄԱՆՈՒՑՈՒՄ. Եթե մորուքը թավ է, երեսը լվանալուց պետք է մատներով սանրել այն:



Լվալ ձեռքերը մատներից մինչև արմունկները ներառյալ, մեկ անգամ: Այդ պարտադիր է: Սակայն, լավ կլինի կրկնել այդ երեք անգամ:

ՄԱՆՈՒՑՈՒՄ. Պետք է սկսել աջ ձեռքից և տրորել լվանալու ժամանակ:



Հետո պետք է սրբել մազերը թաց ձեռքերով: Դրանից հետո, ցուցամատով անհրաժեշտ է սրբել ականջի ներքին և արտաքին մասերը: Այս ամենը պիտի արվի մեկ անգամ:

ՄԱՆՈՒՑՈՒՄ. 1. Չկա անհրաժեշտություն երկար մազերը սրբել ամբողջ երկայնքով: 2. Եթե չկան մազեր, պետք է տրորել գլխի մաշկը:

3. Անհրաժեշտ է սրբել մազերի և ականջի միջև եղած մասերը:



Մեկ անգամ լվանալ ոտքի թաթերը, ներառելով կոճերը, և չմոռանալ լվանալ մատների արանքները: Պետք է սկսել աջ ոտքից, հետո անգնել ձախին: Լավ է այս ամենը կրկնել երեք անգամ:

ԿԱՐՆՈՐ ՄԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ.1. Փոքր լվացման ժամանակ անհրաժեշտ է կատարել չորս գործողություն **Ա**, բերանի ողողելը, քթի և երեսի լվալը; **Բ**, մինչ արմունկներ ձեռքերի լվալը; **Գ**, Գլխի սրբելը; **Դ**. Ոտքերի լվալը: Անհրաժեշտ է հետևել գործողությունների հերթականությանը: Եթե այն խախտվի, ապա վնասում համարվում է անվավեր:

2. Թույլատրելի է վուդու արված մամնի մասերը չորացնել, սակայն խրախուսելի է թողնել դրանք թաց: Անթույլատրելի է թափահարել վուդու արած մարմնի մասերը և ցողել ջուրը այս ու այն կողմ : 3. Վուդուն վավեր չի լինի եթե դուք լվանաք վուդույի մասերը միաժամանակ, կարծես լողավազան եք մտել: Անհրաժեշտ է հետևել հերթականությանը:

4. Լվացման ավարտից հետո, ըստ սուննայի, պետք է արտաբերել հետևյալ խոսքերը. «Աշհադու այլեյլեհե իլայլահ, ուահդահու լա շարիկա լեհու ուա աշհադու աննա Մուհամադան արրուհու ուա ռասուլուհու, որը նշանակում է թարգմանաբար. «Վկայում եմ, որ չկա աստված, բացի Ալլահից, Ով չունի գուրնկեր և վկայում եմ, որ Մուհամադը Նրա ստրուկն ու Մարգարեն է:» Հետո աղոթել երկու ռակյատ:

ՆԱՄԱԶԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԵՐԹԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ



Նամազից և Կիբլայի ուղղությամբ նայելուց առաջ, մուսուլմանը պիտի ասի. «Ալլահու Աքբար:» Իմամը արտաբերում է այդ և մնացած տակերիները բարձրաձայն, որպեսզի նրա ետևում գտնվողները լսեն այդ և կրկնեն նրա ետևից: Այս խոսքերի արտաբերման ժամանակ, աղոթողը բարձրացնում է ձեռքերը ուսերին հավասար, մատները իրար միացրած:

ՕՍԱՆՈՒՑՈՒՄ:

Աղոթողի համար պարտադիր է ոտքի կանգնել, երբ տակերի պահումն է, և նստելը կամ խոնարհվելը չի թույլատրվում, բացի անդամալույծ մադկանցից: * Ավելի խրախուսելի է աղոթքի ժամանակ որևէ բան դնել դիմացը, որպեսզի պահպանի տարածությունը, և ոչ մի խանգարող հանգամանք չլինի: * Եվ բավական է, որ Իմամը միայն անի այդպես, և մարդիկ նրա ետևից կրկնեն այդ: Աղոթելու մտադրությունը չպիտի արտահայտել: * Չպետք է ձեռք պահել շատ բարձր կամ ցածր տակերի ժամանակ, ինչպես նշված է հինգերորդ նկարում: * Կարևոր խոսքերի արտաբերման ժամանակ, որոնք հանդիսանում են պարտադիր, աղոթողը պիտի լսի ինքն իրեն: Այս վերաբերվում է նաև նամագներին, որտեղ սուրաները պիտի կարդալ բարձրաձայն: Սակայն, այդ պիտի անել այնպես, որ կողքինը կարողանալ լսել, իսկ ինչ պիտի կարդալ ցածրաձայն, միայն աղոթողը պիտի լսի այդ: * Խրախուսելի չէ շրջվել, կամ հայացքը հեռացնել, կամ փակել աչքերը, կանգնել ոչ ճիշտ, օրինակ մեկ ոտքի վրա, կամ շատ հեռվացնել կամ մոտեցնել ոտքերը, ինչպես նշված է համար երկու նկարում:



Աղոթողը դնում է աջ դաստակը ձախի վրա, կամ բռնում է դրանով ձախը և դնում է կրծքի տակ: Հայացքը պիտի հառած լինի այն մասին, որտեղ նա պիտի կատարի երկրային կրանիստ: Հետո նա ինքն իրեն կարդում է բացող դուա, որը սուննա է: Այդպիսի դուաներից են. «Սուբհանկա լեհումա ուա բիհամդիկա ուա տաբարակա սմուկա ուա տալլա ջադուկա ուալա իլահա դայրուկա.», որը թարգմանաբար նշանակում է « Փառաբանված ես դու, օ, Ալլահ և գովք Քեզ, օրհնյալ է Անունը Քո, ամենից վեր է Քո մեծությունը, և չկա աստված բացի Քեզանից:» Այս բոլորից հետո նա ասում է «Աուզուբիլեհի մինալ շեյթան ռոաջիմ » և « Բիսմիլեհի ռոահմեն ռոահիմ» խոսքերը և

ընթերցում է «Ալ-Ֆատիհա» սուրան:Այս ամենը կատարվում է ցածրաձայն, այնպես, որ միայն աղոթողը լսի իրեն: Իմամի ետևից աղոթողը կարող է ասել այդ մտքում: Դրանից հետո նա ընթերցում է որևէ սուրա Ղուրանից: Իմամը ընթերցում է սուրա բարձրաձայն ֆաջր նամազի, մադրեբ և իշա նամագների առաջին երկու ռակյատների ժամանակ, իսկ մյուս դեպքերում սուրաները ընթերցվում են ցածրաձայն:

ՕՍԱՆՈՒՑՈՒՄ:

* Խրախուսելի չէ, կրկնել Ալ-Ֆատիհան մեկ ռակյաթում, կամ ուղղակի ասել առաջին երկու ռակյաթում: * Պարտադիր չէ, իմամի անմիջապես ետևում գտնվող աղոթողին կրկնել նրա ասածները բարձրաձայն, սակայն խրախուսելի է ընթերցել Ալ-Ֆատիհան, երբ իմամը լուռ է: * Խնդիր չկա կրկնել նույն սուրան երկու ռակյաթում կամ առանձնացնել այն երկու մասի, երկու ռակյաթով, կամ ընթերցել ավելի քան մեկ սուրա, մեկ ռակյաթում, կամ ընթերցել սուրայի ավարտը, կետը կամ ընթերցել այն մտադրվելով, ընթերցել նաև հաջորդը: * Աղոթողը չի կարող սկսել սուրա « Ալ-Ֆատիհան» այնքան ժամանակ, մինչ ամբողջովին չի ուղղվել, որովհետև այն պիտի ընթերցվի ոտքի վրա: Եթե նա սկսել է ընթերցել մինչ ոտքի կանգնելը, ապա նա պիտի կրկնի այդ կանգնելուց հետո, այլապես նամազը կհամարվի անվավեր: Ցանկալի է սուրաները ընթերցել այն հերթականությամբ, ինչպես Ղուրանում է, և չխախտել այն: Արգելվում է փոխել սուրայի կամ այաթների խոսքերը:



Հետո նա արտասանում է տակերի, բարձրացնում է ձեռքերը և կատարում է գոտկատեղային կրանիստ, դնելով ձեռքերը ծնկներին մատները բացված վիճակում: Նա ուղղում է մեջքը այնպես, որ գլուխը հավասարվի նրան և երեք անգամ ասում է. « Սուբհանա Ռաբբիյալ Ազիմ:» Այս ամենից հետո աղոթողը ռակյատ է կատարում:

ՕՍԼՈՒՑՈՒՄ.՝ Տակբիրը պիտի ասվի մեկ գործողությունից անցնելուց մյուսին, ինչպես նաև պիտի ասվի « Մամիալեհու լիման համիդահ» խոսքերը,այլ ոչ գործողությունից առաջ կամ հետո: Այս վերաբերվում է մյուս տակբիրներին նույնպես: * Եթե աղոթողը դիտավորյալ հետաձգում է այս խոսքերի արտասանումը, այդ ռակյատը համարվում է անվավեր: * Բավարար է ձեռքերով հասնել ծնկներին թուկույի ժամանակ, որպեսզի այն լինի ընդունելի և եթե դուք հետևում եք իմամին, ապա բավարար է, հասնել ծնկներին , մինչ նա բարձրացրել է գլուխը, որպեսզի այն համարվի վավեր: * Մարդը , ով մտադրվել է աղոթել մզկիթում , եթե հասնում է այնտեղ այն ժամանակ, երբ իմամը կանգնում է ռուկույից, ապա այս դեպքում խրախուսելի է շարունակել նրա հետ , քան լրացնել բաց թողնված ռակյաթները : * Չի խրախուսվում, ընթերցել Դուրան , երբ դուք ռուկույի կամ սուջուդի պարագայում եք, բացի այն դեպքերից , երբ մարդ մտադրվել է դուայի, ինչպես «Ռաբբենե եթինի ֆի դունյա հասանե,, ուս ֆիլ էխիրա հասանե:»



Հետո նա ուղղվում է ասելով. «Մամիալլահ լիման համիդահ» և բարձրացնում է ձեռքերը: Ուղղվելով նա ասում է. « Ռաբանա ուս լակալ համդու համդան կասիրան տայիբան մուբարական ֆիհի միլու սսամավատի ուս միլուլարդի ուս միլու մաշիտա մին շեյինբադ:»

ՕՍԼՈՒՑՈՒՄ.՝ «Ռաբբանա ուս լակալիհամդ » խոսքերը պիտի ասել ուղղվելուց հետո: * Եթե մարդ ցանկանում է , նա կարող է թողնել ձեռքերը կողքերը, մինչ ոտքի է կանգնում ռուկույից և եթե նա ցանկանա, կարող է դնել աջ ձեռքը ձախին : * կան չորս փառաբանման արտահայտություններ, որոնք ճիշտ են , դրանք են.

- 1." Ռաբբանա ուալեքե ել համդ:"
- 2. "Ռաբբենե լեկել համդ:"
- 3. " Ալլահումա ռաբբենե ուլակել համդ:"
- 4. " Աալլահումա ռաբբենե լեկել համդ:"



Հետո աղոթողը կատարում է երկրային կքանիստ, արտասանելով տակբիր և ձեռքերը հեռացնելով կողքերից, փոքր կոնքերից և դնելով ձեռքերի դաստակները ուսերի դիմաց: Ոտքի և ձեռքի մատները ուղղված են կիրլայի ուղղությամբ: Հետո նա ասում է « Մուբհանա Ռաբբիյաե Ալա» խոսքերը երեք անգամ:

ՕՍԼՈՒՑՈՒՄ.՝ Սուջուդի ընթացքում խրախուսելի չէ թևքերը հեռու պահել, ինչպես նշվել է հինգերորդ նկարում : * Պետք է հոգ տանել, չվնասելու կողքին կանգնած աղոթողին և եթե սուջուդը երկար է տևում , նա պիտի հենվի արմունկներին և ոտքի վերևի մասին : * Երկրային կքանիստը պիտի կատարել մարմնի յոթ կետերի հենումով: Այդ կետերն են, ոտքի մատները, ծնկները, ձեռքի ավերը, ճակատը և քիթը: Երկրային կքանիստը առանց այս հիմքերի դարձնում է նամագր անվավեր:



Հետո աղոթողը բարձրացնում է գլուխը, արտաբերում է տակբիր և նստում է: Նստել կարելի է երկու ձևի. (1.) Աղոթողը թեքում է ձախ ոտնաթաթը, նստելով նրա վրա, իսկ աջը դնում է ուղիղ, մատները ուղղելով դեպի կիրլայի: **(2.)** Նա դնում է երկու ոտքերի թաթերը, ուղղելով մատները կիրլայի ուղղությամբ, և նստում է թաթերի վրա: Հետո նա ասում է. « Ռաբբի դաֆեր լի» երեք անգամ « Նա կարող է նաև ավելացնել «...ուս ռահամնի ուս շաբուրնի ուս ռֆանի ուս ռզկնի ուս նարունի ուս խդինի ուսֆինի ուսֆուանի:» Այնուհետև նա կատարում է երկրորդ երկրային կքանիստը, որից հետո բարձրացնում է գլուխը, ասում է տակբիրը և կանգնում է հենվելով ոտնաթաթերի կենտրոնին և կատարում է երկրորդ ռակյատը, ինչպես առաջինը:

ՕՍԼՈՒՑՈՒՄ.՝ Ընդունելի չէ նստել . բացի երկու դեպքերից , ինչպես նշված է վեցերորդ նկարում : Թույլատրելի է նստել մի փոքր հանգստանալու, մինչ երկրորդ ռակյաթը : * Պետք չէ ընթերցել Ալ- ֆատիհան, բացի այն դեպքից, երբ աղոթողը ոտքի է կանգնում : * Եվ , եթե նա ընթերցում է կանգնելուց առաջ, ապա նա պիտի կրկնի այդ, այլապես աղոթքը անընդունելի կլինի :



Ավարտելով երկրորդ ուսկյատը, նա նստում է տաշահուղի համար, բացելով ոտնաթաթերը և դնելով ձախ ձեռքը ձախ ծնկին, իսկ աջը, աջին: Այդ ժամանակ նա բոլոր մատները օղակի նման միացնում է միմյանց, իսկ ցուցամատը բարձրացնում է: Այնուհետև նա ցածրաձայն ընթերցում է. «Ատտահյատու լիլեհի ուասալավատու ուատայբետու, ասալամ ալեյքա էյյուհա ննաբիյու, ուա ռահմատուլեհի ուա բարակետուհու, աս սալամ ալեյնա ուա ալա իբադիլեհի սասլիհին: Աշշհադու ալլա իլահա իլալլահ ուա աշհադու աննա Մուհամեդան սբրուհու ուա ռատուլու:» Այս թագմանաբար նշանակում է. « Ողջույն Ալլահին, և ադոթք և ավագույն խոսքեր, խաղաղություն քեզ օ, Մարգարե և Ալլահի գուրթն ու օրհնությունը, մեզ, Ալլահի ճշմարիտ ստրուկներին խաղաղություն: Վկայում եմ, որ չկա աստված բացի Ալլահից և վկայում եմ, որ Մուհամեդը Նրա ստրուկն ու առաքյալն է:» Այս ամենից հետո նա տքի է կանգնում, արտասանում է տակբիբը և կրկնում է մնացած ուսկյատները դրանց ման: Տարբերությունն այն է, որ նա ընթերցում է միայն «Ալ-Ֆատիհան» ցածրաձայն:

ՍԱԼՈՒՑՈՒՄ. * Ավելի խրախուսելի է նայել ցուցամատին թաշահուղի ժամանակ: * Եվ ավելի խրախուսելի է ցուցամատը պահել ուղղիղ և մի փոքր ցածր պահել այդ ժամանակ : * խրախուսելի չէ ավելի երկար նստել այն բանից հետո, երբ լրացվել է ատտահիյաթը:



Այսպես ադոթողը նստում է միայն վերջին տաշահուղի ժամանակ: Հետո նա ընթերցում է նույնը, ինչ ասում է տաշահուղի ժամանակ, ավելացնելով. « Ալլահումա սալլի ալա Մուհամադին ուալլա ալի Մուհամադին կամա սալայտա ալա Իբրահիմա ուա ալա ալի Իբրահիմա իննակա Համիդուն Մաջիդ: Ալլահումա բարիկ ալա Մուհամադին ուա ալա ալի Մուհամադին, կամա բարակտա ալա Իբրահիմա ուա ալա ալի Իբրահիմա իննակա Համիդուն Մաջիդ.» Որը նշանակում է. « Օ, Ալլահ, օրհնիր Մուհամեդին և Մուհամեդի ընտանիքը, ինչպես օրհնել ես Դու Իբրահիմին և ընտանիքը Իբրահիմի, ճշմարիտ, Դու արժանի ես գովքի, Հզոր: Օ, Ալլահ ուղարկիր օրհնություն Մուհամեդին և ընտանիքին Մուհամեդի, ինչպես Դու ուղարկել ես այն Իբրահիմին և ընտանիքին Իբրահիմի, ճշմարիտ Դու արժանի ես գովքի, Հզոր:» Մուննա են համարվում նաև « Ալլահումա իննի աուգու բիլի մին ազաբիլ կաբբի ուա ազաբի ջահաննամա, ուա մին ֆիտնատի ել մահյա

ուալ մամատի ուա մին շարբի ֆիտնատի ել մասիհի դջադալ » խոսքերը, որոնք նշանակում են. « Օ, Ալլահ, ճշմարիտ ես դիմում եմ Քեզ Դժոխքի և գերեզմանի տանջանքներից, կյանքի և Ջադալի գայթակղություններից և մահից:»

ՍԱԼՈՒՑՈՒՄ.* Հետո ադոթողը նստում է վերջին տաշահուղի համար հետևյալ կերպ. **1.** նա տարածում է ձախ ոտնաթաթը, դուրս հանելով այն աջի տակից: Իսկ աջը գտնվում է ուղիղ, այս ամենը կատարվում է երբ ադոթողը նստած է: **2.** Նա տարածում է ձախ ոտքը, դուրս հանելով այն աջից և տարածում է աջը, գետնին նստած վիճակում: **3.** Նա տարածում է ձախ ոտնաթաթը, դուրս հանելով այն աջ ոտնաթաթի վրայից: * Խրախուսելի է դուա անել այս կեցվածքում, ինչպես հաղորդվել է Մարգարեյից . " Աուդուբիլեհի մն ադեբ ել նառ , ուա ադեբ ել կուբռ , ուա ֆիտնեթ ել մահյե ուալմեմեթ ուա ֆիտնեթ ել մեսիհա ել Դջել : " "Ալլահումա ըննի դելեմտու նեֆսի դուլմեն քթիրան, ուալ յեդֆերու դունուբե իլե ենթ, ֆադֆերլի մադֆիրատան մն անդեբ, եռհամնի իննեքե ենթե ել Ղաֆուր ել Ռահիմ : " * Խրախուսելի չէ , հենվել ձեռքերին, մինչ անպատճառ նստած եք:



Այնուհետև նա թեքում է գլուխը աջ և ասում է. «Ասալամ ալեյքում ուա ռահմատուլլահ», և ձախ նույնը կրկնելով: Ավարտելով ադոթքը, նա կարդում է դուա:

ՍԱԼՈՒՑՈՒՄ.* Խրախուսելի է շրջել երեսը սալամ ալեյքում ասելուց, և սկսել աջ կողմից դեպի ձախ: * Խրախուսելի չէ շարժել ձեռքերը վերև և ներքև, կամ աջ ու ձախ սալամ ասելուց, ինչպես գուլգ է տրվել յոթերորդ նկարում:

ԳԻՏԵԼԻՔԸ ԵՆԹԱԴՐՈՒՄ Է ԳՈՐԾՈՂՈՒԹՅ ՈՒՆ.

ՀԱՐԳԵԼԻ ՄՈՒՍՈՒԼՄԱՆ ՔՈՒՅՐԵՐ և ԵՂԲԱՅՐՆԵՐ.

Գիտելիքը առանց գործողության ատելի է Ալլահին և Նրա Մարգարեյին, ինչպես նաև հավատացյալներին: Ամենաբարձրյալը ասաց. «Օ, նրանք, ովքեր հավատացել են: Ինչու դուք ասում եք այն, ինչ չեք անում: Մեծ է Ալլահի արհամարհանքը նրան, ով ասում է այն, ինչ չի անում:» (Սուրա 61, այաթ 2-3) Աբու Հուրեյրան Մուհամեդն է (Սալլալլահու ալեյհի ուա սալամ) ասաց. «Գիտելիքը, որին չի հաջորդում գործողությունը, նման է գանձի, որից ոչինչ չի վերցվում Ալլահի ուղղու համար:» Ալ Ֆադիլը Մուհամեդն է (Սալլալլահու ալեյհի ուա սալամ) ասաց. «Գիտելիք ունեցողի չի դադարի լինել անգրագետ այնքան ժամանակ, մինչ չի գործի ըստ այդ:» Մալիք իբն Դինարը Մուհամեդն է (Սալլալլահու ալեյհի ուա սալամ) ասաց. «Երբեմն հանդիպում է մարդ, ով խոսում է սահուն, չի սխալվում, իսկ արարքները ամբողջովին սխալներ են:»

Ալլահը թեթևացրել է այս գրքի ընթերցումը, որը պիտի երևա քո արարքներում, լավ վերաբերմունքում և գիտելիքներում:

Դուք ընթերցեցիք Ղուրանի այաթներ և նրանց բացատրությունները, այդ դեպքում փորձեք գործնականում օգտագործել այն, ինչ իմացաք:

Իրոք, Մարգարեյի հետևորդները, ընդունում էին նրանից տաս այաթ և չէին սովորում ուրիշ, մինչ չէին յուրացնում գիտելիքները և չէին ապրում ըստ դրանց: Նրանք ասում էին. «Նա սովորեցրել է մեզ գիտելիք և գործողություն:» Այս է պահանջում նաև Շարիաթը: Բացատրելով Ամենաբարձրյալի «Ով կարդում է այն, համապատասխան ձևով» խոսքերը, Իբն Աբբասը ասաց. «Հետևում են ճշմարիտ ձևով:» Իսկ Ալ-Ֆադիլը ասաց. «Ճշմարիտ, Ղուրանը, ուղարկվել է, որպեսզի հետևեն դրան, իսկ մարդիկ ընթերցումը դարձնեն գործողություն:»

Դուք նաև իմացաք որոշ բաներ Մարգարեյի (Սալլալլահու ալեյհի ուա սալամ) սուննայից, այդ դեպքում կատարեք նրա հրամանները: Մուսուլման Ումմայի սրբերը իմանալով այդ ամենի մասին, շտապում էին գործի դնել այդ և կոչել դրան: Այդ է ասում նաև Մարգարեն (Սալլալլահու ալեյհի ուա սալամ) «Եթե ես ձեզ հրամայեմ ոչևե բան, արեք դրանից, ինչ կարող եք, իսկ ինչ ես արգելել եմ, դրանից խուսափեք: Խուսափեք նաև տանջալի պատժի վախից, որի մասին Ամենաբարձրյալը ասել է. « Թող զգուշանան նրանք, ովքեր դեմ են նրա կամքին, որպեսզի նրանց չհասնի գայթակղությունը կամ տանջանքը:» (սուրա 24. Այաթ 63) Ահա օրինակներ.

Ուղղափառների մայր Ում Հաբիբան Մուհամեդն է (Սալլալլահու ալեյհի ուա սալամ) ասաց հադիթում. «Ով, բացի պարտադիր աղոթքներից, կկատարի տասներկու ռակյատ օրվա և գիշերվա ընթացքում, նրա համար Դրախտում կկառուցվի տուն:» Նա ասաց. « Եվ ես չդադարեցի անել այդ այն ժամանակից սկսած, երբ լսեցի այդ Ալլահի մարգարեյից (Սալլալլահու ալեյհի ուա սալամ):»

Իբն Օմարը (Սալլալլահու ալեյհի ուա սալամ) փոխանցեց հադիթ. « Մուսուլմանին անթույլատրելի է, ով ունի այն ինչ կարելի է կտակել, անցկացնել երեք

գիշեր առանց Կտակ գրելու:» Մուսլիմ Հետո նա ասաց. «Գիշեր չանցավ, մինչ ես լսեցի այս Ալլահի Մարգարեյից <sup>(Մալլալահու
այլեհի ուս սալամ)</sup>, բացի, երբ իմ կատակը ինձ հետ էր:»

Իմամ Ահմեդի <sup>(Մալլալահու
այլեհի ուս սալամ)</sup> օրինակը, ով ասաց. «Ես չեմ ասում ոչինչ մինչ չեմ գործում ըստ դրա: Նույնիսկ այն բանում, երբ Աբու Տայիբան Մարգարեյի արյուն էր բաց թողել և նա տվել էր նրան դինար, ոսկե կոպեկ: Այսպիսով ես գնացի մի մարդու մոտ, ով արյուն էր բաց թողնում, նա արեց այդ ինձ համար և ես տվեցի նրան Դինար:»

Իմամ ալ-Բուխարիի <sup>(Մալլալահու
այլեհի ուս սալամ)</sup> օրինակը, ով ասաց. «Ես երբեք չեմ բամբասել որևէ մեկի ետևից, այն բանից հետո, երբ իմացա, որ դա արգելված է: Իրոք, ես հուսով եմ, որ կհանդիպեմ Ալլահին և Նա հաշիվ չի պահանջի ինձնից որևէ մեկից բամբասելու համար:»

Մեկ հադիթ հաղորդում է. «**Ով կարդում է «Քուրսի» այսօր ամեն պարտդիր աղոթքից հետո, նրան ոչինչ չի խանգարի մտնել Դրախտ, բացի մահից:»** (Ան Նիսաս) Իբն ալ –Բայունը ասաց.« Ես տեղեկացա, որ Շեյխ ալ Իսլամ Իբն Տայմիյան ասաց. « Ես երբեք այդ չեմ բաց թողել, բացի մոռանալուց և նման պարագաներից:»

Գիտելիք ստանալուց և այն իրագործելուց հետո, դու պիտի տարածես այն, ինչ Ալլահը նվիրել է քեզ, որպեսզի չճնշես քեզ և չխուսափես պարզևից, և մարդկանց չզրկես այդ բարիքից: Մարգարեն <sup>(Մալլալահու
այլեհի ուս սալամ)</sup> ասաց. «**Նրանք, ովքեր ուղղում են բարիքի, ունեն պարզև հավասար նրանց, ինչ անում են այդ իմանալով:»** (Մուսլիմ) Նա <sup>(Մալլալահու
այլեհի ուս սալամ)</sup> Նան ասաց. «**Ձեզանից լավագույնները նրանք են, ովքեր սովորում են Ղուրան և սովորեցնում են այն:»** (Ալ- Բուխարի) Նա <sup>(Մալլալահու
այլեհի ուս սալամ)</sup> ասաց. «**Սովորեք ինձանից, նույնիսկ եթե դա Ղուրանի մեկ այսօ է:»** (Ալ-Բուխարի և Մուսլիմ) Ըստ քո կոչած բարիքի, քո պարզևը կավելանա և լավ արարքները կաճեն այս և մյուս կյանքում, ինչպես Մարգարեն <sup>(Մալլալահու
այլեհի ուս սալամ)</sup> ասաց. « **Երբ մարդ մահանում է, նրա արարքները ավարտվում են բացի երեքից. Շարունակվող բարեգործությունից, օգտակար գիտելիքներից և առաքինի գավակներից, ովքեր աղոթում են նրա համար:»** (Մուսլիմ)

ԾԱՆՈՒՑՈՒՄ. Մենք ընթերցում ենք Ալ- Ֆատիհա սուրան տասնյոթ անգամ օրվա ընթացքում, և մենք ապաստան ենք խնդրում չլինելու նրանց նման, ովքեր բարկացնում և սխալ ուղղով են գնում: Մինչդեռ մենք նմանվում ենք նրանց արարքներում, մենք թողնում ենք սովորելը և ամբարտավան ենք դառնում, կամ մենք սովորում ենք և չենք գործում այդպես:

Մենք խնդրում ենք Ալլահին տալ մեզ և ձեզ օգտակար գիտելիքներ, լավ արարքներ և Ալլահն ու Նրա Մարգարեն լավ տեղյակ են: Թող Ալլահի օրհնությունը և խաղաղությունը լինի Մուհամեդի և նրա հետևորդների ու ընտանիքի վրա:



وَيَلِيهِ

أَحْكَامُ رَهْمَةِ الْمَسْلُومِ

www.tafseer.info